

«ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
АРМЯНСКО-РОССИЙСКИЙ МЕЖДУНАРОДНЫЙ УНИВЕРСИТЕТ "МХИТАР ГОШ"  
"MKHITAR GOSH" ARMENIAN-RUSSIAN INTERNATIONAL UNIVERSITY

## «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ»

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ  
(*իրավագիտություն, մանկավարժություն, տնտեսագիտություն*)

## “МХИТАР ГОШ”

НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЙ ЖУРНАЛ  
(*правоведение, педагогика, экономика*)

## “MKHITAR GOSH”

SCIENTIFIC-METHODICAL REVIEW  
(*jurisprudence, pedagogics, economics*)

1-3 (32)  
2012

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

ИЗДАЕТСЯ ПО РЕКОМЕНДАЦИИ УЧЕНОГО СОВЕТА АРМЯНСКО-РОССИЙСКОГО МЕЖДУНАРОДНОГО УНИВЕРСИТЕТА "МХИТАР ГОШ"

**ՉԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ**

**Վաչիկ ԲՐՈՒՏՅԱՆ**

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի ռեկտոր

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ**

**Սերգեյ ԱՂԱՋԱՆՅԱՆ**

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ**

**Լևոն ՍԱՐԳՍՅԱՆ**

**ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Հայկ ՂԵՐՉՅԱՆ**

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Ռուդիկ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**Հասմիկ ՂԵՐՉՅԱՆ**

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

**Բենիամին ԵՂԻԱՋԱՐՅԱՆ**

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Իրինա ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Սերգեյ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Մանկավարժական գիտությունների դոկտոր

**Էմմա ՆԱՍԻԼՅԱՆ**

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

**Հայկ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Մանկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ

**Գառնիկ ՍԱՖԱՐՅԱՆ**

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

*Սրբագրիչ*

**Գոռ ՍԱՐԳՍՅԱՆ**

*Համակարգչային ձևավորող*

**Արմենուհի ՄՈՍԻՆՅԱՆ**

Հանդեսում տպագրված բոլոր հոդվածները գրախոսված են և երաշխավորված խմբագրական խորհրդի անդամների կողմից

ՀԱՆԴԵՍԸ ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ 01Մ 000219

Լույս է տեսնում տարեկան 4 անգամ Հրատարակության 9-րդ տարի

**ГЛАВНЫЙ РЕДАКТОР**

**Вачик БРУТЯН**

Кандидат педагогических наук, доцент Ректор Армянско-Российского международного университета "Мхитар Гош"

**НАУЧНЫЙ КОНСУЛЬТАНТ**

**Сергей АГАДЖАНИЯ**

Кандидат филологических наук, доцент

**ОТВЕТСТВЕННЫЙ РЕДАКТОР**

**Левон САРКИСЯН**

**НАУЧНЫЙ РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ**

**Гаик ДЕРЦЯН**

Доктор юридических наук, профессор

**Рудик ГЕВОРКЯН**

Кандидат юридических наук, доцент

**АСМИК ДЕРЦЯН**

Кандидат педагогических наук, доцент

**Бениамин ЕГИАЗАРЯН**

Доктор экономических наук, профессор

**Ирина ОВАКИМЯН**

Доктор экономических наук, профессор

**Сергей МАНУКЯН**

Доктор педагогических наук

**Эмма НАСИЛЯН**

Кандидат экономических наук, доцент

**Гаик ПЕТРОСЯН**

Доктор педагогических наук, доцент

**Гарник САФАРЯН**

Доктор юридических наук, профессор

*Корректор*

**Гор САРКИСЯН**

*Компьютерный дизайнер*

**Арменуи МОСИНЯН**

Все статьи, опубликованные в журнале, рецензированы и рекомендованы к публикации членом редакционного совета

ЖУРНАЛ ЗАРЕГИСТРИРОВАН В МИНИСТЕРСТВЕ ЮСТИЦИИ РА СВИДЕТЕЛЬСТВО О РЕГИСТРАЦИИ 01Մ 000219

Издается 4 раза в год 9-ой год издания

**ՀՈՒՇԱԳԻՐ ՉԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ**

«ՄԻՆԻՍԹԵՐ ԳՈՇ» հանդեսի խմբագրությունը գիտական հոդվածներն ընդունում է, եթե դրանք՝

- ա) պարունակում են սպառնալի տեղեկություններ հեղինակների մասին.
- բ) ունեն 300 dpi խտությամբ էլեկտրոնային կամ 7x8 չափսի հեղինակի լուսանկար.
- գ) ունեն երկու այլ լեզուներով ամփոփումներ.
- դ) ունեն հղում-ծանոթագրություններ և (կամ) օգտագործված գրականության ցանկ.
- ե) կից ունեն մասնագետի գրախոսություն:

Հոդվածներն ընդունվում են պնակիտով (diskette) կամ էլ. փոստով:

**ПАМЯТКА АВТОРАМ**

Редакция журнала "МХИТАР ГОШ" принимает научные статьи, если они:

- а) содержат исчерпывающие сведения об авторах;
- б) имеют фото автора в формате 300 dpi или размером 7x8 см;
- в) имеют резюме на двух иных языках;
- г) имеют ссылки-сноски и (или) список использованной литературы;
- д) приложена рецензия специалиста.

Статьи принимаются на дискете или по электронной почте.

ՀՏԴ 502:37.01

## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԻՐՈՒԹՅԱՆ ԳԼՈՔԱԼ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ\*

### Հասմիկ ԴԵՐՉՅԱՆ

Սանկվարժական գիտությունների թեկնածու, դոցենտ  
«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի գործադիր տնօրեն



**21**-րդ դարում առավել քան երբեք հրատապ է դարձել ճգնաժամային իրավիճակում գիտափոխարկական առաջընթացի և անձի կողմից բնության գիտական ճանաչողության խորացումն ու փիլիսոփայական իմաստավորումը, որոնք պահանջում են

շրջակա միջավայրի հանդեպ մարդու վերաբերմունքի փոփոխում: Այս խնդիրն առավել արդիական է այն պատճառով, որ մարդկության ամենակարևոր հիմնախնդիրներից է էկոլոգիական անվտանգությունը, որը ներկայացված է որպես հասարակական կյանքի տարբեր կողմերին սպառնող վտանգ, այսինքն՝ որպես ազգային անվտանգության, ազգի «կյանքի որակի» բարձրացման խնդիր: Էկոլոգիական անվտանգության դրույթները ամրապնդված են օրենքով և ներառված են պետական կառավարման հայեցակարգի մեջ, որի կարևոր բաղադրամասերից են էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը: Էկոլոգիական անվտանգության պետական կառավարման լծակներից են նաև սոցիալ-տնտեսական և գիտատեխնիկական զարգացումները, որոնք ունեն երկակի ազդեցություն և միշտ չեն հաշվի առնում մարդկային գործոնը, շրջակա միջավայրի պահպանման «քաղաքացիական պարտքը»:

Առավել արդիական են բնապահպանական խնդիրները ժամանակակից համաշխարհային տնտեսության ճգնաժամային ցնցումների պայմաններում, ինչն ավելի զգայուն է զարգացող պետությունների համար, որոնց շարքին է դասվում նաև Հայաստանի Հանրապետությունը:

Եվ չնայած 1990-ական թվականների արտադրության զգալի անկմանը (առանձնապես քիմիական, մետալուրգիական ճյուղերը), ՀՀ բնա-

պահպանական վիճակը և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը միշտ էլ եղել է պետական քաղաքականության հիմքում:

ՀՀ-ում առկա են բնապահպանական բազմաթիվ խնդիրներ, ինչպիսիք են մթնոլորտային և տարածքային աղտոտումները, անտառային ռեսուրսների կրճատումը, հողի էրոզիան, անապատացումը, ջրային ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործումը: Այս բոլոր խնդիրները խոչընդոտում են երկրի սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը:

ՀՀ-ում բնապահպանական կառավարման համակարգն իր զարգացման մեջ առաջընթացի է հասել վերջին տասնամյակում: Գլխավոր բնապահպանական մարմինը՝ բնապահպանության նախարարությունն իր առջև դրված երկարաժամկետ նպատակները համաձայնեցրել է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների հետ:

Սակայն այս խնդիրները սահմանափակված չեն առանձին երկրների բնապահպանական կառավարման խնդիրների լուծմամբ: Այս հարցը կրում է գլոբալ բնույթ և պահանջում է գլոբալ լուծում:

20-րդ դարի 70-ական թթ. զարգացած երկրներում բնապահպանական քաղաքականությունը դրսևորվում էր հիմնականում իրավախախտումների դեմ պայքարի ուժեղացման միջոցով:

Բնօգտագործման գլոբալ բնույթը պայմանավորված է էկոլոգիական խնդիրների լուծման ժամանակ պետությունների համատեղ գործելու անհրաժեշտությամբ՝ հիմնված միջազգային փորձի ու միջազգային տնտեսական հարաբերությունների բնույթի վրա:

Ուսումնասիրելով տարբեր զարգացած երկրների բնօգտագործման, բնապահպանության կառավարման փորձը՝ ներկայացնենք ԱՄՆ-ում և Ճապոնիայում գործող կարգերը, որոնք առավել ճկուն և արդյունավետ են: ԱՄՆ-ի շրջակա միջավայրի պահպանման գործակալության տնօրենի

\* Ներկայացվել է 24.02.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

խորհրդատվական ապարատը ընդգրկում է 11 կոմիտեներ, որից մեկը էկոլոգիական կրթությունն է: Ճապոնիայում 1989 թ. կազմակերպվել է «Շրջակա միջավայրի պահպանման նախարարների խորհուրդ», որի նպատակն է պլանավորել այդ աշխատանքները ինչպես երկրի ներսում, այնպես էլ գլոբալ մասշտաբով: Ճապոնիայի կրթության, գիտության և մշակույթի նախարարությունն ակտիվ մասնակցություն է ունենում շրջակա միջավայրի ուսումնասիրություններում: Այդ նպատակով ընդգրկվում են բարձրագույն ուսումնական հաստատությունները, որոնք այդ խնդիրները հետազոտում են ինչպես ամբիոններում, այնպես էլ համատեղ այլ երկրների գիտնականների հետ: Բացի այդ, դպրոցական կրթության ցանցի միջոցով պարբերաբար տեղեկատվություն է տրվում բնակչությանը շրջակա միջավայրի իրավիճակի մասին: Բնակչության կողմից շրջակա միջավայրի արժեքային գնահատումը կախված է եկամուտներից, կրթության մակարդակից, սոցիալ-մշակութային ավանդույթներից և շրջակա միջավայրի աղտոտման մակարդակից:

Էկոլոգիական կրթության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է նախ և առաջ ճշտել խնդիրները: Էկոլոգիական կրթությունն ուղղված է կայուն զարգացմանը և կոչված է շրջակա միջավայրի և նրա մասին գիտելիքների տարածմանը, սոցիալական, տնտեսական, բնապահպանական խնդիրների համալիր լուծմանը և այդ ուղղությամբ որոշումների ընդունմանը: Այն նաև կոչված է ցուցադրելու, թե ինչպես կարելի է զարգացնել տնտեսությունը՝ պահպանելով բնական միջավայրը, բարձրացնելով բնապահպանական ավանդույթները, տարբեր ազգերի բնամշակութային ժառանգությունը: Էկոլոգիական կրթության նպատակները համահունչ են ընդհանուր կրթական նպատակներին՝ անձի բազմակողմանի զարգացում, ինքնաիրացման պայմանների ստեղծում:

Էկոլոգիական կրթության հիմքերից մեկը բնության և հասարակության փոխազդեցության տեսությունն է:

Երբ մենք խոսում ենք վարքագծի մասին բնությունում կամ ամեն մի կենդանու հանդեպ, ապա «Էկոլոգիական կրթություն» և «Էկոլոգիական մշակույթ» պատկերացումների միջև կարելի է հավասարության մշան դնել: Իսկապես, եթե մշակույթի տակ հասկացվեն աշխարհայացքը, բարոյականության և իրավունքի նորմերը, գիտելիքները և հմտությունները, ինտելեկտի մակարդակը, մարդկանց շփման ձևերը, ապա «Էկոլոգիական կրթություն»-ը և «Էկոլոգիական մշակույթ»-ը համաձուլվում են:

Երեխաների բնապահպանական կրթության

բնագավառում նպատակաուղղված աշխատանքները մեր երկրում տարվում են արդեն 20 տարուց ավելի: Սակայն, լուրջ փոփոխությունների մասին խոսելը դժվար է, քանի որ այն պահանջում է սերունդների փոփոխություն: Վերջին տարիներին էկոլոգիական կրթությունն ուղղակիորեն կապում են երկրի կայուն զարգացման հետ՝ կապելով այն կյանքի որակի բարձրացման հետ: Սակայն էկոլոգիական կրթությունը ուղղակիորեն կապված է նաև բարոյականության և ցանկալի ապրելակերպի հետ: Մասնավորապես՝ մարդկությունը գիտակցում է, որ «Էկոլոգիական» այնպիսի արժեքներ, ինչպիսիք են օդը, ջուրը գտնվում են վտանգի տակ, առանց որի հնարավոր չէ մարդկության գոյատևումը:

Սակայն մեր ժամանակներում հաճախ էկոլոգիական կրթությունը սահմանափակված է միայն լսարանային պայմաններով և բնության դիտարկումներով: Չի ձևավորվել նաև էկոլոգիական բարոյականությունը, որը որոշում է մարդու վերաբերմունքը դեպի հողը, կենդանական և բուսական աշխարհը: Հաճախ մշում են, որ էկոլոգիական կրթության հիմնական նպատակն է գիտելիքների փոխանցման միջոցով անձի էկոլոգիական մշակույթի մակարդակի բարձրացումը: Սակայն մշակույթը ոչ միայն գիտելիքներ են, այլև մտածելաձև, հաղորդակցում և բնապահպանական խնդիրների լուծման ձգտում:

Էկոլոգիական կրթությունը եղել է, կա և կլինի, քանի որ դրա միջոցով կարելի է հասկանալ էկոհամակարգում տեղի ունեցող գործընթացները, կարելի է զգալ ու հասկանալ բնությունը և խնամքով վերաբերվել դրան, որի արդյունքում ձևավորվում է անձի էկոլոգիական մշակույթը:

Այսօր էկոլոգիական մշակույթը, էկոլոգիական մտածողությունը և բնության պահպանությունը հանդես են գալիս որպես մարդու վարքի արժեքային դրույթներ: Մտածողությունը դաստիարակության մի մակարդակ է, երբ յուրաքանչյուրը հետապնդում է բնապահպանական նպատակ՝ հանուն մարդու հետագա զարգացման, նրա առողջության պահպանման և ամրապնդման: Եվ հաշվի առնելով, որ Հայաստանը սահմանափակ ռեսուրսներով երկիր է, վատնող-սպառողական հոգեբանությունից պետք է անցում կատարվի ինքնասահմանափակման, չափավորության: Իհարկե, վատ չէ բնությունից խելամիտ, հաշվենկատ օգտվելը և թալանվածը վերադարձնելը: Մարդ արարածը բնության մասնիկ է, և այլևս անհանդուրժելի է նրա կողմից նույն այդ բնության նկատմամբ սպառողական վերաբերմունքի դրսևորումը: Երկրագնդի ապագայի համար հոգածության կարևորագույն բաղադրիչի առաջ է մղվում սպառման մշակույթի ձևավորումը:

Բնության հարստությունների նկատմամբ խնայողական բերաբերմունքն ամենևին չի նշանակում անխնա սպառում: Պետք է զարգացնենք ամբողջ հասարակության շահերից բխող բնապահպանական օրինաչափություն, օրենքների ու նորմերի պահպանման անձնական ակտիվ մասնակցություն:

Էկոլոգիական մտածելակերպի ձևավորման, էկոլոգիական գիտելիքների տարածման և էկոլոգիական մշակույթի համալիր դաստիարակության իրագործման համար առաջատար դեր ունի քարոզչությունը. հայրենի բնության նկատմամբ սերը, խնայողական վերաբերմունքը, բնության հանդեպ հոգատարությունը:

Բնության պահպանության հարցում ոչ մի օրենք, արգելք, տուգանք ու պատիժ ցանկալի արդյունք չեն ապահովի, եթե մարդու մեջ սեր չդաստիարակվի շրջապատող աշխարհի հանդեպ:

Անձի էկոլոգիական դաստիարակության սկզբնական փուլերն են՝ ընտանիք, նախադպրոցական հաստատություններ (մանկապարտեզները) և դպրոց, քանի որ դրանց միջոցով է առաջին հերթին սկսվում ապագա լիարժեք քաղաքացու ձևավորումը:

Այն, ինչ ձեռք է բերվել ընտանիքում, իր հետագա խորացումը պետք է ստանա նախադպրոցական հաստատությունում, որտեղ պատասխանատուները պարտավոր են սաների մեջ խելամիտ խնայողություն, բնական և կենդանական աշ-

խարհի հանդեպ սեր և հետաքրքրություն սերմանել:

Էկոլոգիական գիտելիքների համակարգը, ամբողջությամբ վերցրած, գոյավորվում է ուսումնական առարկաների համալիրից: Դա և՛ բնագիտությունն է, և՛ կենսաբանությունը, և՛ աշխարհագրությունը, և՛ ֆիզիկան ու քիմիան, և՛ աշխատանքի ուսուցումը:

Մտածողության ավելի բարձր ու ավելի լայն մակարդակի հասնելու համար պետք է շարունակել մարդու էկոլոգիական մշակույթի բարձրացման ուղղությամբ աշխատանքը:

Սա է ուղին, որը ի վերջո կտանի դեպի ցանկալի նպատակը, որովհետև մարդն օժտված է իր նախորդ սերունդների գիտակցության միջոցով ընկալված ու յուրացված փորձն օգտագործելու կարողությամբ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Է. Ա. Բարայան**, Բնօգտագործման և բնապահպանության տնտեսագիտական հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., ԱԱԱԱ, 2006:
2. **Суравагина И.Т., Сенкевич В. М.** Как учить экологию. Пособие для учителей. М., 1995.
3. **Мазур И. И.** Путь к экологической культуре. М., 2001.
4. **Лагунова А. И.** Политика обеспечения экологической безопасности в экологической доктрине: стратегии национальной безопасности России. //Личность, культура, общество. 2011, Вып. 4, N 67-68, с. 277-283.

#### GLOBAL PECULIARITIES OF LEARNER'S ECOLOGICAL EDUCATION

**HASMIK DERDZYAN**

Candidate of pedagogical sciences, docent  
Executive director of Armenian-Russian International University "Mkhitar Gosh"

#### Summary

In the article it is discussed the ways to increase efficiency of ecological education and basis of that education.

# ՕԺՏՎԱԾ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ\*

## Վաչիկ ԲՐՈՒՏՅԱՆ

Սամկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ  
«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի ռեկտոր



Օժտվածության խնդիրը միշտ էլ հետաքրքրել է մարդկությանը տարբեր ժամանակաշրջաններում, տարբեր բնագավառի մասնագետներին, այդ թվում մանկավարժներին: Չնայած դրան, հետազոտական աշխատանքները սկսվել են շատ ուշ: Հասարակության մեջ օժտվածության ֆենոմենը պատված է եղել առեղծվածային քողով, քանի որ այն հաճախ զուգակցվել է անբացատրելի երևույթներով: Նրանց կամ կախարո էն անվանել, կամ խելագար [6, 9]:

Օժտվածության խնդրի գիտական հետազոտությունները, ինչպես նաև հայտնի և օժտված մարդկանց կենսագրության հետազոտությունները ցույց են տվել, որ օժտվածության երևույթը կարող է զուգակցվել շնորհաշատ մարդկանց տարօրինակությունների, հիվանդագին արարքների և իրական կյանքից հոգեբանական օտարացվածության հետ: Գիտության մեջ այս հիմնավորումը իր տեղը գտել է, երբ ապացուցվել է, որ կարող է լինել գերզարգացում ուղեղի մի ոլորտում մյուս ոլորտների թերզարգաման հաշվին [8, 4]:

Օժտված երեխաների մոտ հատկապես նկատվում են վերոգրյալ խնդիրների հետևյալ դրսևորումները՝ ընդունակությունների գերզարգացում շարժողական, խոսքային և այլ ֆունկցիաների հաշվին: Այս երևույթը կոչվում է «անհամաչափ զարգացում» [3, 24]:

Ինչպես գիտենք, երեխան, հատկապես կրտսեր դպրոցական տարիքում, սովորում է գրելու հմտությանը, իսկ անհամաչափ զարգացման ժամանակ, երբ օժտված երեխան անընդհատ հետ է մնում գրավոր աշխատանքների ժամանակ,

հայտնվում է թույլ առաջադիմություն ունեցող երեխաների շարքում: Այդ պատճառով նա կորցնում է ուսումնական մոտիվացիան և կարող է ընդհանրապես հիասթափվել դպրոցից [11, 80]:

Նույնը տեղի է ունենում խոսքի հետ: Սա տարածված երևույթ է օժտված երեխաների մոտ, և ինչպես ցույց են տալիս կենսագրական տվյալները, մանկական տարիքում դրանով տառապել են շատ նշանավոր և տաղանդավոր մարդիկ՝ Միքելանջելո, Օ. Ռոդեն, Ա. Էյնշտեյն, Ու. Չերչիլ: Բնականաբար խոսքային խնդիրները դժվարացնում են երեխայի շփումը հասակակիցների հետ: Բացի այդ՝ երեխան չի կարողանում դրսևորել իրեն ուսումնական գործընթացում՝ հայտնվելով թույլ առաջադիմություն ունեցող երեխաների շարքում:

Անհամաչափություն կարող է լինել ինտելեկտի և հուզական զարգացման միջև: Այս երևույթը սկզբունքորեն շատ նման է վերոհիշյալ երևույթին, սակայն նրանց տարբերությունը կայանում է նրանում, որ առաջին դեպքում խնդրի ծագումը պայմանավորված է ֆիզիոլոգիական առանձնահատկություններով, իսկ երկրորդ դեպքում՝ սոցիալական, որն ավելի հաճախ է հանդիպում օժտված երեխաների մոտ [9, 24]:

Չետազոտողները տարբեր ժամանակներում խուսանավել են օժտվածության երևույթն ու դրա չափանիշները սահմանելու հարցում և տվել անորոշ ձևակերպումներ: Այնուամենայնիվ մի բան պարզ է. այդ երեխաները տարբերվում են մյուս երեխաներից յուրատիպությամբ, իրենց բացառիկ ընդունակություններով և ունեն որոշակի առանձնահատկություններ [5, 28]: Օժտված երեխաներն ավելի բազմակողմանի գիտելիքներ ունեն: Նրանք անկախ են իրենց դատողություններում, ինքնավստահ են, իշխող, ըմբոստանում են ճնշման և սահմանափակումների դեմ, հավված են ինքնահիացման, հարցասեր են, հետաքրքրասեր, ունեն հումորի զգացում, հարուստ երևակայություն և ճկուն, ինքնատիպ միտք: Այսպիսի երեխաները ոչ միայն շուտ են ընկալում, այլև ընկա-

\* Ներկայացվել է 12.03.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

լում են յուրովի, ինքնուրույն, մշակում են հարցերի սեփական պատասխաններ, խնդիրների լուծման սեփական մեթոդներ: Նրանք լինում են իրենց տարիքին ոչ բնորոշ հասուն, ունենում են հարուստ բառապաշար՝ նույնպես տարիքին անհամապատասխան, իսկ ընդունակությունները վաղ են զարգանում: Օժտված երեխաներին ներհատուկ են նաև իմացական հետաքրքրությունները, ամեն ինչ մինչև վերջ հասկանալու ձգտումը, մեծ աշխատասիրությունը և աշխատունակությունը, որևէ բանի մեջ խորատուզվելու հատկությունը [1, 80]: Նրանք զարմանալի հեշտությամբ կարողանում են կապեր գտնել տարբեր երևույթների և հասկացությունների միջև: Նրանց ամեն ինչ հետաքրքրում է, ամեն ինչ անում են հաճույքով, փնտրում և գտնում են նոր խնդիրներ՝ առանց զգուշության ընդառաջ գնալով դրանց: Բացառիկ հիշողությունը և ճկուն միտքը նրանց հեշտությամբ մղում են ինքնատիպ զուգորդությունների: Համբերատար են, համառ և սկսած գործը միշտ ավարտին են հասցնում: Սակայն դա այն դեպքում, երբ շրջապատն ընդունում է նրանց այնպիսին, ինչպիսին որ նրանք կան, և նրանց օժտվածությունը չի դառնում խնդիր [2, 63]: Ցավոք, ոչ միշտ է, որ այդպես է լինում: Շատ հաճախ օժտված երեխաները ոչ միշտ են գնահատվում և հասկացվում հասարակության կողմից ինչպես հարկն է: Նրանք, կապված իրենց մտավոր մեծ ընդունակությունների հետ, զարգացման մեջ շատ առաջ են անցնում իրենց հասակակիցներից (3-ից 4 տարի և ավելի), ունենում են յուրահատուկ հետաքրքրություններ, առանձնահատկություններ, որի հետևանքով հայտնվում են խմբից մեկուսացած վիճակում, երբեմն էլ ծաղրի են ենթարկվում իրենց հասակակիցների կողմից: Օժտված երեխաները հանդիպում են լուրջ դժվարությունների հուզական, իմացական և սոցիալական զարգացումների անհամապատասխանության պատճառով [12, 7]:

Նշենք նաև օժտված երեխաներին բնորոշ այն առանձնահատկությունները, որոնք հատկապես կարող են հարմարման դժվարությունների պատճառ հանդիսանալ, ինչպես նաև ներկայացնենք դրա հետ կապված խորհուրդներ և մեթոդական հանձնարարականներ [4, 52]:

1. Օժտված երեխաներին բնորոշ է **յուրահատուկ, չկրկնվող կարծիքներ, լուծումներ առաջարկելը**, որը չի խրախուսվում մարդկանց մեծամասնության կողմից: Շրջապատը, իսկ ուսումնական գործընթացում՝ մանկավարժները սպասում և պահանջում են ավանդական, բոլորի կողմից արդեն ընդունված կարծիքներ ու լուծումներ: Քանի որ հասարակության մեջ գոյություն ունեն որոշակի կարծրատիպեր, հայացքներ, որոնցից շեղումը նույն հասարակության կողմից դիտվում է որպես շեղում նորմայից, ապա բնական է, որ

օժտվածների վերոհիշյալ հատկությունը նրանց դարձնում է «աննորմալ» և ենթարկվում համընդհանուր քննադատման: Նման պայմաններում, երբ օժտվածի ցանկացած միտք, արարք գնահատվում է որպես ոչ նորմալ, ապա բնական է, որ օժտվածն իրեն զգում է չհասկացված, մերժված բոլորի կողմից:

2. Քանի որ օժտված երեխաները նաև շատ ազատ են իրենց կարծիքն արտահայտելու հարցում, նրանք կարող են իրենց թույլ տալ ուղղել և նկատողություններ անել, որը, իհարկե, դուր չի գա մարդկանց մեծամասնությանը, նույնիսկ եթե նկատողությունը տեղին լինի: Այդ երեխան կարող է դառնալ մանկավարժի թշնամին և ենթարկվել տարբեր տեսակի փորձությունների վերջինիս կողմից:

3. **«Ամենագետ» լինելը** խանգարում է այդ երեխաներին դրական հարաբերություններ հաստատել ինչպես մանկավարժների, այնպես էլ հասակակիցների հետ: Ինտելեկտուալ օժտվածները, կապված նաև իրենց հետաքրքրասիրության հետ, շատ տեղեկացված են տարբեր իրերի և երևույթների շուրջ, եթե ծնողները նաև ուշադիր են, ապա նրանք ունենում են նույնիսկ հանրագիտական տեղեկություններ: Այդ պատճառով խմբում նրանք հաճախ արդեն տեղեկացված են լինում այն նյութի մասին, որը նոր է մյուսների համար: Նրանք կարող են այնպիսի մանրամասներ իմանալ, որ նույնիսկ ուսուցիչը կարող է չիմանալ: Տեղյակ լինելով՝ նրանք կարող են հաճախ ընդհատել ուսուցչին՝ փորձելով շարունակել միտքը կամ առաջինը բարձրացնել ձեռքը՝ մանկավարժի հարցին պատասխանելու համար, որը կարող է նյարդայնացնել ինչպես համադասարանցիներին, այնպես էլ մանկավարժին: Դա տարածվում է նաև մյուս փոխհարաբերությունների վրա: Սովորաբար մարդիկ, այդ թվում մեծերը, այդպիսի վարքը գնահատում են որպես ուժային ճնշում, առավելության հասնելու ձգտում: Զրուցակիցը, որին ընդհատում են, վտանգ է զգում ընդհատողի կողմից կամ թաքնված մարտահրավեր:

4. Ծնողները, մանկավարժները երեխաներին սովորեցնում են ամեն ինչ «ճիշտ» անել: Ինչ որ երեխան փորձում է անել՝ ծեփել, նկարել, կարդալ սովորել և այլն, միշտ կողքին է հայտնվում մեծահասակը, որը գնահատում է՝ «ճիշտ ես անում» կամ «սխալ ես անում»: Օժտված մարդիկ, հատկապես երեխաները, շատ ծանր են տանում սահմանափակումները: Նրանք զգում են, որ ցանկացած սահմանափակում իրենց կաշկանդում է: Արդյունքում նրանք փորձում են տարբեր միջոցներով ազատվել այդ սահմանափակումներից՝ հաճախ օտարանալով հասարակությունից:

5. **Գերզգայունությունը շրջապատի նկատմամբ:** Վերջինս նույնիսկ հանդիսանում է նրանց տարբերակիչ առանձնահատկությունը: Բանն այն



է, որ մտավոր ընդունակությունների զարգացմանը զուգահեռ մեծանում է օժտվածների զգայունությունը: Ի տարբերություն մյուսների, նրանց տպավորություններն ավելի խորն են, երկար են պահպանվում հիշողության մեջ և վերջիններիս կողմից ենթարկվում են բազմակողմանի վերլուծության: Մանրուքները, պատահական հանգամանքները, որոնք կարող են աննկատ մնալ սովորական մարդկանց, խորապես թափանցում են նրանց հոգեկան աշխարհը, տանջում, որն էլ հաճախ արտահայտվում է նրանց ստեղծագործություններում:

**6. Գերխնդիրներ դնելու և կատարելության ձգտելու մշտական ցանկությունը:** Զարգացման տեսանկյունից նման փորձերը նույնիսկ օգտակար են, բայց քանի որ օժտված երեխաները սովորաբար ավելի արագ և հեշտ են լուծում այն խնդիրները, որոնք երբեմն նույնիսկ հասու չեն իրենց հասակակիցներին, ապա դա վերածվում է մի տեսակ սովորության: Ե՛վ ծնողներին, և՛ մանկավարժներին, և՛ համադասարանցիներին, հետևաբար նաև իրենց՝ օժտված երեխաներին թվում է, թե դա պետք է տարածվի ցանկացած գործունեության կամ խնդրի լուծման վրա: Բայց քանի որ նա դեռ երեխա է և սովորելու շատ բան ունի, ապա կարող է նաև սխալվել, որը կարող է շատ ծանր ընկալվել և՛ շրջապատի կողմից, որի դեպքում կարող են կասկածի տակ դրվել նրա բարձր ընդունակությունները (երեխաները կարող են ծաղրել՝ ասելով, որ իրեն դրել էր ամենագետի տեղ), և՛ իր իսկ կողմից՝ ինքնագնահատականի, ինքնահաստատման տեսանկյունից:

**7. Օժտվածությանը բնորոշ գերադեքության բարդույթը:** Որպես կանոն, գրեթե բոլոր օժտված երեխաներն ունեն այդ խնդիրը: Շատ դեպքերում պատճառն այն է, որ այդ երեխաները, տարբերվելով իրենց բարձր ընդունակություններով և արժանանալով մեծահասակների դրական վերաբերմունքին, իրենց մասին կազմում են դրական հույզերով հագեցած պատկերացումների համակարգ, որը տարիների ընթացքում աստիճանաբար խորանում և կարծրանում է՝ կառավարելով վարքը:

**8. Շատ վառ երևակայությունը:** Այս առանձնահատկությունը բնորոշ է գրեթե բոլոր օժտվածներին: Թվում է, թե այն առավելություն է: Իհարկե, դա այդպես կլիներ չափի մեջ, բայց օժտվածների մոտ այն շատ-շատ է զարգացած և խանգարում է այլ մարդկանց հետ փոխհարաբերություններում: Նրանք հաճախ ստեղծում են իրենց համար գոյություն չունեցող մի երևակայական աշխարհ և այնքան հավատում դրա գոյությանը, որ կտրվում են իրականությունից: Մեծահասակները պետք է ըմբռնումով մոտենան նման երեխաներին, այլապես նրանց մոտ կարող է կասկած կամ անոթ առաջանալ սեփական երևակա-

յության, նույնիսկ «նորմալ» լինելու հետ կապված, որի հետևանքով երեխան կարող է փակվել իր մեջ, «իր աշխարհում» և ոչ ոքի հետ չչփվել:

Վառ երևակայության հետ են կապված նաև օժտված երեխաների մոտ հաճախ նկատվող չափազանցված վախերն ու տագնապները:

Այսպիսով, օժտվածության երևույթը հաճախ կարող է ուղեկցվել հասարակությունից օտարացվածությամբ, օժտվածների առանձնահատկությունները երբեմն իրենցով կարող են պայմանավորել մերժվածություն հասարակությունից, անհանդուրժողականություն: Ուստի անհրաժեշտ է բարձրացնել հասարակության, մասնավորապես ուսուցիչների պատրաստվածության մակարդակը՝ զինելով նրանց օժտվածության առանձնահատկությունների մասին հոգեբանա-մանկավարժական գիտելիքներով:

Վերջապես վերոհիշյալ փաստի մասին են վկայում նաև հայտնի մարդկանց կենսագրական տվյալները: Այսպես, Ա. Էյնշտեյնը եղել է միջակ ընդունակությունների տեր աշակերտ: Նա չի տարբերվել փայլուն կարողություններով և խելացիությամբ, ինչպես ընդունված է մտածել օժտվածների մասին: Նա հեռացվել է դպրոցից վատ առաջադիմության և ոչ օրինակելի վարքի համար:

2. Դարվիմին փոքր տարիքում բոլոր ուսուցիչները համարել են հիմար և կանխատեսել նրա համար ոչ փայլուն ապագա:

Նման վերաբերմունքի է արժանացել նաև փոքրիկ Պուշկինը: Նա նույնպես չի տարբերվել մյուս երեխաներից իր փայլուն կարողություններով և նյարդայնացրել է մորը իր անշնորհքությամբ, ծանրաշարժությամբ:

Չայտնի մարդկանց թիվը, որոնք վաղ տարիքում աչքի չեն ընկել բացառիկ կարողություններով, և որոնց մոտ նկատվել են հասարակությունից օտարացվածության, նույնիսկ վերջինիս չհարմարվելու դրսևորումներ, այդքան էլ քիչ չէ. Բեթհովեն, Վան Գոգ, Լոբաչովսկի, Չեխով, Բուլգակով և այլն:

Օժտված երեխաների մոտ հոգեբանական օտարացման զարգացման ընթացքը և ելքը կախված է նաև շրջապատից: Վերոհիշյալ օրինակները ունեցել են դրական ելք, սակայն լինում է և հակառակը: Օրինակ՝ Ս. Մայլզի, Ս. Լաջոուլայի և այլոց հետազոտությունները ցույց են տվել, որ ինքնասպանություններ օժտված երեխաների շրջանում հանդիպում է 2,5 անգամ շատ, քան նրանց հասակակիցների: Վերջապես, օժտվածությունը կարող է ունենալ բոլորովին անցանկալի ուղղվածություն, այսինքն՝ ծառայել ոչ թե ի շահ մարդկությանը, այլ հակառակը, դառնալ չարիք մարդկության գլխին, ինչին ակամատես է եղել մարդկությունը (Չիտլեր, Ստալին):

Այսպիսով, օժտվածության երևույթը հաճախ

ուղեկցվում է հասարակությունից օտարացվածությամբ: Դա են վկայում ինչպես մեր դիտումները, այնպես էլ օժտված մարդկանց կյանքի ուսումնասիրությունները: Սակայն դա չի նշանակում, որ բոլոր օժտվածները օտարացած են: Օժտվածությունը հաճախ, տարբեր գործոնների ազդեցության տակ, ուղեկցվում է հասարակությունից, սոցիալական միջավայրից հոգեբանական օտարացմամբ [12, 26]:

Ղժվար է ասել, թե արդյոք մարդկությունն այսօր կունենար Լուդվիգ Վան Բեթհովեն, Վինսենտ Վան Գոգ, եթե չլինեին Նեֆեն և Թեոն: Բայց մի բան պարզ է. տաղանդավոր, օժտված մարդկանց համապատասխան աջակցություն է հարկավոր սոցիալական միջավայրին հարմարվելու համար: Դա է վկայում ինչպես մեր, այնպես էլ հոգեբանների կողմից կատարված ուսումնասիրություններն այս բնագավառում: Ինչպես նաև այդ փաստի մասին է խոսում օժտված մարդկանց կյանքի ուսումնասիրությունը: Նշենք նաև, որ օժտվածների օտարացվածության կանխարգելման և հաղթահարման, ինչպես նաև ընդունակությունների և անձի զարգացման համար համապատասխան նպաստավոր պայմաններ ստեղծելու գործում հսկայական է ընտանիքի դերը: Օժտվածության զարգացման բարեհաջող ընթացքի գերակշռող մեծամասնության դեպքում հիմնական կարգավորիչ գործառույթն իր վրա է վերցնում ընտանիքը: Օժտված երեխան, ինչպես մյուսները, նույնպես զգում է ջերմության և հոգատարության կարիք, ունի փոխըմբռնման և ինքնահաստատման պահանջ, և ընտանիքը պետք է հարգանքով վերաբերվի նրա անձին, գործունեությանը, որտեղ դրսևորվում են երեխայի արտակարգ ընդունակությունները, առանձնահատկությունները:

Օտարացած օժտված երեխաներին համապատասխան հոգեբանական աջակցություն ցուցաբերելու համար առաջին հերթին անհրաժեշտ է բացահայտել այդ երեխաներին, ուսումնասիրել նրանց անձը բազմակողմանիորեն, բացահայտել այն պատճառները, որոնք հանգեցրել են տվյալ անձի մոտ հոգեբանական օտարացման առա-

ջացմանը, չեզոքացնել այդ պատճառները, այնուհետև համապատասխան միջոցառումներ ձեռնարկել հոգեբանական օտարացումը հաղթահարելու համար:

Այսպիսով՝ օժտված երեխայի սխալ ընկալումը և իմաստավորումը ևս կարող են հոգեբանական օտարացման առաջացման պատճառ հանդիսանալ: Դրա համար անհրաժեշտ է հաղթահարել հասարակության մեջ գոյություն ունեցող այն սխալ համոզմունքը, ըստ որի՝ օժտված երեխան օգնության կարիք չունի: Բացի այդ, անհրաժեշտ է նաև բարձրացնել այն ուսուցիչների պատրաստվածության մակարդակը, որոնք աշխատում են օժտված երեխաների հետ, զինել նրանց նման երեխաների անձնային առանձնահատկությունների մասին հոգեբանա-մանկավարժական գիտելիքներով [10, 56]:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Лейтес Н. С.** Способности и одаренность в детские годы. М., 1984.
2. **Мелхорн Г., Мелхорн Х.-Г.,** Гениями не рождаются. Общество и способности человека. М., 1989.
3. **Мелхорн Г., Мелхорн Х.-Г.,** Одаренные дети. М., 1991.
4. **Кузмина К. М.,** Индивидуально-психологические особенности школьников. М., 1988.
5. **Хеллер К. А., Перлет К. Сьервальд В.,** Лонгитюдное исследование одаренности. 1991.
6. Специальная педагогика. Под. ред. Н. М. Назаровой. М., 2004.
7. **Тюленев П. В.,** Одаренность детей и тайны пирамиды управления человечеством и семьей. Кн. 1, М., 2011.
8. **Ефримсон В. П.,** Гениальность и генетика. М., 1988.
9. **Алис Миллер.** Драма одаренного ребенка и поиск собственного Я. М., 2011.
10. **Немов Р. С.** Психология. Уч. в 3-х книгах, кн. 3, М., 1999.
11. **Лейтес А. С.** Возрастная одаренность школьников. М., 2001.
12. **Юркевич В. С.,** Одаренный ребенок. иллюзии и реальность. М., 1999.

#### PSYCHOLOGICAL PECULIARITIES AND EDUCATIONAL PRINCIPLES OF GIFTED CHILDREN

**VACHIK BRUTYAN**

Candidate of pedagogical sciences, docent  
Rector of Armenian-Russian International University "Mkhitar Gosh"

#### Summary

In the article those difficulties are represented which we need in gifted children because of their emotional, cognitive and social development of non-correspondences. Those peculiarities of gifted children are also noted, which could become a reason for difficulty in confidence and there are methodological messages and advice related to education.

# ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ ՈՐՊԵՍ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ\*

## Հայկ ՊԵՏՐՈՍՅԱՆ

*Մանկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ  
և. Արժվանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի նորագույն տեխնոլոգիաների ներդրման և որակի զնահատման կենտրոնի ղեկավար*



Հոդվածում ներկայացվում են բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողների ինքնուրույն ուսումնական աշխատանքի տեսակները և դրանց կազմակերպումը մոդուլային ուսուց-

ման տեխնոլոգիայում: Իրականացված հետազոտության արդյունքները փաստում են մոդուլային տեխնոլոգիայի արդյունավետությունը և այն որպես ուսանողների ինքնուրույն աշխատանքի ակտիվացման միջոց լինելը:

**Հանգուցային բառեր`** չափորոշիչ, ուսումնական պլան, առարկայական ծրագիր, տեխնոլոգիա, մոդուլ, ինքնուրույն աշխատանք, միջանկյալ ստուգում:

Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումների գործընթացում ներդրվեց ուսուցման մոդուլային տեխնոլոգիան: Մասնագիտությունների պետական կրթական նոր սերնդի չափորոշիչները, ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը կառուցվեցին մոդուլային ուսուցման հայեցակարգային և բովանդակային սխեմայի հիմքի վրա: Այժմ ուսուցման գործընթացում թողարկվող մասնագետների պատրաստության արդյունավետության ապահովման նպատակով գրեթե բոլոր մասնագիտական ուսումնական հաստատություններում կիրառվում է մոդուլային ուսուցման տեխնոլոգիան:

«Մոդուլային ուսուցման» տակ հասկանում են ուսուցման տեխնոլոգիա, որի հիմնական միջոց-

ները մոդուլն է և մոդուլային ծրագիրը: Քննարկվող հարցի հիմնարար հասկացությունը կրթական մոդուլն է: Մոդուլը տեղեկատվության համալիր է, որը ներառում է ուսումնական նյութի տրամաբանորեն ավարտված միավոր, դրված նպատակների իրականացումն ապահովող գործողությունների նպատակային ծրագիր և մեթոդական ուղեցույց: Մոդուլային ուսուցումն ուսանողին հնարավորություն է ընձեռում ինքնուրույն աշխատել մոդուլային ծրագրի համաձայն:

Բարձրագույն կրթության համակարգում ինքնուրույն ուսումնական աշխատանքի կազմակերպման գործընթացում կարևորվում են`

- ինքնուրույն աշխատանքի մանկավարժահոգեբանական հիմնավորվածությունը, որը ենթադրում է ներքին ձգտումներ, բարոյականային պատրաստվածություն և ուսանողի կողմից աշխատանքն ինքնուրույն, առանց արտաքին համոզումների կատարելու ցանկություն,

• ինքնուրույն աշխատանքի դաստիարակող գործառնությունը` ուսանողի աշխարհայացքի, սոցիալական ակտիվության որակների, գործող և արդիական անձի ձևավորման գործընթացում,

- ինքնուրույն ուսումնական աշխատանքի կապը ուսումնադաստիարակչական գործընթացի հետ, գիտելիքի և գործունեության միասնությունը որպես ճանաչողության գլխավոր միջոց:

Ինքնուրույն ուսումնական աշխատանքի հիշյալ առանձնահատկությունները արտացոլվում են այդ գործունեության կոնկրետ սկզբունքներում, որոնց հիմքի վրա կառուցվում է մոդուլային ուսուցման տեխնոլոգիան:

Մոդուլային ուսուցման տեխնոլոգիայի հիմնական նպատակներից մեկն անձի անհատական կրթական պահանջները մասնագիտական բազային պատրաստվածության անհրաժեշտ մա-

\* Ներկայացվել է 19.03.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

կարողակին համապատասխանեցման ճկունության ապահովումն է, և ուսանողների մտածողության, հիշողության, ստեղծագործական հակումների ու ընդունակությունների զարգացման համար պայմանների ստեղծումը: Այդ գործընթացները կառուցվում են ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման վրա: Ինքնուրույն աշխատանքը, դրա կազմակերպումը կարևոր դեր է խաղում ուսուցման գործընթացում, ինչպես նաև ուսանողի գիտական և ստեղծագործական աշխատանքում: Ուսանողի ուսումնական, գիտական և մասնագիտական աշխատանքների հաջողությունը կախված նրանից, թե ինչքանով է ուսանողը նախապատրաստված և ներգրավված ինքնուրույն գործունեության մեջ:

Մոդուլային ուսուցման ժամանակ դասավանդողը իրականացնում է տեղեկատվական և վերահսկողական, խորհրդատվական և կոորդինացման գործառույթներ՝ ուսուցման գործընթացում պահպանելով կազմակերպչի ու կառավարչի դերը, և այս գործառույթների իրականացման ընթացքում հիմնական շեշտը դրվում է ինքնուրույնության ակտիվացման վրա: Այդ նպատակով աշխատանքային ծրագրերի կազմման ժամանակ նորարարական մեթոդների կիրառությունը ենթադրում է ուսումնադաստիարակչական գործընթացում ուսանողների կողմից աշխատանքների ինքնուրույն կատարման կարողությունների և ստեղծագործական ներուժի զարգացում:

Ուսումնական յուրաքանչյուր մոդուլի սահմաններում ուսանողի ինքնուրույն աշխատանք նախատեսվում է ուսումնական գործընթացի տարբեր ձևերում՝ դասախոսությունների, սեմինար, գործնական և լաբորատոր աշխատանքների, էքսկուրսիաների, դրանց նախապատրաստման ժամանակ: Ուսանողը պետք է կարողանա համառոտագրել դասախոսությունը, կազմել կոնսպեկտներ, պլաններ և ելույթների թեզիսներ, ընտրել գրականություն և տեղեկույթ, դասակարգել դրանք, իրականացնել հետազոտություններ, գրել կուրսային և ավարտական աշխատանքներ, նախագծեր, լուծել մասնագիտական խնդիրներ, պատրաստել ներկայացումներ և այլն: Մասնագետի կայացման գործընթացում ինքնուրույն աշխատանքներից յուրաքանչյուրն իրականացնում է որոշակի գործառույթ: Բնականաբար, դրանք իրականացվում են ուսումնական պլանով նախատեսված յուրաքանչյուր ուսումնական առարկայից լսարանային և արտալսարանային աշխատանքների ձևերով:

Որպես ուսանողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքի տեսակներ, կարող են նախատեսվել՝

- դասախոսության նյութերի մշակում, տեղեկույթի և գիտական գրականության հետ աշխատանք ուսումնական առարկայական մոդուլների՝ ինքնուրույն աշխատանքի համար առանձնացված նյութի ուսումնասիրության գործընթացում,
  - նախապատրաստվել սեմինար պարապմունքներին և գործնական ու լաբորատոր աշխատանքներին,
  - գործնական աշխատանքներին հանձնարարված խնդիրների լուծում,
  - նախապատրաստվել ստուգողական աշխատանքներին, միջանկյալ ստուգումներին, կիսամյակային քննություններին,
  - կուրսային աշխատանքների կատարում և ուսումնական պլանով նախատեսված անհատական պարապմունքներ,
  - նախապատրաստվել ամփոփիչ ատեստավորմանը և կատարել ավարտական դրակավորման աշխատանք:
- Ուսանողների լսարանային ինքնուրույն աշխատանքները բազմազան են և կարող են նախատեսվել՝
- ինքնուրույն աշխատանքի կատարում,
  - ստուգողական աշխատանքների կատարում,
  - խնդիրների լուծում,
  - աշխատանք տեղեկատվական, մեթոդական, մասնագիտական գրականության հետ,
  - կատարած աշխատանքների պաշտպանություն,
  - գրույց, գործնական խաղեր, բանավեճ,
  - թեստավորում և այլն:
- Ինքնուրույն աշխատանքի հանձնարարության տեսակներ կարող են լինել՝
1. գիտելիքների ձեռք բերման նպատակով՝
    - ուսումնական դասագրքի, գրական սկզբնաղբյուրի, մասնագիտական գրականության ընթերցանություն,
    - տեքստի պլանի կազմում,
    - տեքստի կառուցվածքի քարտեզավորում,
    - տեքստի համառոտագրում,
    - աշխատանք տեղեկատվության, բառարանների հետ, ժանրացում նորմատիվ փաստաթղթերի հետ,
    - ուսումնական հետազոտական աշխատանք,
    - ձայնագրությունների և տեսագրությունների կատարում և օգտագործում,
    - համակարգչային տեխնիկայի և համացանցի օգտագործում,
  2. գիտելիքների ամրապնդման և համակարգման նպատակով՝
    - աշխատանք դասախոսության համառոտագրի հետ, տեքստի մշակում, ուսումնական

դասագրքի, գրական սկզբնաղբյուրի, մասնագիտական գրականության, ձայնագրությունների և տեսագրությունների հետ կրկնվող աշխատանք,

- պատասխանի պլանի և թեզիսի կազմում,
- ուսումնական նյութի համակարգման համար աղյուսակի կազմում,
- նորմատիվ նյութի յուրացում,
- ստուգող հարցերի պատասխանում,
- կոնֆերանսների, սեմինար պարապմունքների ելույթների, հաղորդումների տեքստերի նախապատրաստում,
- ռեֆերատների և զեկուցումների պատրաստում,

3. կարողությունների ձևավորման համար՝

- խնդիրների և վարժությունների լուծում,
- գծագրերի, սխեմաների, գրաֆիկական, հաշվարկային աշխատանքների կատարում,
- իրավիճակային խնդիրների լուծում,
- գործնական խաղերի նախապատրաստում,
- մասնագիտական գործունեության բաղադրիչների և տարբեր տեսակների մոդելավորում և նախագծում,

- կուրսային և ավարտական աշխատանքների կատարում,
- փորձարարական և կոնստրուկտորավորման աշխատանքներ,
- ձայնագրությունների և տեսագրությունների կիրառության միջոցով մասնագիտական կարողությունների ռեֆլեքսիվ վերլուծություն և այլն:

Ինքնուրույն աշխատանքի տեսակը, դրանց բովանդակությունը կարող է ունենալ տարբերակված և դիֆերենցիալ բնույթ, հաշվի առնելով մասնագիտության, ուսումնական առարկայի և ուսանողի անհատական առանձնահատկությունները: Ուսանողի ինքնուրույն ուսումնական աշխատանքի ձևերը ընտրվում են ուսումնական գործընթացի նպատակներին համապատասխան: Ուսանողների ուսումնական ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը ներդաշակվում է ուսուցման մեթոդներին և դրանց հետ կազմում միասնական միջոցների համակարգ գիտելիքների ձեռք բերման և հմտությունների ու աշխատանքային կարողությունների մշակման գործընթացում:

Մոդուլային ուսուցման պարագայում յուրաքանչյուր առարկայի շրջանակներում ենթադրվում է առարկայական մոդուլների քարտեզավորում, ընդգրկելով ինքնուրույն աշխատանքի որոշակի ծավալ, հետևաբար նաև՝ ինքնուրույն աշխատանքի ձևերի և տեսակների ընտրություն ինքնուրույն աշխատանքի տեսակների վերոնշյալ ցանկից:

Առարկայական ութ մոդուլներից բաղկացած

«Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ» առարկայի մոդուլային տեխնոլոգիայի հիման վրա աշխատանքային թեմատիկ պլանում նշվում է ամբողջ դասընթացի ոչ միայն լսարանային, այլ նաև ինքնուրույն աշխատանքները: Օրինակ՝ «Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ» առարկայի բոլոր մոդուլների ուսուցմանը հատկացվում է 150 ժամ (5 կրեդիտ), որից 24-ը՝ ղեկավարվող ինքնուրույն աշխատանքներին: Բացի այդ, դասընթացը ենթադրում է արտալսարանային ինքնուրույն աշխատանք՝ 60 ժամ (տես աղյուսակ 1):

Թեմատիկ պլանով ուսանողների ինքնուրույն աշխատանքներին հատկացված 60 դասաժամներից յուրաքանչյուրին համապատասխանեցված է որոշակի ուսումնական բովանդակություն: Տիրապետելով «Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ» առարկայի աշխատանքային թեմատիկ պլանին, դրված նպատակների իրականացմանն անհրաժեշտ տեղեկատվությանը և մեթոդական ցուցումներին, ուսանողն առավել ինքնուրույն է յուրացնում առարկայական ծրագրային բովանդակության զգալի մասը: Դա հատկանշական է բոլոր և, հատկապես, գործնական հմտություններ ձևավորող առարկաների համար, քանի որ այն ենթադրում է ինքնուրույն աշխատանք ուսուցման գործընթացում և դրանից դուրս: Յուրաքանչյուր դեպքում ունենալով աշխատանքի որոշակի ծավալ, բովանդակություն, անհրաժեշտ օժանդակություն և խորհրդատվություն, ժամանակի ընթացքում մեծանալով աշխատանքի ծավալը, նվազում է խորհրդատվության ծավալը, խթանելով նյութի հաղթահարման ինքնուրույնությանը: Հետևաբար, մոդուլային ուսուցման դեպքում ուսանողի կողմից մասնագիտական հմտությունների ձեռք բերման ինքնուրույնությունը ավելի բարձր է, քան ավանդական ուսուցման դեպքում: Մեր կարծիքով, մոդուլային ուսուցման անցնելը ենթադրում է ինքնուրույն աշխատանքի ծավալի մեծացում և պահանջում է ապագա մանկավարժի ինքնուրույնության, նախաձեռնողականության, կրեատիվության, սոցիալ-մանկավարժական ակտիվության աճ:

Հետազոտության համար որպես ուսումնական նյութ ընտրվել է «Ուսուցման միջոցներ և ռեսուրսներ» մոդուլը, որն ընդգրկում է երեք թեմաներ՝ «Դասավանդման և ուսումնառության միջոցներ ու պարագաներ», «Դասավանդման և ուսումնառության դիդակտիկ պարագաների մշակումը» և «Լսարանի գիտումը ուսուցման ժամանակակից տեխնիկական միջոցներով: Թեմաներից յուրաքանչյուրին հատկացված է 4-ական ժամ, որից 2-ականը՝ ինքնուրույն աշխատանքներին: Որպես

Աղյուսակ 1

«Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ» առարկայի ուսումնական նյութի, առաջադրանքների, ժամանակի (նվազագույն) ամփոփ բաշխում

N	Մոդուլը	Թեման	Ժամերի ընդ. թիվը	Ինքն. աշխ. ժամերը
1	Ներածություն	Ներածություն	2	-
2	Մոդուլ 1 Մանկավարժական արդի տեխնոլոգիաների տեսական հիմունքները	Տեխնոլոգիայի հասկացությունը	2	1
		Տեխնոլոգիաների դասակարգումը Հունանիտար տեխնոլոգիաների ընդհանուր բնութագիրը	4	1
3	Մոդուլ 2 Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների բովանդակությունը, ընտրությունը և իրականացումը	Հունանիտար տեխնոլոգիաների առանձնահատկությունները	4	1
		Ուսուցման գործընթացի տեխնոլոգիականությունը	4	1
		Մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման մանկավարժական համակարգը	4	2
		Մանկավարժական տեխնոլոգիայի գործառնային կառուցվածքը	4	1
4	Մոդուլ 3 Ուսուցման արդի տեխնոլոգիաներ Ուսուցման առարկայական ուղղորդող տեխնոլոգիաներ	Մանկավարժական տեխնոլոգիայի հասկացական հիմքերը և զնահատումը	4	2
		Նպատակադրման տեխնոլոգիա	2	1
		Ամբողջական յուրացման տեխնոլոգիան ըստ Մ.Վ. Կլարինի	4	2
		Մանկավարժական գործընթացի տեխնոլոգիան ըստ Ս.Դ. Շևչենկոյի	4	1
5	Մոդուլ 4 Ուսուցման մեթոդներ, դրանց բովանդակությունը, ընտրությունը և իրականացումը	Խտացված ուսուցման տեխնոլոգիա	4	2
		Մեթոդի տեղն ու դերը կրթական տեխնոլոգիայում	2	1
		Ուսուցման մեթոդների էությունն ու բովանդակությունը	4	2
6	Մոդուլ 5 Ուսուցման միջոցներ և ռեսուրսներ	Ուսուցման մեթոդների ընտրությունը	4	1
		Ուսուցման մեթոդների էությունը	4	1
		Ուսուցման մեթոդների ընտրությունը	4	1
7	Մոդուլ 6 Ուսուցման ձևերը, դրանց ընտրությունը և իրականացումը	Դասավանդման և ուսումնառության միջոցներ ու պարագաներ	4	2
		Դասավանդման և ուսումնառության դիդակտիկ պարագաների մշակումը	4	2
		Լսարանի զինումը ուսուցման ժամանակակից տեխնոլոգիական միջոցներով: Ինտերակտիվ գրատախտակներ	2	2
8	Մոդուլ 7 Կրթության որակի մշտադիտարկման նախագծում և իրականացում	Ուսուցման ձևերի ընտրությունը	4	1
		Մշտադիտարկման հասկացությունը, մոդելը, իրականացման ալգորիթմը	4	2
		Խմբերի կազմման սկզբունքներն ու տեխնիկան	4	2
9	Մոդուլ 8 Ուսուցման տեխնոլոգիաներ	Մշտադիտարկման կազմակերպման տեխնիկան	4	1
		Մանկավարժական արհեստանոցի տեխնոլոգիա	2	1
		Ուսուցման տեխնոլոգիան որպես ուսումնական հետազոտություն	2	2
		Կոլեկտիվ մտավոր գործունեության տեխնոլոգիա էվրիստիկ ուսուցման տեխնոլոգիա	2	2
		Վ.Ֆ. Շատալովի ուսումնառողների գործունեության ակտիվացման և ինտենսիվացման վրա հիմնված մանկավարժական տեխնոլոգիան (ըստ՝ Գ. Սելևկոյի)	4	2
Քործարարական խաղ՝ «Գրքի ֆաբրիկա»	2	2		
Ուսումնական պարապմունք գրքի վրա փինբորտ և ինսերտ մեթոդների համակցության օգտագործմամբ	2	2		

Աղյուսակ 1 -ի շարունակությունը

9	Նախագծման և իրականացման փորձ	Ուսումնական պարապմունք գրքի վրա փինբորտ և ինսերտ մեթոդների համակցության օգտագործմամբ	2	2
		Ուսումնական պարապմունք՝ «Կլոր գրասեղան» տեխնիկայի օգտագործմամբ	2	2
		Ուսումնական պարապմունք ուսուցման կազմակերպման խմբային ձևերի օգտագործմամբ (ըստ Մ. Բուտզի)	2	1
		Ինտերակտիվ եղանակների կիրառումը ուսուցման տեխնոլոգիայի իրականացման ժամանակ	2	2
		Գործնական ուսուցման քառափուլ մեթոդի կիրառումը	2	1
		Գործնական ուսուցման ուղղորդիչ տեքստի մեթոդը	2	1
		Նախագծային մեթոդ	4	1
		Խմբային քննարկումների և գրույցների մոդերացիա	–	2
		Գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքների կազմակերպումը	2	2
<i>Ինքնուրույն աշխատանք</i>			24	
<i>Գիտելիքների ամփոփիչ ստուգում</i>			3	–
<b>Ընդամենը</b>			<b>150</b> <b>(3 կրեդիտ)</b>	<b>60</b>

ինքնուրույն աշխատանքներ պլանավորվել է՝

- ուսումնական նյութերի մշակում, գրական սկզբնաղբյուրների և մասնագիտական գրականության հետ աշխատանք, տեքստի կառուցվածքի քարտեզավորում, տեքստի համառոտագրում,
- ներկայացման պատրաստում, ծայնագրությունների ու տեսագրությունների կատարում և օգտագործում, համակարգչային տեխնիկայի և համացանցի օտագործում,
- սեմինար պարապմունքի համար ելույթի կամ հաղորդման տեքստերի պատրաստում,
- գործնական աշխատանք դասավանդման և ուսումնառության դիդակտիկ պարագաների մշակման վերաբերյալ,
- միջանկյալ ստուգման նախապատրաստում: Ուսումնական նյութի յուրացման մակարդակի բացահայտման նպատակով ստուգողական (24 ուսանող) և փորձնական (27 ուսանող) խմբերում իրականացվել է միջանկյալ ստուգում 6 միավորանոց սանդղակով (20-ից 14-ը հատկացվել է կիսամյակային մնացած նյութերի յուրացմանը), երեք բաղադրիչների միջոցով՝ տեսական նյութի թեստավորում, ուսումնական համառոտագրու-

թյուն և դրա վերաբերյալ ներկայացման պատրաստում: Ստուգողական և փորձնական խմբերում ստուգման երեք բաղադրիչների միջինացված արդյունքները փաստում են մոդուլային տեխնոլոգիայի արդյունավետությունը (աղյուսակ 2):

Մոդուլային ուսուցման արդյունավետությունը հաստատվել է նաև «Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ» առարկան մոդուլային տեխնոլոգիայով ուսումնառողների շրջանում անկետավորման արդյունքում: Անկետավորմանը մասնակցել են 82 ուսանող: Անկետավորման արդյունքում՝ մոդուլային տեխնոլոգիայի դրական բնութագրերից առանձնացվել են՝ կարելի է մոդուլի շրջանակներում առաջադրված խնդիրները լուծել և հանձնարարությունները կատարել տանը, հանգիստ պայմաններում՝ 87.8%, կարելի է ընտրել հանձնարարությունների կատարման ամիսատական գրաֆիկ՝ 85.37%, մոդուլը պարունակում է ամբողջ անհրաժեշտ տեղեկույթ և ցուցումներ լրացուցիչ տեղեկույթի ձեռք բերման ուղղությամբ՝ 82.93%, ուսումնական նյութի և տեղեկույթի յուրացման առավել լայն հնարավորություն է ընձեռում՝ 86.59% մոդուլային ուսուցումը

Աղյուսակ 2

Ստուգման արդյունքները

	<b>1</b>	<b>2</b>	<b>3</b>	<b>4</b>	<b>5</b>	<b>6</b>
Ստուգողական խումբ (ավանդական ուսուցում)	2	4	7	6	3	2
	8.33	16.67	29.16	25	12.5	8.33
Փորձնական խումբ (ուսուցման մոդուլային տեխնոլոգիա)	1	3	4	8	6	5
	3.7	11.11	14.82	29.63	22.22	18.52

Ծանոթություն: Համարիչում նշված է ուսանողների թիվը, հայտարարում՝ ստուգման արդյունքը:

հնարավորություն է ստեղծում ուսումնառության արդյունքների փոփոխության, գիտելիքների և կարողությունների աճի դինամիկայի բացահայտման համար՝ 76.83%, յուրացման գործընթացն ավելի դյուրին է՝ 82%, էապես տարբերվում է ավանդական ուսուցումից՝ 73.17%, խթանում է ուսումնառությունը՝ 70.73%, պարապմունքների բազմազանությունը հետաքրքիր է՝ 65.85%: «Անհրաժեշտ է արդյոք շարունակել ուսուցման գործընթացում կիրառել մոդուլային ուսուցման տեխնոլոգիան» հարցին հարցման մասնակիցներից 90.24%-ը պատասխանել է «այո», 9.76%-ը՝ «ոչ»: Այսպիսով, մոդուլային ուսուցման դեպքում ծանրության կենտրոնը տեղափոխվում է ուսանողի ինքնակրթության կարողությունների և հնտությունների ձևավորման, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման կողմը: Իրականացված հետազոտությունը վկայում է ուսուցման գործընթացում

մոդուլային տեխնոլոգիայի կիրառման արդյունավետության և այն որպես ուսանողների ինքնուրույնության ակտիվացման արդյունավետ միջոց լինելու մասին:

#### ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պետրոսյան Գ. Գ. Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2012:
2. Балакирева Э. В., Богданова Р. У., Даутова О. Б., Даргевичене Л. И., Пискунова Е. В., Тряпицына А. П. Организация самостоятельной работы студентов по педагогическим дисциплинам: Учебно-методическое пособие для преподавателей высшей школы. Часть I. //Под редакцией профессора, члена-корреспондента РАО А. П. Тряпицыной. СПб., 2008.
2. Кукин В. Ж., Наводнов В. Г. О сравнении педагогических технологий // Высшее образование в России. 1999, N1. 2.

---

#### MODULAR TECHNOLOGY AS A MEANS OF ENHANCING INDEPENDENT WORK OF STUDENTS

**PETROSYAN H. HAYK**

Doktor of Pedagogical Sciences, Docent

Armenian State Pedagogical University After Kh. Abovyan,

The Head of the Centre of Contribution of Innovative Technologies and Quality Assessment

#### Summary

In the article presents the types of independent work of students in higher education institutions and their organization in modular technology education. Results of the study demonstrate the effectiveness of modular technology and as a means to enhance students' independent work.

**Key words:** standards, curriculum, curriculum, technology, module, independent work, the intermediate inspection.



# ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՄՆԱԳԵՏՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ԵՆԹԱՏԵՔՍՏՈՒՄ\*

## Հայկ ՊԵՏՐՈՍՅԱՆ

*Մանկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ  
և. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի նորագույն  
տեխնոլոգիաների ներդրման և որակի զննահատման կենտրոնի ղեկավար*

## Մարզարիտա ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

*և. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդհանուր  
մանկավարժության ամբիոնի հայցորդ*



Հողվածում մասնագիտական կրթությունը ներկայացվում է աշխատաշուկայի պահանջարկի և առաջարկի ենթատեքստում: Առկա իրավիճակի վերլուծության արդյունքներով առաջարկվում են կրթական ծրագրերի մշակման մոտեցումներ, հիմնավորվում է առկա հիմնախնդիրների լուծման համար պետական համակարգող կառույցի անհրաժեշտությունը ոլորտում:

Հանգուցային բառեր՝ աշխատաշուկա, գործատու, մասնագետ, առաջարկ, պահանջարկ, մասնագիտություն, մասնագիտական կրթություն, չափորոշիչ, կոմպետենտություն (իմացություն):

Համաշխարհային տնտեսական, քաղաքական և մշակութային ինտեգրման և ունիֆիկացման համալիր բնույթ կրող երևույթին՝ գլոբալացմանն արձագանքելուն և գիտելիքահեն հասարակության մարտահրավերներին միտված՝ աշխարհի մի շարք երկրներում տեղի են ունենում կրթության համակարգի բարեփոխումների և թողարկվող մասնագետների որակի շարունակական բարելավման գործընթաց: Ժամանակակից աշխարհում անընդհատ աճում է կրթության դերը: Ինչպես նշում է Ջոն Դյուին, «Ցանկացած կրթություն նպատակ ունի սոցիալականացնելու իր խմբի

անդամներին, բայց սոցիալականացման որակը և արժեքը կախված են խմբի սովորույթներից և նպատակներից» [3]:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում կրթությունը մշտապես ենթակա է հաճախակի քննարկման, և Հայաստանի հետագա բնականոն զարգացման ռազմավարության առաջնահերթությունը կապվում է գիտելիքահեն տնտեսության հետ, որը կստեղծի բարձր վարձատրվող աշխատատեղեր և կնպաստի տեղական բիզնեսների մրցունակության բարձրացմանը համաշխարհային շուկաներում: Աշխատավարձի և կենսամակարդակի շարունակական և կայուն աճը պետք է հիմնված լինի արտադրողականության աճի վրա, իսկ կայուն զարգացում ապահովելու համար անհրաժեշտ է աշխատաշուկայի պահանջները բավարարող բարձրորակ մասնագետների պատրաստում:

Յուրաքանչյուր նոր աշխատանք և դրանից ստացված եկամուտ մարդուն և նրա ընտանիքի անդամներին հասարակության ձևավորման և զարգացման մեջ տալիս է նոր հնարավորություններ և հեռանկարներ՝ իր մասնակցությունն ապահովելու համար: Երկրի սոցիալ-շուկայական տնտեսությունն անհատին սոցիալապես ապահով կյանքի հնարավորություն է ընձեռում: Դժվար է հանդուրժողականություն դրսևորել հարուստի և աղքատի միջև առաջացած սոցիալական տարբերությունների նկատմամբ: Ուստի երկիրը իր տնտեսվարական քաղաքականությունը պետք է վարի համակողմանիորեն, որ հնարավորինս շատե-

\* Ներկայացվել է 05.03.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

րը իրենց մասնակցությունն ունենան երկրի կայուն զարգացման և տնտեսական աճի ապահովման գործընթացում: Սակայն որտեղ են հանդուրժողականության և սոցիալ-շուկայական տնտեսության կայուն զարգացման հիմքերը այն երկրների համար, որոնք երկար տարիներ հաղթահարել են տնտեսական բազմաբնույթ ու լուրջ դժվարություններ: Միջազգային և տեղական փորձագետներն այն տեսնում են կրթության և աշխատաշուկայի փոխկապակցվածության մեջ, այսինքն՝ կրթության քաղաքականության և աշխատանքի առաջարկի քաղաքականության ներթափանցման մեջ:

Մասնագիտական կրթության համակարգի և աշխատաշուկայի վարած քաղաքականության միջև առկա են էապես կարևոր փոխներգործություն և ուղիղ համեմատական կապ: Աշխատաշուկայի պատշաճ ուսումնասիրությունը, արդյունքների թարմացվող տեղեկատվությունն ու վերլուծությունը, ինչպես նաև բնակչության զբաղվածության դիտարկման պարբերականությունը խիստ նշանակալից են աշխատաշուկայում պահանջարկ և մեծ վարկանիշ ունեցող մասնագիտությունների համար: Առաջադրվող խնդիրն այսօրինակ մոտեցմամբ են դիտարկում գրեթե բոլոր երկրները՝ իհարկե կախված երկրի զարգացման տեմպերից ու առանձնահատկություններից: Անվիճելի է, որ առաջին հերթին կրթված և ինտելեկտուալ բարձր մակարդակով բնակչություն ունեցող երկիր կարող է համարվել մրցունակ տնտեսություն, առողջ հասարակություն, աղքատության հաղթահարման մեջ նկատելի հաջողություն և ժողովրդագրական խնդիր չունեցող ցանկացած պետություն: Հայաստանի Հանրապետությունը, ունենալով աշխարհագրական անբարենպաստ պայմաններ, արտաքին շուկայական հարաբերությունների համար բավական անբարենպաստ պայմաններ, չունենալով բնական հանքերի զգալի պաշարներ, հանձինս մարդկային ռեսուրսների՝ պետք է առավելագույնս օգտագործի երկրի ներքին կապիտալը:

Երկրի մրցունակությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ձեռնարկել աշխատաշուկայի քաղաքականությանը միտված այնպիսի միջոցառումներ, որոնք էապես կհեշտացնեն աշխատանք որոնողների մուտքը աշխատաշուկա, ինչպես նաև կհամապատասխանեցնեն աշխատուժի մասնագիտական հմտությունը աշխատաշուկայի պահանջներին: Նման մոտեցումը հանգում է աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստման, ինչպես նաև զբաղվածության վրա մասնագիտական կրթության բարերար ազդեցության հիմնախնդիրն: Միջոցառումները,

որոնք պետությունը պետք է իրականացնի մասնագիտական կրթության և աշխատաշուկայի կապի արդյունավետության ապահովման ուղղությամբ, փոխկապակցված են երկրի տնտեսության զարգացմանը միտված բազմաթիվ այլ միջոցառումների հետ: Այդ փոխկապակցվածությունը տիպական է և ակնառու, օրինակ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Միջազգային հարաբերությունների դաշնային նախարարության «Մասնագիտական կրթություն և աշխատաշուկա, զարգացման համագործակցություն» հայեցակարգում [4]:

Աշխատաշուկայի և մասնագիտական կրթության փոխներգործության անհրաժեշտությունը հիմնավորելու համար կարելի է ուսումնասիրել նշյալ ոլորտների մասին բազմաթիվ, տարբեր աղբյուրներում տարբեր ձևակերպումներ ու վերլուծություններ ունեցող սահմանումներ: Ելնելով ուսումնասիրվող թեմայի առանձնահատկություններից՝ թերևս ձևակերպենք տնտեսագիտական սահմանումներ, որոնք նկատելի տարբերվում են դասականից:

- Աշխատաշուկա ասելով՝ հասկանում ենք զբաղվածության դիմաց վճարվող աշխատուժի առաջարկ և պահանջարկ:

Աշխատաշուկայի և մասնագիտական կրթության փոխներգործության անհրաժեշտությունը հիմնավորելու համար կարելի է ուսումնասիրել նշյալ ոլորտների մասին բազմաթիվ, տարբեր աղբյուրներում տարբեր ձևակերպումներ ու վերլուծություններ ունեցող սահմանումներ: Ելնելով ուսումնասիրվող թեմայի առանձնահատկություններից՝ թերևս ձևակերպենք տնտեսագիտական սահմանումներ, որոնք նկատելի տարբերվում են դասականից:

- Աշխատաշուկա ասելով՝ հասկանում ենք զբաղվածության դիմաց վճարվող աշխատուժի առաջարկ և պահանջարկ:

- Աշխատաշուկայում բախվում են աշխատուժի առաջարկն ու պահանջարկը:

- Աշխատաշուկան ներառում է այն բոլոր կազմակերպությունները, իրավական և քաղաքական միջոցառումները, որոնք միտված են աշխատուժի առաջարկի և պահանջարկի կանոնակարգմանը:

- Ջբաղվածությունը գործունեության ձև է՝ որպես առաջարկ ընդլայնված:

Նշյալ սահմանումներում ակնհայտորեն կարևորվում է զբաղվածության համար մարդու աշխատունակ լինելու կարողությունը, սակայն ոչ միայն ֆիզիկապես կամ հոգեբանորեն, ինչպես հուշում է բառի բովանդակային ըմբռնումը, այլ նաև որպես մասնագիտական կոմպետենտությամբ օժտված աշխատուժ: Այսինքն՝ անհրաժեշտ է աշխատողին որակել իր մասնագիտական

կոմպետենտությամբ, աշխատանքային կարողու-  
նակությամբ կամ կատարողունակությամբ:

Մասնագիտական կոմպետենտության հայե-  
ցակարգը, ելնելով աշխատողի որակավորումից,  
ուղղորդված է աշխատանքի մենեջմենթի և մար-  
քեթինգի միջոցով աշխատաշուկաներում անհա-  
տի ճկուն ու ազատ տեղաշարժվելուն, նրանում  
մասնագիտական ինքնիրացման խնդիր լուծելու  
կարողություններ ձևավորելուն:

Աշխատանքային կարողունակությունը բնու-  
թագրում է անհատի գործունեությունը՝ հիմնված  
մասնագիտության տեսական և գործնական իմա-  
ցության, աշխատողի՝ իր կատարած աշխատան-  
քի նշանակության ու արդյունավետության գի-  
տակցման, որպես աշխատուժ՝ ինքնիրացման և  
աշխատանքային կյանք ստեղծելու, ցանկալի աշ-  
խատատեղը պահպանելու, անհրաժեշտության  
դեպքում՝ նոր աշխատատեղ գտնելու վրա: Անհա-  
տի աշխատանքային կարողունակությունը անհ-  
րաժեշտ նախապայման է աշխատավայրում «սե-  
փական փսեռում» լինելու համար: Յուրաքանչ-  
յուր աշխատող պետք է ճանաչի սեփական պա-  
հանջմունքները, ունակություններն ու կոմպե-  
տենտությունը՝ այդ ենթատեքստում կազմակեր-  
պություններին ծառայություններ առաջարկելով,  
առաջարկներ ընտրելով և դրանք քննադատա-  
բար ընդունելով:

Հիշյալ հայեցակարգը միաժամանակ վերա-  
բերում է ոչ միայն աշխատողներին, այլ նաև գոր-  
ծատուներին: Կազմակերպչական կարողություն  
ապահովող գործատուն չպետք է իր աշխատա-  
կիցներին ընդունի սոսկ որպես աշխատողների:  
Եթե նրանք գիտակցվեն իբրև գործընկերներ,  
և գործատուն ակտիվորեն նպաստի նրանց մասնա-  
գիտական որակավորման բարձրացմանն ու վե-  
րապատրաստմանը, դրա շնորհիվ կունենա բա-  
նիմաց, նորարարությունների ջատագով և աշխա-  
տաշուկայում ճկուն ու մրցունակ անձնակազմ:

Աշխատանքային կարողունակությունների  
ծեռք բերումը և պահպանումը համամասնորեն  
կախված է թե՛ աշխատողներից, թե՛ գործատուներ-  
ից. այն անհատին ոչ միայն օգնում է, այլև կար-  
ևնորագույն նախապայման է հիմնած գործի զար-  
գացման և մրցունակության համար: Աշխատան-  
քային կարողունակությունը ընկալվում է որպես  
տնտեսական սկզբունք, փոխներգործություն  
մարդու և արտադրության միջև, այսինքն՝ կազ-  
մակերպության հաջողությունը և զարգացումը  
կախված են աշխատողների զարգացման մա-  
կարդակից, և հակառակը:

Ձևական աշխատաշուկայում մասնագիտա-  
կան կրթությունը ներառում է նախնական մասնա-  
գիտական, միջին, բարձրագույն և լրացուցիչ  
մասնագիտական կրթությունը, վերապատրաստ-

ման, որակավորման բարձրացման և վերաորա-  
կավորման դասընթացները: Այսօր, իհարկե, մաս-  
նագիտական ցածրամակարդակ կրթությունը դժ-  
վարացնում է մասնագետի ինքնիրացման խնդի-  
րը, միևնույն ժամանակ, սակայն, կրթության  
բարձր մակարդակը այն չի երաշխավորում և  
մասնագիտական աճի հեռանկարներ չի բացում:

Սակայն կարևորագույն հարցը դեռևս մնում է  
չպարզաբանված: Ինչպե՞ս պետք է ընթանա մաս-  
նագիտական կրթությունը, որ ավարտելուց հետո  
զբաղվածության համար այն կարևորագույն նա-  
խապայման հանդիսանա: Ինչպես նշում է գերմա-  
նացի մանկավարժ Հերման Ռյորսը, մասնագի-  
տություն ասելով պետք է հասկանալ աշխա-  
տանք, կրթություն ասելով՝ անձի զարգացման  
բնութագիր, իմանալն ու կարողանալը՝ հնարա-  
վոր ապրելակերպի վրա հիմնված էթիկական վե-  
րաբերումը: Միայն այդ ընկալմամբ մասնագի-  
տական և լրացուցիչ կրթության քաղաքականու-  
թյունը կարող է դառնալ այն գործելակերպի նա-  
խադժողը, որը կապահովի անձնական և սոցիա-  
լական կյանքի նկատմամբ վստահությանը, անձի  
մասնագիտական կայացմանը միտված ուսուց-  
ման շրջանակներ և պայմաններ:

Վերոնշյալ խնդիրների ենթատեքստում մեր  
հետազոտության համար առանձնահատուկ կար-  
ևնորություն է ստանում կրթության բովանդակու-  
թյան ձևավորման հիմնախնդիրը, բովանդակու-  
թյուն, որը պետք է բավարարի աշխատաշուկայի,  
գործատուների շարունակական կամ փոփոխվող,  
սակայն միշտ բնականոն պահանջներն ու անձի  
կրթական պահանջմունքները և ապահովի անձի  
մասնագիտական ինքնիրացման պայմանները:  
Հետևաբար, կարևորություն է ստանում նաև  
կրթության բովանդակության պարբերական ար-  
դիականացումը, այդ բովանդակությունը համա-  
պատասխան փաստաթղթերում արտահայտելը,  
դրանք պարբերաբար վերանայելու մեխանիզմ-  
ներ մշակելը:

Այսօր, անշուշտ, մեր հանրապետությունում  
դեռևս լիովին ձևավորված չէ աշխատաշուկան,  
չեն իրականացվել ուսումնասիրություններ՝ միտ-  
ված շուկայական հարաբերությունների իրա-  
գործման մեխանիզմներին, բացակայում են աշ-  
խատաշուկայի՝ որակի վրա հիմնված պահան-  
ջարկի հետազոտությունները, բացահայտված  
չեն ուսումնական հաստատությունների՝ աշխա-  
տաշուկայի պահանջներին և դրանց փոփոխման  
միտումներին արագ արձագանքման մեխանիզմ-  
ները: Իրականացված հարցումների արդյունքում  
պարզ է դարձել, որ առկա է լուրջ հակասություն  
աշխատաշուկայի պահանջարկի և մասնագիտա-  
կան ուսումնական հաստատությունների առա-  
ջարկի միջև. ստեղծվում է տպավորություն, որ

մասնագիտական ուսումնական հաստատությունների թողարկած մասնագետները, մեղմ ասած, գործատուների պահանջները բավարարում են մասնակիորեն: Եվ այս ամենի պատճառը ուսումնական հաստատությունների՝ աշխատաշուկայի պահանջների արդյունավետ վերլուծության համակարգի բացակայությունն է:

Ներկա պայմաններում մասնագիտական ուսումնական հաստատությունների և գործատուների կապը ցածր մակարդակի վրա է: Հաճախ գործատուները չեն կարողանում հստակ ձևակերպել որակական այն հատկանիշները, որոնք ցանկալի ու պարտադիր են պահանջվող մասնագետների համար, որոնք ուսումնական հաստատություններից ստացած վկայականով կապահովեն շրջանավարտներին կոնկրետ աշխատատեղով, քանզի շատ կազմակերպությունների համար մասնագետ-կադրերի խնդիրը զնալով ավելի է սրվում: Մինչդեռ ուսումնական հաստատությունները շարունակում են թողարկել ավանդական իմացությամբ և մասնագիտական հնարավորությամբ օժտված մասնագետներ, որոնք տարեցտարի լրացնում են հանրապետության գործազուրկների բանակը՝ ավելի սրելով աշխատաշուկայում առկա լարումը: Ասվածը վերաբերում է մասնագիտական կրթության բոլոր մակարդակներին և դրանց մասնագիտություններին, այդ թվում՝ «բարձր վարկանիշ» ունեցող մասնագիտություններին:

Հետևաբար անհասկանալի և անընդունելի է նաև մասնագիտությունների վարկանիշի ձևավորման առկա մեխանիզմը: Հետագոտվող հարցը առավել սրվեց կրթության բնագավառի ազատականացման հետ, երբ բազմաթիվ մասնագիտական ուսումնական հաստատություններ սկսեցին կրթական գործունեություն ծավալել «բարձր վարկանիշ» ունեցող մասնագիտությունների գծով: Արդյունքում՝ ուսումնական հաստատությունները, մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների բացակայության պայմաններում, կրթական ծրագրերի բարեփոխումները իրականացրին ամենևին էլ ոչ մրցունակ մասնագետների պատրաստման, այլ ծրագրերը ուսանողների կողմից հաղթահարելի դարձնելու տեսանկյունից՝ նկատի ունենալով իրենց ուսանողների մուտքային կրթական մակարդակները:

Այս մոտեցմամբ վերլուծությունը, վերլուծության արդյունքում՝ կարծիք-տեսակետների համադրումը բերում են նրան, որ մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների, դրանց մշակման և պարբերաբար արդիականացման արդյունավետ համակարգի հրատապ ստեղծման անհրաժեշտու-

թյուն կա: Այդ նպատակով անհրաժեշտ է՝

- իրականացնել մասնագիտական կրթությամբ մասնագետների տեղական և միջազգային աշխատաշուկայի քանակական և որակական պահանջարկի ուսումնասիրություն, պարզել աշխատաշուկայի, գործատուների կողմից նախնական (արհեստագործական), միջին, բակալավորի ու մագիստրոսի որակավորման աստիճաններով բարձրագույն մասնագիտական կրթության յուրաքանչյուր մասնագիտության գծով թողարկվող մասնագետներին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական որակական պահանջները,

- իրականացնել հաջորդականությունն ապահովող շարունակական կրթության համակարգի բոլոր օղակների մեթոդաբանական և մեթոդական փոխադարձ կապի վերականգնումը, փոխկապակցվածությունը և խորացումը,

- մասնագիտության կրթության՝ տարբեր մակարդակների մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների, ուսումնական պլանների, ուսումնական առարկայական ծրագրերի, ուսումնամեթոդական փաստաթղթերի, դրանց ուղեցույցների մշակման, պարբերաբար իրականացվող վերանայման, արդիականացման և կատարելագործման գործընթացներին ներգրավել արտաքին փորձագետների, գործատուների, մասնագիտական գործընկերների,

- մշակված չափորոշիչների ներդրման նպատակով իրականացնել մանկավարժական գիտափորձ,

- մշակել և ներդնել շրջանավարտների պատրաստման որակի ապահովման, գնահատման, վերահսկման և այդ գործընթացների կառավարման համակարգ. այդ գործընթացներին ևս ներգրավել գործատուներին,

- պարբերաբար իրականացնել շրջանավարտների՝ աշխատատեղերում հարմարվողականության ուսումնասիրություն, իրականացնել նրանց մոտ ձևավորված կոմպետենտությունների դիագնոստիկա, բացահայտել ոլորտում առկա բացթողումներն ու թերությունները, արդյունքները հաշվի առնել կրթական ծրագրերի և չափորոշիչների վերանայման ընթացքում:

Իհարկե, կան նաև գործատուների պահանջարկի և մասնագիտական կրթության առաջարկի ներդաշնակության օրինակներ, որոնք, սակայն, չի կարելի համակարգ համարել: Բացակայում է այդ գործընթացները համակարգող, գործընթացներին նպատակաուղղված կառավարում ապահովող կազմակերպությունը: Այդ կազմակերպությունը միաժամանակ կօժանդակեր գործատուներին՝ ձևակերպելու մասնագետներին ներկայացվող պահանջները, որոնք կարող են իրենց կիրառությունն ու հստակ ձևակերպումները ստանալ

մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներում: Վերջապես, այդ կազմակերպությունը կարող է հանդես գալ նաև որպես միջնորդ գործատուների և ուսումնական հաստատությունների միջև: Ենթադրվում է, որ այն պետք է ապահովի կրթության, գիտության, տեխնիկայի, տեխնոլոգիայի առաջնային ուղղությունների զարգացման միասնական պետական քաղաքականություն: Հենց այդ կազմակերպությունն էլ բարձրագույն որակավորմամբ մասնագետների խավի ձևավորման, տաղանդավոր և օժտված երիտասարդ կադրերի բացահայտման, նրանց աջակցության, Հայաստանի բոլոր մասնագիտական ուսումնական հաստատությունների աշխատանքի որակի բարձրացման հնարավորություն կընձեռի:

Այսպիսով՝ աշխատաշուկայի և մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեության ներդաշնակման, մասնագետներին ներկայացվող պահանջների բավարարման, ինչպես նաև մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից թողարկվող մասնագետների ինքնիրացման կոմպետենտությունների ձևավորման գործընթացի արդյունավետ կառավարման հիմքը գիտատեխնիկական առաջընթացին համապատասխան չափորոշիչների և այն կազմակերպության առկայությունն է, որը կապահովի կրթության, գիտության, տեխնիկայի, տեխնոլոգիա-

յի առաջնային ուղղությունների զարգացման միասնական պետական քաղաքականության իրականացումը:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. **Պետրոսյան Ջ. Հ.**, Մասնագետների պատրաստման հիմնահարցերը և մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների մշակման ու ներդրման արդի պայմաններն ու պահանջները, Մանկավարժություն, N4, 2004, էջ 14-23:
2. **Պետրոսյան Ջ. Հ.**, Մասնագետների պատրաստման հիմնահարցերը և մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների մշակման ու ներդրման արդի պայմաններն ու պահանջները (2-րդ մաս), Մանկավարժություն, N1, 2005, էջ 4-20:
3. **John Dewey**, Democracy and Education, New Jerk 1916, p. 62.
4. Bundesministerium für Zusammenarbeit und Entwicklung, berufliche Bildung und Arbeitsmarkt Konzept N 137 September 2005, Bonn, S. 5, 7, 8, 10.
5. **Blancke S., Roth C., Schmid J.** (“Beschäftigungsfähigkeit”) Als Herausforderung für den Arbeitsmarkt- Auf dem Weg zur flexible Erwerbgesellschaft. Eine Konzept- und Literaturstudie Nr. 157/ Mai 2000 Arbeitsbericht S. 9.
6. **Klaus Sch. Klein M.**: Das Politiklexikon. 4., actual. Aufl. Bonn 2006, S. 72.
7. Akademie für Technikfolgenabschätzung, Arbeitsberichte, Ne. 157 Mai 2000, S. 12.
8. **Röhrs H.** Die Bildungsfrage in der modernen Arbeitswelt, Frankfurt a.m. 1963, S. 3.

VOCATIONAL EDUCATION IN THE CONTEXT OF SUPPLY AND DEMAND

**HAYK PETROSYAN**

Doktor of Pedagogical Sciences, Docent  
 Armenian State Pedagogical University After Kh. Abovyan,  
 The Head of the Centre of Contribution of Innovative Technologies and Quality Assessment

**MAGARITA MATEVOSYAN**

Applicant of General Peggagogics Chair of Yerevan State Pedagogical Universiti After Kh. Abovyan

Summary

The article presents a professional education in the context of supply and demand of labor rink. The results of analysis of the situation proposed approaches to the development of educational programs, the necessity of government coordination structure to deal with unsettled problems in this area.

Key words: the labor market, employers, specialist, supply, demand, trade, vocational education, the standard competence.

## ԱՆՊԼԵՐԵՆ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՂՈՐԳԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱՂԱՊՐԻՉՆԵՐԸ\*

### Սուսաննա ԱՍԱՏՐՅԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Վ. Բրյուսովի անվան ԵՊԼՀ մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոն



Սույն հոդվածում քննության են առնվում սովորողների վերարտադրողական կարողությունները ձևավորող խոսքային վարժությունները: Համաձայն ե վ ը ա կ թ ու թ յ ա ն գլխավոր **փաստաթղթի՝ ԼԻԻՀՀ-ի**, վե-

րարտադրման գործունեությունն ու ռազմավարությունները ընդգրկում են ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր գործունեությունը:

Բանավոր վերարտադրման (խոսելու) ժամանակ խոսողը ստեղծում է բանավոր տեքստ, որն ընկալվում է մեկ կամ մի քանի լսողների կողմից: «Տեքստ» ասելով հասկանում ենք բանավոր կամ գրավոր խոսքի ցանկացած հատված, որը լեզուն օգտագործողները կամ սովորողները ստանում, վերարտադրում կամ փոխանակում են: Հետևաբար, առանց տեքստի, ոչ մի լեզվական հաղորդակցություն չի կարող տեղի ունենալ: Յուրաքանչյուր խոսքային գործունեություն և լեզվական գործընթաց վերլուծվում և դասակարգվում է՝ նկատի ունենալով լեզուն օգտագործողի/սովորողի կամ որևէ այլ գրուցակցի՝ տվյալ տեքստի հետ ունեցած հարաբերությունը՝ անկախ այն բանից, թե ինչպիսին է այդ տեքստը՝ ավարտուն արդյունք, արտադրանք, թե նպատակ կամ դեռևս մշակվող նյութ: Տեքստերը բազմազան գործառույթներ են կատարում, հետևաբար տարբերվում են միմյանցից ձևով ու բովանդակությամբ [1, էջ 116]:

Բանավոր խոսքի օրինակներ են.

- հանրությանը հասցեագրված խոսքը (տեղեկատվություն, կոչ, դիմում և այլն),
- լսարանին հասցեագրված խոսքը (ելույթներ հանրահավաքների ժամանակ, դասախոսություն-

ներ, զեկուցումներ, զվարճալի կատակներ, մարզական/քաղաքական մեկնաբանություն և այլն):

- Դրանք կարող են ներառել, օրինակ՝
  - տեքստի բարձրաձայն ընթերցում,
  - բանավոր խոսք՝ հիմնված նշումների, գրավոր տեքստի կամ ցուցադրական նյութերի վրա (նկարներ, գծապատկերներ և այլն),
  - դերակատարում,
  - հանպատրաստից խոսք,
  - երգերի կատարում:

Բանավոր խոսքի ուսուցումը նախատեսում է ինչպես երկխոսության, այնպես էլ մենախոսության ուսուցում: Որպես ուսուցման միավոր հանդես են գալիս իրավիճակային արտահայտությունները, նկարների նկարագրությունը, փոքր թեմաների շուրջ քննարկումները, ինչպես նաև տեքստերի, զեկուցումների վերաբերյալ դիտարկումները և այլն:

Խոսելու համար սովորողը պետք է կարողացա.

- պլանավորել և կառուցել որոշակի հաղորդագրություն - **իմացական կարողություններ**,
- ձևակերպել որոշակի լեզվական ասույթ - **լեզվական կարողություններ**,
- արտաբերել որոշակի լեզվական ասույթ - **արտասանական կարողություններ** [նույն տեղում, էջ 111]:

Շատ սովորողներ, տիրապելով որոշակի լեզվանյութի, դժվարանում են արտաբերել նույնիսկ ամենապարզ նախադասությունները: Դա պայմանավորված է նրանով, որ նրանք քիչ են հաղորդակցվում անգլերենով, որ սովորել են:

Այժմ հաղորդակցական ուսուցման պարագայում իրադրությունն այլ է, քանի որ սովորողներից պահանջվում է կատարել հաղորդակցական բազմաբնույթ առաջադրանքներ:

Փաստորեն, և՛ ուսուցիչները, և՛ սովորողները ինտեգրվում են հաղորդակցական ուսուցման գործընթացին, որի գերակա նպատակը սովորող-

\* Ներկայացվել է 09.01.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

ների *հաղորդակցական իրազեկության (communicative competence)* ձևավորումն ու զարգացումն է: Եվ բացի ակադեմիական ուսուցումից, խնդիր է դրվում լեզվական գիտելիքները համադրել խոսքային կարողությունների հետ (լսելը, խոսելը, ընթերցելը, գրելը), կիրառել անգլերենը որպես գործածական լեզու [3, էջ 25]:

Ուսուցման համատեքստում կրկնավարժանքները (repetitions and drills) մեծ դեր ունեն, դրանց կանոնավոր կիրառման արդյունքում մշակվում և հղկվում են արտասանական հմտությունները: Սակայն դրանք չեն դիտվում որպես հաղորդակցական գործունեություն, քանի որ անգլերենը մարզելու համար սովորողները կարիք ունեն ժամանակակից հետաքրքրաշարժ իրադրությունների, իրական-արդիական (authentic) լեզվանյութի, թեմաների՝ արտահայտելու սեփական մտքերն ու դատողությունները: Սա շատ արդյունավետ միջոց է, քանի որ սովորողները, օգտագործելով իրենց լեզվական գիտելիքները (բառապաշար, հնչյունաբանություն, քերականություն), միաժամանակ նկատում են առկա դժվարությունները, բացթողումները, ինչպես նաև սեփական ձեռքբերումներն ու առաջընթացը: Մյուս կողմից էլ՝ դա առավել նպատակահարմար է ուսուցիչներին՝ ստուգելու սովորողների լեզվական իրազեկությունը և դրա հիման վրա մշակել հետագա անելիքները, խնդիրներն ու ռազմավարությունները:

Լեզվահաղորդակցական գործընթացները պետք է կազմակերպել կանոնավոր հաճախականությամբ և ոչ միայն դասարանում, այլ նաև արտադասարանային միջավայրում: Դրանք պետք է դառնան ուսուցման առանցքային մասը [8; էջ 32]:

Որոշակի առաջընթաց նկատելու դեպքում հաղորդակցության թեմաներն ու իրադրությունները բարդանում են:

Բանավոր խոսքի ուսուցման գործընթացի կարևոր բաղադրիչներից է *առոգանության/արտասանության* հմտությունների ձևավորումն ու զարգացումը:

Չեշտ չէ անգլերենի առոգանությունը յուրացնելը: Դա պայմանավորված է լեզուների տարբեր տառահնչյունական համակարգերով: Ավելին, անգլերենում կան հնչյուններ, որ շատ լեզուներում, նաև հայերենում, չկան: Այնուամենայնիվ, սովորողները քաջ գիտեն, որ ճիշտ առոգանության/արտասանության խնդիրն էական է: Այս կապակցությամբ շատ օգտակար են ձայներիզները, ձայնակավառակները (audio-tapes, CDs), որոնք ապահովում են ուսուցողական նյութի արտաբերման/առոգանության մոդելը: Լսելով ճիշտ հնչյունները և նմանակելով՝ նրանք կարող են արագ բարելավել իրենց բանավոր խոսքը [նույն տեղում, էջ 43]:

Սա միակ մեթոդը չէ սովորողների անգլերենի առոգանությունը ձևավորելու խնդրում, չնայած այն կարող է օգնել: Պետք է միշտ հիշել, որ անգլերենը մեր մայրենին չէ, հետևաբար, անհրաժեշտ է ձգտել խուսափել մայրենիի առոգանության բացասական ներթափանցումից (*interference*):

Անգլերեն բանավոր խոսքի ուսուցման գործընթացում հատուկ ուշադրություն է պահանջում նաև *խոսքի հնչողության* կանոնների իմացությունը:

Ցավոք, սովորողները շատ քիչ են տեղեկացվում կամ ուղղորդվում այդ մասին: Յուրաքանչյուր լեզվում մեղեդայնությունը կարող է փոխել բառի կամ նախադասության ողջ իմաստը: Չետևաբար, օտար լեզու սովորողները պետք է զգույշ լինեն հաղորդակցվելիս:

Այսպես, հաջորդիվ ներկայացնում ենք բառեր՝ գոյականներ իրենց համապատասխան բայերով: Երբ շեշտվում է առաջին վանկը, բառը գոյական է, իսկ երբ վերջինը՝ բայ:

PREsent preSENT COMpress compress  
REFuse reFUSE

REcord reCORD COMpound compound  
PROject proJECT

CONtract conTRACT COMbine combine  
OBject object

CONtest conTEST COMbat combAT SUBject  
subJECT

INcrease inCREASE DEcrease deCREASE  
REject reJECT

*Բացառություն.* - Կան որոշ միավորներ, որոնք նման են վերոնշյալ բառերին, սակայն նրանք չունեն շեշտի փոփոխություն, օրինակ. CONTACT, DIScount, FINance, INTERest; նաև conSENT, conTROL, disGUISE, diVORCE.

Այնուամենայնիվ, յուրաքանչյուր բառ ունի շեշտ:

Չետևյալ օրինակում նախադասության իմաստը փոխվում է շեշտի փոփոխման հետ  
“I don’t like James Bond.”

a b c d

a) Շեշտը “I” բառի վրա.- Իմաստն այն է, որ բոլորը սիրում են Ջեյմս Բոնդին, իսկ խոսողը՝ ոչ:

b) Շեշտը “don’t” բառի վրա.- Բոլորը գտնում են, որ խոսողը սիրում է Ջեյմս Բոնդին, բայց նա չի սիրում կամ նույնիսկ ատում է:

c) Շեշտը “like” բառի վրա.- Խոսողը ցույց է տալիս, որ ինքը չի համակրում Ջեյմս Բոնդին, նա սիրում է նրան: Նրա զգացմունքները ուժեղ են, հավանաբար, նա ասում է. “I don’t like James Bond, I love him!”

d) Շեշտը “James Bond” բառի վրա - սիրում է բոլորին, բացի Ջեյմս Բոնդից:

Ինչպես երևում է վերոնշյալ օրինակում, տար-

բեր բառեր շեշտելու դեպքում փոխվում է նախադասության իմաստը: Շատ անգամ սովորողները չեն հետևում առաջառությանը անգլերենով հաղորդակցվելիս: Որպես հետևանք, նրանց անգլերեն խոսքը չի հնչում գեղեցիկ ու տպավորիչ, փոխարենը այն ձանձրալի ու անհետաքրքիր է թվում: Ուստի ուսուցիչը պետք է ճիշտ ցուցումներ տա աշակերտներին, որպեսզի նրանք ոչ միայն գրագետ խոսեն, այլև հետևեն խոսքի ճիշտ արտաբերմանն ու մեղեդայնությանը:

### **Չգտել հնարավորինս հաճախ ներգրավել սովորողներին փոխներգործության մեջ:**

Շատ աշակերտներ ինքնավստահ չեն անգլերեն հաղորդակցվելիս: Երբեմն թվում է, որ նրանք ամաչկոտ են: Բայց դրա հիմնական պատճառը բանավոր հաղորդակցվելու փորձի պակասությունն է: Տարիների մասնագիտական փորձը ցույց է տալիս, որ բավարար պրակտիկայի և հաղորդակցական բարեհունչ միջավայրի պարագայում յուրաքանչյուր սովորող կարող է զարգացնել իր խոսքային կարողությունները՝ ձերբազատվելով անհատական անկատարության բարդություններից:

Հաջորդիվ ներկայացնում ենք մեր դիտարկում-առաջարկությունները ուսուցիչներին՝ սովորողների բանավոր խոսքը զարգացնելու վերաբերյալ.

1. Հնարավորինս շատ խոսել անգլերենով, չպատասխանել սովորողների հարցերին, եթե դրանք հնչում են հայերեն:

2. Կազմել ուսուցողական պատասառ, որում մշված լինեն դասին գործածվող կարևոր արտահայտություններ, օրինակ.

“Please repeat that”

“What’s the English word for . . .”

“I don’t understand”

Ժամանակ առ ժամանակ այն համալրել նոր արտահայտություններով և փակցնել դասասենյակում: Աշակերտներին ներկայացնել այդ արտահայտությունները, բացատրել իմաստները, ապա ստեղծել իրավիճակ՝ գործածելու դրանք: Սա շատ կարևոր քայլ է երեխաներին ներգրավելու բանավոր հաղորդակցության մեջ: Ներկայացված բառամիավորները լիարժեք յուրացնելուց հետո դրանք փոխարինել նոր բառերով կամ արտահայտություններով, և այսպես շարունակ:

3. Տարբերակել դասարանային անգլերենը առօրյա խոսակցականից: Խուսափել այնպիսի հարցադրումներից, որոնց պատասխանները կլինեն կարճ, օրինակ՝ I am /fine/good /OK և այլն:

• Աշակերտներին ուղղել անհատական հարցեր, սովորեցնել պատասխանի տարբեր ձևեր, այսպես, փաստ է, որ բոլոր սովորողները չեն կարող ամեն օր շատ լավ լինել, ասելով “I am very

fine today”.

• Սովորողներին հնարավորություն ընձեռել՝ խոսելու իրենց անելիքների մասին: Պարզել, թե ինչով են նրանք զբաղվում ծնեային/ամառային արձակուրդներին, ազատ ժամանակ կամ հանգստյան օրերին:

• Դասի սկզբում մի քանի թույլ ժամանակ տրամադրել, որպեսզի սովորողները երկխոսություն նախապատրաստեն. Նրանք կարող են բուլրովին տարբեր թեմաներ ընտրել:

• Կազմակերպել ուրախ և հետաքրքրաշարժ հաղորդակցական անձնակենտրոն միջավայր, ձգտել, որ երեխաները առավել ինքնուրույն և ինքնակառավարվող լինեն: Այս կապակցությամբ առավել գնահատելի են.

– **զուգաշխատանքները (pair work)** – երկխոսություններ (dialogue), տեղեկատվության բաց (information gap), հարցազրույց (interview),

– **խմբաշխատանքները (group work)** – ստուգարք (quizzes), մրցույթ, երգիծանք/հումորային ներկայացում, շնորհանդես, թերթի հողվածի բովանդակության վերարտադրում/մեկնաբանում, ինչպես նաև ինտերակտիվ բազմաբնույթ խաղերի կազմակերպում,

– **ներդասարանային աշխատանքները (class work)** – խառը խոսքային գործունեություն (scramble activities), հարցազրույցներ, դիտարկումներ, բուրգաձև քննարկումներ, դերային/իրական-բնական խաղեր, հարց ու պատասխան, «**why**» հարցեր (նմանատիպ հարցերը խթանում են երեխաների ոչ միայն խոսքը, այլև մտածելու կարողությունը):

• Սովորողներին առաջադրել բազմակի ընտրության հարցեր (**multiple choice techniques**): Ամփոփիչ հարցերով փորձել ստուգել, թե ինչպես են նրանք ըմբռնել տեքստի բովանդակությունը:

• Բանավոր հաղորդակցվելիս խուսափել երեխաների սխալներն ուղղելուց: Դա պետք է անել ամենավերջում, ցանկալի կլինի մշել ընդհանուր սխալները:

• Դասի պլանը կազմելիս արժևորել զեկուցումները, ելույթները, շնորհանդեսները: Նախապես հանձնարարել երեխաներին պատրաստվել: Ուսուցիչը պարտավոր է խրախուսել երեխաներին, ապահովել բարենպաստ աշխատանքային մթնոլորտ:

• Հանձնարարել երեխաներին կազմել բառային թեստեր: Երբեմն թույլատրել նրանց վարել դասը (**learning by teaching**):

• Անցկացնել քննարկումներ և բանավեճեր: Ներմուծել իրարամերժ թեմաներ, հնարավորություն տալ յուրաքանչյուր աշակերտի ինքնարտահայտվելու:

Այսպիսով, այժմ, երբ տեղեկատվական հոսքը



առավելագույն չափերի է հասել, երբ սովորողների հետաքրքրությունները դարձել են բազմազան և բազմաբնույթ, արժևորվում են ուսուցման փոխներգործուն-անձնակենտրոն մեթոդները [4, էջ 69]:

Դրանց հետևելը խրախուսում և կարևորում է նաև Եվրախորհուրդը, որի կողմից կազմված «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգում» բանավոր խոսքի կարողության և այն ստուգելու ունակության համար ներկայացվում են հետևյալ օրինակելի սանդղակները՝ **A1-A2, B1-B2, C1-C2** [1, էջ 129]:

Առավել բարձր մակարդակներն են **C1-C2**-ը, որոնց դեպքում սովորողը՝

- կարող է վերարտադրել պարզ, հարթ, լավ կառուցված խոսքը, որն ունի տրամաբանական կառուցվածք և զրուցակցին օգնում է նկատելու և հիշելու կարևոր մասերը/կետերը,

- կարող է տալ պարզ, սահուն, մանրամասն և հիշարժան նկարագրություններ,

- կարող է բարդ թեման վստահ և ճկուն, պարզ և հասանելի ներկայացնել հանդիսատեսին, որն անձանոթ է թեմային, կարող է վերաձևավորել և հար մարեցնել ելույթը հանդիսատեսի պահանջներին:

Հարկ է նշել, որ սովորողների խոսքային կարողությունները կարևորելով՝ մենք բնավ հակված չենք թերագնահատել մյուս կարողությունները՝ **լսելը, գրելը, ընթերցելը**: Ավելին, ուսուցումն առավել ամբողջական կլինի և սովորողների հաղորդակցական իրազեկության ձևավորումն ու զարգացումը առավել արդյունավետ, եթե խոսքային կարողությունների ուսուցումը կազմակերպվի փոխկապակցված՝ ներառելով նաև լեզվական միջոցների (բառապաշար, քերականություն, հնչյունաբանություն, ուղղագրություն)

ուսուցումը:

Յետևաբար, անհրաժեշտ է՝ համադրել-համակարգել առկա չափանիշները, լրամշակել-ճշգրտել ուսուցման ռազմավարությունները, իրավիճակները, թեմաները, լեզվանյութը [3; 8]:

Հաշվի առնելով ուսուցման յուրաքանչյուր փուլի պահանջներն ու առանձնահատկությունները՝ դրանց ճիշտ ընտրության ու կազմակերպման պարագայում սովորողների հաղորդակցական իրազեկության ձևավորումն ու զարգացումը անխուսափելի է:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Ստրասբուրգ, Նորթ Գրատուն, Երևան, 2005:
2. Common European Framework of Reference for Languages: Learning, Teaching, Assessment, Modern Languages Division, Council of Europe, Strassbourg, Cambridge University Press, 2001.
3. **Harmer J.**, How To Teach English, Pearson, Longman, 2010.
4. **Harmer J.**, the Practice of English Language Teaching, Pearson, Longman, 2011.
5. **Littlewood, W.**, Communicative approach to language teaching methodology, Dublin University, Trinity College, Centre for Language and Communication Studies, 1983.
6. **Savignon, S., & Berns, M.**, Communicative language teaching: Where are we going? Studies in Language Learning, Addison Wesley, 1983, 4(2).
7. **Sheils J.**, Communication in the Modern Language Classroom. Council of Europe, 1993.
8. **Thornbury S.**, How to Teach Speaking, Pearson, Longman, 2010.

#### THE COMPONENTS OF TEACHING ENGLISH ORAL COMMUNICATION

**SUSANNA ASATRYAN**

Candidate of pedagogical sciences, docent

#### Summary

Communicative activities are great opportunities for learning. But what goes in to make the communicative activity a success? The truth is, the success of communicative pair and group work activities is generally determined by the work the teacher does before the students begin the activity. This includes both what is done by the teacher before the class starts and what is done in class to set up the task.

Before observing the role of the teacher, it might be worth clarifying what is meant by “communicative activities”. These are fluency-based activities. While such activities may involve students practicing a particular grammatical form, they are likely to do more than this.

Every communicative activity is different. The key element is that the activity is based on the authentic language around a realistic situation.

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՆՊԼԵՐԵՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ\*

### Նաիրա ՊՈՂՈՍՅԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու

ԵրճԵՊԴ լեզուների ամբիոնի ախտեսնո

ԵՊԼՀ լեզուների դասավանդման մեթոդիկայի և մանկավարժության ամբիոնի ավագ դասախոս



Արդի ժամանակաշրջանում օտար լեզուների ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ են նոր մոտեցումներ՝ պահպանելով մեր ազգային կրթության արժեքները, ինչպես նաև այդ բնա-

զավառում գոյություն ունեցող հարուստ ավանդույթները:

Անշուշտ, ճարտարապետաշինարարական ուղղվածության անգլերենի դասընթացում դրանց ներդրումը երաշխավորելու կամ մեթոդական ուղղություն տալու համար անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների անհատական լեզվական փորձը, դրդապատճառները, ինչպես նաև մասնագիտական ուղղվածության նպատակներն ու առանձնահատկությունները:

Սույն հոդվածում որպես հետազոտության նյութ՝ ներկայացվում են անգլերենի ճարտարապետաշինարարական տերմինները, որոնք ընտրվել են արտասահմանյան ոչ լեզվական բուհերի ճարտարապետության և շինարարության ֆակուլտետների համար նախատեսված դասագրքերից, բնագիր աղբյուրներից, զանգվածային լրատվամիջոցներից (մամուլ, հեռուստատեսություն, համացանց):

Ստորև ներկայացված են այն վարժությունները, որոնք կոչված են խթանել սովորողների՝ ընթերցանության ժամանակ (receptive skills) տեքստերի բովանդակության ընկալումը՝ պայմանա-

վորված առանձին բառային միավորների իմաստների վերծանությամբ և բացահայտմամբ, այսինքն՝ վարժությունների առանցքում դիտարկվում է միայն բառ-տերմինը:

Այսպիսով, բառապաշարային հմտությունների ձևավորումը ենթադրում է ուսումնասիրվող երևույթի ճիշտ գործածությունը տիպական խոսքային իրադրություններում, ինչպես նաև բառապաշարային մեխանիզմների ճկունության զարգացումը հաղորդակցման փոփոխվող պայմաններում:

Վարժությունների համակարգը պետք է նպաստի բառային միավորների ուսուցումից բխող դժվարությունների հաղթահարմանը, էտալոնների ձևավորմանը, այսինքն՝ լեզվական միավորների ճիշտ պատկերի ստեղծմանը, դրանց կիրառմանը և հիշողության մեջ երկարատև մտապահմանը:

Անհրաժեշտ է բառային միավորի նկատմամբ տարբերակված մոտեցում դրսևորել՝ հաշվի առնելով ներթափանցման հնարավոր ազդեցությունը՝ թե՛ դրական, թե՛ բացասական:

Ընկալողական (ռեցեպտիվ) վարժությունների կատարումը նպաստում է բառային միավորների տեսողական պատկերների ձևավորմանը և մտապահմանը (տեսողական պատկերը կապակցվում է ընկալողական-շարժողական պատկերի հետ, իսկ ողջ համալիրը հարաբերակցվում է որոշակի իմաստի հետ): Լեզվական միավորների էտալոնների ձևավորմանը նպաստում են վարժությունները, որոնք ապահովում են բառային միավորների բազմակի կիրառումը տարբեր իրադրություններում, որն էլ իր հերթին նպաստում է դրանց մտապահմանն ու յուրացմանը (Մ. Գ. Աստվածատր-

\* Ներկայացվել է 28.02.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

յան, 1985, էջ 24-26):

Ստորև ներկայացնում ենք ճարտարապետաշինարարական մասնագիտական բառանյութի ուսուցման վարժությունների համակարգը, որը կազմվել է հաջորդիվ ներկայացվող ռազմավարությունների հիման վրա:

**Gap-Filling ռազմավարություն**

Այս ռազմավարությունը ներառում է վարժություններ, որտեղ կատարողին տրվում են առանձին նախադասություններ, որոնցում որոշ բառեր կամ կապակցություններ բացակայում են: Խնդրի էությունը բաց թողնված մասերը ճիշտ լրացնելն է: Տվյալ վարժությունը կատարելիս սովորողը կարող է գործ ունենալ տարաբնույթ լեզվական միավորների հետ, քանի որ նրանից պահանջվում է որոշ դեպքերում լրացնել բաց թողնված մասերը կառուցողական բառերով, (նախդիրներ, շաղկապներ և այլն), որոշ դեպքերում էլ բառապաշարային միավորներով, որոնք հանդես են գալիս որպես լիարժեք անվանական միավորներ: Նման դեպքերում բառերի թվաքանակը, որը տրվում է վարժության վերջում ավելի մեծ է, քան պահանջվում է տեղադրել:

Ստորև ներկայացնում ենք այն առաջադրանքները, որոնք վերաբերում են այս ռազմավարությանը:

• **Fill in the blanks. Use only one word in each space.**

1. The first .... were built for the purpose of protecting their owners from the weather and, therefore, were very simple – a roof to keep off the rain or snow, and walls to keep out the wind.
2. The building erected now can be divided into two broad classifications: they are either for housing or for .... purpose.
3. The ..... is an artificial material made of clay then burnt to harden it.

**Key:** 1 houses, 2 industrial, 3 brick .....

• **Fill in the blanks using the given words.**  
ground, framework, paint, excavation...

Almost everybody saw the construction of a building and followed its progress with interest. First the.....(1)... is dug for the basement, then the foundation walls below .....(2).....level are constructed; after this the .....(3).....is erected and clothed with various finishing materials and protected by several coats of....(4)...

**Key:** 1 excavation, 2 ground, 3 framework, 4 paint

• **Put the right word in each gap.**

**Floors** divide the building into stories. They may be either of **timber** or may be constructed of a

fire-resisting material. **Walls** are built to enclose areas and carry the weight of the floors and roofs. The walls may be **solid or hollow**. The materials used for the walls construction can be **brick**, stone concrete and other natural or artificial materials.

(Students are given the pictures of the missing words.)

• **Put the words in brackets in the right form.**

St. Sophia was built for Justinian by the (*architect*) Anthemius of Tralles and Isidorus of Miletus, on the site of two successive basilican (*church*) of the same name, erected respectively by Constantine and Theodorus II. It was the most important church in Constantinople. The plan consists of a (*center*) space 107 ft. square, with four massive stone piers 26ft. by 60 ft., ( *Pierce*) by arches for aisles and gallery, (*support*) four semicircular (*arch*), upon which rests the dome 107ft. in diameter and 180 ft. above the ground.

**Key:** architects, churches, central, pierced, supporting, arches.

Ներմուծված առաջադրանքներից պարզ ակնկալելի է սովորողների բառապաշարային ինտեգրացիայի մարզումն ու հարստացումը, որն իրականանում է **Gap-filling** ռազմավարությունը կիրառելիս:

Առաջադրանքների կատարման արդյունքում զարգանում են ամենից առաջ սովորողների հաղորդակցական կարողությունները, քանի որ խնդիր է դրվում ապահովել յուրաքանչյուր տեղադրած բառային միավորի կապակցելիությունը լեզվական տարբեր «միջավայրերում»: Պայմանավորված առաջադրանքների լայն ձևաչափով, ինչպես նաև սովորողների տարբեր լեզվամտածողությամբ և լեզվազգացողությամբ՝ այս ռազմավարությունը նպատակահարմար ենք համարում կիրառել հատկապես մասնագիտական բառապաշարի որոշակի յուրացումն ապահովելուց հետո:

**Սահմանում - (Mastering Definitions) ռազմավարություն**

Այս ռազմավարությունը իր ձևաչափով նման է **Բազմընտրանքային հարցեր (Multiple-Choice Questions)** ռազմավարությանը: Սովորողների խնդիրն է՝ գտնել տվյալ բառի կամ հասկացության ճշգրիտ սահմանումը տրված բնորոշում-սահմանումներից:

Ստորև ներկայացնում ենք վարժություններ, որոնք վերաբերում են այս ռազմավարությանը, այսպես.

• **Choose the best definition of the given words.**

1. "pool" means

- a) light shining on area
- b) area of liquid
- c) a game played on the table

**Key:** "area of liquid" is the best definition.

2. "foundation" means

- a) an organization,
- b) most basic part
- c) base of building

**Key:** "base of building" is the best definition.

3. "shaft" means

- a) main part of something
- b) long narrow passage
- c) thin line of light

**Key:** "main part of something" is the best definition.

• **Choose the definition which best describes the term in the fields of architecture and construction.**

**altar**

- a) platform
- b) table
- c) special table for religious ceremonies

**vault**

- a) a curved structure
- b) a curved structure that supports or forms a roof
- c) roof

**beam**

- a) girder
- b) ray
- c) happiness

**Key:** 1c, 2b, 3a,...

Այս վարժություններով մենք սովորեցնում ենք ուսանողներին նոր բառեր՝ միաժամանակ ստուգելով նրանց բառապաշարային իմացությունը: Վարժությունը կարելի է տարբերակված կիրառել ուսուցման/ուսումնառության գործընթացում պայմանավորված սովորողների լեզվական պատրաստվածության տարբեր մակարդակներով: Բառերի սահմանումները նշելիս կարելի է ընտրել այնպիսիները, որոնք իմաստային տեսանկյունից իրար շատ մոտ են, սակայն նույնը չեն:

Համեմատաբար թույլ խմբերի հետ աշխատելիս անհրաժեշտ է ընտրել առավել պարզ տերմիններ կամ տերմինակապակցություններ՝ համապատասխան սահմանումներով: Ցույց տանք հետևյալ օրինակներում, որոնք տարբեր աստիճանի դժվարության են.

- 1. lay
- a) put
- b) place
- c) fix
- 2. masonry

- a) stone
- b) stonework
- c) metalwork

**Key:** 1a, 2b,...

Նպատակահարմար ենք գտնում ներկայացնել այս ռազմավարության մեկ այլ վարժություն, որը կարծես փոխադարձաբար լրացնում է նախորդին (**elicit words from definitions**): Սովորողներին ներկայացվում են տարբեր սահմանումներ և նրանցից պահանջվում է գտնել յուրաքանչյուրին համապատասխանող տերմինը կամ հասկանությունը:

Այսպես, օրինակ՝

• **Find the person who is engaged with the work described.**

- 1. building houses and other buildings
- 2. designing buildings
- 3. designing roads, bridges, etc.

**Key:** 1. builder, 2. architect, 3. civil engineer,....

Այսպիսով, պարզ է դառնում որ **Սահմանում - (Mastering Definitions)** ռազմավարությունը մարզում է սովորողների բառապաշարային ունակությունները ոչ թարգմանական մեթոդով: Գարտաբազմեր կամ շինարար ուսանողները զարգացնում են կապակցական խոսք կառուցելու կարողությունները, քանի որ խնդիր է դրվում ուսուցանվող լեզվով, տվյալ պարագայում անգլերենով բնութագրել/սահմանել մասնագիտական այս կամ այն տերմինը, տերմինակապակցությունը, բառը, բառակապակցությունը և այլն:

**Համապատասխանեցում (Matching)**

**ռազմավարությունը**

Այս ռազմավարությունը կիրառելիս սովորողներին հանձնարարվում են առաջադրանքներ՝ կապված ոչ միայն բառապաշարային նյութի իմաստների բացահայտման, այլև յուրաքանչյուր բառային միավորի՝ այլ բառերի կամ բառախմբերի հետ ունեցած կապակցելիության աստիճանը որոշելու նպատակով, ներառյալ հոմանիշների և հակահիշների բացահայտումը: Արդյունքում սովորողները ձեռք են բերում տվյալ միավորը խոսքային տարբեր «միջավայրերում» գործածելու կարողություններ:

**Համապատասխանեցում** ռազմավարությունը ընդգրկում է իր ձևաչափում առանձին բառեր, բառակապակցություններ, դարձվածքներ, նախադասություններ, ինչպես նաև զննական իրեր (visual images):

Ստորև ներկայացնում ենք առաջադրանք-մուշտրիմակներ, որոնք վերաբերում են այս ռազմավարությանը:

• Write the correct word under each picture.



nave, groined vault, arcade, cornice, capital, altar canopy, monument

• Put the following words in the correct list.

veneer, aluminum, girder, steel, sandstone, alloys, natural, artificial, marble, granite, limestone, timber, beam, plywood, hardwood, softwood, board, brass, basalt.

wood	stone	metals

• Match the words with synonyms given on the right.

- |                |             |
|----------------|-------------|
| 1. mix         | a) fix      |
| 2. scene       | b) corrode  |
| 3. hovel       | c) outline  |
| 4. deteriorate | d) cottage  |
| 5. fit         | e) fuse     |
| 6. plan        | f) panorama |
| 7. colour      | g) smooth   |
| 8. quake       | h) roomy    |
| 9. large       | i) move     |
| 10. flat       | j) tint     |

Key: 1e, 2f, 3d,...

Պետք է նշել, որ այս ռազմավարությունն ունի բազմաթիվ տարբերակներ և մեկ հողվածի շրջանակներում հնարավոր է ներկայացնել բոլորը: Կարելի է ենթադրել, որ պայմանավորված ուսուցման գործընթացի հնարավորություններով՝ լեզու ուսուցանողներից շատերին հաջողվում է ստեղծել նաև նոր վարժություններ:

**Համապատասխանեցում** ռազմավարությունն ուղղված է ոչ միայն բառապաշարային գիտելիքների ամրապնդմանը, այլև սովորողների՝ տեքստի կառուցվածքի առավել հստակ պատկերացմանը, նրանց հաղորդակցական կարողությունների զարգացմանը պայմանավորված լեզվական տարբեր միջավայրներում կողմնորոշվելու ունակությունների դրսևորմանը, ինչպես նաև տեսալսողական ապարատի զարգացմանը, քանի որ մասնագիտական տեքստի հետ աշխատելիս ուսանողը կատարում է բազմաբնույթ գործողություն՝ ներառյալ տեքստի գլխավոր միտքը արտահայտող նախադասությունը պարբերությանը համապատասխանեցնելը, վերջիններս՝ տեքստի ընդհանուր բովանդակությանը և այլն:

**Հոմանիշների և հակահիշների կիրառություն (Mastering antonyms and synonyms)**

Այս ռազմավարությունը ենթադրում է բառի տարբեր իմաստների, ինչպես նաև հակադիր իմաստների և նրանց գործածության առանձին ոլորտների բացահայտում և հստակեցում: Սովորողներին տրվող վարժությունները տարաբնույթ են: Դրանք կատարելիս ուսանողը սովորում է տարբերել իմաստով մոտ, բայց նաև որոշակիորեն տարբեր կամ հակադիր հասկացությունները: Արդյունքում, զարգանում են նաև խոսքում լեզվահաղորդակցության մեջ այդ միավորները ճիշտ ընտրելու և գործածելու կարողությունները:

Ստորև ներկայացնում ենք **Հոմանիշների և հակահիշների կիրառություն** ռազմավարության վարժությունների տարբերակներ, որոնք նպատակահարմար է կիրառել ոչ լեզվական բուհում անգլերեն ճ/շ տերմինաբանությունը ուսուցանելիս:

• Choose the alternative a b c d, which is closest in meaning to the given words:

- alloy: a) amalgam, b) blend, c) combination, d) aggregate
- angle: a) bend, b) nook, c) corner, d) twist
- canopy: a) shade, b) covering, c) umbrella, d) awning

Key: 1d, 2c, 3b,...

• Match the given synonyms.

- |              |               |
|--------------|---------------|
| a. mausoleum | 1) curve      |
| b. cupola    | 2) isolate    |
| c. flexible  | 3) lofty      |
| d. arch      | 4) tomb       |
| e. axe       | 5) plan       |
| f. insulate  | 6) dome       |
| g. layout    | 7) adjustable |
| h. plane     | 8) hatchet    |
| i. high      | 9) outer      |
| j. exterior  | 10) smooth    |

Key: A4, B6, C7, D1, E8, F2, G5, H10, I3, J9.

• Choose a synonym from the words given below.

- vault**  
a) arch                      b) basement                      c) apartment
- facade**  
a) front                      b) foundation                      c) wall
- floor**  
a) story                      b) basis                      c) storey

Key: 1b, 2a, 3c,...

• Find opposing matching pairs.

- |             |              |
|-------------|--------------|
| 1) ancient  | a) straight  |
| 2) bright   | b) base      |
| 3) interior | c) irregular |

- |                |             |
|----------------|-------------|
| 4) zigzag      | d) natural  |
| 5) summit      | e) add      |
| 6) symmetrical | f) exterior |
| 7) subtract    | g) modern   |
| 8) artificial  | h) gloomy   |

**Key:** 1)g, 2)h, 3)f, 4)a, 5)b, 6)c, 7)e, 8)d.

• **Arrange the following in pairs of antonyms.**

adjust, separate, cosy, thick, join, exclude, flexible, horizontal, scattered, vertical, restore, disarrange, divide, damage, include, uncomfortable, mix, portion, transparent, opaque, unbending, whole.

e.g. adjust disarrange

Այն ուսանողները, ովքեր ունեն որոշակի կայուն լեզվական գիտելիքներ (ներառյալ բավարար անգլերեն մասնագիտական բառապաշար), հեշտությամբ կարողանում են կատարել այս կարգի վարժությունները:

Ձեռք բերած բառապաշարը պահպանելուն և ընդլայնելուն նպատակաուղղված **Յոմանիշների և հականիշների կիրառություն** ռազմավարությամբ (վարժությունները կարող են լինել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր) նոր յուրացվող բառային միավորները ամրապնդվում են ուսանողների երկարատև հիշողության մեջ նախապես յուրացված բառային միավորների հետ համեմատվելով և հարաբերակցվելով: Հետևաբար, ուսուցման արդյունավետության բարձրացմանը զուգընթաց զարգանում է սովորողների բառապաշարային իմացությունը. ուսանողը դառնում է ավելի ազատ տարբեր համատեքստերում միևնույն տեղեկատվությունը տարբեր համանշանակ կամ հականիշներով ներկայացնելիս:

Այսպիսով, **Յոմանիշների և հականիշների կիրառություն** - (*mastering antonyms and synonyms*) ռազմավարությամբ ճարտարապետ և շինարար ուսանողները ընդլայնում և հստակեցնում են իրենց մասնագիտական բառաշարը, որի արդյունքում մասնագիտության շրջանակներում հաղորդակցվելիս նրանց խոսքը աստիճանաբար դառնում է ավելի սահուն, համոզիչ, ընկալելի, իսկ ուսանողը ձերբազատվում է իր լեզվական բարդույթներից:

**Թարգմանական վարժություններ**

**Translation Activities**

Ճարտարապետաշինարարական բուհում նպատակային ենք համարում հետևյալ թարգմանական վարժությունների կիրառումը.

• **Dictation Translation.**

Ղասախոսը թելադրում է ուսանողներին ար-

դեն ծանոթ տերմինների ու տերմինակապակցությունների հայերեն համարժեքները, իսկ ուսանողները մտաբերում և անմիջապես գրի են առնում անգլերեն համարժեքները:

Ղասախոսն ընթերցում է հայերեն նախադասությունը, իսկ ուսանողներն ընտրում են տրված երեք անգլերեն տարբերակներից ճշգրիտ թարգմանությունը, կամ՝ **հակառակը**. Ղասախոսն ընթերցում է անգլերեն նախադասությունը, իսկ ուսանողներն ընտրում են տրված երեք հայերեն տարբերակներից ճիշտը:

• **Choose the right English / Armenian equivalent.**

**1. գերան**

- a) wall                      b) beam    c) frame

**2. նրբատախտակ**

- a) plywood                b) wood    c) softwood

**3. ջրահեռացման համակարգ**

- a) waste water system

- b) sewerage

- c) water supply system

**4. օդափոխության համակարգ**

- a) air-conditioning

- b) ventilation

- c) ventilation system

• **Read the sentences carefully and translate the word combinations with the word to carry .**

1. The framework is intended to carry the main loads imposed on the building.

2. Trees and houses were carried away by the terrible storm.

• **Translate the word-combinations paying attention to various meanings of the adjective hard.**

hard surface - **կոշտ մակերես**

hard wood - **ամուր փայտ**

hard life - **դժվար կյանք**

hard issue - **բարդ խնդիր**

hard currency - **մրցունակ/կայուն տարադրամ**

hard won (person) - **դժվարություններ հաղթահարած (մարդ)**

hard nut - **փխբ. «ամուր կաղին» - հաստատակամ մարդ**

• **Translate into English / Armenian.**

Վարժությունը կարող է հիմնված լինել ինչպես առանձին տերմինների, այնպես էլ տերմինակապակցությունների, նախադասությունների, պարբերության և տեքստի վրա, օրինակ՝

**Translate the following text into Armenian.**

**Some Building Professions**

A man, who has been an apprentice for some years in a building trade and has therefore enough skill to be considered a skilled worker at his trade,

is called a tradesman or craftsman.

He may be a carpenter and joiner, bricklayer, mason, slater-and tiler, electrician, house-painter, glazier, floor-and-wall tiler, plasterer, paper-hanger, plumber and so on....

**b) Find the Armenian equivalents of the following terms and expressions and write them in the spaces provided.**

1. սալիկապատող .....
2. ջրահեռացման խողովակներ .....
3. թունելային պատշար .....
4. մետաղական կաղապարներ.....

**c) Read the text and write the Armenian equivalents of the underlined terms and expressions in the spaces provided.**

**Some Building Professions**

**Joiner** is a man who makes joinery and works mainly at the bench on wood, which has been cut and shaped by the machinists. His work is being finished and done in a joinery shop which is not exposed to weather....

**Mason** is a stone worker or stone setter. In the USA a bricklayer is also a mason. A builder mason is a mason who sets prepared stones in walls, whether the stone be only facing or to the full wall thickness.

- 1.....
- 2.....

Հարկ ենք համարում նշել, որ վերոնշյալ բոլոր ռազմավարությունները բառապաշարային գիտելիքների կուտակմանը զուգահեռ ինքնին ենթադրում են նաև ընթերցանական կարողությունների զարգացում, քանի որ այդ վարժությունները կատարվում են մասնագիտական տեքստն ընթերցելիս կամ ընթերցելուց հետո:

ճարտարապետաշինարարական տերմինաբանության ուսուցման վերոնշյալ մեթոդիկան համահունչ է հոգեբանական, մանկավարժական և մեթոդական հետազոտությունների այն հիմնադրույթներին, որոնք վերաբերում են ընկալման գործընթացում բառապաշարի մտապահման, ճանաչման, իմաստավորման և ամրապնդման մեխանիզմների զարգացմանը: Եվ ինչպես ցույց է տալիս փորձը, ապագա ճարտարապետներն ու շինարարները ոչ միայն մեծ ոգևորությամբ յուրացնում են մասնագիտական անգլերեն լեզվանյութը, այլև գործնական անգլերեն դասընթացի ժամանակ հաճախ բացահայտում են նորանոր մասնագիտական գաղտնիքներ:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. **Աստվածատրյան Մ.**, Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, Երևան, «Լույս», 1985, 390 էջ:
2. **Պողոսյան Ն. Վ.**, Անգլերենի ճարտարապետաշինարարական տերմինաբանության սկզբունքներն ու ուսուցման ռազմավարությունները համակարգչային տեխնոլոգիաների կիրառմամբ, թեկն. առ. հավելված, Երևան, 2010, 217 էջ:
3. **Scrivener J.**, Learning Teaching: A guidebook for English language teachers. Macmillan Publishers Limited, 2007, 430 p.
4. <http://www.ebuild.com/>
5. <http://www.architect.org/>

THE SYSTEM OF VOCABULARY EXERCISES FOR TEACHING ENGLISH SUBJECT-SPECIFIC TERMS IN THE FIELD OF ARCHITECTURE AND CONSTRUCTION

**NAIRA POGHOSYAN**

Candidate of pedagogical sciences

Summary

The aim of this article is to improve the quality of teaching English for Specific Purposes (ESP) and for this reason a number of practical methodological techniques in the form of vocabulary strategies and activities have been introduced, which hopefully will stimulate and encourage teachers to devise their own activities based on these equivalent items.

### Гаяне Рафиковна АМИРЯН

*Кандидат педагогических наук, старший преподаватель армянского языка  
Ереванский филиал ТНЭУ*



**В** современном мире, в котором информационный поток, обрушивающийся на человека, настолько велик, что людям волею не волею приходится прибегать с помощью разнообразной техники,

трудно представить себе человека, не пользующегося телевизором и радио, печатной машинкой и компьютером, электрическим чайником и холодильником, и этот список можно продолжать до бесконечности. Вся наша жизнь стала настолько зависеть от созданных нами вещей, что если бы человек вдруг лишился бы их, то долго просуществовать в этом мире он не смог бы.

Мы живем в век информации, в век, когда происходит компьютерная революция. Мы являемся свидетелями того, что компьютеры, уже занявшие прочные позиции во многих областях современной жизни, быстро проникают в школы и дома. Тема внедрения технических и автоматизирующих средств в образовательную сферу стала особенно актуальна в наши дни.

Развитие человеческих задатков, превращение их в способности – одна из задач обучения и воспитания, решить которую без знаний и развития познавательных процессов нельзя. По мере их развития совершенствуются и сами способности, приобретая нужные качества. Знание психологической структуры познавательных процессов, законов их формирования необходимо для правильного выбора метода обучения и воспитания. Большой вклад в изучение и развитие познавательных процессов внесли и такие ученые, как Л.С. Выгодский, А.Н. Леонтьев, Л.С. Сахаров, А.Н. Соколов, Ж. Пиаже, С.Л. Рубинштейн и др.

Ими были разработаны различные методики и теории формирования познавательных процессов. И сейчас, чтобы успешно развивать познавательные процессы в учебной деятельности, необходимо, искать более современные средства и методы обучения. Использование компьютера с его огромными универсальными возможностями на уроках в школе и вузах и будет являться одним из таких средств.

Педагогика в качестве науки о целенаправленной, специально организованной, систематической деятельности по формированию индивида, а также о содержании, организационных формах и методах образования существует всего несколько сот лет. В других своих ипостасях – как искусство или как ремесло – педагогика насчитывает многие тысячелетия. Даже беглый ретроспективный взгляд на проблему передачи подрастающему поколению накопленного потенциала знаний и умений убеждает в том, что приоритетными всегда являлись те цели и задачи, которые в той или иной мере адекватно отражали настоящие потребности общества в данный период его развития. Вместе с тем всегда существовал и некий инвариант, который по мере движения человечества вперед по пути цивилизации сформировался в весьма значимую метакель: развитие личности индивида в гармонии трех ее начал (аспектов) – духовного, интеллектуального, физического. Ничуть не умаляя значения каждого из аспектов и рассматривая общее развитие индивида как гармоничное развитие личности, обратимся к проблемам интеллектуального развития, развития творческого потенциала как высшего начала человека.

Современный период развития цивилизованного общества характеризует процесс информатизации. Информатизация общества – это глобальный социальный процесс, особенность которого состоит в том, что доми-

\* Երկրայացիք է 30.01.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:



нирующим видом деятельности в сфере общественного производства является сбор, накопление, продуцирование, обработка, хранение, передача и использование информации, осуществляемые на основе современных средств микропроцессорной и вычислительной техники, а также на базе разнообразных средств информационного обмена. Информатизация общества обеспечивает:

- активное использование постоянно расширяющегося интеллектуального потенциала общества, сконцентрированного в печатном фонде, и научной, производственной и других видах деятельности его членов,

- интеграцию информационных технологий с научными, производственными, инициирующую развитие всех сфер общественного производства, интеллектуализацию трудовой деятельности;

- высокий уровень информационного обслуживания, доступность любого члена общества к источникам достоверной информации, визуализацию представляемой информации, существенность используемых данных.

Применение открытых информационных систем, рассчитанных на использование всего массива информации, доступной в данный момент обществу в определенной его сфере, позволяет усовершенствовать механизмы управления общественным устройством, способствует гуманизации и демократизации общества, повышает уровень благосостояния его членов. Процессы, происходящие в связи с информатизацией общества, способствуют не только ускорению научно-технического прогресса, интеллектуализации всех видов человеческой деятельности, но и созданию качественно новой информационной среды социума, обеспечивающей развитие творческого потенциала индивида.

Одним из приоритетных направлений процесса информатизации современного общества является информатизация образования – процесс обеспечения сферы образования методологией и практикой разработки и оптимального использования современных или, как их принято называть, новых информационных технологий (НИТ), ориентированных на реализацию психолого-педагогических целей обучения, воспитания. Этот процесс инициирует:

- совершенствование механизмов управления системой образования на основе использования автоматизированных банков данных научно-педагогической информации, информационно-методических материалов, а также коммуникационных сетей;

- совершенствование методологии и стратегии отбора содержания, методов и организационных форм обучения, воспитания, соответствующих задачам развития личности обучаемого в современных условиях информатизации общества;

- создание методических систем обучения, ориентированных на развитие интеллектуального потенциала обучаемого, на формирование умений самостоятельно приобретать знания, осуществлять информационно-учебную, экспериментально-исследовательскую деятельность, разнообразные виды самостоятельной деятельности по обработке информации;

- создание и использование компьютерных тестирующих, диагностирующих методик контроля и оценки уровня знаний обучаемых.

Информатизация образования как процесс интеллектуализации деятельности обучающего и обучаемого, развивающийся на основе реализации возможностей средств новых информационных технологий, поддерживает интеграционные тенденции процесса познания закономерностей предметных областей и окружающей среды (социальной, экологической, информационной и др.), сочетая их с преимуществами индивидуализации и дифференциации обучения, обеспечивая тем самым синергизм педагогического воздействия.

В современном цивилизованном обществе этапа информатизации все его члены, независимо от их общественного положения, используют информацию и знания в своей деятельности, решая непрерывно возникающие перед ними задачи. При этом постоянно увеличивающиеся запасы знаний, опыта, весь интеллектуальный потенциал общества, который сосредоточен в книгах, патентах, журналах, отчетах, идеях, активно, на современном техническом уровне участвует в повседневной производственной, научной, образовательной и других видах деятельности людей. Ценность информации и удельный вес информационных услуг в жизни современного общества резко возросли. Это дает основание говорить о том, что главную роль в процессе информатизации играет собственно информация, которая сама по себе не производит материальных ценностей. Под информацией (с общих позиций) понимаем сведения о фактических данных и совокупность знаний о зависимостях между ними, то есть средство, с помощью которого общество может осознавать себя и функционировать как единое целое. Естественным предположить, что информация

должна быть научно-достоверной, доступной в смысле возможности ее получения, понимания и усвоения; данные, из которых информация извлекается, должны быть существенными, соответствующими современному научному уровню.

Как было уже сказано, общество этапа информатизации характеризует процесс активного использования информации в качестве общественного продукта, в связи с чем происходит формирование высокоорганизованной информационной среды, оказывающей влияние на все стороны жизнедеятельности членов этого общества.

Информационная среда включает множество информационных объектов и связей между ними, средства и технологии сбора, накопления, передачи, обработки, продуцирования и распространения информации, собственно знания, а также организационные и юридические структуры, поддерживающие информационные процессы. Общество, создавая информационную среду, функционирует в ней, изменяет, совершенствует ее. Современные научные исследования убеждают в том, что совершенствование информационной среды общества инициирует формирование прогрессивных тенденций развития производительных сил, процессы интеллектуализации деятельности членов общества во всех его сферах, включая и сферу образования, изменение структуры общественных взаимоотношений и взаимосвязей.

Реализация возможностей технических и программных средств современных информационных технологий позволяет: обеспечить управление информационными потоками; общаясь с пользователем на естественном языке, осуществлять распознавание образов и ситуаций, их классификацию; эффективно обучать логике доказательств; накапливать и использовать знания; организовывать разнообразные формы деятельности по самостоятельному извлечению и представлению знаний; осуществлять самостоятельное "микрораскрытие" изучаемой закономерности.

Все вышеперечисленное способствует развитию интеллектуального потенциала индивида, реализует идеи развивающего обучения.

Интеграция современных информационных технологий с операциональными обеспечивает системный эффект, следствием которого становится "технологический прорыв", имеющий место и в педагогике. Вместе с тем использование современных информационных

технологий поддерживает общие интеграционные тенденции процесса познания окружающей информационной, экологической, социальной среды, способствует реализации преимуществ узкой специализации и возможностей индивидуализации процесса обучения, обеспечивая тем самым синергический эффект в педагогике.

Возможность легкого доступа к информационным ресурсам, а в сфере образования – к информационно-методическому обеспечению процесса обучения, тиражируемость передовых педагогических технологий на базе использования средств новых информационных технологий обеспечивают расширение и укрепление связей между отдельными структурами системы образования, что приводит к совершенствованию ее инфраструктуры. Автоматизация процессов ведения делопроизводства в учебном заведении, реализуемость управления отдельными этапами учебного процесса приводят к совершенствованию механизмов организационного управления системой образования, избавляют от рутинной, "бумажной" работы.

Естественно предположить, что развитие, совершенствование информационной среды сферы образования зависят от обеспечения системы образования как в целом, так и каждого учебного заведения в отдельности специализированными подразделениями, приспособленными для организации деятельности со средствами новых информационных технологий.

Включение компьютера в учебный процесс оказывает определенное влияние на роль средств обучения, используемых в процессе преподавания того или иного предмета (курса).

Информационными технологиями в педагогике обучения называют все технологии, использующие специальные технические информационные средства (ЭВМ, аудио, видео). Компьютеры стали широко использоваться в образовании, появился термин "компьютерная технология обучения". Компьютерные технологии развивают идеи программированного обучения, открывают совершенно новые, еще не исследованные технологические варианты, связанные с уникальными возможностями современных компьютеров и коммуникаций. Компьютерные (новые информационные) технологии обучения – это процессы подготовки и передачи информации обучаемому посредством компьютера.

Целью компьютерных технологий являет-

ся формирование умений работать с информацией, развитие коммуникативных способностей, подготовка личности, информационного общества», формирование исследовательских умений, умений принимать оптимальные решения.

В широком смысле под альтернативными технологиями принято рассматривать те, которые противостоят традиционной системе обучения какой-либо своей стороной, будь то цели, содержание, формы, методы, отношения, позиции участников педагогического процесса. С этой точки зрения всякая инновация может претендовать на статус альтернативной технологии.

Альтернативные технологии предполагают отказ как от традиционных концептуальных оснований педагогического процесса (социально-философских, психологических), общепринятых организационных, содержательных и методических принципов, и замены их другими, альтернативными.

Современный период развития цивилизованного общества по праву называют этапом информатизации. Характерной чертой этого периода является тот факт, что доминирующим видом деятельности в сфере общественного производства, повышающим его эффективность и наукоёмкость, становятся сбор, продуцирование, обработка, хранение, передача и использование информации, осуществляемые на базе современных информационных технологий.

Одним из главных направлений процесса информатизации современного общества становится информатизация образования, обеспечивающая широкое внедрение в практику психолого-педагогических разработок, направленных на интенсификацию процесса обучения, реализацию идей развивающего обучения, совершенствование форм и методов организации учебного процесса, обеспечивающих переход от механического усвоения фактологических знаний к овладению умением самостоятельно приобретать новые знания. Применение в образовании компьютеров и информационных технологий оказывает существенное влияние на содержание, методы и организацию учебного процесса по различным дисциплинам. В конце 90-х годов в образование входят мультимедийные компьютеры, такие программные продукты, как компьютерные энциклопедии, электронные книги, справочники по литературе, живописи, музыке. Это создает возможности гуманитаризации образования. С развитием мультимедийных техноло-

гий компьютер становится средством обучения, способным наглядно представлять самую различную информацию. Как следствие, происходит развитие творческого потенциала обучаемого, способностей к коммуникативным действиям, навыков экспериментально-исследовательской работы; культуры учебной деятельности; интенсификация учебно-воспитательного процесса, повышение его эффективности и качества.

Педагог в информационном обществе перестает выступать перед своими студентами в качестве источника первичной информации. Он превращается в посредника, который облегчает ее получение. Фундаментальной характеристикой развития человеческой цивилизации является получение, накопление, обработка и потребление информации. В информатизированном обществе без овладения начальной компьютерной грамотностью и умения использовать компьютерные средства для решения определенных задач немислима реализация творческого потенциала человека в современной науке, культуре, производстве, деловых и иных сферах жизни. Современное общество характеризуется, с одной стороны, нестабильностью, быстрой изменчивостью и трудной предсказуемостью, с другой все большей «открытостью», взаимопроникновением накопленных знаний и опыта.

Особенности компьютера как инструмента человеческой деятельности заключаются в обеспечении доступа к большому объему информации и ее переработке, усилении познавательно-исследовательских возможностей человека, организации обмена информацией по содержанию выполняемой деятельности и создании новой человеко-машинной коммуникативной системы.

Компьютеры являются очень эффективной поддержкой при обучении и приобретении знаний в школе, при использовании их в качестве инструментов познания для отражения того, что студенты выучили и что они знают. Вместо того чтобы использовать возможности компьютерных технологий для расширения информации, компьютеры должны использоваться во всех областях знаний в качестве инструментов, помогающих обучаемым вдумчиво и критически осмысливать представления, которые они изучают. Использование компьютера в качестве средства обучения путем применения прикладных программ в качестве формализованных представлений знаний способствует более быстрому и полному усвоению материала, чем при использова-

нии всех имеющихся в настоящее время обучающих компьютерных программ.

За последние годы возросло внимание и исследователей, и педагогов-практиков к персональному компьютеру как средству моделирования различных процессов. С помощью компьютера моделируются физические явления, химические реакции, управление производственными или экономическими процессами и др.

Применение современных информационных технологий значительно повышает эффективность самообразования. В электронный вид переведены многие, всемирно известные, энциклопедии и словари, существует большое количество электронных книг и учебников. Растет популярность дистанционного образования, когда задания и методические рекомендации обучающийся получает через Интернет или по электронной почте. Однако, как показывает практика, компьютер пока не стал полноценным средством обучения. Это связано не только с проблемами, обозначенными в научной литературе.

Дистанционное обучение-универсальная форма обучения, базирующаяся на использовании широкого спектра традиционных, новых информационных и телекоммуникационных технологий, и технических средств, которые создают условия для обучаемого свободного выбора образовательных дисциплин, соответствующих стандартам, диалогового обмена с преподавателем, при этом процесс обучения не зависит от расположения обучаемого в пространстве и во времени.

Дистанционное образование создает широкие возможности применению обучающихся и информационных технологий, подразумевает их совместное применение. Вместе с тем, на современном этапе его организация образует целый комплекс нерешенных проблем. Даже самые лучшие и передовые технологии – как информационные, так и психолого-педагогические – без адекватной организации учебного процесса могут оказать обратное, порой разрушительное, воздействие. Поэтому для качественного и доступного образования недостаточно просто внедрить их в процесс обучения, необходим творческий подход к делу, создание налаженной системы организации учебной работы преподавателей и студентов.

Одной из новейших образовательных технологий является дистанционное обучение, позволяющее в домашних условиях при помощи компьютера или телекоммуникаций получить высшее образование или пройти курсы ино-

странного языка в университете или школе, находящемся в другой стране. Однако, развитие дистанционного образования порождает и ряд проблем, связанных с качеством преподавания и использованием современных информационных средств в обучении.

В виртуальном образовании также стоит вопрос об эффективной организации учебного процесса, повышении заинтересованности учащихся, и здесь большую роль могут играть психолого-педагогические, применяемые и в традиционном обучении: сетевые игры, виртуальные семинары, тренинги, совместные коллективные проекты и др. Два типа технологий – информационные и обучающие – могут (и должны) успешно сочетаться, способствуя диверсификации процесса обучения, развитию творческого потенциала и познавательных стремлений личности, что и является смыслом образования в целом.

Ж.-Ф. Лиотар в своей работе “Состояние постмодерна”, говоря о знании в информационных обществах, отмечал, что в эпоху постмодерна актуальным становится получение доступа к информации. В этом случае роль образования сводится к разработке междисциплинарного подхода и обучению «приемам» получения знаний. Можно сказать, что возможности дистанционного образования в полной мере отражают эти принципы. Необходимо лишь, чтобы была в полной мере обеспечена соответствующая методологическая и управленческая база для его успешного функционирования.

В последние годы все большее значение приобретает новая область знания - педагогическая инноватика. Это сфера науки, изучающая новые технологии, процессы развития школы, новую практику образования. Слово “инновация” происходит от латинского *inovatus* (*in* - в, *novus* - новый) и в переводе означает “обновление, новинку, изменение”. Педагогическая инновация - это изменения, направленные на улучшение развития, воспитания и обучения школьников.

Инновации в образовании, понимаемые в широком смысле как внесение нового, изменение, совершенствование и улучшение существующего, можно назвать имманентной характеристикой образования, вытекающей из его основного смысла, сущности и значения. Ведь новизна любого средства относительна как в личностном, так и во временном плане. То, что ново для одного института, одного педагога, может быть пройденным этапом для других. Новизна всегда носит конкретно-истори-

ческий характер. Не имеет значения, являются ли в настоящее время идея, концепция, технология объективно новыми или нет, можно определить время, когда они были объективно новыми (например, новой в свое время была классно-урочная система Коменского). Рождаясь в конкретное время, прогрессивно решая задачи определенного этапа, новшество быстро может стать достоянием многих, нормой, общепринятой массовой практикой или отжить, устареть, стать тормозом развития в более позднее время. Поэтому учителю нужно постоянно следить за новшествами в образовании и осуществлять инновационную деятельность. К основным функциям инновационной деятельности учителя относятся прогрессивные (так называемые бездефектные) изменения педагогического процесса и его компонентов: изменение в целях (например, новой целью является развитие индивидуальности школьника, 2) изменение в содержании образования, новые средства обучения (компьютерное обучение), новые идеи воспитания (Ю. П. Азаров, Д. Байярд, Б. Спок), новые способы и приемы обучения (В. Ф. Шаталов), развития (В. В. Давыдов, Л. В. Занков), воспитания младших школьников (Ш. А. Амонашвили) и т.д.

В основе классификации инноваций можно положить определенные критерии, на основе которых она будет проводиться. Первый критерий связан с областью, в которой осуществляются новшества. Вторым общим критерием можно считать способ возникновения новаторского процесса, третьим - широту и глубину новаторских мероприятий, а четвертым - основу, на которой проявляются, возникают новшества. По первому критерию, то есть в зависимости от того, в какой области, в каком секторе образования проводятся нововведения (что обновляется), можно выделить следующие инновации: 1) в содержании образования, 2) в технологии, 3) в организации, 4) в системе и управлении, 5) в образовательной экологии.

В зависимости от способа осуществления нововведений (второй критерий) их можно разделить на: а) систематические, плановые, заранее задуманные; б) стихийные, спонтанные, случайные. В зависимости от широты и глубины новаторских мероприятий можно говорить о: а) массовых, крупных, глобальных, стратегических, систематических, радикальных, фундаментальных, существенных, глубоких и др.; б) частичных, малых, мелких и т.п. Новшества в образовательной экологии от-

носятся к архитектуре школьных объектов, их комплексов, местоположению и социальному окружению.

Под педагогической инноватикой понимается учение о создании педагогических новшеств, их оценке и освоении педагогическим сообществом, использовании и применении на практике. Педагогическая инноватика и её методологический аппарат могут являться действенным средством анализа, обоснования и проектирования происходящей сегодня модернизации образования.

Современное образование является сложнейшей формой общественной практики, его место и роль на данном историческом этапе исключительны и уникальны. Сегодня образование оказывается самым масштабным и может быть единственным социальным институтом, через который осуществляется трансляция и воплощение базовых ценностей и целей развития общества. В условиях радикального изменения идеологических воззрений, социальных представлений, идеалов именно образование позволяет осуществить адаптацию к новым жизненным формам, поддержать процесс воспроизводства социального опыта, закрепить в общественном сознании и практике новые политические реалии и новые ориентиры развития.

## ТОЛКОВЫЙ СЛОВАРЬ

• **Информатизация образования** – процесс обеспечения сферы образования методологией и практикой разработки и оптимального использования современных информационных технологий, ориентированных на реализацию психолого – педагогических целей обучения, воспитания. Этот процесс инициирует, во – первых, совершенствование механизмов управления системой образования на основе использования автоматизированных банков данных научно – педагогической информации, информационно – методических материалов, а также коммуникационных сетей; во – вторых, совершенствование методологии и стратегии отбора содержания, методов и организационных форм обучения, воспитания, соответствующих задачам развития личности обучаемого в современных условиях информатизации общества; в – третьих, создание методических систем обучения, ориентированных на развитие интеллектуального потенциала обучаемого, на формирование умений самостоятельно приобретать знания, осуществлять информационно – учебную, эксперимен-

тально – исследовательскую деятельность, разнообразные виды самостоятельной деятельности по обработке информации; в – четвертых, создание и использование компьютерных тестирующих, диагностирующих методик контроля и оценки уровня знаний обучаемых.

• **Телекоммуникационная связь** реализует синтез компьютерных сетей и средств телефонной, телевизионной, спутниковой связи. Эти комплексы объединяются в системы передачи – приема для информационного обеспечения территориальных регионов.

• **инновация** – конечный результат творческого труда, получивший реализацию в виде новой или усовершенствованной продукции, нового или усовершенствованного технологического процесса, используемого в экономическом обороте;

• **инновационная деятельность** – создание новой или усовершенствованной продукции, нового или усовершенствованного технологического процесса, реализуемых в экономическом обороте с использованием научных исследований, разработок, опытно-конструкторских работ либо иных научно-технических достижений;

• **инфраструктура инновационной деятельности** – организации, предоставляющие субъектам инновационной деятельности услуги, необходимые для осуществления инновационной деятельности.

#### ЛИТЕРАТУРА

1. **Алексеев В. Д., Давыдов Н. А.**, Педагогические проблемы совершенствования учебного процесса на основе использования ЭВМ. М., ВПА, 1988.
2. **Андреев А. А., Барабанщиков А. В.**, Педагогическая модель компьютерной сети // Педагогическая информатика N2, 1995.
3. **Бабанский Ю. К.**, Оптимизация учебно-воспитательного процесса. М., 1982.
4. **Бадмаев Б. Ц.**, Психология и методика ускоренного обучения. М., 1998.
5. **Габай Т. В.** Педагогическая психология /Учебное пособие. М., 1995.
6. **Давыдов В. В.**, Проблемы развивающего обучения: Опыт теорет. и эксперим. исслед. М., "Педагогика", 1986.
7. **Зинченко В. П.**, Эргономика и информатика // Вопр. философии. 1986.
8. Информационная технология: Вопр. развития и применения. Киев, Наук. думка, 1988.
9. **Клейман Т. М.**, Школы будущего: Компьютеры в процессе обучения. М., "Радио и связь", 1997.
10. Краткий психологический словарь /Под общ. ред. А. В. Петровского, М. Г. Ярошевского. М., "Политиздат", 1985.
11. **Кривошеев А. О.**, Разработка и использование компьютерных обучающих программ // Информационные технологии, 1996.
12. Microcomputers in Education - Innovations and Issues, Vol. 12, N1, 1989, Cambridge, Technical Education Research Centers, 1989.
13. «Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի 2009 թ. հետազոտություն», Եր., 2009:

ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՈՒՄՈՒՑՍԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

#### ԳԱՅԱՆԵ ԱՄԻՐՅԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու

Ամփոփում

Տեխնոլոգիաների զարգացման մերօրյա սրընթաց ժամանակաշրջանում, տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում, ինչպես այլ բնագավառներում, մրցակցությունը գնալով սրվում է: Տեղեկատվական տեխնոլոգիաներն այսօր դիտարկվում են որպես արդյունավետ գործիք, որը կնպաստի և՛ տնտեսության զարգացմանը, և՛ կառավարման արդյունավետության բարձրացմանն ու հանրային ծառայությունների մատչելիության մեծացմանը: Նորարարական լուծումները կտրուկ բարձրացնում են ցանկացած ոլորտի արտադրողականությունն ու աշխատանքի արդյունավետությունը:

Ներկայումս կրթական և տեղեկատվական-հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրումը կրթության համակարգ մեծ տարածում է ստանում: Մի շարք միջոցառումներ են ձեռնարկվում ուսուցման ժամանակակից մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը մեծ թափ հաղորդելու նպատակով: Տեղեկատվական տեխնոլոգիաների և միջոցների կիրառման ոլորտների ընդլայնման, այդ ծառայությունների որակի բարելավման և մատչելիության ապահովման առումով մեծապես կարևորվում է ինտերակտիվ էլեկտրոնային կրթության զարգացումը և համատարած կիրառումը: Այդ նպատակով ուսումնական գործընթացում համատարած ներդրվում են էլեկտրոնային կառավարման և հեռավար ուսուցման համակարգերը:

### Гаяне Рафиковна АМИРЯН

*Кандидат педагогических наук, старший преподаватель армянского языка  
Ереванский филиал ТНЭУ*

Совершенно понятно, что воспитатель,  
не имеющий авторитета,  
не может быть воспитателем.

*А. С. Макаренко*

**П**едагогика наука о специально организованной, целенаправленной и систематической деятельности по формированию человека, о содержании, формах и методах воспитания, образования и обучения. Предмет педагогики – воспитательные отношения, обеспечивающие развитие человека.

Педагогика исследует сущность воспитания, его закономерности, тенденции и перспективы развития, разрабатывает теории и технологии воспитания, определяет его принципы, содержание, формы и методы.

Современная педагогика занимает особое место в системе наук о человеке. Она изучает и решает проблемы воспитания, обучения, образования и развития человека, возникающие на разных этапах его жизни в различных условиях социально-экономического и научно-технического развития общества, которое постоянно ставит новые задачи в области образования и воспитания.

Основными категориями педагогики являются: формирование личности, воспитание, образование, обучение. Под формированием личности, которое раньше обозначалось термином “воспитание в широком смысле”, понимается процесс становления человеческого индивидуума под воздействием как целенаправленных влияний (воспитание в собственном смысле слова), так и разнообразных, нередко противоречивых влияний окружающей среды.

Развитие личности происходит в общем контексте “жизненного пути” человека (С. Л. Рубинштейн). Развитие личности как процесс социализации индивида осуществляется в оп-

ределенных социальных условиях семьи, ближайшего окружения, региона, страны, в определенных социально-политических, экономических условиях, в этносоциокультурных, национальных традициях того народа, представителем которого он является. В то же время на каждом этапе жизненного пути, как подчеркивал Л. С. Выготский, складываются определенные социальные ситуации развития как своеобразные взаимоотношения ребенка и окружающей его социальной действительности. В рамках педагогики существует ряд относительно самостоятельных разделов, связанных с исследованием отдельных сторон учебно-воспитательного процесса.

К собственно педагогике примыкают методики преподавания отдельных учебных дисциплин, изучаемых в учебных заведениях различного типа; дефектология, исследующая психофизиологические особенности развития аномальных детей, закономерности их воспитания, образования и обучения (с выделением узкоспециализированных отраслей: теория и методика воспитания, образование и обучение глухих и слабослышащих детей - сурдопедагогика; слепых и слабовидящих - тифлопедагогика, с недостатками умственного развития - олигофренопедагогика, с нарушениями речи - логопедия); история педагогики, изучающая развитие теории и практики воспитания, образования и обучения в различные исторические эпохи.

Профессия педагога, вероятно, наиболее чувствительна к психологии, поскольку деятельность педагога непосредственно направлена на человека, на его развитие. Педагог в своей деятельности встречает “живую” психологию, сопротивление индивида педагогическим воздействиям и т. п. Поэтому, хороший, заинтересованный в эффективности своей работы педагог поневоле обязан быть психологом. Важно то, что психологический

\* Արևիկյանցի է 30.01.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

опыт является именно обслуживающим основную практическую задачу педагога, имеющего определенные педагогические принципы и способы педагогической деятельности. Над этой педагогической деятельностью и надстраиваются психологические знания как обслуживающие ее.

Термином «педагогическая психология» обозначаются две существенно разные науки. Одна из них является ветвью психологии, это базовая наука, призванная изучать природу и закономерности процесса учения и воспитания. Но под названием «педагогическая психология» развивается также и прикладная наука, цель которой - использовать достижения всех ветвей психологии для совершенствования педагогической практики. За рубежом эта прикладная часть психологии часто называется школьной психологией.

В современной педагогической практике уже невозможно грамотно, эффективно и на уровне современных культурных требований строить свою деятельность без интенсивного внедрения научных психологических знаний. Например, поскольку педагогическая деятельность состоит в общении ученика и учителя, в установлении между ними контакта, то существует запрос на исследование, построение научных знаний о способах общения между людьми и эффективном использовании их в построении педагогических процессов.

Педагогическая психология подчеркивает важность реализации всех активизирующих интеллектуальную деятельность подростка принципов обучения: его проблематизацию, диалогизацию; индивидуализацию, активно-действенные формы организации усвоения.

Педагог выполняет определенную функцию в обществе. Эта нормативно заданная функциональная определенность педагога в нашей культуре имеет тенденцию даже к упрощению, к сдвигу от собственно педагогической функции к функции трансляции культуры, передачи деятельности, т.е. к совершенно пассивной воспроизводящей деятельности. И это, конечно, плохо (для такой трансляции есть более подходящие средства - радио, телевидение и т.п.). Правда, у этого сдвига к сфере культуры (культурологический сдвиг) есть некоторые основания. Педагог действительно является носителем культуры, но он также является (по крайней мере, в лучших своих образцах) и живым образцом культуры. А это очень трудная и, наверное, неразрешимая задача: быть живым образцом

культуры. И такое представление о педагоге наиболее выражено в авторитарной культуре (наиболее яркий ее образец - средние века). Соответственно и общение так себя осознающего педагога (как образец) оказывается возможным только в авторитарной форме. Современную же европейскую культуру называют «синкретической», или диалогической (или коммуникативной): есть много образцов, способов жизни и идей человека, и поэтому основная ценность состоит в диалоге и организации понимания.

Педагог теперь не образец, а индивидуальность, личность, которая хочет, чтобы ее поняли и применяет все возможные средства для этого. Но такая личность и сама хочет понимать других, тоже как личностей, имеющих право на слово, на мышление. И это последнее как раз и является средством педагогической работы, управления, фактом самосознания.

Профессионализм преподавателя в педагогической деятельности выражается в умении видеть и формировать педагогические задачи на основе анализа педагогических ситуаций и находить оптимальные способы их решения. Поэтому одной из важнейших характеристик педагогической деятельности является ее творческий характер.

Психологический портрет учителя любого учебного предмета включает следующие структурные компоненты: 1) индивидуальные качества человека, т.е. его особенности как индивида - темперамент, задатки и т.д.; 2) его личностные качества, т.е. его особенности как личности - социальной сущности человека; 3) коммуникативные (интерактивные) качества; 4) статусно-позиционные, т.е. особенности положения, роли, отношений в коллективе; 5) деятельностные (профессионально предметные); 6) внешнеповеденческие показатели.

Педагогическая деятельность - это тот вид деятельности, на результат которой оказывает влияние характер отношений между ее участниками. Успешное решение сложных и ответственных задач обучения и воспитания младших школьников в решающей степени зависит от личности учителя, его нравственной позиции, профессионального мастерства, эрудиции и культуры.

Какими средствами и путями достичь духовной общности учителя с учениками - этой первоосновы всех успехов в обучении и воспитании?



Опыт убеждает, что влияние учителя на ученика, успешная его педагогическая деятельность зависят от авторитета учителя.

Понятие «авторитет» буквально означает общепризнанное значение человека, его влияние на людей, поддержку его идеи и деятельности общественным мнением, проявление уважения, доверия к нему, даже веры в него: в его ум, волю, нравственность, способность сотворить благо, отдать все силы общему делу.

Сущность, специфические особенности и функции собственного педагогического авторитета обусловлены тем, что десятки и сотни ребячьих глаз, как рентгеном, насквозь просвечивают и выявляют нравственное состояние личности педагога. У настоящего учителя-воспитателя нет другого морального выбора кроме чистоты, искренности, открытости и прямоты. В противном случае учитель неизбежно утрачивает свое влияние на детей и право быть их воспитателем. Суть педагогического авторитета в постоянном развитии педагогом в себе гражданской, творческой, человеческой личности, подлинной духовности и интеллигентности. Ребенок авансует воспитателю свое уважение, доверие, расположение, исходя из естественного предположения о высоких качествах его личности.

Авторитет педагога – это, прежде всего, средство воспитательного воздействия на учащегося. Авторитетной личности как бы авансируется успех. Личности, признающей авторитетной, приписывается компетентность и в других областях. Происходит как бы иррадиация авторитета. Авторитет учителя – это сложный феномен, который качественно характеризует систему отношений к педагогу. Отношения учащихся к авторитетному педагогу положительно эмоционально окрашены и насыщены. И чем выше этот авторитет, чем важнее для воспитанников науки, основы которых преподает учитель, тем справедливее кажутся его требования, замечания, тем весомее каждое его слово.

Подлинный авторитет нельзя декретировать свыше. Его можно только заслужить честным и упорным трудом. Существует мнение, что должность учителя сама по себе обеспечивает ему авторитет среди учащихся. Но это не так. В наше сложное время должностной авторитет полностью заменен авторитетом личностным.

Обязательным требованием к авторитетному учителю является моральная чистоплотность. Нравственные отношения пронизывают все стороны общения учителя и учащегося. Любой хороший или плохой поступок обязательно имеет нравственный аспект. Если учащиеся увлеченно работают на уроке и не слышат звонка на перемену, если не пререкаясь, выполняют любую просьбу учителя, авторитет последнего высок.

О значении авторитета педагога в учебно-воспитательном процессе говорили многие педагоги и психологи. И. О. Пирогов говорил, что отношения между педагогом и учащимся должны строиться на доверии и уважении, а не на наказании и страхе.

Одним из положительных качеств хороших учителей является обладание правильной и выразительной речью. Важнейшим достижением человека, позволившим ему использовать общечеловеческий опыт, как прошлый, так и настоящий, явилось речевое общение, которое развивалось на основе трудовой деятельности.

В речи человека обычно выявляется весь психологический облик личности. Такая существенная сторона, как степень и особенность общительности, которая лежит в основе многих классификаций характеров, непосредственно проявляется в речи. Показательно обычно бывает уже то, как человек начинает разговор и как он его заканчивает; в темпах речи более или менее отчетливо выступает его темперамент, в ее интонационном, ритмическом, вообще экспрессивном рисунке – его эмоциональность, а в ее содержании просвечивают его духовный мир, его интересы, их направленность.

В организации учебно-воспитательного процесса нельзя пройти мимо такого мощного педагогического фактора, как характер воспитателя, свойства и качества его личности. У одного педагога слишком твердый характер и крепкая воля, большая общественная активность. Он стремится все сделать сам, подавляет спонтанность детей, оставляет их непричастными и равнодушными зрителями. У другого – мягкий, он не способен потребовать от учащихся элементарного порядка. Плохое знание педагогики и психологии, нежелание преодолеть себя, формировать свой характер в соответствии с педагогическими требованиями дают простор непосредственному, спорадическому проявлению натуры: вспышечность, жесткость, бесхарактерность и

нетребовательность.

Выход из этой ситуации состоит в том, чтобы правильно понять, чем определяется характер воспитательных отношений. Педагогика определяет оптимальную форму проявления и развития дисциплины и демократии в воспитании, которые реализуются специально подготовленной и обладающей педагогическим авторитетом личностью. Дети добровольно идут за тем учителем-воспитателем, которого они уважают. В любом другом случае педагогические отношения держатся на сугубо формальных основаниях, внешних требованиях, утрачивают свой позитивный воспитательный смысл и оказывают негативное влияние.

Педагогический такт есть профессиональная, психолого-педагогическая особенность поведения учителя во взаимоотношениях с учащимися, соответствующая целям и задачам воспитания и проявляющаяся в творческой, педагогически оправданной изобретательности, находчивости, инициативности, в обдуманности действий, в самообладании, выдержке, в чутком и требовательном отношении к детям. Требовательность, чуткость, справедливость и честность учителя в отношении к учащимся в том и состоят, что он одинаково относится ко всем и своей наблюдательностью и «педагогическим чутьём» улавливает всякие изменения в поведении, проявляет педагогический такт. В педагогическом такте переплетаются лучшие качества учителя.

Необходимо помнить, что путь формирования авторитетных отношений длителен и сложен.

Кризис системы профессионального и общего образования свидетельствует о разрыве между резко изменившимися условиями жизни и образовательной системой, ее целями, видами, содержанием и технологиями обучения. Важнейшим причинам, породившим кризис, относятся: возросший спрос на качество образования; новые требования к преподавательской деятельности; консерватизм сферы образования и недостаточная ее адаптированность к меняющимся потребностям общества; необходимость формирования профессионального мышления, активности, самостоятельности будущих специалистов и другие; недостаточная разработанность технологий профессионального обучения.

Характерной чертой современной эпохи, эпохи погони за материальными благами, ста-

ло снижение духовности, высокой нравственности, обесценивание высших идеалов. Человек стал духовно бедным. Его заботы больше замкнулись на личном благополучии. Современная методика преподавания вытеснила из школы целостный образовательный процесс.

Методом воспитания является общение, свободный обмен ценностными ориентациями, целями, идеалами, модусом поведения между воспитателем и воспитуемым.

Исходя из понимания воспитания как преимущественно общественной деятельности по формированию личности вытекает, что принятие и решение любых социально-практических задач, будь то хозяйственные, правовые или какие-либо другие, предполагают высокую культуру ценностных критериев, что способно обеспечить лишь воспитание, ориентирование на духовно богатую, нравственную личность. Ибо только человек, впитавший в себя высшие ценности способен творчески, ответственно решать насущные задачи общества, активно участвовать в духовно - нравственном его возрождении.

Формирование педагогического сознания и существенное повышение педагогической культуры как у воспитателей, так и у родителей: обретение ими нравственных педагогических позиций. Возвращение воспитания в семью, к родителям, признание в них главных воспитателей, ответственных за экологию детства, поиск путей педагогического сотрудничества и доверительного общения с родителями, взаимообучение педагогов и родителей.

Почти все нынешние проблемы воспитания и ее социальные функции уже были поставлены Демокритом, Платоном, Аристотелем.

Авторитет учителя-воспитателя - это важнейшее средство воспитательного воздействия. Авторитет учителя - особая профессиональная позиция, определяющая влияние на учащихся, дающая право принимать решение, выражать оценку, давать советы. Подлинный авторитет учителя-воспитателя опирается не на должностные и возрастные привилегии, а на высокие личные и профессиональные качества: демократический стиль сотрудничества с воспитанниками, способность к открытому общению, его стремление к постоянному совершенствованию, эрудированность, компетентность, справедливость, доброту, общую культуру и т.п. Истинный авторитет - это такое отношение учащихся к учителю, которое побуж-

дает учащихся быть все время младшими товарищами учителю.

Любить детей – это значит предьявлять к ним определенные требования, без этого никакое воспитание и обучение невозможно.

**ЛИТЕРАТУРА**

1. Авторитет педагога //Рабочий путь. 1988, 2 окт., с. 1.  
 2. Авторитет учительства //Первое сентября. 1995, 14 марта.  
 3. **Андриади И. П.** Истоки становления авторитета

учителя //Школа и производство. 2001, N8, с. 2.  
 4. **Кондратьев М. Ю.** Слагаемые авторитета. М., “Знание”, 1988.  
 5. **Рогов Е. И.** Учитель как объект психологического исследования.  
 6. Профессия – учитель: Беседы с молодыми учителями. /Под ред. В. Г. Онушкина. М., “Педагогика”, 1987, 192 с.  
 7. **Макаренко А. С.** О воспитании. М., Издательство политической литературы, 1990, с. 416 .  
 8. **Бондарчук Е. И.** “Основы Психологии и Педагогике”, 3-е изд., стереотипное, Киев, 2002, 168 с.  
 9. Педагогика: Учебник. /Под ред. Ю. К. Бабанского. М., 1999.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ: ՈՒՍՈՒՑԶԻ ԴԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ

**ԳԱՅԱՆԵ ԱՄԻՐՅԱՆ**

Մանկավարժական գիտությունների թեկնածու

Ամփոփում

Մանկավարժությունը որպես գիտություն զբաղվում է սերունդների կրթության, դաստիարակության և զարգացման հիմնախնդիրներով: Կարելի է ասել՝ գիտություն է, որը հետազոտում է կրթության, դաստիարակության և զարգացման օրինաչափությունները: Մանկավարժությունը գիտություն է և արվեստ, որն իր ուրույն տեղն ունի մարդու զարգացման գործընթացում:

Դյուրին չէ մանկավարժի աշխատանքը՝ որքան երեխա, այնքան էլ ընտանեկան դաստիարակություն, տարբեր բնավորություն ու նիստուկաց, որոնք միայն մանկավարժի բարդ աշխատանքի արդյունքում են ստանում նոր ձև ու բովանդակություն:

Ուսուցչի մասնագիտությունը թերևս ամենամոտն է հոգեբանությանը, քանի որ ուսուցչի աշխատանքն ուղղակիորեն կապված է մարդու հետ, այսինքն՝ ուսուցիչը հատուկ գործառույթ է իրականացնում հասարակության մեջ:

Ուսուցչի հեղինակությունը հատուկ մասնագիտական դիրքորոշում է, որին հասնելու համար մեծ նշանակություն ունի նրա սեփական ստեղծագործությունը, ոգեշնչումը, իսկ երբեմն էլ՝ ներհայեցողությունը, յուրահատուկ մանկավարժական հոտառությունը:

# ԳՊՐՈՑԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԸ ԵՎ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ԳՊՐՈՑԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷԶԵՐՈՒՄ\*

## Ա. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու  
ԳՊՀ ռուսաց լեզվի ամբիոնի դասախոս



Գ պրոցական թատրոնը սկզբնավորվել է 12-րդ դարում, միջնադարյան Եվրոպայի եկեղեցական դպրոցներում: Հայ իրականության մեջ առաջին անգամ դպրոցական թատրոնը հիմնավորվել է Լվովի հայ կաթո-

լիկական դպրոցում: Ավելի ուշ՝ 1774 թ. հայ դպրոցական թատրոնի զարգացումը կապված է Վենետիկի Մխիթարյան միաբանության դպրոցի հետ, ուր մինչև 1860-ական թ. թարգմանվել, բեմադրվել են մոտ 250 պիես՝ հիմնականում վարքագրական և պատմա-հայրենասիրական բնույթի, ինչպես նաև կենցաղային թեմաներով կատակերգություններ:

Դպրոցական թատրոնի հիմնական նպատակն է եղել գրաբարի, ճարտասանական արվեստի, պատմության և Սուրբ գրքի սյուժեների յուրացումը: Ներկայացումների ցանկին նայելով երևում է, որ դրանք նպատակ են հետապնդել նաև նպաստելու բարոյական, գեղագիտական դաստիարակությանը [1.1, 443]:

Արևելահայ իրականության մեջ դպրոցական թատրոնը վերածնվել է 19-րդ դարի երկրորդ կեսից՝ դպրոցական ցանցի ընդլայնման հետևանքով: Արևելահայ մի շարք դպրոցներում, այդ թվում՝ Ներսիսյան վարժարանում, Երևանի թեմական դպրոցում, իզական դպրոցներում աշակերտների և ուսուցիչների ջանքերով բեմադրվում են ներկայացումներ, որոնք նպաստում էին աշակերտների բարոյական, գեղագիտական դաստիարակությանը, խոսքի զարգացմանը:

Դպրոցական թատրոնն Արևմտյան Եվրոպայի ուշ միջնադարի ուսումնական հաստատությունների ինքնագործ թատրոնն է: Ի հայտ է եկել որպես կրոնական դաստիարակության, լատիներենի և հռետորական արվեստի ուսուցման միջոց՝ ժամանակի ընթացքում դառնալով պրոֆեսիոնալ թատերական արվեստի զարգացման մի փուլ:

Սլավոնական աշխարհում դպրոցական թատրոնը զարգացավ որպես դաստիարակության միջոց խորվաթիայի, Սլովենիայի և Լեհաստանի ուսումնական հաստատություններում: Դպրոցական թատրոնին կարևոր նշանակություն էր տալիս Կոմենսկին: Ռուս ուղղափառ և կաթոլիկ եկեղեցիների հակամարտության պայմաններում դպրոցական թատրոնն ի հայտ եկավ Կիևյան-Մոզիլյովյան ճեմարանում, որտեղ գործեց մինչև 18-րդ դարի 70-ական թվականները<sup>1</sup>:

Դպրոցական թատրոնն ընդունվել է նաև Սլավոնա-հունա-լատինական ճեմարանում (17-րդ դարի վերջ), իսկ ավելի ուշ սկսում է գործել Յարոսլավլում, Ռոստովում և այլ քաղաքներում: Ռուսական դպրոցական թատրոնի հիմնադիրներն են Սիմեոն Պոլոցկին, Դիմիտրի Ռոստովսկին, Ֆեոֆան Պոկոպովիչը:

Դպրոցական թատրոնն իր ժամանակի նշակույթում կատարում էր միաժամանակ հոգևոր և աշխարհիկ պարտականություններ: Դպրոցական թատրոնը քրիստոնեական հոգևոր դաստիարակության մի մաս էր. յուրաքանչյուր պիեսում ներկայացվում էին բարեպաշտության, առաքինի կյանքի և հավատքին ծառայելու գաղափարներ: Բեմադրություններում մասնակցելը զարգացնում էր աշակերտների հիշողությունը, երևակայությունը, կազմավորում էր գեղարվեստական ճաշակը: Դպրոցական թատրոնի համար պիեսները լի էին ճիշտ կազմված հռետորական խոսքով, անտիկ

\* Ներկայացվել է 20.02.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

դիցաբանության օրինակներով, Աստվածաշնչից և այլ հոգևոր գրքերից մեջբերումներով: Տրված թեմաների շուրջ որոշ հատվածներ ստեղծվում էին աշակերտների կողմից՝ որպես գրավոր տնային աշխատանք:

Դպրոցական ներկայացումները լինում էին փակ և բաց: Բաց ներկայացումներին հրավիրվում էին ուսուցիչներ, ծնողներ, հյուրեր: Ժամանակ առ ժամանակ դպրոցական բեմադրությունները ներկայացվում էին որպես քննություն: Ընդհանուր առմամբ դպրոցական թատրոնի խաղացանկը կախված էր եկեղեցական օրացույցից և եկեղեցական տոներից: Դպրոցական բեմադրվում ներկայացումները, որպես կանոն, բեմադրվում էին կիսամյակների վերջում: Յուրաքանչյուր տոնի համար (հատկապես Սուրբ Ծննդի և Ջատկի) ուսուցիչները և աշակերտները, որոնք իրենց առաջին քայլերն էին անում արվեստում, օրիգինալ պիեսներ էին գրում: Բարձր դասարանի աշակերտները խաղում էին գլխավոր դերերում, իսկ փոքրերը՝ երկրորդական: Գործնականորեն բեմադրություններում ընդգրկված էր ամբողջ դպրոցը: Սուրբ Ծննդին և Ջատկին հիմնականում խաղում էին միջնադարյան կրոնական դրամաներ (17-րդ դարի վերջի Գիմիտրի Ռոստովսկու «Սուրբ Ծնունդի դրաման») Բարեկենդանին՝ («Յեշտասեր ապրուստի դաժան դավաճանություն», 18-րդ դարի սկիզբ): Այս երկու ժանրերը ներառում էին մնջախաղեր, որտեղ նկարագրված էին սուրբ պատմությունների իրադարձությունները, օրինակ՝ աշխարհի ստեղծումը, Սուրբ Ծնունդը և Ջատկի: Քանի որ արգելված էր բեմ հանել ավետարանական գործող անձանց, ապա դրանք փոխարինվում էին այլաբանական կերպարներով՝ տարիմաստորեն միացնող ակնառություն ու վերացականությունը, վերին ուժերի ատրիբուտները: Դպրոցական թատրոնի ավանդույթները Ռուսաստանում<sup>2</sup> հիմնադրվել են 17-րդ դարի վերջին 18-ի սկզբին: Ուսումնական հաստատություններում հայրենական և արտասահմանյան հեղինակների ներկայացումներ էին բեմադրվում<sup>3</sup>:

19-րդ դարի երկրորդ կեսին՝ 1850-60-ական թվականներին, դեմոկրատական շարժումները, որոնք կյանքի կոչեցին հասարակական մանկավարժական շարժումը [2.44, 368], նպաստեցին դաստիարակության և ուսուցման հարցերի նկատմամբ ուշադրության լարմանը, պահանջներ ներկայացրեցին ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման ուղղությամբ: Նշված ժամանակաշրջանում մամուլում սկսեցին լույս տեսնել հոդվածներ, որոնք իրենց բովանդակությամբ ժխտում էին, մերժում թատերական մանկավարժության դրական ազդեցությունը աշակերտների դաստիարակության գործում: Այդ

ալիքը սկսվեց Ն. Ի. Պիրոգովի «Լինել և թվալ» հոդվածից, որտեղ հեղինակը դպրոցական ներկայացումները համարում էր իրականության փոխակերպում, կեղծում և հարց է հղում ընթերցողներին. արդյոք կա՞ դրա անհրաժեշտությունը:

Չեղինակավոր գիտնականի և մանկավարժի վերաբերմունքը դպրոցական բեմադրությունների նկատմամբ մանկավարժական միջավայրում գտավ համախոհներ, դրանց թվին էր պատկանում նաև Կ. Դ. Ուշինսկին: Իսկ մյուս մանկավարժները, հենվելով Ն. Ի. Պիրոգովի և Կ. Դ. Ուշինսկու արտահայտությունների վրա, ձգտում էին անգամ գտնել դրանց համար որոշակի տեսական հիմնավորումներ, որպեսզի թույլ չտան դպրոցներում ներկայացումներ բեմադրել: Նրանք համարում էին, որ ուրիշների խոսքերի կրկնությունը և դրանց ներկայացումը երեխաների մեջ առաջացում է սեր դեպի սուտը, ստախոսությունը, ծաղրանք:

Այնուամենայնիվ, 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի առաջին կեսին մանկավարժության մեջ թատրոնի նկատմամբ հիմնավորվում է գիտակցական վերաբերմունք, այն սկսվում է դիտարկվել որպես դպրոցականների բարոյական, գեղագիտական, գեղարվեստական դաստիարակության կարևորագույն տարր: Դրան են նպաստում նշված ժամանակաշրջանում հասարակական գործիչների, մանկավարժների փիլիսոփայական աշխատությունները, որտեղ նրանք կարևորում էին ստեղծագործական անձի ձևավորման հիմնախնդիրը, ստեղծագործության հոգեբանական հիմքերի հետազոտությունները: Յենց այդ ժամանակահատվածում Ռուսաստանում Ռ. Մ. Սոլովյովի, Ն. Ա. Բերդյակի և այլոց կողմից սկսում են հիմնավորվել այն գաղափարը, որ արվեստն է մարդուն հանում ստրկական վիճակից՝ բարձրացնելով նրան կեցության ընկալման նոր մակարդակի:

Թատրոնի, թատերական մանկավարժության նկատմամբ վստահությունը վերականգնվեց նաև հոգեբանների կողմից կատարած հետազոտությունների շնորհիվ, որոնց արդյունքում նրանք հայտարարում էին, որ երեխաներն ունեն այսպես կոչված «դրամատիկական բնագր»: Ամերիկացի գիտնական Ստենլի Չոլլը պնդում էր, որ դրամատիկական բնագրը, որը հայտնաբերվել է երեխաների մեջ հետազոտությունների արդյունքում, արտահայտվում է երեխաների անսահման սիրով թատրոնի, կինոմատոգրաֆի, դերակատարման, ընդօրինակման, նմանակման նկատմամբ: Այդ փաստը մեզ՝ մանկավարժներին համար բացահայտում է մարդու նոր, թաքնված ուժերը, ըստ այդմ, մենք կարող ենք սովորել օգտագործել այդ հանգամանքը մանկավարժական գործունեություն իրականացնելու ընթացքում, եթե, իհարկե,

սովորենք օգտվել դրանից ինչպես հարկն է [2.9, 185]:

Համաձայնելով այդ կարծիքին՝ Ն. Ն. Բախտինը առաջարկում է ուսուցիչներին և ծնողներին նպատակաուղղված զարգացնել իրենց երեխաների մեջ «դրամատիկական բնագրը»: Նա համարում էր, որ նախադպրոցական տարիքի երեխաների համար, որոնք դաստիարակվում են ընտանիքում, ամենաօգտակար թատրոնի տեսակներից են տիկնիկայինը, սովետները և խամաճիկների թատրոնները: Այս թատրոնների բեմերում կարելի է բեմադրել տարբեր պիեսներ հեքիաթային, պատմական, էթնիկական և կենցաղային բովանդակությամբ: Խաղը նմանօրինակ թատրոնում կօգնի զբաղեցնել մինչև 12 տարեկան երեխային: Այսպիսի խաղերում երեխան իրեն կարող է դրսևորել և՛ որպես դերասան, և՛ որպես ռեժիսոր, և՛ որպես գեղարվեստական ղեկավար:

Տիկնիկային թատրոնից կարելի է անցում կատարել դեպի դրամատիկական թատրոն: Եթե մեծահասակները լավ ղեկավարեն, ապա այն կարելի է արդյունավետ օգտագործել երեխաների զարգացման գործում:

Ծանոթանալով պարբերական մամուլին, այլ հրատարակումներին՝ կարելի վստահաբար ասել, որ թատրոնը 19-րդ դարի վերջի և 20-ի սկզբին կարևոր դերակատարում է ունեցել ինչպես մարդկանց հասարակական կյանքում, այնպես էլ մանկավարժական գործընթացում [3.1, 59]: Անգամ կոչ է արվել մանկական թատրոնի հիմնախնդրին նվիրված հրավիրել առանձին համագումար:

Առաջավոր մանկավարժները բարձր էին գնահատում ոչ միայն թատրոնի որպես զննականության միջոց հնարավորությունները, դասի ժամանակ ստացած գիտելիքների ամրակայումը, այլ նաև ակտիվ օգտագործում էին թատերական արվեստի զանազան հնարավորությունները ամենօրյա ուսումնադաստիարակչական աշխատանքում:

Ա. Ս. Մակարենկոն, Ս. Տ. Շացկին հետաքրքիր և ուսուցողական փորձ ունեն թատերական արվեստի տարրերը մանկավարժական գործընթացում կիրառելու բնագավառում: Շացկին մանկական թատերական բեմադրությունները օգտագործում էր որպես կարևոր միջոց մանկական կուլեթիվի համախմբման համար, «թափառաշրջիկ» երեխաների բարոյական վերադաստիարակության միջոց, նրանց մշակույթի արժեքներին հաղորդակից դարձնելու միջոց [2.55, 386-390]:

Այսօր, երբ տեղի են ունենում խոշոր սոցիալական փոփոխություններ, չափազանց սուր է կանգնած երեխաների, երիտասարդության մտավոր և հոգևոր զբաղվածության հիմնադիրը: Այդ

բացը լցվում է հակահասարակական հակումներով: Այս տեսանկյունից դպրոցական թատրոնի դերը, որը զինված է թատերական մանկավարժության հնարներով, չափազանց կարևոր է դաստիարակչական տեսանկյունից: Ուսումնական թատրոնը միավորում է երեխաներին և մեծահասակներին և դառնալով հզոր արդյունավետ միջոց, ներգործում է կրթական և դաստիարակչական գործընթացների վրա: Թատրոնը առավել հզոր արդյունք է ունենում դժվար երեխաների դաստիարակության վրա՝ առաջարկելով նրանց հաղորդակցման յուրօրինակ ձևեր, իրենց հուզող հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկատվություն, ապահովելով սոցիալապես առողջ միջավայր:

Այսօր թատերական արվեստը կրթական գործընթացում ներկայացված է հետևյալ ուղղություններով.

1. Երեխաներին հասցեագրված մասնագիտական արվեստ, իրեն բնորոշ պատմամշակութային արժեքներով: Գեղագիտական դաստիարակության այս ուղղության շնորհիվ լուծվում է երեխաների հանդիսատեսական կուլտուրան:

2. Մանկական սիրողական թատրոն, որը գործում է դպրոցի ներսում և ունի յուրօրինակ փուլեր երեխաների գեղագիտական-մանկավարժական զարգացման գործում:

3. Թատրոնը որպես ուսումնական առարկա, որը թույլ է տալիս իրականություն դարձնել արվեստի բոլոր ճյուղերի միասնությունը աշակերտների սոցիալական գործիմացության զարգացման գործում: Գեղարվեստական արվեստը, դերասանական վարպետությունը հնարավորություն են տալիս վառ գույներով բացահայտել ստեղծագործող երեխայի ամձի բնությունը: Թատրոն ուսումնական առարկայի համար անգամ ստեղծվել են դասագրքեր, մշակվել են ծրագրեր և շատ դպրոցների ուսումնական պլաններում այն առարկան ներառված է:

4. Թատերական մանկավարժություն, որի նպատակն է արտահայտիչ վարքի կարողությունների և հմտությունների ձևավորումը, ինչը հնարավորություն է տալիս փոփոխել, ավելի հետաքրքիր դարձնել դպրոցական դասը, իրականացնել ուսումնադաստիարակչական նպատակները, ապահովել յուրաքանչյուր աշակերտի ակտիվ իմացական գործունեությունը և դիրքորոշումը դասի ընթացքում:

Անհրաժեշտ է հիշել, որ թատերականացված կրթական գործընթացն իր խաղային բնույթով հանդես է գալիս որպես դաստիարակության հզոր միջոց՝ մարդկության հոգևոր կուլտուրայի նմուշների ապրումակցման հետևանքով: Վերջին տարիներին թատերական մանկավարժության մեջ մեծ տարածում է ստացել սոցիալ-խաղային ոճը:

Ստեղծելով և սովորելով պիեսներից հատվածներ՝ աշակերտները տեսականորեն յուրացնում էին հռետորական և տրամաբանական կանոնները: Հաճախ, աշակերտների մի խումբ առաջարկում էր մի թեմա և իր սեփական վերաբերմունքը դրա նկատմամբ, իսկ մյուսը՝ բանավեճում առաջ էր բերում իր տարբերակը և պաշտպանում այն: Հնուն նման երկխոսությունները ծագում էին դեպի հռետորական արվեստ, այսինքն՝ չէին դառնում թատերականացման առարկա:

Ինքնին խաղալու ցանկությունը կամ աշակերտի մշակութային կյանքը հարստացնելու հնարավորությունը կարող է միայն ողջունելի լինել: Սակայն աշխատատարության չափանիշով, նյութական և ժամանակի ծախսերով, թատրոնը դպրոցում անհամեմատելի է այլ նախաձեռնությունների հետ:

Թատրոնը և դպրոցը, թատերական արվեստը, ինքնաարտահայտումը և ավանդական պարտադիր դպրոցական քառուր՝ այս երևույթները կարծես անհամեմատելի են: Սակայն, եթե դպրոցում դասերի ընթացքում կամ հետո սկսում է գործել թատրոնը, ապա դպրոցի կյանքն աստիճանաբար փոխվում է: Եթե մանկավարժներին հաջողվում է թատերական մոտեցումները «բերել» դասասենյակ և դասարան ապա թատրոնն, իջնելով թատերական բեմահարթակից, ոչ միայն կարտացոլի, այլև կվերափոխի իր շրջապատն ու ընդգրկված անհատներին:

Այսպիսով, «դպրոցական թատրոն» բառերը այնքան տարբեր են, և, միաժամանակ, հատվող երկու մշակութային բնագավառների՝ մանկավարժության և արվեստի համադրություն են: Մանկավարժությունը օգտագործում է արվեստի, որպես հասարակական գիտակցության միջոցի, հնարավորությունները մատաղ սերնդի գիտելիքների, կարողությունների զարգացման, դաստիարակության արդյունավետ կազմակերպման նպատակով:

Այսպիսով, արվեստի ճյուղերից մեկը՝ թատրոնը, լայն հնարավորություններ է ընձեռում վերա-

փոխել, արդյունավետ դարձնել ժամանակակից մանկավարժական գործընթացը: Թատրոնը զգալի դեր է կատարել նաև մանկավարժության պատմական զարգացման ընթացքում: Մարդկության պատմական զարգացման ընթացքում թատրոնի դերը ևս չափազանց կարևորվել է, ևս շատ հաճախ անտեսվել, սակայն մեր օրերում որպես այլընտրանքային դաստիարակության և ուսուցման տեխնոլոգիա, թատրոնը, թատերական մանկավարժությունը լրացնում է այն բացերը, որոնք տեղ են գտել մանկավարժական գործընթացում՝ նպաստելով վերջինիս կատարելագործմանը:

<sup>1</sup> Առաջին հոգևոր և աշխարհիկ ուսումնական հաստատություններում, որոնք գործել են Ռուսաստանում դեռևս Պետրոս առաջինի ժամանակաշրջանում, «դպրոցական թատրոնը» մտել է որպես պարտադիր ուսումնական առարկա: Հասարակական և թատերական գործիչները ջանքեր են գործադրել այն ուղղությամբ, որ դպրոցական թատրոնի դերը կրթական և դաստիարակչական գործընթացներում ամրանա: Արդեն 16-18-րդ դարերում թատրոնը կրթական գործընթացում կիրառվում է բազմաթիվ մանկավարժական խնդիրներ լուծելու համար, որոնց շարքում էին բանավոր և գրավոր խոսքի զարգացումը, հռետորական արվեստի տիրապետումը, ժանրաբանությունը և այլ լեզուների հարստության հետ, առաջնորդի որակների զարգացում, քաղաքացիական և բարոյական զգացումների դաստիարակում: Թատերական մանկավարժությունը առավել զարգացում է ապրում Ռուսաստանում 20-րդ դարում:

<sup>2</sup> Թատերական ներկայացումները կազմել են Սմոլնիի բարեկիրթ օրիորդների ինստիտուտի, Մոսկվայի Համալսարանի և Ռուսաստանի այլ էլիտար ուսումնական հաստատությունների ակադեմիական կյանքի բաղկացուցիչ մասը:

<sup>3</sup> Թատերական մանկավարժության հիմնադիրները Ռուսաստանում եղել են թատրոնի հայտնի գործիչներ Շչեպկինը, Դավիդովը, Վարլամովը, Լենսկին: Ստանիսլավսկին և Նեմիրովիչ-Պանչենկոն թատերական մանկավարժության մեջ կատարել են որակական փոփոխություններ: Նրանց հետևորդները, աշակերտները դարձան թատերական մանկավարժության կարկառուն դեմքեր, նրանցից է սկիզբ առել թատերական մանկավարժության ավանդույթները:

THE SCHOOL THEATRE AND THE THEATRICAL PEDAGOGICS ON THE HISTORICAL PAGES OF SCHOOL AND PEDAGOGICAL THINKING

A. D. ENGBARYAN

Candidate of pedagogical sciences

Summary

This article presents the huge and irreplaceable role of the theatre and the theatrical pedagogics in the process of pupils moral, aesthetic, artistic education.

# ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ ՈՐՊԵՏ ՏԱՐՔԵՐԱԿՎԱԾ ՄՈՏԵՑՄԱՆ ՀԵՆՔ\*

## Գեորգ ՇԱՅԿԵՐՂՅԱՆ

ՎՊՄԻ-ի ԸՖԴ և ԱԻՉ ամբիոնի դոցենտ



**Շ**արժողական պատրաստականության ուսուցման տեսությունը սկիզբ է առնում խմբակային ուսուցումը առանձին ուսանողների անհատական մոտեցումների հետ զուգորդման անհրաժեշտությունից՝ յուրաքանչյուր ուսանողի առավել արդյունավետ ուսուցումը, դաստիարակությունն ու զարգացումն ապահովելու նպատակով:

Կ. Դ. Ուշինսկին գրել է. «Եթե մանկավարժությունն ուզում է մարդուն բազմակողմանի դաստիարակել, ապա պետք մարդուն նույնպես ճանաչել բոլոր կողմերով»:

Ուսանողի շարժողական գործունեության անհատական առանձնահատկությունները հասկանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նրա շարժողական գործունեության յուրօրինակ ոճը:

Ուսանողների շարժողական ընդունակությունների տարբերակված մոտեցման իրականացման համար հենվում ենք նրանց ելակետային շարժողական ընդունակությունների տարատեսակ և տարածամկետ զարգացվածության պատկերացումների վրա:

Տարբերակված մոտեցումը հնարավորություն է տալիս շարժողական ընդունակությունների առաջացումը դիտել որպես առաջընթաց և հետընթաց փոխակերպումների միասնություն՝ զարգացվածության մի մակարդակից մյուսին անցման ընթացքում:

Որևէ շարժողական ընդունակության առաջընթաց զարգացումը հաճախ ուղղորդվում է մյուսի

զարգացման տեմպի սահմանափակումներով: Նախնական հետազոտությունների ընթացքում բացահայտվեցին ուսանողների շարժողական պատրաստականության գնահատման առավել տեղեկատվական ցուցանիշներ, որոնցով որոշվում է շարժողական պատրաստականության մակարդակը, որոնք էլ անհրաժեշտ են հիմնական տարրերի նախապատրաստմանը՝ նորմատիվային ցուցանիշներին հասնելու համար:

Նախնական հետազոտությունների նպատակը ֆիզիկական պատրաստականության և ֆիզիկական զարգացվածության մակարդակի որոշումն էր և ցուցանիշների հարաբերակցությունը ուսանողուհիների մարզական որակավորման հաշվարկով:

Որպես հետազոտության խնդիրներ նպատակ դրվեց որոշել մարզված և չմարզված ուսանողուհիների ֆիզիկական զարգացվածության և ֆիզիկական պատրաստականության մակարդակը և հետազոտվողների ցուցանիշների հարաբերակցությունը և փոխկապակցվածությունը:

Հետազոտություններին մասնակցեցին ՎՊՄԻ-ի բանասիրական ֆակուլտետի I և II կուրսերի ուսանողուհիները: Հետազոտվեցին 82 ուսանողուհի՝ 30 մարզված և 52՝ չմարզված: Արձանագրվեցին ֆիզիկական զարգացվածությունից՝ ուսանողուհիների հասակը, քաշը, կրծքավանդակի շրջագծերը (շնչելու և արտաշնչելու ժամանակ), թոքերի կենսական տարողությունը (ԹԿՏ), ֆիզիկական պատրաստականությունից՝ վազք 30 մ՝ տեղից և ընթացքից, վազք 100 մ և 500 մ, հեռացատկ՝ տեղից և թափավազքից, նռնակի նետում (500 գր.): Գրանցվեց 984 ցուցանիշ:

Պարզաբանվեց հետազոտվող խմբերի ուսանողուհիների շարժողական գործունեության որոշման ցուցանիշների և գործունեության փոխկա-

\* Ներկայացվել է 20.02.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:



պակցվածությունը: Վերլուծվեց մարզված և չմարզված ուսանողուհիների ֆիզիկական զարգացվածության, վազքային և արագաուժային պատրաստականության ցուցանիշների հարաբերակցությունը:

Վերլուծությունը ցույց տվեց, որ ֆիզիկական զարգացվածության ցուցանիշներում էական տարբերություններ (բացառությամբ ԹԿՏ) չեն գրանցված: Վազքային պատրաստականության ցուցանիշներով չմարզված ուսանողուհիները զիջում են մարզված ուսանողուհիներին՝ հատկապես դիմացկունության ցուցանիշներով (վազք 500 մ): Արագաուժային պատրաստականության ցուցանիշների մակարդակի վերլուծության արդյունքները մոտավորապես նույն պատկերն էր, ինչ որ վազքայինը: Հեռացատկ տեղից և թափավազքից թեստերի ցուցանիշների հարաբերակցությունը ցածր է:

Ընդհանրացված ցուցանիշների վերլուծությունը ցույց տվեց, որ չնայած մարզվածության տարբերությանը՝ ցուցանիշների տարբերություններն այնքան էլ էական չեն:

Տվյալների հիման վրա եկանք այն եզրահանգման, որ տարբերակված մոտեցման կիրառումը և անհատականացված պարամունքները ֆիզիկական դաստիարակության դասերին, եթե ուշադրություն դարձնենք այն ձևերի վրա, որոնցում նկատվում են ստուգարքային նորմատիվային պահանջներին ավելի մոտ արդյունքներ, հնարավորություն կտա ակտիվացնել մարզման գործընթացը և կբարձրանա ստուգարքային նորմերի

հանձնման հավանականությունը:

Նկատվեցին նախկինում մարզված և չմարզված ուսանողուհիների ֆիզիկական զարգացվածության, վազքային և արագաուժային ցուցանիշների ստույգ տարբերություններ: Ֆիզիկական զարգացվածության ցուցանիշներից առավել էական տարբերություններ նկատվում են քաշի և ԹԿՏ-ի ցուցանիշներում: Ֆիզիկական պատրաստականության բոլոր ցուցանիշներում տարբերությունները հստակ էին: Առավել տարբերություններ գրանցված են վազքային պատրաստականության (դիմացկունության պահանջվող ձևեր) և արագաուժային ձևերում (հեռացատկ թափավազքից, այսինքն դժվար կոորդինացիոն վարժություններում):

Ֆիզիկական դաստիարակության դասերին տարբերակված մոտեցման կիրառումը ուսանողուհիներին՝ իրենց շարժողական յուրահատկություններին համապատասխան, խմբերի բաժանման պարագայում հնարավորություն տվեց գրեթե երկու անգամ ավելացնել ստուգարքային նորմատիվային պահանջների հանձնման հավանականությունը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Булкин В. А., О методе оценки динамического состояния тренированности. 1989.
2. Александрова Г., Модельные характеристики специальной подготовленности студентов. В., 1989.
3. Ֆիզիկական դաստիարակության ծրագիր ԲՈՒՀ-երի համար: Երևան, 2007:

THE PECULIARITIES OF THE MOVING PREPARATION IN THE LESSONS OF THE PHYSICAL EDUCATION AS A DISTINGUISHED APPROACHING FRAME

**GEVORG SHAHVERDYAN**

Assistant of VSTTI GPE and PES chair

#### Summary

Exact differences are noticed in the physical development, running and fast-strength index of trained and non-trained students. Most essential differences are noticed in the physical development of weight and LVC indexes. All index differences of physical preparation are clear. More differences are fixed in running preparation (demand ways of endurance) and fast-strength ways (running jump that is difficult co-ordination exercises).

**Փայանե Վազգենի ԱՂՈՒԶՈՒՄՅՅԱՆ**

*Մանկավարժական գիտությունների թեկնածու  
և. Արովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի  
ընդհանուր մանկավարժության ամբիոնի դոցենտ*



Վերջին տարիներին ՀՀ հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներն, ըստ էության, վերաբերում են ուսուցման գործընթացին: Իրականում կան շրջանցվում, կան անտեսվում է դաստիարակության

գործընթացը նշված բարեփոխումների տրամաբանությունից:

Խորհրդային կարգերի փլուզումից հետո ՀՀ-ում նատաղ սերնդի, մասնավորապես հանրակրթության ոլորտում սովորողների դաստիարակության հայեցակարգ դեռևս չի մշակվել: Այդ համագամանքը բերեց նրան, որ հանրակրթական դպրոցներն ինքնուրույն սկսեցին նախագծել դպրոցում դաստիարակության գործընթացի բովանդակությունը, նպատակը, խնդիրները, մեթոդներն ու միջոցները, որոնք շատ դեպքերում չէին համընկնում միմյանց:

Հանրակրթական դպրոցում սովորողների դաստիարակության գործընթացում կարևոր դեր ունեն դասղեկները: Վերջիններս իրենց գործառույթներն իրականացնում են դասղեկական, արտադասարանային և արտադպրոցական ժամերին: Դասղեկական ժամին աշակերտները կարողանում են անկաշկանդ շփվել դասղեկի հետ, կիսվել իրենց մտահոգություններով, ներկայացնել ծագած խնդիրները, իսկ դասղեկն իր հերթին կատարում է հետևյալ գործառույթները՝ տեղեկատվության փոխանցման, դիագնոստիկ, կանխատեսող, կողմնորոշող, ուղղորդող, դաստիարակող, զարգացնող, ձևավորող: Նշված գործառույթները դասղեկն իրագործում է բարոյագիտական գրույցների, տարբեր թեմաներով բանավեճերի, սեմինար-քննարկումների, դերային խաղերի, թատերական ներկայացումների, արվեստի և

գիտության ոլորտի ճանաչված դեմքերի հետ հանդիպումների, թեմատիկ երեկոների միջոցով:

Իրենց գործառույթներն իրականացնելիս դասղեկները հիմնվում են մի շարք սկզբունքների վրա. տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառման, դրականի վրա հենվելու և լավատեսական վերաբերմունքի, նպատակաուղղվածության, հասարակական ուղղվածության, կոլեկտիվում և կոլեկտիվի միջոցով դաստիարակության իրականացման: Դասղեկական ժամերի արդյունավետությունը պայմանավորված է մի շարք մանկավարժական պահանջների, պայմանների կատարման որակով, մակարդակով: Դասղեկական յուրաքանչյուր ժամ պետք է լինի պլանավորված, հստակեցված լինեն նպատակն ու խնդիրները, անհրաժեշտ է երևույթների նկարագրություններից անցնել դրանց վերլուծությանը, գնահատմանը, սովորողների ուշադրությունը անընդհատ պահել ակտիվ վիճակում, խթանել դպրոցականների հետաքրքրասիրությունը, հրաժարվել միօրինակությունից, կազմակերպել խմբային քննարկումներ, օգտագործել կոլեկտիվ կարծիքի հզոր ներուժը, ապահովել երեխաների համագործակցությունը, ծնողների մասնակցությունը և՛ այդ ժամերին, և՛ ընդհանուրապես դաստիարակչական աշխատանքներին:

Դասղեկները կազմակերպում են դասարանական կոլեկտիվի ստեղծագործական աշխատանքների, ավանդական դպրոցական միջոցառումների և տոնակատարությունների նախապատրաստումը և անցկացումը, ընդլայնում են կապերը մշակույթի և ժամանցի կենտրոնների՝ թատրոնների, թանգարանների, պատկերասրահների հետ, աջակցում են աշակերտներին ակտիվացնելու սեփական ուժերը իրենց իսկ անձնական խնդիրները լուծելու համար, կազմակերպում են էքսկուրսիաներ, որոնք կրում են ճանաչողական, դաստիարակչական, զարգացնող բնույթ:

Դասղեկը պատասխանատու է դասարանական կոլեկտիվում դաստիարակչական աշխա-

\* Ներկայացվել է 05.03.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

տանքների կազմակերպման, համակարգման և արդյունավետության ապահովման համար: Այստեղ իրականում կան չլուծված խնդիրներ: Առաջնային խնդիր է, որ մեր դպրոցներում դաստիարակության գործընթացի միասնական ընկալում դեռևս չկա: Ոմանք այն ընկալում են որպես դաստիարակչական միջոցառումների համակարգ, մյուսները՝ դրան գումարած նաև դաստիարակչական աշխատանքի համակարգ, ոմանք էլ՝ աշակերտների վրա մանկավարժական ներգործության համակարգ:

Դաստիարակության համակարգը, որի անմիջական իրականացմանը դասարանական կոլեկտիվում դասղեկն է, ունի իր կառուցվածքը, սկզբունքները, հատկանիշները, նպատակը, խնդիրները, մեթոդները: Դասղեկն իր աշխատանքը պետք է կառուցի դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից հաստատված՝ դաստիարակության հայեցակարգային դրույթների հիման վրա, ձևակերպի դաստիարակչական ընթացիկ և հառահար նպատակները, խնդիրները: Դասղեկը պետք է ապահովի դասարանական կոլեկտիվի առողջ ապրելակերպը, համամարդկային արժեքներին կողմնորոշվածությունը, նպաստի աշակերտների ազատ զարգացմանը, ինքնաիրացմանը, հասարակությանը ինտեգրմանը, աշակերտների միջև առաջացող կոնֆլիկտների կանխարգելմանը, լուծմանը, մարդասիրական հարաբերությունների, փոխադարձ վստահության, հանդուրժողականության, բարյացակամության, փոխօգնության մթնոլորտի, ընկերասիրության, կոլեկտիվին պատկանելության, համախմբվածության ձևավորմանը: «Հաշվի առնելով ժամանակակից սոցիոմի հիմնախնդիրները՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է զարգացնել երեխաների անձը և սովորեցնել լուծել կենսական խնդիրներ սկսած դեռ առաջին դասարանից» [2, էջ 77]: Դասղեկի կողմից իրականացվող դաստիարակչական աշխատանքներում ժամանակակից համաշխարհայինացման գործընթացների պայմաններում կարևորվում է դպրոցականների ազգային դաստիարակության հիմնախնդիրը, նրանց ազգային ավանդույթներին, արժեքներին, մշակույթին հաղորդակից դարձնելը:

Դասղեկի կողմից իրականացվող դաստիարակչական աշխատանքների արդյունավետության հիմնական ցուցանիշը դպրոցականի անձի զարգացման, դաստիարակվածության մակարդակն է: Վերջինիս բարձր մակարդակը ենթադրում է ստեղծագործական մտածողության առկայություն, ուսուցման գործընթացում ակտիվություն, գիտելիքների ձեռք բերման պահանջմունք և յուրացման կարողություն, ձևավորված հմարները նոր իրավիճակներում և իրադրություններում

կիրառելու, գործունեության նոր միջոցներ գտնելու, հասակակիցների և մեծահասակների հետ հաղորդակցվելու կարողություններ:

Դասղեկն իր աշխատանքը պետք է կարողանա մոդելավորել, նախագծել՝ ելնելով դպրոցի, իր դասարանի աշակերտների համակազմի առանձնահատկություններից, դպրոցի նյութատեխնիկական հագեցվածությունից, մանկավարժական կոլեկտիվի դաստիարակչական հմարավորություններից, գործիմացությունից:

Ամփոփելով՝ հստակեցնենք այն խնդիրները, որոնց լուծմանը պետք է նպատակաուղղված լինի դասղեկների աշխատանքը ժամանակակից դպրոցում.

- մշակել դասարանում դաստիարակչական աշխատանքների կազմակերպման հայեցակարգ, հստակեցնել դաստիարակության գործընթացի նպատակը, խնդիրները, մեթոդներն ու միջոցները, ընդ որում, առանձնացնել ընթացիկ և հեռահար նպատակները,
- կառուցել դասարանի ապագայի մոդելը, մշակել դաստիարակչական համակարգի դասարանական մոդելի իրականացման ծրագրեր և պլաններ,
- իրականացնել դասարանում դաստիարակչական աշխատանքների, նախագծված համակարգի ներքին և արտաքին դիագնոստիկա,
- դաստիարակության գործընթացը կազմակերպել մշակութահարմարության սկզբունքի հիման վրա, այսինքն՝ դասարանում դաստիարակության խնդիրները համապատասխանեցնել ազգային դաստիարակության նպատակին, խնդիրներին,
- ձևավորել դպրոցականների մոտ այնպիսի անձնային որակներ, որոնք կապահովեն ժամանակակից հասարակության մեջ դպրոցականների ինքնաիրացման արդյունավետությունը,
- բացահայտել դասարանի դաստիարակչական միջավայրի առկա վիճակը և հրատապ, արդիական հիմնախնդիրները,
- ընտրել դաստիարակչական աշխատանքների ակտիվ մեթոդներ և ձևեր, որոնք ուղղված կլինեն դպրոցականի անձի ինքնազարգացմանը, հանդուրժողական վարքագծի ձևավորմանը,
- փորձարկել դասարանում դաստիարակչական աշխատանքների ընտրված ակտիվ մեթոդներն ու ձևերը,
- խթանել աշակերտների հասարակական ակտիվությունը,
- զարգացնել դպրոցականների իրավագիտակցությունը,
- դպրոցականների դաստիարակության խնդիրների արդյունավետ լուծման համար համագործակցել մասնագիտական թիմային խմբի հետ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Коваленко М. И.**, Справочник учителя 1-11 классов: Ростов-на-Дону, 2005.
2. **Советова Е. В.**, Административная работа в школе: Ростов-на-Дону, 2006, с. 77.
3. **Сластенин В. А., Шиянов Е. Н.**, Общая педагогика, Уч.пособие: Москва, 2004.
4. **Подласый И. П.**, Педагогика. Москва, 2006.

## MODERNIZATION OF UP-TO-JUSE PROBLEMS OF FORM-MARTEN'S WORK

**G. AGHUZUMCYAN**

Candidate of pedagogical sciences

## Summary

The article is devoted to the discussion, analysis and the evolvement of class-leaders in the processes of modern problems of secondary schools. We introduced those problems which exist in the work of class-leaders with their classes. We notify the problems of national upbringing in the work of class-leaders and their pupils in this article.

# ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԳՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ\*

## Արմեն ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մանկավարժական գիտությունների թեկնածու



**Ա**ցերբեյի է, որ զանգվածային լրատվամիջոցներից ամենամեծ լսարանն ունի հեռուստատեսությունը: Հեռուստահաղորդումները, հատկապես եթե դրանք կանոնակարգված և ժամանակի տեսանկյունից յուրաքանչյուր տարիքային խմբին ճշգրտորեն ուղղորդված չեն, կարող են ունենալ անդամալի բացասական հետևանքներ դպրոցահասակ երեխաների բարոյական կողմնորոշումների և նկարագրի, նրանց անձի ձևավորման վրա: Ելնելով մանկավարժական այն մոտեցումից, ըստ որի՝ դաստիարակելն ավելի հեշտ է, քան վերադաստիարակելը, պետք է այս ուղղությամբ մեկտեղել հեռուստատեսության և դպրոցի ջանքերը:

Մեր կողմից կատարված ուսումնասիրություններն ու դիտարկումները, զրույցները աշակերտների, ուսուցիչների և ծնողների հետ, հեռուստատեսային տարբեր ալիքների, ծրագրերի մանրակրկիտ ուսումնասիրությունները հանգեցրել են հետևյալ նախնական արձանագրումներին, որոնք էլ հիմք կդառնան մանկավարժական հետազա աշխատանքի համար.

- տարիքին չհամապատասխանող հաղորդումները, կինոնկարները, հեռուստասերիալները և այլն, կարող են ունենալ բացասական հետևանքներ ոչ միայն դպրոցականի վարքագծի, բնավորության ձևավորման, այլև առողջության համար,
- կարող են նվազեցնել դպրոցականի ուսումնառության մոտիվացիան,
- խանգարել հաղորդակցման ճիշտ մշակույթի ձևավորմանը:

Դաստիարակության համակարգում ուրույն տեղ են զբաղեցնում զանգվածային լրատվական միջոցները, որտեղ ամենամեծ բաժինը՝ 70 տոկոս, պատկանում է հեռուստատեսությանը: Ահա այս իրողությունից ելնելով պետք է արձանագրել,

որ հեռուստատեսությունն այսօր լուրջ պատասխանատվություն է կրում հասարակության առջև: Մեր ձեռքի տակ են հեռուստաալիքների (Հ1, Հ2, «Արմենիա», «Երկիր մեդիա») հաղորդումների ծրագրերը: Մենք խնդիրն էր՝ ուսումնասիրել դպրոցականներին ուղղորդված հաղորդումների որակը՝ կինո, մուլտֆիլմ, դրանց ժամանակացույցը և հաճախականությունը, բարոյական և կրթադաստիարակչական հնարավոր բացասական և դրական ներգործությունները դպրոցականի անձի ձևավորման ընթացքի վրա:

Մեր հարցումները, որոնք անցկացրել ենք Վանաձորի թիվ 1, 23, 30 միջնակարգ դպրոցներում, ուղղակի զարմանալի արդյունքներ գրանցեցին նախ զուտ հեռուստաշուկայում այս կամ այն հեռուստաընկերությանը նախապատվություն տալու առումով. ժարգվեց, որ բավական հարուստ և հագեցած հայկական հեռուստաշուկայում երեխաների ճնշող մեծամասնությունը դիտում է «Արմենիա» և Հ1 հեռուստաալիքները: Այն հարցին, թե որ հաղորդումներն են գրավում նրանց, պատասխանն առավել քան ապշեցուցիչ էր. 65 տոկոսը նշել է «Արմենիա» հեռուստաալիքի հաղորդումներից «Կարգին հաղորդում»-ը, որի հերոսների շատ արտահայտություններ, «թևավոր» խոսքեր տեղ են գտել նրանց խոսակցական լեզվում, իսկ նրանց մարմնախոսությունը, դիմախաղն առավել քան խոսուն էր: Բացահայտող զրույցների ժամանակ հաստատվեց մեր այն մտավախությունը, որ հաղորդումներն ընկալվում են մակերեսային, ոչ խորքային իմաստի ընկալման և դեպքերն ու արարքները քննադատական վերլուծության մեթոդներով, իսկ նյութի այդօրինակ ընկալումը կարող է անդամալի հետևանքների հանգեցնել, ձևավորել այնպիսի որակներ, ինչպիսիք կան հերոսների մեջ, այդպիսով ձևավորելով միջանձնային ոչ ճիշտ փոխհարաբերություններ:

Մինչդեռ հեռուստասերիալը, կարծում ենք, նույնիսկ հասուն և կյանքում արդեն կայացած մարդկանց համար անհարիր է: Կան բազմաթիվ հատվածներ, որոնք չեն համապատասխանում

\* Ներկայացվել է 19.03.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

մեր ազգային նկարագրին և ընտանեկան լավագույն ավանդույթներին, նույնիսկ ոտնահարում են դրանք: Սերիալն ունի քննադատական միտում՝ բացահայտելու հասարակության մեջ տեղ գտած թերությունները՝ ներընտանեկան, միջանձնային, սակայն այդ քննադատությունը շատ դեպքերում մակերեսային է և մասնավորապես դպրոցահասակ հեռուստադիտողի վրա կարող է թողնել ոչ ճիշտ դաստարակչական ազդեցություն: Ահավասիկ, Կարագոյազյանների «ընտանիքի» օլիգարխ-պատգամավոր հարևանը, որ պատեհանապատեհ առիթներով նրանց ահաբեկում է («Կգամ, էդ ավելը կվերցնեմ ու...»): Բացի այն, որ սերիալի անբաժան հատվածը դարձած և պարբերաբար կրկնվող այդ դրվագը չափազանց գռեհիկ է, այն նաև վտանգավոր կերպով ազդում է դեռահասների մտածողության վրա՝ փաստորեն նրանց ուղեղներում անզգալիորեն ներարկելով այն գաղափարը, թե կյանքում միշտ էլ կան մարդիկ, որոնք կարող են քեզ բռնության ենթարկել և ահաբեկել կամկացած ժամանակ:

Ճիշտ է. հաղորդման հեղինակները սպանիչ ծաղրն օգտագործել են, որ ավելի ակնառու դարձնեն հասարակության տարբեր շերտերում տեղ գտած բացասական երևույթները, բայց հաղորդումը, որ կրկնվում է օրվա ընթացքում բազմաթիվ անգամ, հեռուստադիտողները հիմնականում դպրոցահասակ երեխաներ են, որոնք կապում են հերոսներին նույնիսկ դասամիջոցներին, ազատ վարքագիծ դրսևորելու ժամանակ, ընտանիքում ակնատես ենք լինում բեմական հերոսների վարքագծի կրկնության:

Ապացուցման կարիք չկա, որ կրկնությունների արդյունքում այն կարող է վերածվել գրեթե կայուն վարքագծի և հաղորդակցման մշակույթի:

Ինչպես գովազդում է ինքը՝ հեռուստաընկերությունը, ամենամեծ վարկանիշն ունի «Արմենիա» հեռուստաալիքը, որը նաև աչքի է ընկնում տարաբնույթ հաղորդաշարերով և սերիալներով, որոնց դաստիարակչական արժեքն ու նշանակությունը, մեղմ ասած, կասկածելի է:

Չպետք է աչքաթող անել նաև այն հանգամանքը, որ հատկապես միջին դպրոցական տարիքի երեխաները սիրով դիտում և շատ հաճախ մեջբերումներ են կատարում սիրված հերոսներից: Այլևս ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ շատ դարձվածքներ, գռեհկախոսություններ ու ժարգոնային արտահայտություններ հասարակության մեջ և մասնավորապես դեռահասների շրջանում քաղաքացիություն են ստանում հենց այս և նմանատիպ այլ սերիալների հերոսների միջոցով<sup>1</sup>:

Կառավարությանը, բնականաբար, մտահոգում է այս հարցը, ուստի պատահական չէին «Հեռուստատեսության մասին» ընդունված օրենքում կատարված այն փոփոխությունները, ըստ որոնց՝

որոշ հաղորդումներ, առավելապես՝ էրոտիկ բնույթի, ինչպես նաև բռնություն և դաժանություն պատկերող հեռուստատեսային արտադրանքը պարտադիր կերպով պետք է ցուցադրել միայն որոշակի թույլատրված ժամերի՝ 24.00-ից մինչև 06-ն ընկած ժամանակահատվածը:

Հայկական սերիալների մասին խոսելիս չպետք է անուշադրության մատնել նաև այն հանգամանքը, որ դրանք, ինչպես վկայակոչում են զանազան վարկանիշային հարցման արդյունքները, գրավում են ամենամեծ լսարանը, հետևաբար եթե չեն համապատասխանում որոշակի գեղագիտական և հատկապես մանկավարժական չափանիշների, ուրեմն կարող են անդառնալի բացասական ազդեցություն թողնել մատաղ սերնդի ճիշտ և ազգային դաստիարակության վրա:

«Ամենակարևոր պայմանը, որին պետք է համապատասխանի յուրաքանչյուր ֆիլմ, ոճի և գեղարվեստական մակարդակի ապահովումն է: Այն ուշադրությունը բեռնում է կարևոր հարցերի վրա և կարող է ապահովել հսկայական քանակությամբ տեղեկատվության, փաստերի, գաղափարների և տեսությունների պատշաճ մակարդակով մատուցումը»<sup>2</sup>:

Սակայն անհրաժեշտ է հայկական հեռուստատեսության՝ գերակշիռ մասով հակադաստիարակչական և հակամանկավարժական բնույթի մասին խոսելիս չմոռանալ նաև այն դրակամը և ընդօրինակման արժանիքն, որ տալիս է մեզ հեռուստաեթերը: Մասնավորապես մաքուր լեզվական եթեր, ինչպես նաև դաստիարակության ժամանակակից մեթոդներ պրապագանդելու առումով խիստ գովելի է «Երկիր մեդիա» հոռուստաընկերության որդեգրած ճանապարհը, որի մի շարք հաղորդումներ, մասնավորապես «Հայ մայրիկ», «Հայի ուժը» և այլն, կարող էին դառնալ նաև ուղեմշային շատ այլ հեռուստաընկերությունների համար: Ի դեպ, «Երկիր մեդիան» առանձնանում է նաև իր յուրօրինակ սերիալային քաղաքականությամբ: Նա այն եզակի հեռուստաընկերություններից էր, որ այդպես էլ չտրվեց սեփական սերիալային արտադրանքն ստեղծելու գայթակղությանը, որով կարող էր անհամեմատ ավելի մեծ լսարան ապահովել, քան ունի հիմա, անկասկած նկատի ունենալով այն անհերքելի փաստը, որ հեռուստասերիալ կոչվածն ինքը ընդամենը ժամանցային հեռուստաժամր է, սակայն ոչ երբեք՝ արվեստ: Վերջինիս հավակնությամբ են դեռ տառապում մեր մի քանի հեռուստաընկերություններ, ամեն անգամ, սակայն, տխուր օրինաչափությամբ բախվելով այն իրողությանը, որ իրենց ստեղծածը ոչ թե արվեստ է, այլ մի բան, որը, գեղագիտական ու գեղարվեստական մակարդակի առումով լինելով շատ խոցելի, նաև ունի հակադաստիարակչական բնույթ:

րակչական նշանակություն մատաղ սերնդի համար, հետևաբար պիտի հակացուցված լինի հայ երեխայի համար:

Ինչպես վայել է յուրաքանչյուր պետական հեռուստաընկերության, դաստիարակչական բնույթի հաղորդումներով առանձնանում է Հանրային հեռուստաընկերությունը՝ Հ1-ը, որի հատկապես մանկապատանեկան մի շարք հաղորդումներ և հաղորդաշարեր միանշանակ կերպով նպաստում են սերնդի ճիշտ և հայեցի դաստիարակությանը:

Հ1-ի եթերով հեռարձակվում է «Երգ երգոց» հաղորդումը, որն ունի դաստիարակչական մեծ հնարավորություններ, հատկապես հայրենասիրական երգերի պրոպագանդան առումով: Այդ հաղորդումն ունի նաև մեծ նշանակություն գեղագիտական դաստիարակության համար: Այն ամուր կամուրջ է ավագ և կրտսեր սերունդների միջև: Հաղորդումն ունի նաև ուղղորդող, տեղեկատվական նշանակություն: Մեծ է նաև ճանաչողական կողմը՝ ժանրությունը ազգային մեծերին, ավագ և երիտասարդ սերնդի լավագույն ներկայացուցիչների տեսակետներին, կարծիքներին:

Մեծ դաստիարակչական ներուժ ունի «Հայ ասպետ» ինտելեկտուալ մրցույթ-հաղորդաշարը, որը զուտ հեռուստատեսային ծրագիր լինելուց բացի նաև գործնական հայրենասիրության և հայրենաճանաչողության անմոռանալի դասեր է տալիս: Բավական է հիշել այդ մրցույթ-խաղի հաղթողների այցելությունները Արևմտյան Հայաստան և Հայաստանի պատմական վայրեր:

Հեռուստացույցը ստեղծում և ձևավորում է յուրահատուկ սոցիալական միջավայր, որտեղ էկրանի հերոսների հետ միասին ընտանիքի անդամները մասնակցում են նրանց գործերի քննարկմանը, կատարում եզրահանգումներ, ինչը հաճախ կարող է լինել ոչ նպաստավոր անչափահասների դաստիարակության համար: Էկրանի հերոսը՝ հաճախ վառ, ճարպիկ, խելացի, բայց բացասական, կարող է դառնալ ընդօրինակման նմուշ: Այդպիսի հերոսները մեծ թիվ են կազմում ժամանակակից մուլտֆիլմերում, սարսափ ֆիլմերում, մարտաֆիլմերում և այլն:

Երոտիկ բնույթի կամ սարսափ-ֆիլմերի ցուցադրման առումով չափազանց մեծ նշանակություն է ստանում հեռուստաընկերությունների կողմից դրանց ցուցադրման ժամանակային ճիշտ քաղաքականությունը: Մեր կարծիքով՝ նույնիսկ «02» հաղորդաշարը պետք է եթեր հեռարձակել այնպիսի ժամերի, որ անչափահասներն ականատես չլինեն սարսափազդու սպանություններին, դրանց մեկնաբանություններին:

Տեսողությունն ու լսողությունը նյութն ընկալում են շատ արդյունավետ, և եթե այն չի ուղեկցվում մեծերի խելացի, պատճառաբանված բացատրությամբ, կարող է ենթագիտակցության մեջ

թողնել իր բացասական ու անդառնալի հետքը: Հաճախ երեխան, ատելով բացասական հերոսին, ցանկանում է նրա մահն առավել դաժան եղանակով, ինչի հետևանքով երեխայի մոտ, մի կողմից, առաջանում է ատելություն, մյուս կողմից՝ ետին պլան է մղվում ներողամտությունը: Այս առումով դարձյալ բազմաթիվ սերիալային օրինակներ է մեզ մոտուցում հայկական հեռուստատեսությունը:

Հասկանալի է, որ հեռուստատեսությունը յուրահատուկ ինքնաֆինանսավորվող շուկա է, որն ունի մրցակցական դաշտ, և յուրաքանչյուր հեռուստաալիք ձգտում է հնարավորինս շատ հեռուստատեսիվներ և այնպիսի զվարճալի նախագծեր ներկայացնել, որոնք կապահովեն նրա բարձր վարկանիշը: Սակայն վարկանշային անգուսպ մրցավազքում չպետք է կորցնել ոչ միայն զգոնությունը, այլ նաև պատասխանատվությունը մատաղ սերնդի առջև, որպեսզի նրան չմատուցվեն անարվեստ ու անճաշակ, ստոր կրքեր ու բնագղներ քարոզող նյութեր, որպեսզի դեռ վաղ հասակից չխաթարվի սերնդի լեզվամշակության ճիշտ դաստիարակությունը:

Ստորև ներկայացնում ենք մեր կազմած հարցաթերթիկները, որոնք գործնականում կիրառվել են մեր կողմից ուսումնասիրված դպրոցներում, և որոնց հիման վրա էլ կատարվել են համապատասխան եզրահանգումները:

#### Հարցաթերթ

1. Ո՞ր հեռուստաալիքն էք նախընտրում դիտել:

ա) Հ1, Հ2, Արմենիա, Երկիր Մեդիա, Շողակաթ Ընդօժել  
 Ելել այլ:

2. Ո՞ր հաղորդումներն էք սիրում դիտել (նշել հեռուստաալիքը, անվանումը)։

ա) Սերիալներ,  
 բ) Գիտահանրամատչելի,  
 գ) Ուսուցողական. ընդօժել  
 դ) Երաժշտական  
 ե) Լուրեր,  
 զ) Այլ:

3. Ի՞նչ բնույթի հաղորդումներ կցանկանայիք լինել:

4. Ձեր կարծիքը հեռուստահաղորդումների վերաբերյալ:

Ջրույցների հետ կանոնակարգված աշխատանքներ չեն տարվում իրենց ընդունակություններին, գիտելիքներին և հետաքրքրություններին համապատասխան:

Պետք է տեղեկատվությամբ, զրույցների, բանավեճերի, էքսկուրսիաների միջոցով բացահայտել սովորողների հետաքրքրությունները, մասնագետի պահանջարկը և ուղղորդել նրանց:

Վերոնշյալ հարցումները անց են կացվել Վա-  
նաձորի թիվ 23, 30 և Ազնվաձորի դպրոցներում :

Նախընտրած հեռուստաալիքները

Հեռուստաալիք	Հ1	Հ2	«Արմենիա»	«Երկիր Մերիա»	«Շողակաթ»	«Լուրի»	Այլ
Քանակը	25	15	30	15	15	10	10

Նախընտրած հաղորդումները

Սերիալներ	40	Սպասում են ան- համբերությամբ, հնարավորության դեպքում դիտում են մի քանի անգամ
Ուսուցողական	10	
Գիտահանրամատչելի	20	
Երաժշտական	30	
Լուրեր	15	
Այլ	5	

Հարցմանը մասնակցել են թվով 120 աշա-  
կերտ (7-12-րդ դասարանցիներ):

Ամենասիրված հաղորդումներից են «Կարգին  
սերիալ», «Երևանցիներ», «Կյանքի կարուսել»,  
«Մի ստիր»:

Դիտումների ընթացքում բացահայտեցինք հե-  
տևյալը, որ դպրոցականները, հատկապես դեռա-  
հասները սիրում են ընդօրինակել «սիրելի» հե-  
րոսների խոսելաճոճը, մարմնախոսության և դիմա-  
խաղի տարրերը: («Հրեշտակների դպրոց» սերի-  
ալում ավելի շատ ընդօրինակում են Գևորգի և Ար-  
տակի բառապաշարը, խոսելաճոճը, շարժումները):

Մեր կարծիքով՝ սերիալների ցուցադրման  
ժամերը և հաճախականությունը անհրաժեշտ է  
վերանայել:

Սցենարիստները պետք է վերանայեն իրենց  
մոտեցումները ուսուցիչների կերպարների ներ-  
կայացման հարցում:

Իսկ մարտերի տեսարանները, որոնք ներկա-  
յացվում են, ծնունդ են անպատժելիության պատ-  
րանք. հատկապես դեռահասների մոտ, ովքեր  
երևույթները ընկալում են ոչ խորքային, ինչն էլ իր  
հերթին կարող է ազդել նրանց բարոյական նկա-  
րագրի վրա: Սա ավելի վտանգավոր է դառնում  
այն պարագայում, երբ նրանց ապրելակերպը  
ապահովվածության, շռայլության, ուզածին հաս-  
նելու կարճ ճանապարհ է հարթում:

Հեռուստատեսության առաքելություններից  
զլխավորը թերևս ազգային անվտանգության  
ապահովումն է, որն ուղղակիորեն կախված է յու-  
րաքանչյուր դպրոցականի որպես քաղաքացի

դաստիարակելու խնդրի ճիշտ լուծումից:

Դպրոցականների ճիշտ դաստիարակության,  
ինչպես նաև համակողմանի կրթության համար  
անփոխարինելի են ուսուցողական բնույթի հա-  
ղորդումները, որոնք, դժբախտաբար, չեն կազ-  
մում մեր հեռուստաընկերությունների եթերի գոնե  
այնպիսի հատվածը, որ բավարարեր նվազա-  
զույժ անհրաժեշտ ծավալը, որն այսօր ունի հայ-  
կական դպրոցը:

Հետևաբար, ելնելով վերոգրյալից, կարելի է  
կատարել մի շարք եզրահանգումներ, ինչպես նաև  
առաջարկություններ, որոնք կօգնեն մատաղ  
սերնդի դաստիարակությունը հեռուստաեթերի  
միջոցով իրականացնել առավել անվտանգ և ազ-  
գային նկարագիր ոչ թե խաթարելուն, այլ պահ-  
պանելուն միտված հեռուստաարտադրանքի մի-  
ջոցով:

Ուստի անհրաժեշտ է.

- կրթության ազգային ինստիտուտներում  $\bar{x}^{3\frac{1}{2}}$ -  
մել հատուկ բաժին, որտեղ կստեղծվեն ուսումնա-  
մեթոդական կինոնկարների խտասկավառակներ,  
կինոժապավեններ,

- հեռուստաընկերությունների հետ դպրոցնե-  
րը պայմանավորվածություն ունենան ուսումնա-  
կան, գեղարվեստական, վավերագրական կինոն-  
կարների ցուցադրման ժամերը հարմարեցնել՝ ել-  
նելով դրպրոցահասակ երեխաների տարիքային  
առանձնահատկություններից,

- դպրոցները ձեռք բերեն հայրենասիրական,  
գեղարվեստական, համակողմանի զարգացման  
նշանակություն ունեցող հաղորդումների խտաս-  
կավառակներ,

- ուսուցիչները հանձնարարությունները տան  
հիմք ընդունելով յուրաքանչյուր սովորողի նա-  
խասիրությունները՝ քննարկելով նրանց տարի-  
քին հասցեագրված հաղորդումները արտաու-  
սումնական աշխատանքների ժամանակ,

- դասղեկները ծնողների հետ համատեղ ուշ-  
ադրության կենտրոնում պահենայն հեռուստա-  
հաղորդումները, որոնք ունեն դաստիարակչա-  
կան նշանակություն,

- դասղեկական ժամերին քննարկել սովորող-  
ների կողմից սիրված հաղորդումները՝ ապահովել-  
լով մտքերտ ազատ, անկաշկանդ արտահայտե-  
լու պայմաններ,

- հետևողականորեն կենսագործել 2010 թ.  
հունիսի որոշումը,

- ցերեկային ժամերին ցուցադրել կամ կրկնել  
այնպիսի հաղորդումներ («Հայ ասպետ», «Ծա-  
գունով հայեր», «Մենք», «Ազատ քաղաքացի»,  
մանկապատանեկան ֆիլմեր, «Օտար, ամայի  
ճամփեքով», «Դարը», «Մեր լեզուն, մեր խոսքը»,  
«Հայրենիք-սփյուռք», «Երգ-երգոց»), որոնց միջո-  
ցով կծնավորվի ակտիվ քաղաքացիական որակ-  
ներով օժտված անձնավորություն:



- <sup>1</sup> «Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ», Քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ, Երևան, 2005, էջ 304:  
<sup>2</sup> Նույն տեղում, էջ 307:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Հովհաննիսյան Ռ. Ի.**, Լսա-տեսողական միջոցառումները դպրոցում, Երևան, «Լույս» 1980:
2. **Карпова Т. М.**, Школьникам о документальном кино, М., 1986.
3. **Старкова З. С.**, Литература и кино, Москва 1978.
4. <http://www.mediaeducation.ru>, Александр Федоров, И.С. ЛЕВШИНА: КИНО КРИТИКЕ И КИНОПЕДАГОГ.
5. <http://www.kroutov.ru>, Социальная ответственность детского телевидения. Развивающее телевидение для детей. огатыко Анна Геннадиевна, кафедра телевидения и радио факультета журналистики МГУ, эксперт Государственной Думы по детскому телевидению.

### THE ROLE OF THE TELEVISION IN THE SELF-DEVELOPMENT PROCESS OF A PUPIL

**ARMEN HAROUTYUNYAN**

A candidate of pedagogical sciences

#### Summary

Television plays a great role in the process of formation of personality, hence the educational policy made by TV companies is very important, the errors of which directly influence the formation of proper personal qualities of young generation. Soap operas and fun programs that overwhelm Television are a war-call to Armenian schools.

The Statistical data used in the article are based on the survey carried out in secondary schools in Vanadzor City and the village of Aznavdзор.

# ՇԵՂՎՈՂ ՎԱՐՔԱԳԾՈՎ ԱՎԱԳ ԳՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՐԱ ՍԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ\*

## Արդյուն ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

ՀՊՄՀ Ընդհանուր մանկավարժության ամբիոնի հայրող

Ատենախոսության թեման՝ Ավագ դպրոցականների վարքագծի շեղման կանխարգելման մանկավարժական պայմանները

Գիտական ղեկավար՝ Ա. ՍԱՆՈՒԿՅԱՆ՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ



հրավախատումների կանխարգելմանը նվիրված մանկավարժական գրականության մեջ կենտրոնական տեղ է գրավում իրավախախտի անձի ուսումնասիրությունը: Այդ հիմնահարցի ուսումնասիրությանը

շատ աշխատանքներ են նվիրվել (Ա. Ս. Սակարենկո, Վ. Ն. Կուրոյավցև, Ի. Ա. Նևսկի, Լ. Բ. Ֆիլոնով, Դ. Ն. Ֆելդշտեյն, Ի. Պ. Շկատով, Ա. Մ. Պեչենյուկ, Յա. Վ. Սոկոլով, Ե. Մ. Դանիլին և ուրիշներ):

Այսպես, Լ. Ն. Դեսևը, ուսումնասիրելով իրավախախտ դպրոցականների հարաբերությունների առանձնահատկությունները, բացահայտել է ընկերական հարաբերությունների չափանիշները՝ ընկերական փոխօգնությունը, հարգանքը, ազնվությունը, ճշտախոսությունը, հավատարմությունը և բարեկամությունը: Ռ. Գ. Սելիվանովան և Ի. Է. Ստրելկովան հատուկ հետազոտել են դպրոցականների ընկերության և բարեկամության հարցերը որպես երեխաների միջև անձնական հարաբերությունների ձևերից մեկը:

Իր ժամանակին Ա. Ս. Սակարենկոն հաստատել է, որ գաղութում մշտապես գտնվում էին երեխաներ, որոնց հետ ոչ ոք չէր ուզում համագործակցել ո՛չ աշխատանքում, ո՛չ հանգստի, ո՛չ ուսման մեջ: Նա նկատել է, որ բոլոր այդ երեխաներն

ունեցել են անձի ծայրահեղ բացասական վարքագծային դրսևորումներ ու որակներ<sup>1</sup>:

Տարբեր հեղինակների աշխատանքների վերլուծությունը ցույց է տվել, որ դպրոցական կոլեկտիվում երեխայի կացության ուսումնասիրության ժամանակ երեխաների յուրահատկությունները բնորոշվում են որպես կոլեկտիվում նրանց բարենպաստ վիճակը կամ մեկուսացվածությունը պայմանավորող գործոններ<sup>2</sup>:

Ա. Վ. Մուդրիկը հետազոտություն է անցկացրել, որը բավականին ծանրակշիռ ներդրում է դեռահասների միջանձնային հարաբերությունների հիմնահարցի մշակման գործում: Նա բնորոշել է հաղորդակցությունը որպես մանկավարժական կատեգորիա, բացահայտել է տարբեր տարիքի դպրոցականների հաղորդակցման տիպական առանձնահատկությունները<sup>3</sup>:

Դասարանային կոլեկտիվում ավագ դեռահասների «մերժվածության» պատճառների ուսումնասիրությամբ շատ գիտնականներ են զբաղվել: Նրանք ուսումնասիրել են դպրոցի կոլեկտիվի հետ դեռահասների հաղորդակցման մեջ մի շարք դժվարությունների պատճառները և եկել այն եզրակացության, որ այդպիսի դեռահասների վիճակը անձնական փոխհարաբերությունների համակարգում կախված է ոչ միայն առանձին դեռահասի անձնական հատկանիշներից, այլ նաև դաստիարակվածության մակարդակից, բարոյական արժեքներից, ինչպես նաև կոլեկտիվի վերաբերմունքից դպրոցականների շեղվող վարքագծի նկատմամբ: Սեր հետազոտության նպա-

\* Ներկայացվել է 19.03.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

տակների համար նման եզրահանգումը խիստ կարևոր է:

Չոգեբանամանկավարժական գրականության մեջ ձևավորվել է հետազոտությունների մի մեծ խումբ, որոնք դիտարկում են երեխաների միջև փոխհարաբերությունների հիմնահարցը՝ անձի այս կամ այն հատկանիշների ձևավորման վրա ունեցած ազդեցության տեսանկյունից:

Վ. Գ. Խրոմենոկին ուսումնասիրել է կոլեկտիվ հարաբերությունների ազդեցությունը դեռահասի անձի կամային հատկանիշների ձևավորման վրա: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ փորձին մասնակցած դեռահասների մեկ երրորդը գտնվել է համադասարանցիների շրջապատում հոգեբանական մեկուսացվածության վիճակում: Նրանց հանդեպ բացասական վերաբերմունքի հիմքում, հեղինակի տվյալներով, ընկած են այնպիսի հատկանիշներ, որոնք վկայում են կամային ոլորտի թուլության մասին: Այդ դպրոցականների բնավորության մեջ գերակշռում են գոռոզությունը, մեծամտությունը, կոպտությունը, անզսպությունը, վախկոտությունը, անսկզբունքայնությունը, կոլեկտիվ կյանքի հանդեպ անտարբերությունը<sup>4</sup>:

Այսպիսով՝ բոլոր հետազոտողները, ովքեր ուսումնասիրել են դեռահասների փոխհարաբերությունները դպրոցական կոլեկտիվում, նշում են, որ համադասարանցիների թաքուն կամ բացահայտ հակակրանքը դեռահասների մոտ հաղորդակցությունից անբավարարվածություն է առաջացնում: Դրա հետ է կապված հուզական վատ ինքնազգացողությունը, որը նպաստում է վարքի անցանկալի հատկությունների առաջացմանը, որոնք աստիճանաբար հաստատվում են անձի մնայուն բացասական հատկանիշների ձևով:

Մանկավարժական գիտության մեջ մեծ թվով հետազոտություններ են կուտակվել, որոնցում արտացոլվում են հիմնահարցի այնպիսի կողմեր, ինչպիսին կոլեկտիվում և ընտանիքում դեռահասի մեկուսացվածության կապն է նրա վրա հակահասարակական ազդեցության հետ:

Այդ ուղղությամբ առաջին հետազոտությունը Ա. Մ. Ջյուբինի աշխատանքն էր, որը հավաստում էր, որ հակասոցիալական վարքագծի պատճառներից մեկը դպրոցի հետ դեռահասի կապերի ձևախեղումն է<sup>5</sup>: Այդ առնչությամբ Ա. Ս. Մակարենկոն գրել է, որ պետք է խոսել ոչ թե արատավոր անձնավորության, այլ փչացած հարաբերությունների մասին՝ անձի և հասարակության, անձի պահանջմունքների և հասարակության պահանջմունքների միջև:

Մեր կողմից վերլուծվել են այն աշխատանքները, որոնցում ուսումնասիրվել են մանկավարժական առումով բարձիթողի դեռահասների տարերային խմբերի հաղորդակցությունն ու գործու-

նությունը: Օրինակ, Ե. Ս. Դանիլինը, Ա. Դ. Գոնենը անցկացրել են համակողմանի հոգեբանամանկավարժական հետազոտություն՝ մանկավարժական առումով բարձիթողի դեռահասների խմբերի հաղորդակցության հետ կապված: Նրանք հանգել են եզրակացության, որ ըստ բնական վայրի տարերայնորեն ձևավորված խմբերը մեծ մասամբ բաղկացած են այն դեռահասներից, ում դպրոցում մերժել են հասակակիցները:

Չոգեբանամանկավարժական գրականության վերլուծությունը թույլ է տալիս հետևություն անել, որ վերջին ժամանակներս դժվար դաստիարակվող դեռահասների և նրանց հասակակիցների միջև անձնական փոխհարաբերությունների հարցերը դասարանում ձեռք են բերել կարևոր հոգեբանամանկավարժական հիմնահարցի բնույթ: Չետազոտությունները տարվում են մի քանի ուղղություններով. 1. դժվար դաստիարակվող դեռահասի անձի ուսումնասիրում, 2. դժվար դաստիարակվող դեռահասի կացության ուսումնասիրում, 3. դժվար դաստիարակվող դեռահասների՝ դասարանում իրենց տարեկիցների հետ փոխհարաբերությունների բարելավման ուղիների ուսումնասիրում:

Գիտական հետազոտություններում բավականին հիմնավոր է ներկայացված դժվար դաստիարակվող աշակերտների անձը, ինչպես նաև՝ դժվար դաստիարակելության պատճառները և դժվար դաստիարակելիությունը որպես բացասական մանկավարժական երևույթ: Մեծ թվով աշխատանքներ կան, որոնցում բացահայտվում է դժվար դաստիարակվող դեռահասի կացությունը դասարանային կոլեկտիվում: Միևնույն ժամանակ՝ համադասարանցիների հետ դժվար դաստիարակվող դեռահասների միջանձնային դրական հարաբերությունների ձևավորման հարցերը՝ որպես դժվար դաստիարակելիությունը հաղթահարելու գործոն և դժվար դաստիարակվողների՝ դասարանում մերժված լինելու պատճառները չեն նշակված և ձևակերպված և այդ առումով լավ չեն կիրառվում՝ չնայած դպրոցական պրակտիկայում դժվար դաստիարակվող դեռահասների դաստիարակության և վերադաստիարակության ողջ կարևորությանը: Առայժմ մանկավարժական գիտության մեջ միայն մի քանի մոտեցումներ կան՝ այդ հիմնահարցի ձևակերպման և լուծման հետ կապված:

Կարծիքների և դատողությունների միջոցով փոխներգործության արդյունքում հավաքվել և նշակվել է տեղեկատվություն յուրաքանչյուր դասարանի մասին, որտեղ ելակետ է ծառայել ընդհանուր մթնոլորտը կոլեկտիվում: Միջանձնային հարաբերությունները կոլեկտիվում ուսումնասի-

րելու գործում՝ կոլեկտիվի համախմբման նպատակով Ռ. Լ. Պոբերևկայան սահմանել է հարաբերությունների 3 այսպիսի տարբերակ.

1) վարքագծի նորմից շեղումը դասարանում չի խրախուսվել, համարվել է անթույլատրելի,

2) շեղման հանդեպ վերաբերմունքը եղել է հանդուրժողական, իսկ խախտողները հանդիսացել են յուրահատուկ զվարճացողներ՝ «դասարանային խեղկատակներ»:

3) բացասական արարքները և անսովոր վարքը դիտվել են կարևորագույն կողմեր՝ դեռահասների կոլեկտիվում հարաբերությունների նորմալացման համար:

Նա ապացուցել է, որ փոխադարձ դաստիարակությունը նպաստում է անձնական թերությունների հաղթահարմանը, բարոյական փորձի հարստացմանը և կոլեկտիվում դրական փոխհարաբերությունների ձևավորմանը մանկավարժական տեսակետից բարձիթողի դեռահասների և նրանց հասակակիցների միջև:

Դեռահասի անձի և կոլեկտիվի կոնֆլիկտի աղբյուր է հանդիսանում դեռահասների գնահատման դատողությունների տարբեր աստիճանի ոչ համարժեք վիճակը, երբ դեռահասները գնահատում են իրենց և շրջապատող անձանց: Դեռահասի մեկուսացվածությունը նպաստում է ոչ համարժեք գնահատման ձևավորմանը: Հետազոտողի կողմից առաջարկվել է դաստիարակիչ ներգործությունների համակարգ, որի արդյունքում հաղթահարվում է անձի և շրջապատող անձանց գնահատողական հարաբերությունների կոնֆլիկտը, ստեղծվում են նախադրյալներ դեռահասների կոլեկտիվում դրական փոխհարաբերությունների հիմնելու համար<sup>6</sup>:

Լ. Յու. Սիրոտկինի կարծիքով՝ կոլեկտիվում մանկավարժական տեսակետից բարձիթողի դեռահասների հոգեբանական մեկուսացման հիմնական պատճառը մարդասիրական զարգացումից նրանց շեղման և նրանց մոտ մարդասիրական հարաբերության բացակայության մեջ է: Հետազոտողը կարծում է, որ դեռահաս-կոլեկտիվ փոխհարաբերությունների խախտումը հանգեցնում է մանկավարժական տեսակետից բարձիթողի վիճակի, իսկ շեղումների դրսևորման ձևերը սերտորեն կապված են կոլեկտիվում երեխայի գործունեության բնույթի և հարաբերությունների հետ: Նա առաջարկում է մարդասիրական դաստիարակության միջոցով կոլեկտիվում ձևավորել դրական հարաբերություններ: Երեխայի բարոյական զարգացման գլխավոր առանցք է հանդիսանում, ինչպես կարծում է գիտնականների մեծամասնությունը (Ի. Ս. Մարյենկո, Օ. Ս. Բոգդանովա, Լ. Ն. Նովիկոյա, Ն. Ի. Մոնախով և ուրիշներ), անձի կոլեկտիվիստական հասարակական ուղղվածու-

թյունը, կոլեկտիվում համագործակցելու, նրա շահերով ապրելու կարողությունը: Իսկ դժվար դաստիարակվող դեռահասներին բնորոշ են շեղումները հենց այդ ոլորտում: Ընդ որում՝ ինչպես ցույց են տալիս հետազոտություններն ու պրակտիկան, շեղումները բարոյական զարգացման մեջ դժվար դաստիարակվող դեռահասների մոտ առաջանում են ոչ անմիջապես, այլ անցնում են մի քանի կարևոր փուլեր: Ա. Ս. Բելկինն առանձնացնում է հետևյալ փուլերը. «շեղումների նախադրյալներ, երբ երեխան չի ստացել կյանքի հմտություններ կոլեկտիվում (նախադպրոցական փուլ), բացասական միտումների առաջացում նրա բարոյական զարգացման մեջ, երբ նա չի ընկալում մանկական կոլեկտիվի կյանքի նորմերը (դպրոցական կրտսեր տարիք), բացասական միտումների խորացում, երբ նա սկսում է հանդես գալ վարքի հասարակական նորմերի դեմ (դեռահասային տարիք)»<sup>7</sup>:

Վերը թվարկված աշխատանքների վերլուծությունը թույլ է տալիս հետևություն անել, որ դժվար դաստիարակվող դեռահասների և դասարանում նրանց հասակակիցների միջև դրական միջանձնային հարաբերությունների ձևավորման, ինչպես նաև հասակակիցների շրջապատում նրանց մեկուսացվածության ու մերժվածության հիմնահարցը ուսումնասիրվել է շատ հետազոտողների կողմից այլ հիմնահարցերի համատեքստում: Այսպիսով, գիտության մեջ ներկայումս կան այդ հիմնահարցի լուծման մի քանի մոտեցումներ ու տարբերակներ:

Մեր կողմից առանձնակի ուշադրություն է դարձվել այն աշխատանքներին, որոնցում հատուկ ուսումնասիրվել են դժվար դաստիարակվող դեռահասներին դասարանում հասակակիցների հետ հաղորդակցման դրական ոլորտում ներգրավելու ուղիներն ու պայմանները: Հիմնահարցով զբաղված առաջին հետազոտողների թվում եղել է Ա. Ֆ. Նիկիտինը: Հետազոտողն ուսումնասիրել է դժվար դեռահասների փոխհարաբերությունների առանձնահատկությունները կոլեկտիվում և նրանց կոլեկտիվ գործունեության մեջ ներգրավելու առանձնահատկությունները: Նա բնորոշել է համադասարանցիների հետ դժվար դաստիարակվող դեռահասների դրական փոխհարաբերությունների ձևավորման արդյունավետ կազմակերպման մի քանի պայմաններ: Հատուկ դարձնում է գտնվող դեռահասներին ուսումնասիրելիս հետազոտողը պարզել է, որ դեռահասների փողոցային խմբերի 70 տոկոսը ամբողջովին կամ մասնակիորեն բաղկացած է եղել համադասարանցիներից:

Ընդհանուրը, որ հատուկ է մի շարք հետազոտողների, «դժվար» դեռահասների վերադաստի-

արական հիմնահարցերն են: Հետազոտողներից շատերը լավատեսական դիրքորոշում ունեն և հիմնավորում են շեղված վարքագծով յուրաքանչյուր դեռահասի բարեհաջող վերադաստիարակման գործնականում հնարավոր լինելը: Վերադաստիարակման հիմնահարցը դիտվում է սերտ կապի մեջ այն հարուցող պատճառների ու պայմանների հետ՝ յուրաքանչյուր կոնկրետ ժամանակամիջոցում, ինչը պայմանավորում է նրա լուծման համար մոտեցումների յուրօրինակությունը: Վերադաստիարակման հաջողության պայմանը հետազոտողները տեսնում են անձի մարդկային լավագույն հատկանիշների վրա հենվելու, դրական անձնական կողմերի դրսևորման մեջ՝ ի հակակշիռ բացասական կողմերի, հաշվի առնելով օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները:

Դժվար դաստիարակվող դեռահասների և իրավախախտ դեռահասների հետ մանկավարժների փոխներգործության արդյունավետությունը բարձրացնելու եղանակներն ուսումնասիրվել են Լ. Բ. Ֆիլոնովի կողմից: Հետազոտողը քննել է հոգեբանական արգելքները, որ առաջանում են դժվար դաստիարակվող և մանկավարժական տեսակետից բարձիթողի դեռահասների հետ մանկավարժի հաղորդակցման ժամանակ: Նա հիմնավորել է, որ դժվար դաստիարակվողի հետ հաղորդակցումը, որպես կանոն, դժվարանում է՝ կապված բազմաթիվ առկա հոգեբանական արգելքների հետ: Հոգեբանական արգելքներ ասելով՝ հեղինակն ի նկատի ունի.

- մանկավարժի հանդեպ անվստահությունը՝ կապված դեռահասին օգնելու նրա անկեղծության հետ,
- կասկածամտության բարդույթն այն բոլոր մարդկանց հանդեպ, ովքեր ուշադրություն են դրածնում դեռահասի վրա,
- չափից դուրս դյուրաբորբոք վիճակն ու հիվանդագին նյարդայնությունը ամենափոքր դժվարությունների հանդեպ, որ վերաբերում են դեռահասի անձին,
- վախը անձանոթ մարդկանց և նոր իրավիճակների հանդեպ,
- ենթագիտակցական դիմադրությունը ծնողների և ուսուցիչների կամ բարձր դասարանցիների կողմից ձեռնարկված ներգործությանը,
- ինքնաբերաբար ստեղծվող հակազդեցությունն ուսումնական և արտադասարանային գործունեության մեջ առաջարկվող նորմերին ու կանոններին:

Հոգեբանական այս արգելքները կարող են հաղթահարվել այն դեպքում, եթե մանկավարժը բավականաչափ լավ ուսումնասիրի նրանց բնույթը, դեռահասի անձի անհատական առանձնահատկությունները, այն գործոններն ու երևույթները,

որ, որ նպաստում են այս առանձնահատկությունների առաջացմանը:

Այսպիսով, մանկավարժին և դաստիարակչական գործընթացի բոլոր մասնակիցներին անհրաժեշտ է հաղթահարել հաղորդակցման ժամանակ առաջացող արգելքներն ու դժվարությունները՝ դրանով իսկ հնարավորություն ստեղծելով դեռահասի հետ ճիշտ փոխներգործության: Մանկավարժի և ծնողների ձգտումը՝ ճիշտ հաղորդակցում հաստատելու համար հաճախ ավարտվում է նոր կոնֆլիկտով՝ «դժվար» դեռահասի կողմից: Այդպես է հաճախ լինում այն պատճառով, որ դեռահասը երկար ժամանակ կարող է գտնվել «ամենքի հանդեպ կասկածելի թշնամանքի» բեռան ներքո: Հոգեբանական այս արգելքը կարելի համարել օտարացման գլխավոր արգելք, որն ավելի ու ավելի է մեծացնում վերադաստիարակվող դեռահասի հետ մանկավարժի հաղորդակցման մեջ առաջացող խզման տարածությունը: Հասկանալ հոգեբանական արգելքները, պարզել «դժվար» դեռահասների բնութագրման անհատական առանձնահատկությունները, ընտրել անհրաժեշտ ձևեր ու միջոցներ՝ նրանց հետ վստահության հարաբերություններ հաստատելու, այս ամենն անելուն մանկավարժին խանգարում է հենց այդ արգելքը: Դաստիարակման օբյեկտներին ներգործման սուբյեկտներից «օտարացնող» արգելքները ներկայանում են որպես համընդհանուր դժբախտություն, որը ետ է մղում դեռահասների հետ շփում հաստատելու փորձերը: Անհրաժեշտ է քանդել այդ արգելքները: Այսպիսով, ստեղծվում է պարադոքսալ իրավիճակ. «դժվար» դեռահասների վարքագծում շեղումների վերաբերումը կախված է մանկավարժի հետ հարաբերություններում օտարացման արգելքները «քանդելու» արդյունավետությունից, իսկ դա հնարավոր է միայն դեռահասների շարժառիթների փոփոխման դեպքում: Սակայն այդպիսի իրավիճակ հնարավոր է ստեղծել միայն դեռահասի անձի յուրահատկությունների բավականաչափ լավ ուսումնասիրման դեպքում: Ընդ որում՝ հարկավոր է հաշվի առնել նրանց հակազդման առանձնահատկությունները, նույնիսկ ամենափոքր ներգործության հանդեպ հակազդումը: Դա ապահովվում է միայն այն ժամանակ, երբ նրանց հետ հաստատվում են փոխվստահության հարաբերություններ<sup>8</sup>: Մանկավարժների և ծնողների խնդիրն է՝ որպես փոխներգործության առավել շահագրգիռ սուբյեկտներ իմաստուն և ունակ լինել կանխատեսելու և կառուցելու դեռահասի հետաքրքրությունների զարգացման ճանապարհը՝ հաղթահարելով նրա կասկածների լաբիրինթոսը բարոյական արժեքներն ընտրելիս, նրա բացասական սովորույթներն ու կապերը, կողմնորոշելով նրան

դպրոցական ուրտում հաղորդակցական հարաբերությունների ընդլայնման ուղղությամբ: Այդպիսի մոտեցումը թույլ կտա ստեղծել տարրական պայմաններ՝ վերացնելու վարքագծի շեղման պատճառները:

Այսպիսով՝ ձևավորված փոխներգործության համակարգում կարող են բարեհաջող փոխներգործել այսպիսի գործոնները:

1. Ամբողջ մանկավարժական և աշակերտական կոլեկտիվների շահագրգռվածությունն ու պատրաստակամությունը՝ ներգրավվել փոխներգործության գործընթացում:

2. Դպրոցի ղեկավարության մասնակցությունը՝ որպես փոխներգործության բոլոր կառույցների ղեկավար օղակ:

3. Բոլոր դասղեկների ու առարկայական ուսուցիչների՝ մանկավարժորեն գրագետ և հոգեբանորեն հիմնավորված փոխադարձ կապը սովորողների վարքագծում սկզբնական շեղումները վերացնելու խնդիրների հետ:

4. Բարձր դասարանցիների մասնակցության նախապատրաստումը դեռահասների վարքագծում սկզբնական շեղումները հաղթահարելու գործին:

5. Պարտադիր կապի մշակումը հասարակական դաստիարակության արտաքին ծառայությունների ու կառույցների հետ, որոնք փոխներգործության մեջ են դպրոցի ու ընտանիքի հետ՝ երեխաների ու դեռահասների իրավախախտումների կանխարգելման գործում:

6. Ուսուցիչների կողմից դասի միջոցներով «դժվար» դեռահասների վրա անհատական ներգործման հնարքներին ու տեխնիկային տիրապետումը:

7. Դպրոցական և աշակերտական կոլեկտիվ-

ներում հնարավորության ստեղծումը՝ ինքնահաստատվել դրական գործունեության մեջ:

- 1 **Макаренко А. С.** Флаги на башнях. М., 1958.
- 2 **Асөөв В. Г.** Мотивация поведения и формирование личности. М., 1976, с. 39-69, 117, 125, 138-145.
- 3 **Мудрик А. В.** О воспитании старшеклассников: Кн. для классных руководителей. М., 1981.
- 4 **Хроменок В. Г.** К вопросу о поведении подростков, имеющих отклонения от норм нравственности \ В сб. Воспитательная работа с учащимися в микрорайоне школы. Ред. Николаева Л. М., М., 1976.
- 5 **Зюбин Л. М.** О природе асоциального поведения несовершеннолетних // Вопросы психологии. 1973. N4, с. 59-63.
- 6 **Буянов М. Н.** Беседы о детской психиатрии. М., 1992. с. 5-52, 89-110.
- 7 **Белкин А. С.** Отклонения в поведении школьников \ Учебное пособие. Свердловск: СГПИ, 1976.
- 8 **Формирование профессиональной культуры учителя.** \Под ред. В. А. Сластенина. М., 1993, с. 39.

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Волков Б. С.** Психология подростка. \ Акцентуализация характера у подростков. М., 2001.
2. **Сарафьян Е. А.** Предупреждение трудновоспитуемости детей в младшем школьном возрасте // В сб. Вопросы профилактики правонарушений несовершеннолетних. М., 1985.
3. **Филонов Л. Б.** Детерминация возникновения и развития отрицательных черт характера у лиц с отклоняющимся поведением // В кн. Психология формирования и развития личности. Под ред. Л. И. Анциферовой. М., "Наука", 1981.
4. **Чернышев А. С, Лунев Ю. А., Сарычев С. В., Корнев А. В.** Экспериментальная методика изучения межгруппового взаимодействия // Методики - социально-психологической диагностики. М., АПН СССР, 1990.

PERSONAL PECULIARITIES OF SENIOR PUPILS WITH DEFLECTED BEHAVIOUR AND PROVIDED POSSIBILITIES OF THEIR PEDAGOGICAL IMPACT

**ARTYOM ABRAHAMYAN**

Summary

In the article it is analysed the psycho-pedagogical reality of deflected behaviour senior pupils personal peculiarities and as well as the ways of increasing efficiency of interaffection with pedagogues.

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ\*

### Նարինե ԱՌԱՔԵԼՅԱՆ

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի հայցորդ

**Ատենախոսության թեման՝** Ավագ դպրոցականներին սոցիալական դերին նախապատրաստելու անհրաժեշտության և սոցիալական ուղղվածության ձևավորման առանձնահատկությունները

**Գիտական ղեկավար՝** Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ՝ մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր



Ձևավորել ավագ դպրոցականի անձը, զարգացնել և դաստիարակել նրան, նշանակում է «ուղղորդել նրա սուբյեկտիվ աշխարհի զարգացումը՝ գործելով մի կողմից հասարակության համար ընդունելի բարոյական

իդեալի պահանջներին համապատասխան, մյուս կողմից նպատակ հետապնդելով ապահովել ավագ դպրոցականի անհատականության առավելագույն զարգացումը» (4, 48):

Նշանավոր հոգեբան ու մանկավարժ Լ. Ս. Վիգոտսկու այս մտքերը արդիական են նաև այսօր՝ ընտանիքում՝ ավագ դպրոցական տարիքի հոգեբանության, անհատականության հաշվառմամբ, նրա անձի սոցիալական կողմնորոշման և ուղղվածության ձևավորման հարցերում:

Ժամանակակից հասարակությունը նոր պահանջներ է ներկայացնում ընտանիքին, որոնցից կարևորներից մեկը սոցիալականորեն ակտիվ անձի դաստիարակության անհրաժեշտությունն է, անձնավորություն, որը կկարողանա ինքնուրույն և պատասխանատվությամբ ձևավորել իր կենսական միջավայրը, ակտիվ դիրքորոշում հանդես բերել հասարակական հարաբերություններում, պատրաստ լինել ընդունելու ռաջիոնալ և հիմնավորված որոշումներ և, որ շատ կարևոր է, դրանք իրագործել կյանքում՝ պատասխանատվություն

կրելու իր և իր մերձավոր շրջապատի համար, դրսևորելու ակտիվ քաղաքացիական դիրքորոշում, ինտեգրվելու հասարակությանը, դառնալու նրա ակտիվ անդամը: Ասել է, թե ընտանիքում ավագ դպրոցականի սոցիալական ուղղվածության ձևավորումը հնարավորություն է ստեղծում ձեռք բերելու հասարակության կողմից ընդունելի սոցիալական, իրավական, բարոյական, հոգևոր և հուզական արժեքներ, հաստատվելու իր սոցիալական դերում:

Բայց, ցավոք, հասարակության մեջ, սոցիալական առումով առկա է մի լուրջ հակասություն. շրջանավարտն ունի առարկայական բավարար գիտելիքներ, նրա ուսուցման գործընթացը հաջողվել է, բայց շրջանավարտը ժամանակակից հասարակության պահանջների տեսանկյունից պատրաստ չէ իրական կենսական խնդիրներ լուծելու, հասարակությանն ինտեգրվելու, ինքնիրացվելու, հարմարվելու, մասնագիտություն ընտրելու, իր սոցիալական դիրքն ու տեղը հաստատելու համար:

Դրա պատճառը նաև այն է, որ շատ ծնողներ որպես երեխայի դաստիարակության ու կրթության հիմնական նպատակ համարում են սովորողների կողմից ուսումնական առարկաներից գիտելիքների յուրացումը միայն: Իսկ ծնողները պետք է իմանան, որ 16-18 տարեկանում տեղի են ունենում որակական տեղաշարժեր՝ կապված ավագ դպրոցականի պլանների ու նպատակների, աշխատանքային գործունեության մեջ ինքնակայացման ուղիների որոնման հետ: Ծնողները պետք է գիտակցեն նաև, որ ընտանեկան դաստի-

\* Ներկայացվել է 19.03.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

արակության և երեխաների սոցիալական ուղղվածության ձևավորման մեջ կարևորը աշխատանքի հանդեպ գիտակցված շարժառիթների ստեղծումն է, որը նրանց մոտ կառաջացնի՝ սեփական անձի, ընտանիքի և հասարակության բարեկեցության համար աշխատելու, իր և ուրիշի աշխատանքը հարգելու և գնահատելու, ծուլությունը պարսավելու ցանկություն:

Անձի ձևավորման ու զարգացման հիմնական նպատակը մարդու առավել ամբողջական ինքնակայացումն է, սեփական հնարավորությունների ու կարողությունների իրականացումը, առավել ամբողջական ինքնարտահայտումն ու ինքնաբացահայտումը: Սակայն դա անհնար է առանց ուրիշների, ասել է թե՛ առանց ընտանիքի և նրա ղեկավարների մասնակցության, մարդկանց ինքնահակադրվելու միջոցով: Եվ այդ գործընթացը իրականացնելու է ընտանիքը՝ ունենալով մի քանի առանձնահատուկ գործառույթներ: Այսպես.

**Որպես առաջին առանձնահատկություն** ընտանիքը պետք է ապահովի դաստիարակության արդյունավետության որոշակի պայմաններ: Մենք դրանք այսօր համարում ենք.

- ծնողների, ծնողների և երեխաների, երեխաների՝ իրար հետ ունեցած ջերմ և բարեկամական փոխհարաբերությունները,
- ժամանակակից ընտանիքում ավագ դպրոցականների սոցիալական կողմնորոշման ձևավորման առանձնահատկությունները, ընտանիքում թագավորող աշխատանքային ազատ ու անկաշկանդ մթնոլորտը և ավագ դպրոցական տարիքի երեխաների մասնագիտական ճիշտ ու նպատակային ընտրությունը,
- ծնողների ու ընտանիքի մյուս ավագ ան-

դամների անձնական դրական օրինակը, օբյեկտիվ ու բարձր հեղինակությունը,

- ծնողների պատասխանատվությունը իրենց զավակների ապագայի, մասնագիտության ընտրության, սոցիալական դերի, կրթվածության և դաստիարակվածության համար,
- ընտանիքի ավագ անդամների աշխատանքային, մասնագիտական, գիտական, վարչական, կազմակերպական, հասարակական-քաղաքական և ծնողական պարտականությունների հաջող ու բովանդակալից ներդաշնակումը,
- ընտանեկան դաստիարակության գործընթացում սոցիալական ուղղվածության ձևավորման ժամանակ երեխաների տարիքի, հոգեբանության, անհատականության ու սեռի հաշվառումը,
- ծնողների և ընտանիքի մյուս ավագ անդամների կողմից ընտանեկան կյանքի անթերի կազմակերպումը, բարոյական նորմերի հաստատումը, տնտեսության ղեկավարումը (1, 140):

Ընտանեկան դաստիարակության արդյունավետ պայմանների ապահովումը՝ որպես ավագ դպրոցականի սոցիալական ուղղվածության ձևավորման առանձնահատկություն հիմնավորելու համար օգտվենք պրոֆեսոր Մ. Մանուկյանի ղեկավարած և Կ. Սուքիասյանի հեղինակած ատենախոսության փորձարարական մասից (3, 141):

Ըստ հետազոտության տվյալների՝ հարցմանը մասնակցած 300 ծնողներից մեծամասնությունը կանայք են (219 մարդ, 73 տոկոս), ինչն արդեն վկայում է երեխաների՝ ընտանիքում սոցիալական դիրքորոշում տալու հարցում մայրերի կարևոր դերի մասին: Նրանցից ավելի վճռական են երեխայի ճակատագրին խառնվելու հարցում 26-50 տարեկան և 11 ու ավելի տարվա ամուսնական ստաժ ունեցող մայրերը: Դրանց թիվը կազմում է 228 հոգի կամ հարցվածների 76 տոկոսը: Հարցվածներից 129-ը կամ 43 տոկոսն այն կարծիքին է, որ երեխայի դաստիարակության, սոցիալական ուղղվածության ձևավորման, մասնագիտական կողմնորոշման և իր սոցիալական դերում հաստատվելու գլխավոր օբյեկտը ընտանիքն է:

Դրանց ամփոփումը կատարված է աղյուսակ 1, 2-ում (3, 165-166):

**Երկրորդ առանձնահատկությունը** գործառույթի ձևով պետք է իրականացնի ընտանիքը՝ երեխայի անձի, ձևավորման, զարգացման ու դաստիարակության միջոցներով հասարակության մեջ նրա սոցիալական դերի ապահովումն է: Ընտանիքը պետք է կարողանա երեխայի մեջ՝ «հայտնաբերել, ձևավորել, զարգացնել և հասարակայնորեն արդյունավետ կիրառում տալ նրա մեջ եղած բոլոր արժեքավոր ընդունակություններին ու ձիրքերին, ստեղծագործական ուժերին և ստեղծարար էներգիային» (2, 64):

**Աղյուսակ 1**  
Հետազոտական նյութի բնութագիրը

N	Գործոններ	Քանակ	
		Ո	տոկոս
1	Հարցվածներ	300	100,0
2	կանայք	219	73,0
3	տղամարդիկ	81	27,0
4	.....		
	Տարիքային դասակարգում		
4,1	Մինչև 25 տարեկան	18	6,0
4,2	26-50 տարեկան	228	76,0
4,3	51-75 տարեկան	54	18,0
5.	Ամուսանական կյանքի տևողությունը		
5.1	Մինչև 1 տարի	15	5,0
5.2	2-5 տարի	33	11,0
5.3	6-10 տարի	42	14,0
5.4	11 և ավել տարի	210	70,0



Աղյուսակ 2

Հարցվածների բաշխումը ըստ ավագ դպրոցականի դաստիարակության գլխավոր օբյեկտի կարևորության

N	Չափանիշ / օբյեկտ	Ընդամենը		Սեռ			
		թիվ	%	արական		իգական	
1	Ընտանիքը	129	43,0	51	62,9	78	35,6
2	Դպրոցը (մանկապարտեզ)	3	1,0	3	3,7	0	0,0
3	Հասարակությունը	3	1,0	0	0,0	3	1,4
4	Ընտանիք + դպրոց	18	6,0	0	0,0	18	8,2
5	Դպրոց + հասարակություն	0	0,0	0	0,0	0	0,0
6	Ընտանիք + դպրոց + հասարակություն	126	42,0	24	29,6	102	46,6
7	Ընտանիք + հասարակություն	21	7,0	3	3,7	18	8,2
8	Ընդամենը	300	100,0	8,1	100,0	219	100,0

Նման առանձնահատկության անհրաժեշտությունը բխում է երեխայի մի շարք հոգեբանական ու սոցիալական պահանջմունքներից և պայմանավորված է նրա խառնվածքով: Երեխայի այդպիսի կոնկրետ գծերին, որոնք նպաստում են ավագ դպրոցականի սոցիալական ուղղվածության ձևավորմանը, վերաբերում են՝

- պատասխանատվության, ներքին ազատության և արժանապատվության զգացմունքը,
  - կայուն, փոփոխման ոչ ենթակա իդեալների առկայությունը,
  - մտորելու, կշռադատելու ունակությունն ու կամքը,
  - հասարակայնորեն անհրաժեշտ աշխատանքի ձգտման պատրաստակամությունը,
  - ուրիշներին հասկանալու ցանկությունը և ունակությունը, պահանջկոտությունը իր անձի նկատմամբ,
  - գործելու պատրաստակամությունը, զգուշավորությունը և ոչ անհրաժեշտ ռիսկից խուսափելու ունակությունը:
- Այս պահանջների ներդաշնակումը ստեղծում է այն առանձնահատուկ ֆոնը, որն անհրաժեշտ է ընտանիքում երեխայի սոցիալական ուղղվածության ձևավորման համար:

**Որպես երրորդ առանձնահատկություն** մենք առանձնացնում ենք ընտանիքում երեխայի սոցիալական ուղղվածության ձևավորման հարցում տեխնոլոգիական նոր մոտեցումները: Շեշտը դնում ենք ընտանիքում ընդունված դաստիարակության ձևերին.

- **Ժողովրդավարականին**, ըստ որի՝ ծնողը հաշվի է նստում զավակների կարծիքների հետ և նրանց աչքերով ու հայացքներով է նայում բնությանը, հասարակությանը, շրջապատին ու մարդկանց,
- **ավտորիտարին կամ վարչահրամայականին**, ըստ որի՝ ծնողը վերահսկում է երեխայի բոլոր արարքները, նրանց թելադրում է իր կարծիքը,
- **լիբերալին**, ըստ որի՝ ծնողը անտարբերու-

թյամբ է վերաբերվում երեխաների արարքներին, դաստիարակում է «ինչ ուզում է թող անի, մեկ է, ես նրան չեմ փոխի» սկզբունքով:

Բայց չընդունելով այդ ձևերից որևէ մեկի գերակայությունը, գտնում ենք, որ առաջին տեղում, որպես երեխայի սոցիալական ուղղվածության ձևավորման գործոններ, պետք է դնել տարիների ընթացքում ձևավորված ու արդյունավետություն ստացած ներընտանեկան հոգեբանական գործոնները: Որպես այդպիսիք մենք առանձնացնում ենք.

- ընտանիքի կյանքին երեխայի, հատկապես ավագ դպրոցականի, ակտիվ մասնակցություն ունենալը,
  - երեխայի հետ առանց ժամանակի խնայողության մշտական հաղորդակցության մեջ գտնվելը,
  - երեխայի հուզող հարցերին վերջնական պատասխաններ տալը դժվարությունների համդիպելիս, նրան օգնելը,
  - երեխայի վրա ճնշումներ չգործադրելով՝ նրան օգնել ինքնուրույն որոշումներ կայացնելը,
  - երեխայի ձևավորման ու զարգացման տարբեր փուլերի մասին պատկերացում ունենալը և դրանց փոփոխման դիմամիկային հետևելը,
  - երեխայի՝ սեփական կարծիք ունենալու իրավունքի հարգումը և իրականացումը կյանքում,
  - երեխայի ինքնակատարելագործման ձգտման իրավունքը,
  - սոցիալական, հասարակական-քաղաքական կողմնորոշման ազատությունը:
- Ընտանիքում երեխաների սոցիալական ուղղվածության տեսական հիմնավորումները տվել է Գ. Վեբերը (5, 201) ընտանեկան դաստիարակության չորս տիպի փոխհարաբերություններում, որոնք նա դիտում է որպես ավագ դպրոցականի սոցիալական ուղղվածության ձևավորման և՛ նախապայման, և՛ արդյունք: Դրանք են՝
- Թելադրանքը, որի օգնությամբ ընտանիքի

ավագ անդամները սխտեմատիկորեն ճնշում են մյուս, հատկապես կրտսեր մասի նախաձեռնությունները, ինքնուրույնությունը և վնասում արժանապատվությունը:

Խնամատարությունը, որի օգնությամբ ծնողները բավարարում են երեխաների բոլոր պահանջները, կատարում ցանկությունները՝ նրանց զերծ պահելով ամեն տիպի ու տեսակի հոգսերից, դժվարություններից ու ջանքերից, և ամեն ինչ վերցնում են իրենց ուսերին:

Չմիջամտելը, որի օգնությամբ «ապահովում են երեխաների՝ մեծերից անկախ գոյատևելու հիմնախնդրի լուծումը»:

Չամագործակցությունը, որի օգնությամբ ներդաշնակում են միջանձնային փոխհարաբերությունները ընտանիքի անդամների միջև՝ նպաստելով ընտանիքի կրտսեր անդամների բարոյական արժեքների տիրապետմանը: Սա այն վիճակն է, որի ամրապնդումը տանում է ավագ դպրոցականի սոցիալական ուղղվածության ձևավորմանը:

Սա այն մտովի ստորաբաժանումն է, որը մարդկանց դասակարգում է սոցիալական որոշակի կատեգորիաների (6, 107):

Չենց այս դասակարգումը և ընտանիքում դրա

իրականացումը մեզ օգնում է կանխորոշել ավագ դպրոցականի ապագա սոցիալական դերը հասարակության մեջ: Եվ հենց այդ կանխագուշակումը, ուղղվածության ձևավորումը և սոցիալական կողմնորոշումն է որոշում, թե վաղը ավագ դպրոցականը ինչ պետք է անի, որտեղ և երբ պետք է անի:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Մանուկյան Ա. Մ., Մանուկյան Մ. Մ.**, Մանկավարժական տեխնիկա և տեխնոլոգիա, Երևան, «Ձանգակ 97», 2000:
2. **Մանուկյան Մ. Մ., Բաբայան Գ. Ա.**, Մանկավարժական ռոմանտիկան աշակերտական ինքնավարության պայմաններում (առաջին մաս), Երևան, «Բարձրագույն դպրոց», 1992:
3. **Սուքիասյան Կ. Ս.**, Ընտանեկան դաստիարակությունը որպես անձի ձևավորման ու զարգացման գործոն, թ/ա, Երևան, 2004:
4. **Выгодский А. С.**, Развитие высших психических функций, М., изд., АПН, 1960.
5. **Вебер Г. В.**, Кризисы любви, М., "Институт психологии", 2001.
6. **Остранчук С. В.**, Негативное окрашенные роли у детей, Актуальные проблемы социально-психологического здоровья. (Материалы 2-го международного конгресса "Молодое поколения 21-го века, Минск, 3-6 ноября, 2003, с.107-108).

OF SENIOR SCHOOL SOCIAL ORIENTATION FORMING PECULIARITIES IN MODERN FAMILY

**N. ARAQELYAN**

Summary

This article is spoken of about the social trend of theoretical problems at senior school, about the social role of the family, about the features of forming social trends and their technological motivations on the base of reaserches.

## «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱՎ\*

### Անահիտ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Մխիթար-Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի  
մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցող

**Ատենախոսության թեման՝** Սոցիալական մանկավարժությունը սոցիալական դաստիարակագիտությամբ փոխարինելու հիմնախնդիրը

**Գիտական ղեկավար՝** Սերգեյ ՄԱՆՈՒԿՅԱՆՆ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր



Լույս է տեսել Լ.Պ. Կրիվշենկոյի «Մանկավարժություն» բուհական նոր դասագիրքը՝ առանձին ներկայացված «Սոցիալական մանկավարժություն» բաժնով, որը ստիպում է այդ բաժնի բովանդակությունը նորից դարձնել քննարկման առարկա և զուգահեռներ անցկացնել «սոցիալական մանկավարժ» և «սոցիալական աշխատող» հասկացությունների միջև, քանի որ այս դասագրքում նույնն է ներկայացվում սոցիալական մանկավարժի մասին, ինչը որ կար 2004 թ. հրատարակված դասագրքում:

Սոցիալական մանկավարժության մասին այստեղ ևս գրվածը կարդալիս, ակամայից ուզում ես բարձրաձայնել, որ այդ ամենը դարձյալ վերաբերում է սոցիալական դաստիարակությանը ու սոցիալական դաստիարակին և ոչ թե սոցիալական մանկավարժին ու սոցիալական դաստիարակությանը, ինչպես որ արվում է այս դասագրքի նախկին և այսօրվա օրինակներում, օգտագործելով «սոցիալական մանկավարժ» ոչ համարժեք հասկացությունը:

Երեք համահեղինակների գրած այս դասագրքում սկզբից խոսքը ի օգուտ սոցիալական դաստիարակի մասին է, քանի, որ այդտեղ սոցիալական դաստիարակության հարցերի քննարկումը վերագրվում է Դենոկրիտին, Պլատոնին և Արիստոտելին: Փաստորեն անտիկ աշխարհում գործունեության այդ բնագավառը համարվել է դաստիարակներին պատկանող (2, էջ 392): Նրանք, ինչպես և հետագայում Յան Ամոս Կոմենսկին, Ջոն

Լոքը, ժան-ժակ Ռուսոն չեն օգտագործել «մանկավարժ» բառը:

Ի օգուտ սոցիալական դաստիարակի է խոսում նաև այն, որ ըստ այդ երեք հեղինակների, 20-րդ դարի սկզբում գերմանացի փիլիսոփա Պ.Նատորպը, լինելով սոցիալական մանկավարժության հիմնադիրներից մեկը, կոչ էր անում ստեղծել դաստիարակչական միություններ: Յետաքրքիրն այն է, որ նա մտածում էր դրանց միջոցով ապահովել հասարակության համընդհանուր մանկավարժացումը: Ուրեմն ստացվում է, որ ըստ նրա, այդ մանկավարժացման գաղափարը հնարավոր կլիներ իրականացնել դաստիարակչական միությունների գործունեությամբ, որն էլ նա անվանեց սոցիալական մանկավարժագիտություն (2, էջ 392-393): Ուրեմն նա սոցիալական մանկավարժական գործունեությունը ձգտում է իրականացնել դաստիարակչական միությունների միջոցով, որն արդեն վկայում է, որ խոսքը դարձյալ դաստիարակի մասին է: Տրամաբանությունը պահանջում է այս դեպքում ևս խոսել սոցիալական դաստիարակության մասին:

Այստեղ սոցիալական մանկավարժությունը իրականում համարվում սոցիալական դաստիարակությունը հետազոտող գիտություն, դաստիարակություն, որն իրականացվում է հատուկ այս նպատակներով ստեղծված կազմակերպություններում, ինչպես և այն կազմակերպություններում, որոնց համար դաստիարակությունը հիմնական գործառույթ է (2, էջ 394):

Բայց սա արդեն մանկավարժական գործունեության բնագավառը չէ, քանի որ ուսումնական հաստատությունների շրջանակներում չի գտնվում: Նշված գործունեության ոլորտում չկա մանկավարժական գործընթաց:

Ջարմանալին այն է, որ սոցիալական մանկա-

\* Ներկայացվել է 28.02.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

վարժագիտությունը դիտարկվում է որպես մանկավարժագիտության մի բնագավառ, որը հետազոտում է սոցիալական դաստիարակությունը: Ինչպես որ մանկավարժագիտությունը համարվում է գիտություն դաստիարակության մասին, սակայն իր առարկայի անունով չի կոչվում, այնպես էլ այստեղ է կատարվում: Եթե սոցիալական մանկավարժագիտությունը ուսումնասիրում է դաստիարակությունը, ապա ինչու՞ նա իր առարկայի անունով չի կոչվում սոցիալական դաստիարակագիտություն:

Որ սոցիալական մանկավարժագիտությունը պետք է փոխարինվի սոցիալական դաստիարակագիտությամբ, հաստատվում է նաև այստեղ ներկայացված այդ մանկավարժագիտություն կոչվածի կատեգորիաների բովանդակությամբ: Դրանք են, հատկապես սոցիալ-մանկավարժական գործունեությունը և սոցիալական դաստիարակությունը:

Ըստ այդտեղ ներկայացվածի, սոցիալ-մանկավարժական գործունեությունը պրոֆեսիոնալ (մասնագիտական) գործունեության տարատեսակ է՝ ուղղորդված օգնելու անձնավորությանը նրա սոցիալականացման գործընթացում, որպեսզի նա յուրացնի սոցիալ-մշակութային փորձը: Դրա համար ստեղծվում են հասարակության մեջ ինքնաիրացվելու պայմաններ: Բայց, չէ որ այլ ուսումնական ձեռնարկից (1, էջ 105) վերցված և այստեղ ներկայացված ըստ այդ բնորոշման, հասարակության մեջ նման պայմաններ ստեղծելը մանկավարժական գործունեության խնդիրների թվին չի պատկանում:

Այնուհետև այս դասագրքի հեղինակները ներկայացնում են սոցիալ-մանկավարժական գործունեությունը իրականացնողի գործառույթները: Այդ մանկավարժները, ըստ դասագրքի հեղինակների, աշխատում են ընտանիքում՝ օգնելով նրան նպաստներ և կենսաթոշակ, աշխատանքային, հարկային, բժշկական և այլ արտոնություններ, ինչպես և մանկական սնունդ ստանալու գործերում (2, էջ 398): Ինչպես տեսնում ենք, այստեղ չկա մանկավարժական գործունեություն:

Սոցիալ-մանկավարժական գործունեության նպատակներից է համարվում զբաղվածության բնագավառում կատարվող աշխատանքը. բացահայտվում են զբաղվածության ընթացիկ և քուղարկված (լատենտ) տեսակները:

Այս մասին գրելիս հեղինակները ներկայացնում են նաև սոցիալական աշխատողի գործունեությունը՝ փաստորեն դա էլ ընդգրկելով սոցիալ-մանկավարժական գործունեության մեջ, որը ճիշտ չէ, քանի որ այդ աշխատանքն արդեն որևէ կապ չունի անգամ դաստիարակագիտության հետ, որի մասին կարելի է խոսել, եթե քննարկվի սոցիալական աշխատողի և սոցիալական ման-

կավարժի փոխհարաբերության հարցերը՝ պայմանավորված սոցիալական դաստիարակի աշխատանքի բովանդակությամբ:

Սոցիալ-մանկավարժական գործունեության նպատակներից է համարվում նաև երեխաների սոցիալական և կանանց շահերի պաշտպանությունը, ինչպես և հաշմանդամների աշխատանքի տեղավորման և նրանց կենցաղի նկատմամբ դրսևորվող հոգատարությունը: Քանի որ այստեղից սկսված, այս դասագրքում արդեն ներկայացվում է սոցիալական աշխատողի գործունեության ուղղորդվածությունը, հարկ համարվեց ասել, որ այս հարցերը որևէ կապ չունեն մանկավարժական գործունեության հետ:

Մեր կարծիքով, 2012 թ. նույն հեղինակների հրատարակած «Մանկավարժագիտություն» դասագրքում ևս, ինչպես նախկինում լույս տեսածում, նույնացվում է սոցիալական կոչվող մանկավարժը սոցիալական աշխատողի հետ, քանի որ գրվում է. «Ներկայացնենք սոցիալական մանկավարժի և սոցիալական աշխատողի գործունեության ուղղվածության համառոտ բնութագիրը», որով փաստորեն նույն գործունեությունն են վերագրում նրանց, այն դեպքում. երբ նրանց գործունեության տեսակներն արմատականորեն տարբերվում են միմյանցից:

Այդ բնութագիրը բովանդակվում է հետևյալը. «դրամական մուծումներ (նպաստ, թոշակ), աշխատանքային, հարկային, բնակարանային, բժշկական և այլ արտոնություններ, մանկական անվճար սնունդ, սոցիալական սպասարկում հոգեբանական, իրավաբանական, մանկավարժական կոնկրետ օգնություն, խորհրդատվություն» (3, էջ 398): Բայց այս նույնացումն արդեն խոսում է այն մասին, որ այս դեպքում չկա մանկավարժական գործընթաց, այլ առկա սոցիալական աշխատանքը:

Որ կա ոչնչով չհիմնավորված նույնացումը, բացահայտվում է նաև հետևյալ տողերում. «Սոցիալական աշխատողն ու սոցիալական մանկավարժն իրականացնում են հոգեբանական աջակցություն անհատական խորհրդատվության շրջանակներում, քննարկելով կենսական նշանակություն ունեցող կոնկրետ իրադրությունները՝ որոշում են ընտանիքի անդամների համար աշխատանք գտնելու հետագա որոնումների ընթացքը: Բացի այդ, սոցիալական մանկավարժն ու սոցիալական աշխատողը հաճախորդին տեղեկատվական խորհրդատվություն են տալիս աշխատանքային ազատ տեղերի և այն մասին, թե որտեղ կարող են ստանալ ուսուցում և վերապատրաստում» (3, էջ 399):

Ուրեմն, «սոցիալական մանկավարժ» հասկացությունը չի համապատասխանում իր բովանդակությանը, քանի որ նրանով չի նշանակվում ման-

կավարժական գործունեություն իրականացնողը:

Սոցիալական մանկավարժագիտության մյուս կատեգորիան է համարվում սոցիալական դաստիարակությունը: Այդպես է անվանվում անձնավորության հաջող սոցիալականացման համար անհրաժեշտ՝ սոցիալականորեն նշանակալի որակների ձևավորման նպատակաուղղված գործընթացը (3, էջ 402): Այդ դաստիարակության համար որոշված են այնպիսի նպատակներ, որոնք աղերսներ չունեն մանկավարժական գործունեության հետ: Դրանցից են. նպաստել անձնավորության անհատականության կայացմանը՝ դրսևորելով տեղեկատվական և գործնական օգնություն, նպաստել անձնավորությանը՝ սեփական կյանքի կազմակերպման հարցում նրա տարիքային բոլոր շրջանների ընթացքում, կոնկրետ օգնություն ցուցաբերել մարդուն սոցիալականացման ճգնաժամային իրադրություններում, ինչպիսիք են՝ սեռադերային, ընտանեկենցաղային, պրոֆեսիոնալ-աշխատանքային, քաղաքացիական, սոցիալ-իրավական, հոգեկան և նման այլ իրադրությունները (2, էջ 402):

Կարիք չկա ասելու, որ այստեղ նշվածները չի կարելի մանկավարժի գործունեությանը վերագրել և ընդգրկել նրան իրեն չվերաբերող գործունեության մեջ, որովհետև դա ակնհայտ է:

Սոցիալական մանկավարժագիտության մյուս կատեգորիան է համարվում սոցիալական ուսուցումը: Այդպես է անվանվում անձնավորության սոցիալականացմանը նպաստող սոցիալական

գիտելիքների փոխանցման և սոցիալական կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակաուղղորդված գործընթացը (2, էջ 403): Այստեղ ասվում է, որ, սովորելով կրթական հաստատություններում, անձնավորությունը ստանում է անհրաժեշտ գիտելիքներ, միաժամանակ ձեռք է բերում սոցիալական գիտելիքներ, կարողություններ, արժեքներ է յուրացնում և նպաստում է սեփական փորձի ձևավորմանը: Փաստորեն անհայտ է մնում, թե կրթական հաստատությունում ո՞վ է դրանց ձևավորմամբ զբաղվում և ինչպե՞ս: Բոլոր դեպքերում խոսքը դաստիարակչական գործունեության մասին է, հետևաբար դարձյալ մտնում ենք դաստիարակագիտության ոլորտը:

Անփոփելով ասվածը այս նոր դասագրքում ներկայացված նյութերի մասին՝ կարելի է պնդել, որ այստեղ սոցիալական մանկավարժը իրականում սոցիալական դաստիարակն է, իսկ սոցիալական մանկավարժություն կոչվածն էլ իրականում սոցիալական դաստիարակագիտություն համարվելու բոլոր հիմքերն ունի:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Андреева Г.М.**. Социальная психология, М., “Наука”, 2004, 531 с.
2. Педагогика. Под ред. Крившенко А.П, М., “Проспект”, 2004, 432 с.
3. Педагогика. Под ред. Крившенко А.П, М., “Проспект”, 2012, 432 с.

## THE CONCEPT OF ‘SOCIAL PEDAGOGY’ AS A SUBJECT FOR DISCUSSION

**ANAHIT PETROSYAN**

### Summary

This paper presents a comparison between the concepts of ‘social pedagogue’, ‘social educator’ and ‘social worker’. Consecutively, the paper highlights the facts that despite multiple re-prints of the ‘Pedagogy’ textbook by L.P. Krivshenko, the section ‘Social Pedagogy’, again, discusses the subject of social education. The paper argues that there are necessary conditions in place, and there is a pressing need to rename the so-called science of ‘Social Pedagogy’ to the science, which discusses social education.

# ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱԳՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ\*

## Անուշ ՂՈՒԿԱՍՅԱՆ (նկարում)

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի «Անգլերենի հաղորդակցման» ամբիոնի դասախոս

## Սիրան ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի «Անգլերենի հաղորդակցման» ամբիոնի դասախոս



Օտար լեզուների միջոցով միջմշակութային կրթության նպատակը սովորողներին մշակույթների երկխոսությանը պատրաստելն է:

Իրականում, հայ սովորողների մեծ մասը լայն հնարավորություններ չունի ուսումնառության գործընթացում անմիջականորեն շփվելու օտարալեզու իրենց հասակակիցների կամ տարիքային այլ խմբերի հետ: Սա այն պատճառներից մեկն է, որի հետևանքով սովորողները պատրաստ չեն հաղթահարել հաղորդակցության ժամանակ անխուսափելիորեն հանդիպող հոգեբանական, լեզվական և սոցիալ-մշակութային դժվարությունները:

Միջմշակութային գիտելիքները օտար լեզուներ սովորողների ընդհանուր իրազեկության բաղադրիչ են և նպաստում են անհատի բազմակողմանի զարգացմանը:

Ճանաչել և հարգել այլոց մշակույթը, ամենից առաջ, նշանակում է ճանաչել սեփական մշակույթը և անկողմնակալ վերաբերմունք դրսևորել մարդկային քաղաքակրթության մեջ հարազատ և ոչ հարազատ մշակույթների ներդրած ժառանգությունների հանդեպ:

Միջմշակութային գիտելիքները կոչված են զարգացնելու սովորողների մշակութաբանական կարողությունները, նրանց նախաձեռնողական, գիտական և տեխնոլոգիական ունակությունները:

Հարկավոր է սովորողներին խթանել նաև գնահատելու և արժևորելու օտար մշակույթի տարբեր դրսևորումները ոչ թե այն ընդօրինակելու, այլ մշակույթների երկխոսությունը զարգացնելու նպատակով:

Վերջին ժամանակներս բազմաթիվ հետազոտություններ են արվում միջմշակութային կրթության բովանդակության և խնդիրների վերաբերյալ բարեփոխումներ կատարելու նպատակով: Նման հետազոտությունները նախադրյալներ են ստեղծում համակարգելու մշակութաբանական ուղղվածությունն ունեցող առաջադրանքները, որոնք նպատակաուղղված կլինեն միջմշակութային գիտելիքների յուրացմանը, մշակութաբանական կարողությունների ձևավորմանը, ինչպես նաև անձի որոշակի որակների և ունակությունների բացահայտմանը: Տեղին է նշել, որ, ցավոք, մինչև այժմ դեռևս մշակված չէ մշակութաբանական առաջադրանքների գիտականորեն հիմնավորված տիպաբանություն, ուստի նման առաջադրանքների համակարգման խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ոչ միայն հենվել հայրենական և արտասահմանյան մեթոդիստների կողմից առաջարկվող առաջադրանքների վրա, այլ նաև վերլուծել օտար լեզվի և երկրագիտության դասագրքերում և ձեռնարկներում տեղ գտած մշակութաբանական առաջադրանքների համակարգը: Ամենից առաջ դա ենթադրում է բնութագրել նման առաջադրանքները, փաստարկել դրանց ուղղվածությունը և խմբավորել: Գիտական հետազոտությունները և միջմշակութային կրթության տեսական հիմունքները թույլ են տալիս մշակել գիտամեթոդական նմուշներ, որոնք կմիա-

\* Ներկայացվել է 24.01.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

վորեն օտար լեզվի և ուսուցանվող լեզվի երկրի մշակույթի ուսումնասիրությունները:

Միջմշակութային գիտելիքների յուրացմանը նպաստող առաջադրանքների և թեմատիկայի ընտրության համար անհրաժեշտ է առաջնորդվել մշակույթների երկխոսության համատեքստում օտար լեզվով հաղորդակցման ուսուցման սկզբունքով<sup>1</sup>, որը սոցիալ-մշակութային կարևոր սկզբունքներից մեկն է համարվում: Վ. Վ. Սաֆրոնովան առաջարկում է ուսումնական առաջադրանքների ընտրության և համակարգման հետևյալ սկզբունքները.

1. Սովորողների հարաճուն զարգացման ճանաչողական, հաղորդակցական, հուզարտահայտչական և գեղագիտական սկզբունք:

2. Սոցիալ-մշակութային և լեզվամշակութաբանական կրթության փոխկապակցվածության սկզբունք:

3. Ուսուցման խնդրառու ձևերի գերակայության սկզբունք:

4. Մշակութաբանական կրթության և ինքնակրթության հաշվեկշռության սկզբունք:

Ուսումնական ձեռնարկներ կազմելիս պետք է շատ հստակ գիտակցել, թե օտար լեզուների ուսուցման գործընթացում, սովորողների ձեռք բերած գիտելիքները և կարողությունները որքանով են իրապես նպաստում նրանց սոցիալ-մշակութային աշխարհընկալման հարստացմանը և օտար լեզվով միջմշակութային հաղորդակցությանը:

Ժամանակակից երկրագիտական և օտար լեզուների ուսումնական գրականության մեթոդական վերլուծությունը ցույց է տալիս, որ շատ հեղինակներ շեշտը դնում են պատմական և աշխարհագրական փաստերի վրա, այլ ոչ թե ուսումնասիրվող լեզվի երկրի սոցիալ-մշակութային առանձնահատկությունների, սովորույթների ու ավանդույթների վրա: Սովորողներին առաջարկվող այնպիսի առաջադրանքներ, ինչպիսին են Read and retell the story. Describe the geographical position of the country. Read and answer the questions նպատակաուղղված են միայն երկրագիտական տեքստի մեխանիկական վերարտադրմանը: Նման առաջադրանքները ավելի շատ սովորողների ուշադրությունը բեռնում են անգլախոս աշխարհագրության և պատմության, նրանց քաղաքական, կրթական համակարգի մասին տեղեկություններ ստանալու վրա և չեն ձևավորում մշակութաբանական տեղեկությունները հավաքագրելու, համակարգելու և մեկնաբանելու կարողություններ, ինչպես նաև Read and discuss, describe differences between a language and a dialect տիպի առաջադրանքներ, որոնք գուցե

փաստերը ընդհանրացնելու, դասակարգելու, համեմատելու, հակադրելու կարողություններ: Ճիշտ է կան նաև Read and discuss, describe differences between a language and dialect տիպի առաջադրանքներ, որոնք գուցե և խթանում են սովորողներին մտքեր փոխանակելու, բայց չեն նպաստում բանավեճեր վարելու, կոնֆլիկտային իրավիճակներում ճիշտ վարքագիծ դրսևորելու վայելուչ օրենքների իմացությանը: Հետևաբար այս կարգի առաջադրանքների կատարումը հանգեցնում է նրան, որ սովորողներ ստանում են միայն որոշ երկրագիտական գիտելիքներ, բայց անկարող են դրանք գործնականորեն կիրառել՝ լուծելու համար սեփական ճանաչողական և հաղորդակցական նպատակները: Մինչդեռ, առաջին հերթին, ուսումնական երկրագիտական ձեռնարկները պետք ընդգրկեն տարբեր աստիճանի բարդության այնպիսի խնդրահարույց մշակութաբանական առաջադրանքներ, որոնք կզարգացնեն սովորողների միջմշակութային և հոաղորդակցական կարողությունները:

Անհրաժեշտ է մշակել առաջադրանքների այնպիսի համակարգ, որն իր մեջ ներառի միջմշակութային գիտելիքների հմտություններ և կարողություններ, ինչպես նաև լեզվական դժվարություններ ներկայացնող բառեր և արտահայտություններ:

Լեզվական տարբերությունները հավասարապես կարող են թյուրիմացություններ ստեղծել տարբեր մշակույթների պատկանող անձանց միջև: Իր «It shost ilquide to English Style» աշխատության մեջ, Ալան Վարները նկատում է, որ բառերի, նրանց ծագման, նրանց փոփոխական սահմանումների ուսումնասիրությունը շատ բան է հաղորդում տվյալ լեզվով խոսող մարդկանց և նրանց մտածողության մասին: Օրինակ անգլերեն club բառը ֆրանսիացիները չեն կարողացել թարգմանել և որդեգրել են անգլերեն բառը, սակայն այլ արտասանությամբ: Այսինքն՝ նման բառերը այն հասկացություններն են, որոնք գոյություն ունեն միայն մեկ մշակույթում: Կան նաև բառեր, որոնք տարբեր մշակույթերի համատեքստում ունեն տարբեր նշանակություններ: Գերհարդ Մալթզեկը<sup>2</sup> բերում է հետևյալ օրինակները. II համաշխարհային պատերազմի ժամանակ partnership բառը ամերիկացիների և բրիտանացիների կողմից տարբեր կերպ էր ընկալվում: Ամերիկացիների մոտ այն ընկալվում էր որպես մասնագիտական բնույթի հարաբերություն, մինչդեռ բրիտանացիների համար այն հավասարազոր հարաբերության իմաստ էր արտահայտում: Կան մեկ այլ օրինակ. Compromis բառը բրիտանացիների համար դրական կոնոտացիա (հարանշա-

նակություն) ուներ, իսկ ռուսների համար այն մշակակուն էր каустылацая (անձնատուրություն, ձախողում): Նշված օրինակները հավաստում են, որ լեզվական և մշակութային տարբերությունները կարող են ծնել հակադրություններ, անհամաձայնություններ, փոխադարձ անըմբռնողություն, հետևաբար և կարևոր բանակցությունների ձախողում:

Ինչպես նշում է Ռոն Սքոլոնը<sup>3</sup>. «Լեզվի երկհամաստ բնույթը համարվում է միջմշակութային հաղորդակցության դժվարությունների ամենախոշոր աղբյուրներից մեկը»: Լեզվական երկհամաստությունը կարող է դրսևորվել տարբեր մակարդակներում (բառ, նախադասություն, խոսույթ), և երբեք չի կարելի լիովին վստահ լինել, որ ճիշտ ես ընկալում խոսակցիդ: Հենց այստեղ է հաղորդակցության ողջ բարդությունը:

Գործող ուսումնական օտար լեզուների ձեռնարկներում տեղ գտած առաջադրանքների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել մշակութաբանական առաջադրանքների հետևյալ բնութագրիչ ուղղվածությունները.

1. ճանաչողական
2. պրոբլեմատիկ
3. հաղորդակցական

Հենվելով գիտամեթոդական և ուսումնամեթոդական գրականության վրա (Ն. Իշխանյան, Ի. Պ. Տվերդիլյեբովա, Ա. Պ. Մինյար-Բելորուչևա, Վ. Վ. Սաֆանովա, Վ. Տոմալին, Ս. Ստեմպլեսկի), կարելի է խմբավորել և համակարգել միջմշակութային գիտելիքների յուրացմանն ուղղված առաջադրանքները: Նպատակահարմար է այդպիսի առաջադրանքները բաժանել ճանաչողական հարթությունների վրա ընկած առաջադրանքների և հաղորդակցական-գործաբանական առաջադրանքների, որոնք էլ կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

Առաջադրանքներ, որոնք ուղղված են՝

1. մշակութաբանական կարևոր տեղեկությունների իմաստավորմանը (information-oriented), օր՝ saysome words about, comment on the, true-false, discussion points և այլն:
2. մշակութային երևույթներում ներկայացված տեղեկատվության ինքնուրույն որոնմանը.
3. որոշ հասկացությունների և բառերի հետ կապված ստերեոտիպերի նույնականացմանը.
4. ներկայացված տեքստի հիմնական գաղափարի ընկալմանը.
5. խոսքում իդիոմատիկ (հատկաբանական) արտահայտությունների ճանաչմանը.
6. իմաստային ընկալման մակարդակում մանրությունների և տարբերությունների, առավելությունների և բացասական կողմերի վերհանմանը,

սեփական փորձի տեսակետի, տպավորությունների արտահայտմանը.

7. բառային միավորների ըմբռնմանը և խոսքում դրանց ակտիվացմանը.

8. ձեռք բերած գիտելիքների հաղորդակցական իրադրություններում ակտիվացմանը, ներառյալ միջմշակութային հաղորդակցության ժամանակ առաջացած հնարավոր կոնֆլիկտային իրավիճակները և դրանցից դուրս գալու ուղիները:

Առաջադրանքների խմբերը ևս կարելի է բաժանել ենթախմբերի.

- Լեզվամշակութաբանական ուսումնական
- Մշակութաբանա-ճանաչողական
- Խթանողական և տեղեկատվական
- Խնդրահատույց և փնտրողական
- Տեղեկատվության համակարգման և ընդհանրացման
- Փնտրողական և հետազոտական
- Ստեղծագործական:

Նշված առաջադրանքներից բացի ուսումնական ձեռնարկներում կան նաև ինտերակտիվ (փոխգործողության) առաջադրանքներ, որոնց նպատակն է ակտիվացնել ստացած գիտելիքները հաղորդակցական տարբեր իրադրություններում, օրինակ՝ ask for or give information, talk about, Act out the scenes և այլն: Նման առաջադրանքները կոչված են լուծելու իրական կյանքին մոտ գտնվող այն խնդիրները, որոնք ենթադրում են խոսքը համատեքստի մշակութային առանձնահատկություններին և հաղորդակցական բովանդակությամբ համապատասխան ձևակերպելու կարողություններ:

Մեր կարծիքով, լեզվական և մշակութային տարբերությունները շարժառիթ չպետք է հանդիսանան մախապաշարմունքների, ժողովուրդների իրարից հեռացման, թշնամանքի կամ անհանդուրժողականության, այլ ընդհակառակը՝ պետք է հարգանքի, ազնվության, փոխըմբռնման և համագործակցության հիմք հանդիսանան:

<sup>1</sup> **В. В. Сафонова.** Сб. Тезисов межвузовский научно-методической конференции. М., 2000, с. 231-234; **В. В. Сафонова,** Социокультурный подход к обучению языком международного общения, М., 2001, с. 200.

<sup>2</sup> Maletzke. (2001), Intercultural Communication Beijing University Press (Translation).

<sup>3</sup> **Scollon R. et Scollon, S. W.** (1995) Intercultural Communication: A. Discourse Approsch. Blackwell Publishers Ltd.

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Вовченко Н. Ф.** Великобританиа: Учебное пособие к курсу "Страноведение", Киев, 1997.
2. **Голицынский Ю.** Пособие по страноведению для



- старших классов гимназии и школ с углубленным изучением английского языка. Санкт-Петербург, 1999.
3. **Ишханян Н. Б.** Пути формирования лингво-социокультурной компетенции в интенсвном курсе обучения иностранному языку. М., 1996 МГУ им М. В. Ломоносова.
  4. **Костина Е. А.** О США: сборник текстов для чтения на английском языке для старшекласников средней школы. М., 1999.
  5. **Минья-Белоручева А. П., Седёлкина, Л. Н., Васютина Н. В.,** Соединенные штаты Америки: география, история, населения, культура, М., "Московский лицей", 1997.
  6. **Сафонова В. В., Ханнен-Ленг А.** Пособие по культуроведению. к учеб. пособию по англ. яз. для X-XI кл. шк. с углуб. изуч. англ. яз., в 2 ч., "Просвещение", 1995-1998.
  7. **David, L.** (2001) Doing Culture-Cross Cultural Communication in Action, Beijing: Foreign Languages Teaching and Research Press.
  8. **Du Rui Qing**, ed. (2004), Selective readings in Intercultural Communication, Xian Yiao Tong University Press.
  9. **Teng, X.** (2002) Ethnic Groups, Culture and Education, Nationalities Press.

---

THE SYSTEMATIZATION PROBLEMS OF THE TASKS REFERRING TO INTERCULTURAL KNOWLEDGE PERCEPTION

**ANUSH GHUKASYAN  
SIRAN PETROSYAN**

Summary

The article refers to the modern problems of teaching intercultural communication. In the given article we have analyzed the cultural tasks included in academic literature and revealed their expediency in the process of intercultural knowledge delivery and perception.

## СОВРЕМЕННЫЕ ПОДХОДЫ В ОРГАНИЗАЦИИ МУЗЫКАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ\*

Յ. Տ. ԹԱԴԵՎՕՅԱՆ



**Մ**ուзыкальное искусство – часть общей мировой культуры. Оно одновременно выступает как составной элемент общего процесса познания мира и общего развития человеческой культуры и в то же время является специфической формой эстетической деятельности. Музыкальное искусство органически связано с потребностью человека к духовному самовыражению. Многообразие видов и форм художественно-творческой деятельности человека соединяет его с Природой и осмосом. Действительно, музыка по своей природе полифункциональна, и в отношении к человеку является инструментом познания и самопознания, средством общения, а также источником наслаждения.

Музыка среди искусств занимает особое положение. Она стремится воссоздать ускользающую гармонию видимого и ощущаемого мира, благодаря ритмически и мелодически организованному сочетанию звуковых образов, сообщающих о нескончаемом богатстве духовной жизни Человека, скрытых чаяниях его души (1, с.17).

Однако, веками создававшееся музыкальное искусство высокой духовной направленности ныне оказалось в сложном, противоречивом положении. В условиях вхождения в информационную цивилизацию и рыночную экономику, современное развитие социума столкнулось с проблемой утраты многих традиционных основ (2, с. 52). Это привело к повсеместному снижению значимости культурного статуса музыки. В значительной мере она становится лишь звуковым фоном других видов деятельности.

В данной ситуации значительно возрастает

роль музыкального образования, осуществляемого двумя путями:

- 1) в рамках соответствующего предмета общеобразовательной школы;
- 2) в русле специальной образовательной системы.

Сегодня речь не идет о массовом музыкальном воспитании детей в рамках общеобразовательной школы, в духе идей советской музыкальной педагогики. Сейчас, приоритетной педагогической задачей общества является претворение в системе образования и его структуре общечеловеческих задач по формированию и сохранению компонентов духовной культуры. Таким образом, социально важна потребность научной разработки методологических и теоретических основ, концептуальных линий развития, содержания и функций музыкального образования, как фундамента развития музыкальной культуры общества в целом.

Актуальность данной проблемы определяется личностно-ориентированной парадигмой современной педагогики, дающей мощный стимул для использования всей полноты психолого-педагогических возможностей обучения. Использование возможностей общения (коммуникативная функция) в процессе профессиональной подготовки приобретает особое значение в развитии и становлении личности музыканта. Сегодня вопросы общения между учителем и учащимися усложняются своеобразием переходного момента, а смена ценностей часто вынуждает искать новые способы общения. В отличие от прежних поколений педагогов, которые могли сосредоточить все внимание на профессиональной подготовке студентов, сегодняшние преподаватели сталкиваются с проблемами особого рода: это те особенности развития, которые сделали их студентов трудновоспитуемыми, тревожными, агрессивными.

Гуманизация образования применительно к процессу общения преподавателя и студента

\* Արվախաղվել է 20.02.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

предполагает развитие диалога и сотрудничества.

Общение с преподавателем по специальности, взаимодействие обучающего и обучаемого имеет важное значение в формировании и развитии личности музыканта.

Развитие личности, творческой индивидуальности будущего музыканта-исполнителя, составляющее главную направленность общения, требует от педагога проникновения во внутренний мир студента (3, с. 34). Воспитательные, развивающие возможности общения усиливаются благодаря эмоциональному воздействию музыки, являющейся главным средством коммуникации в процессе музыкального обучения. Именно эмоциональный характер общения в процессе музыкально-педагогической деятельности создает атмосферу творческого увлечения, направляя мысли и чувства общающихся, сплачивая действия и способствуя их развитию. В этой связи вопросы организации взаимодействия преподавателя и студента в процессе учебно-творческой деятельности, обеспечивающей эффективное развитие личности музыканта, приобретают особую актуальность. Необходима специальная организация взаимодействия преподавателя и студента, его перестройка в процессе обучения, а также продуктивное взаимодействие студентов друг с другом. Формирование личности музыканта в значительной степени зависит от осознания им целей и смыслов учения, собственной роли и роли преподавателя в этом процессе, а также от направленности взаимодействия на развитие мотивационно-потребностной, познавательной, эмоциональной сферы, коммуникативных умений и навыков будущего специалиста. Эффективность формирования личности будущего музыканта требует учета факторов, значимых для роста личности студента, опыта общения, характера взаимоотношений с другими студентами, педагогами, возрастными, индивидуально-психологическими особенностями студента, социально-психологической ситуацией в семье и т.д.

Само собой разумеется, что идея обновления подходов к музыкальному образованию вообще и психолого-педагогическим условиям формирования личности музыканта в частности, побуждает к поиску новых форм и методов работы, в том числе и пересмотру программного материала. концепция модернизации музыкального образования выдвигает новые критерии качества образования. Выпускник соответствующего музыкального вуза (или же факультета) должен получить

систему универсальных знаний, стать зрелой личностью, обладая высокой креативностью мышления. Базируясь на системе музыкального образования прошлых исторических этапов, освоив нетрадиционные формы организации учебной работы, в музыкальном образовании важнейшую роль отводится чувствам и эмоциям, комплексному воздействию на учащихся (на их психику, моторику, физиологию), единству эмоционального, художественного и сознательного отношения к музыке. Эффективность уроков зависит не только от программы и методик, но и, что немаловажно, от особенностей личности педагога, его профессиональных знаний и педагогического мастерства. Современная программа непременно должна отвечать следующим требованиям:

- 1) направление работы по интеграции художественных дисциплин,
- 2) признание равноправными всех видов музыкальной деятельности, а не только выбранной музыкальной специальности,
- 3) обязательное включение таких важных составляющих, как духовная(церковная) музыка и фольклор,
- 4) во время учебной работы, целью которой является "усвоить", "повторить", "закрепить" также важно "пережить", "оценить", "создать", "выразить". Необходимо, чтобы отношения в системе "учитель-ученик" были с приставкой "со": сопереживание, сотрудничество, соучастие, сотворчество.

Основной задачей развивающего музыкального образования есть развитие ума и воли учащихся, что в свою очередь является надежной базой для освоения знаний, умений и навыков.

Систему можно построить на следующих дидактических принципах:

- 1) обучение на высоком уровне сложности,
- 2) значительная роль теоретических знаний,
- 3) изучение программного материала быстрым темпом,
- 4) сознательное усвоение учебного материала.

В педагогической деятельности педагога-музыканта применяются практически все общепедагогические методы, выполняющие обучающую, развивающую, воспитывающую, побуждающую (мотивационную) и контрольно-коррекционные функции. Работая по программе системы развивающего образования, выбираем методы (как общепедагогические, так и специфические), которые способствуют развитию музыкально-слуховых представлений, творческой фантазии, воображения, исполни-

тельской выразительности. Разнообразие форм и методов работы, их умелое варьирование на уроке позволяет вовремя переключить внимание, поддержать интерес, предупредить утомление.

Очень важно на уроке оптимально сбалансировать поведенческий и эмоциональный компоненты. Для этого необходимо исключить следующие ситуации:

1) эмоциональная и информационная перегрузка,

2) двигательная перегрузка и вереницы однообразных упражнений без осознанной мотивации.

Каждый урок в системе музыкального образования выполняет свою строго определенную роль, решает конкретную задачу. Педагогический самоанализ каждого проведенного урока позволяет вовремя скорректировать цели и задачи, побуждает искать новые формы и методы. Во время проведения урока необходимо уделить большое внимание сохранению его целостности; очень важным аспектом является его кульминационная часть, не менее важна успешность коммуникации через вербальные и невербальные средства общения. Только после такого глубокого внутреннего осмысления урока можно ответить на основной вопрос: достиг ли урок своей цели?

Главная задача заключается в том, что с первых же уроков мы исполняем музыку, а не только изучаем правописание отдельных нот. Вся программа занятий выстроена таким образом, что теоретические знания ученик (студент) получает из своего практического опыта, что наиболее продуктивно и целесообразно и способствует его полноценному и быстрому развитию. Просмотрев множество литературы, педагог отбирает наиболее интересное и полезное именно для данного ученика (студента), проявляя максимальную гибкость и проницательность, потому что

необходимое для одного ученика (студента) может оказаться бесполезным для другого. Чем шире кругозор педагога, яснее его представление о сильных и слабых сторонах своего студента, тем разумнее и целесообразнее будет подобран репертуар для него.

Музыкальная педагогика – искусство, требующее от посвятивших себя этой профессии, громадной любви, безграничного интереса к своему делу. Учитель игры на любом инструменте должен быть прежде всего учителем музыки, т.е. её разъяснителем и толкователем, а не просто заниматься с учеником технической зубрежкой. Он должен быть одновременно и теоретиком, и историком музыки, а так же учителем сольфеджио, гармонии. Педагог, которому доверено музыкальное образование, должен с самого начала интересно и увлекательно построить музыкальные занятия, потому что от него зависит станет ли музыка другом и радостным спутником учащегося, или же, он останется к ней равнодушным. Зажечь, заразить желанием овладеть языком музыки – главная задача педагога.

Одна из главных задач педагога – привести студента к самостоятельности мышления и методов работы, которые называются зрелостью, за которым начинается мастерство.

#### ЛИТЕРАТУРА

1. Смирнов М. С. Эмоциональный мир музыки. М., "Музыка." 1990.
2. Белобородова В. К. Методика музыкального образования. М., "Академия", 2002.
3. Шлянов Е. А., Котова И. Б. Развитие личности в обучении. М., "Академия", 2000.
4. Пиличаускас А. Познание музыки как воспитательная проблема. М., "Мирот", 1992.
5. Астафьев Б. В. Избранные статьи о музыкальном просвещении и образовании. Л., 1973.
6. Занков Л. В. Избранные педагогические труды. М., 1990.

ԵՐԱՃՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

#### Շ. Ս. ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

ՀԴՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի նվագարանների ամբիոնի ասիստենտ

Ամփոփում

Երաժշտական կրթության կազմակերպման հարցում կան տարբեր մոտեցումներ, որոնք վեր են հանում և բացահայտում են այս հարցի մի շարք կարևոր կողմերը և տալիս տարբեր լուծումներ: Եվ չնայած դրան, երաժշտական կրթության կազմակերպումը մնում է արդիական մահ մեր օրերում, քանի որ այն մեծապես հիմնվում է սոցիալ-հոգեբանական, ինչպես նաև տվյալ ժամանակաշրջանին բնորոշ պայմանների վրա: Հոդվածի կարևորությունը կրթության կազմակերպման մեթոդների որոնման մեջ է, որոնցում հաշվի են առնված վերոհիշյալ պայմանները:

## ՄԻՐԻԱՅԻ ԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ- ԹՅՈՒՆՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՐԱԿՏԻ ԵՐՐՈՐԳ ԳԱՍԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ\*

### Հմադի ՏԱՅԵՐ

*Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ*

**Ա**ռանցքային բառեր: Շարժողական ընդունակություն, ֆուտբոլային տարրեր, ֆիզիկոկուլտուրայի դաս, արտադասարանական պարապմունք:

Վերջին տարիներին նկատվում է Ռուսաստանի (B. A. Фетисов, 2003; M. Д. Кудрявцев u соавт., 2004; A. A. Головина с соавт. u др.) և մեր երկրի հանրակրթական դպրոցների սովորողների առողջական վիճակի և շարժողական պատրաստության վատթարացում:

Այս գործընթացները տարեցտարի սաստկանում են, ինչը բացատրվում է հանրակրթական դասերի չափազանց մեծ ուսումնական բեռնվածությամբ: Երեխաների շարժողական ակտիվության խրոնիկ պակասը, առկա էկոլոգիական իրավիճակը, համակարգչով չափից դուրս իրապուրվելը խոչընդոտում են նրանց նորմալ ֆիզիկական զարգացմանը և սպառնում առողջությանը:

Հետազոտության, դիտումների արդյունքները և մասնագետների աշխատանքային փորձը համոզիչ կերպով ցույց են տալիս, որ շաբաթական ֆիզիկական կուլտուրայի երկու դասը չի կարող ամբողջությամբ բավարարել երեխաների օրգանիզմի շարժվելու պահանջմունքները և արտադասարանական պարապմունքներ անցկացնելու խիստ անհրաժեշտություն է զգացվում (И. Г. Скачков, 1993; Ֆ. Գ. Ղազարյան, Ա. Գ. Ստեփանյան, 2010; И. Д. Мрыз, В. И. Пусу, 2011 u др.):

Հետևաբար կրիտիկական իրավիճակից դուրս գալու ուղիներից մեկը սովորողների ֆիզիկական դաստիարակության նկատմամբ նոր մոտեցումների մշակումն է: Մեր կարծիքով՝ դրան կարելի է հասնել շաբաթվա մեջ ֆիզիկական կուլտուրայի երրորդ դասի ավելացման հաշվին: Նմանատիպ կարծիք ունեն նաև ուրիշ հեղինակներ (M. Д. Кудрявцев с соавт., 2005; Ю. А. Коналов, 2011; Т. К. Вуленская, 2005; A. A. Головина с соавт., 2006 u др.):

Բազմաթիվ հետազոտություններում բազմիցս

ապացուցվել է կրտսեր դպրոցականների համար ֆիզիկական կուլտուրայի դասերի քանակը շաբաթվա ընթացքում մինչև 4-ի հասցնելը, ինչը նպաստում է նրանց առավել արտահայտված ֆիզիկական զարգացմանը և գերազանցող շարժողական պատրաստությանը (M. C. Авдеев, 2011; Н. Т. Лебедева, 2004; С. И. Петухов, 2000; Ֆ. Գ. Ղազարյան, Ա. Գ. Ստեփանյան, 2010):

Արդեն իսկ գոյություն ունեցող, ճիշտ է, դեռ սահմանափակ հետազոտությունների արդյունքում ցույց է տրվել, որ ֆիզիկական կուլտուրայի երրորդ դասը պետք է ուղղված լինի ընդհանուր ֆիզիկական պատրաստության ապահովմանը (И. К. Латыпов, В. И. Лукина, 2010; В. П. Лукьяненко, 2007; Ю. А. Копылов, 2004 u Պ.), օգտագործելով որևէ մարզաձև (B. К. Бальсевич, 2002; Գ. Ղազարյան, Ա. Գ. Ստեփանյան, 2010 և այլոք):

Սիրիայի և Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների աշխատանքային փորձի ընդհանրացման, ուսումնամեթոդական գրականության վերլուծության և մեր կողմից անցկացված հետազոտության արդյունքում հնարավոր է դառնում նշել, որ հանրակրթական դպրոցներում ֆիզիկական դաստիարակության այսօրվա համակարգում առկա են որոշ հակասություններ կապված ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման հետ: Այդ հակասությունը դրսևորվում է հետևյալում. առաջինը, երկու երկրներում գործող «ֆիզիկական կուլտուրա» առարկայի դպրոցական ծրագրերը ուղղված են աճող սերնդի ուսուցմանը, դաստիարակությանն ու առողջացմանը: Սակայն, ֆիզիկական կուլտուրայի շաբաթական երկու-երեք դասերը չեն կարող ապահովել սովորողների շարժողական ակտիվության օպտիմալ ծավալը, տարբեր սեռի և տարիքի երեխաների հիմնական շարժողական ընդունակությունների համակողմանի և ներդաշնակ զարգացումը: Եվ դա այն պատճառով, որ, օրինակ, Սիրիայում ֆիզիկական կուլտուրայի եր-

\* Ներկայացվել է 19.03.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

որոր դասը փոխարինվում է մեկ այլ առարկայի դասով: Երկրորդը, մյուս երկրների օրինակով դեռևս ամբողջովին չեն օգտագործվում լրացուցիչ ֆիզիկական վարժություններով և տարբեր մարզածներով արտադասարանական պարապմունքների հնարավորությունները:

Մեր կողմից անցկացված մանկավարժական գիտափորձը Սիրիայի կրտսեր դպրոցականների (1-4-րդ դաս.) օրինակով թույլ է տալիս կատարել մի շարք գործնական առաջարկություններ:

Սույն հետազոտության մեջ մեծ հետաքրքրություն է ներկայացնում ֆուտբոլային թեստերում եղած տեղաշարժերը, որոնց թվին են դասվում.

- 15 մ հեռավորությունից գնդակի վարում, վրկ.
- հարվածներ հեռավորությունից, մ.
- հարվածներ նպատակակետին, բալ:

Այս տվյալների վերլուծությունը չորս փորձարարական դասարանների տղաների և աղջիկների մոտ բերված են աղյուսակ 36-ում: Այստեղից կարելի է եզրակացնել, որ I-ից IV դասարան արդյունքները նկատելիորեն բարելավվում են: Այսպես, տղաների մոտ I-ից IV դասարան 15 մ գնդակի վարման ցուցանիշները բարելավվել են 1.04 վրկ., իսկ աղջիկների մոտ՝ 0.83 վրկ.:

Մանկավարժական գիտափորձի վերջում 8.8. մ աճել են տղաների հեռավորության հարվածների արդյունքները, իսկ աղջիկների մոտ՝ 4.7 մ: Աճել են նաև ճշգրտության հարվածների արդյունքները: I-ից IV դասարան հարվածի ճշգրտությունը տղաների մոտ աճել է 4 բալով կամ 2.6 անգամ, իսկ աղջիկների մոտ՝ 2.6 բալով կամ 2 անգամ:

Սինույն ժամանակ հաստատվել է, որ բոլոր երեք ֆուտբոլային թեստերում արդյունքների առավելագույն աճ նկատվում է I-ից III դասարան, հատկապես տղաների մոտ: Այս տվյալները թեստերի համաձայն կազմում է համապատասխանաբար 0.8 վրկ., 5.69 մ և 2.6 բալ (տես աղյուսակ 1):

Ինչ վերաբերում է տոկոսային արտահայտություններին, ապա գնդակի վարման արդյունքները տղաների մոտ աճել են 18, իսկ աղջիկների մոտ՝ 14%-ով: Հատկապես արտահայտված են հեռավորության հարվածները, աճը տղաների մոտ կազմում է 123.9%, իսկ աղջիկների մոտ՝ 2

անգամ քիչ: Եվ, վերջապես, դարպասներին հարվածների ճշգրտությունը փորձարարական շրջանում տղաների ու աղջիկների մոտ աճել է համապատասխանաբար 160 և 113 %-ով:

Անցնելով փորձարարական նյութի քննարկմանն ու ընդհանրացմանը և դրա հիման վրա վերլուծությանը՝ կարելի է կատարել մի շարք եզրակացություններ: Կարելի է նշել, որ ուսուցման սկզբը դպրոցում երեխայի կյանքում բարդ շրջան է, քանի որ տեղի է ունենում սոցիալական դիրքի, վարած գործունեության հերթափոխ և դասարանում անձնային հարաբերությունների հաստատում:

1. Հասանելիության, համակարգվածության, պահանջների աստիճանական մեծացման, դիտարժանության հայտնի դիդակտիկ սկզբունքների պարտադիր իրականացումը:

Այս սկզբունքներին համապատասխան արտադասարանական լրացուցիչ պարապմունքներում անհրաժեշտ է կրտսեր դպրոցականներին սովորեցնել, որ նրանք ճիշտ կատարեն բոլոր ֆիզիկական վարժությունները և ֆուտբոլի տեխնիկական տարրերը:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել բեռնվածության չափավորմանը, աստիճանաբար մեծացնելով պահանջները ուսունմասիրվող շարժողական գործողությունների արագության և ռազմավարության նկատմամբ: Այս առումով ուսուցիչը պետք է հմտորեն կրկնողության մեթոդից անցնի վարիտիվային, խաղային, հաճախակի անցնել պարզեցված պայմաններով մրցակցական մեթոդի: Հաշվի առնելով սովորողների պատրաստությունն ու հնարավորությունները՝ չի բացառվում նաև արտադասարանական պարապմունքների շրջանաձև մեթոդի կիրառումը:

2. Պարտադիր և լրացուցիչ արտադասարանական դասերի և պարապմունքների փոխկապակցության սկզբունքները: Հեղինակի կողմից հաստատվել է, որ ֆուտբոլի հիման վրա լրացուցիչ արտադասարանական պարապմունքների հաճախող կրտսեր դպրոցականները շատ հեշտությամբ և հաջողությամբ ներգրավվում են մանկապատանեկան սպորտի մեջ:

Աղյուսակ 1

Մասնագիտական ֆուտբոլային վարժությունների արդյունքները փորձարարական դասարաններում


Դասարանը	սեռը	գնդակի վարում, 15 մ, վրկ.			հեռավ. հարված, մ.			նպատակ., միավ.		
		միմչև	հետո	տարբ.	միմչև	հետո	տարբ.	միմչև	հետո	տարբ.
I	տղա	6.23	5.8	0.43	5.2	7.1	1.9	1.3	2.5	1.2
	աղջ.	6.49	5.94	0.55	6.0	6.9	0.9	1.7	2.3	0.6
II	տղա	6.20	5.39	0.81	7.2	9.9	2.7	3.0	3.9	0.9
	աղջ.	6.36	5.92	0.44	6.3	7.6	1.3	1.9	2.8	0.9
III	տղա	6.01	5.0	1.01	8.0	13.0	5.0	4.2	5.1	0.9
	աղջ.	5.94	5.31	0.63	7.1	8.6	1.5	2.4	3.3	0.9
IV	տղա	5.22	4.76	0.46	10.5	15.9	5.4	5.1	6.5	1.4
	աղջ.	5.63	5.11	0.52	9.6	11.6	2.0	4.0	4.9	0.9

Ուսումնամարզական և դաստիարակչական գործընթացի այսպիսի ուղղվածությունն իրականացնելու համար ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը պետք է օգտագործի հեղինակի կողմից մշակված և փորձարկված ֆիզիկական վարժությունների և ֆուտբոլի տեխնիկական տարրերի հատուկ համալիրներ:

**Մարզման օրինակելի կոնսպեկտ**  
 Պարապողների տարիքը՝ 8-10 տարեկան  
 Անցկացման վայրը՝ \_\_\_\_\_  
 Պարապողների քանակը՝ \_\_\_\_\_  
 Մարզման տևողությունը՝ 45 րոպե  
 Անհրաժեշտ գույք՝ գնդակներ, կոներ, ժիլետներ, 4 փոքր դարպաս:

Խնդիրները՝ 1. կատարելագործել տեխնիկա տակտիկական կոմբինացված մարզում

Խաղ 4:4 դիմաց փոքր դարպասներով, ազատ հպում



2 խմբով – խաղացողը գնդակով անցնում է 3 կոների միջով, 5 մ վարում փոխանցում կանգ մնած ընկերոջը, 5 մ եղնիկի ցատկ, 5 մ սպրին տերային վազք:

Վազք կոների միջով

գնդակի փոխանցում ընկերոջը

սպրինտերային վազք

եղնիկի ցատկ

2 խմբով (2 մեծ դարպասներ) 1x1 դի մաց հարվածներ դարպասին

- պաշտպանվողը պետք է թույլ չտա գնդակով խաղացողին անցնել նշված տա ռածության միջով, սկզբից պասիվ, հետո ակտիվ
- տեղերը փոխել ամեն կատարելուց հետո (8-10) անգամ

Խաղ քառակուսու մեջ 3x3 դիմաց 2 չեզոք խաղացող



**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. **Ա. Գրիգորյան**, Ֆուտբոլ: Պատանի ֆուտբոլիստների պարապմունքների կազմակերպման առանձնահատկությունները, Երևան, 2005:
2. **Ֆ. Ղազարյան, Ա. Գրիգորյան**, Ֆիզիկական դաստիարակության տեսություն, Երևան, 2003:
3. **Ս. Տիգրանյան**, Ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստությունը, Երևան, «Էդիթ Պրինտ», 2007:
4. **М. А. Годик**. Физическая подготовка футболистов, 2006.


SCIENTIFIC PRACTICAL MEANING OF 3<sup>RD</sup> CLASS ADDING OF PHYSICAL CULTURE IN SIRIAN ARAB REBUBLIC  
**H. TAHER**  
 Summary

Weinvestigated the moving abilities of Syria pupils, and mentioned the need of adding physical education bessons and extracurricular activities in football.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ\*

### Յմախոյի ՏԱՅԵՐ

Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ



Դպրոցական աշխատանքի պրակտիկան ցույց է տալիս, որ ֆիզիկական դաստիարակության՝ որպես ուսումնական առարկայի հնարավորությունները թերագնահատվում են: Այս ամենը բերում է նրան, որ աճող

սերնդի առողջական վիճակը, ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստության մակարդակը նվազում է, ինչն էլ բերում է անցանկալի հետևանքների:

Այսպես ցված է, որ հենց կրտսեր դպրոցական տարիքում է տեղի ունենում ֆիզիկական ընդունակությունների ինտենսիվ զարգացում, այս գործընթացի վրա նպատակաուղղված մանկավարժական ներգործությունը հատկապես հրատապ է: Կրտսեր դպրոցական տարիքն առավել նպատակահարմար է շարժողական ընդունակությունների մեծ մասի զարգացման համար (Ֆ. Գ. Ղազարյան, 1981, 2007; А. Туг, 1999; А. В. Волков, 1998; Ա. Պ. Մարտիրոսյան, 2006):

Չետաքրքրությունը նշված հիմնախնդրի լուծման նկատմամբ պայմանավորված է նրանով, որ ուժի, արագաշարժության, դիմացկունության զարգացման աստիճանը նկատելիորեն արտացոլում է մարդու առողջական վիճակը, քանի որ ուղղակիորեն կապված է աշխատունակության և մարզական նվաճումների հետ:

Պրակտիկայում ժամանակակից կրթական չափանիշները պահանջում են հանրակրթական դպրոցի կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակություն առարկայի առանձին բաղադրիչների արդյունավետ ներդրում՝ ի հաշիվ

դպրոցականների ֆիզիկական և շարժողական ներուժի զարգացման գիտականորեն հիմնավորված տեխնոլոգիաների:

**Չետազության նպատակը՝** Հայաստանի և Սիրիայի կրտսեր դպրոցականների շարժողական ընդունակությունների ցուցանիշների համեմատական վերլուծությունը և դրա մակարդակի բարձրացումն է՝ ի հաշիվ ոչ միայն արտադասարանական լրացուցիչ պարապմունքների կազմակերպման, այլև ընդհանուր ֆիզիկական պատրաստության բարձրացման հնարավորությունների ընդլայնման: Այդ նպատակով հետազոտվել են Հայաստանի և Սիրիայի կրտսեր տարիքի դպրոցականների շարժողական պատրաստության մակարդակները մանկավարժական բնույթի 6 թեստերի միջոցով: Նկատի ունենք՝

**1. Դիմացկունությունը** – վազք 6 րոպ.՝ հաղթահարվող վազքատարածության գրանցումով: Այս թեստով ստուգում ենք երեխաների մեծ լարվածության դիմացկունությունը (Հ. Հ. Թունանյան, 1996):

Ստացված արդյունքների համեմատական վիճակագրական վերլուծությունը (տես աղյուսակ 1) ցույց տալիս, որ տարբեր երկրներում ապրող, 7-10 տարեկան տղաների և աղջիկների դիմացկունության ցուցանիշները տարբեր են:

Վիճակագրական զենդերային տարբերություններն առավել արտահայտված են երկու երկրների առաջին դասարանցիների մոտ ( $P > 0,1\%$ ):

Պարզվում է, որ 1-4-րդ դասարանների՝ երկու երկրների տղաների մոտ դիմացկունությունը ավելանում է 12-12,6 %-ով: Սակայն Սիրիայի աղջիկների մոտ (IV դասարան) աճը մի փոքր մեծ է, քան նրանց հայ հասակակիցների մոտ:

Ստացված արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ կրտսեր դպրոցական տարիքի երեխաների դիմացկունության ցուցանիշների

\* Ներկայացվել է 29.02.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:



անհամաչափ է զարգացում: Տղաների մոտ դիմացկունությունն ավելի թույլ է զարգացած, իսկ հայ աղջիկների մոտ՝ մի փոքր դանդաղեցված, այսինքն՝ դիմացկունության ցուցանիշները տղաների մոտ բարձր է աղջիկների համեմատությամբ: Այս օրինաչափ երևույթը վերաբերում է թե՛ Սիրիայի, թե՛ Հայաստանի աշակերտներին:

**2. Ցատկունակությունը**, որն դիտարկվում է որպես արագաուժային ընդունակություն: Որպես վերլուծվող ցուցանիշի մոդել ուսումնասիրվել է տեղից հեռացատկը, որի արդյունքները բերված են աղյուսակ 2-ում:

**Դիմացկունության և ցատկունակության** ցուցանիշներում նկատվում է երկու երկրների երեխաների արդյունքների անշեղ աճ: Սակայն այս տեղաշարժերը միանման չեն տարբեր երկրներում բնակվող երկու սեռի դպրոցականների մոտ: Այսպես, օրինակ, տեղաշարժերի անկայուն փոփոխումը կայանում է նրանում, որ մի դեպքում տարիքից տարիք տարբերությունները փոքրանում են (երկու երկրների III-ից IV դասարանի տղաների մոտ), մյուսների մոտ աճի մեծությունները կտրուկ աճում են (Հայաստանի և Սիրիայի տղաներն ու աղջիկները):

Տարբերություններ նկատելի են նաև մյուս համեմատություններում: Այսպես, երկու երկրների տղաների մոտ տարբերությունը՝ ըստ դասարանների (I-ից IV դասարան) կազմում է համապատասխանաբար. 15.1-16.7-12.7 և 17.6 սմ, իսկ աղջիկների մոտ՝ 10.4-15.2-10.0 և 17.4 սմ (տես աղյուսակ 2):

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ թե՛ Հայաստանի և Սիրիայի I-IV դասարանների դպրոցականների ցատկունակության արդյունքների տարբերություններն (բացարձակ մեծություններում եղած տարբերությունները) այնքան էլ մեծ չեն, ապա դրանք վիճակագրորեն հավաստի են  $P > 0,1\%$  բոլոր չափումներում:

Նշված օրինաչափությունները բացահայտվել են ինչպես Հայաստանի, այնպես էլ Սիրիայի կրտսեր դպրոցականների արագաուժային ցուցանիշների աճի տեմպերի հաշվարկման ժամանակ:

**Սկանային ուժ**

Կրտսեր դպրոցականների ուժային ընդունակությունները համեմատվել են երկու ձեռքերի դաստակների մկանաուժի ցուցանիշներով (տես աղյուսակ 3):

Որպես տարիքային օրինաչափ երևույթ պարզվում է, որ երեխաների երկու դաստակների մկանաուժը 1-ից 4-րդ դասարաններում մեծանում է, որն երկու երկրների երեխաների (երկու ձեռքերի դաստակների) մկանաուժի համար դրսևորվում է անհամաչափ և ոչ միանման: Այսուհանդերձ, Հայաստանի կրտսեր դպրոցականներն

իրենց բացարձակ մեծություններով մի փոքր ուժեղ են իրենց սիրիացի հասակակիցներից, մինչդեռ այն հավասարաուժ է երկու սեռի երեխաների համար: Այս տարբերությունները տատանվում են աչ ձեռքի համար՝ 0,6-ից մինչև 2,3 կգ-ի սահմանում, իսկ ձախ ձեռքի դեպքում՝ 0,6-ից մինչև 1,5 կգ: Այս մեծությունները հատկապես տարբերվում են 3-րդ դասարանի աշակերտների մոտ: Վերջինս ապացուցվում է նրանով, որ ուժի ցուցանիշների աճը 2,7-3,2 կգ սահմաններում հատկապես նկատելի է երկրորդ դասարանից երրորդին անցնելիս: Այս տվյալները փոքր ինչ տարբերվում են ձախ դաստակի մկանային ուժի դեպքում:

Աջ և ձախ դաստակների մկանային ուժի համաչափության մանրամասն վերլուծությունը թույլ տալիս պարզել երկու երկրների տղաների և աղջիկների ձեռքերի աջակողմյան անհամաչափությունը: Հայաստանի և Սիրիայի դպրոցականների երկու ձեռքերի դաստակների մկանաուժի տարբերության ցուցանիշները տղաների մոտ աճում է 0,1-ից մինչև 0,9 կգ է, իսկ աղջիկների մոտ՝ 0,3-ից մինչև 0,9 կգ:

Այսպիսով, տարրական դպրոցի սովորողների հանրագումարային ուժային ընդունակությունները տղաների մոտ մեծանում են մինչև 14 կգ, իսկ աղջիկներինը՝ մինչև 12 կգ: Հայ դպրոցականների ուժի ցուցանիշները գեներալային դրսևորմամբ մի փոքր բարձր է, քան սիրիացի դպրոցականներինը: Այս տարբերությունները նկատելի են դասարանից դասարան փոխադրվելիս: Եթե առաջին դասարանում այդ տարբերությունները չեն գերազանցում 1,0 կգ-ը, ապա երկրորդ դասարանում տղաների ցուցանիշները բարձր են 2,0 կգ-ով, աղջիկներինը՝ 1,7 կգ-ով, երրորդ դասարանում՝ ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների համար կազմում է 2,3 կգ: Չորրորդ դասարանում համապատասխանաբար կազմում է՝ 1,0 կգ և 1,5 կգ:

Յետևաբար, մկանաուժի առավել մեծ տարբերություն նկատվում է երկու սեռի երկրորդից երրորդ դասարան փոխադրվող երեխաների մոտ, այսինքն 8- 9 տարեկանում: Այս տվյալները իրենց հաստատումն են գտնում նաև մի քանի հեղինակների ուսումնասիրություններում (Ա. Պ. Մարտիրոսյան, 2006; Ֆ. Գ. Ղազարյան, 2007 և այլոք): Բնականաբար, այս տվյալները պետք է հաշվի առնվեն մանկավարժական հատուկ ուղղվածությամբ պարապմունքների կազմակերպման գործընթացում:

**Շարժումների ճարպկություն**

Դպրոցականների ճարպկությունը գնահատվել է 10x5մ մաքուրավազքի արդյունքների հիման վրա: Երկու երկրների երկսեռ երեխաների համադրված ցուցանիշները պատկերված են աղյուսակ 7-ում: Հարկավոր է նկատի ունենալ, որ շար-

## Աղյուսակ 1

Դիմացկունության ցուցանիշների համեմատական նկարագիրը  
(մետրերով արտահայտած)

Դասա- րանը	Սեռը	քանակը	Հայաստան	Սիրիա	t	P, %
			$\bar{X} \pm m$	$\bar{X} \pm m$		
1.	Տղաներ	234	843.98±7.4	787.8±7.9	5.1	>0.1
	Աղջիկներ	227	798.9±7.0	747.1±8.1	4.7	>0.1
2.	Տղաներ	259	915.4±7.2	898.9±6.2	1.7	<5
	Աղջիկներ	245	852.0±6.7	848.4±6.9	0.3	<5
3.	Տղաներ	256	957.3±8.8	940.1±5.9	1.6	<5
	Աղջիկներ	212	888.8±7.1	879.2±7.2	0.9	<5
4.	Տղաներ	218	1015.1±8.7	996.0±8.1	1.5	<5
	Աղջիկներ	227	930.6±7.2	957.0±6.6	2.69	>1

## Աղյուսակ 2

Արագաուժային ընդունակությունների համեմատական վերլուծությունը արտահայտած  
սանտիմետրերով

Դասա- րանը	Սեռը	քանակը	Հայաստան	Սիրիա	t	P, %
			$\bar{X} \pm m$	$\bar{X} \pm m$		
1.	Տղաներ	234	95.6±1.4	80.5±1.0	8.4	>0.1
	Աղջիկներ	227	87.0±1.0	76.6±1.1	6.7	>0.1
2.	Տղաներ	259	107.1±1.3	90.4±1.2	9.1	>0.1
	Աղջիկներ	245	95.3±1.3	80.1±0.8	9.5	>0.1
3.	Տղաներ	256	119.4±1.4	106.7±1.2	6.6	>0.1
	Աղջիկներ	212	101.8±1.4	91.8±1.3	5.2	>0.1
4.	Տղաներ	218	126.2±1.6	108.6±1.5	7.6	>0.1
	Աղջիկներ	227	112.4±1.4	95.0±1.2	9.0	>0.1

## Աղյուսակ 3

Աջ դաստակի մկանաուժի համեմատական տվյալները (արտահայտած կգ-ով)

Դասա- րանը	Սեռը	քանակը	Հայաստան	Սիրիա	t	P, %
			$\bar{X} \pm m$	$\bar{X} \pm m$		
1.	Տղաներ	234	10,6±0.1	10,0±0.1	2,1	>1
	Աղջիկներ	227	9,86±0.1	9,84±0.1	0,09	<5
2.	Տղաներ	259	13,1±0.2	11,8±0.1	4,2	>0.1
	Աղջիկներ	245	12,0±0.1	11,0±0.1	4,0	>0.1
3.	Տղաներ	256	16,3±0.2	14,0±0.2	6,1	>0.1
	Աղջիկներ	212	14,7±0.7	12,4±0.2	6,5	>0.1
4.	Տղաներ	218	17,9±0.3	16,9±0.2	2,1	>1
	Աղջիկներ	227	16,6±0.2	15,1±0.3	3,8	>0.1

## Աղյուսակ 4

Արագաուժային ընդունակությունների համեմատական տվյալները վայր կյաններով արտահայտած

Դասա- րանը	Սեռը	քանակը	Հայաստան	Սիրիա	t	P, %
			$\bar{X} \pm m$	$\bar{X} \pm m$		
1.	Տղաներ	234	24,9±0.1	25,2±0.1	1,5	<5
	Աղջիկներ	227	25,6±0.1	25,9±0.1	1,2	<5
2.	Տղաներ	259	23,3±0.1	24,6±0.1	5,6	>0.1
	Աղջիկներ	245	24,3±0.1	25,2±0.1	4,1	>0.1
3.	Տղաներ	256	22,3±0.1	23,4±0.1	4,8	>0.1
	Աղջիկներ	212	23,4±0.1	24,8±0.1	6,4	>0.1
4.	Տղաներ	218	21,6±0.1	22,7±0.1	4,7	>0.1
	Աղջիկներ	227	23,3±0.1	23,2±0.1	0,3	<5

Աղյուսակ 5

Արագային ընդունակությունների համեմատական վերլուծություն

Դասա- րանը	Սեռը	քանակը	Հայաստան	Սիրիա	t	P, %
			$\bar{X} \pm m$	$\bar{X} \pm m$		
1.	Տղամեր	234	6.9±0.7	7.0±1.1	0.1	<5
	Աղջիկներ	227	7.3±1.1	7.5±1.3	0.1	<5
2.	Տղամեր	259	6.8±0.9	6.8±0.9	-	-
	Աղջիկներ	245	7.2±1.2	7.3±1.2	0.2	<5
3.	Տղամեր	256	6.6±0.9	6.7±1.1	0.7	<5
	Աղջիկներ	212	7.0±1.3	7.0±1.4	-	-
4.	Տղամեր	218	6.4±1.2	6.5±0.8	0.6	<5
	Աղջիկներ	227	6.8±1.4	6.9±0.9	0.1	<5

Աղյուսակ 6

ճկունության ցուցանիշների դրական մեծությունների համեմատումը՝ սմ -ով արտահայտած

Դասա- րանը	Սեռը	քանակը	Հայաստան	Սիրիա	t	P, %
			$\bar{X} \pm m$	$\bar{X} \pm m$		
1.	Տղամեր	187	4.0±0.3	3.5±0.2	1.4	<5
	Աղջիկներ	156	4.3±0.3	3.7±0.2	1.7	<5
2.	Տղամեր	149	4.6±0.3	3.7±0.2	2.5	5
	Աղջիկներ	186	4.5±0.3	3.8±0.3	1.6	<5
3.	Տղամեր	177	4.7±0.3	3.7±0.3	2.4	5
	Աղջիկներ	168	5.0±0.3	4.6±0.2	1.1	<5
4.	Տղամեր	168	4.9±0.2	4.8±0.2	0.35	<5
	Աղջիկներ	170	5.8±0.4	4.8±0.2	2.4	5

Աղյուսակ 7

ճկունության ցուցանիշների համեմատումը՝ ըստ բացասական մեծությունների

Դասա- րանը	Սեռը	քանակը	Հայաստան	Սիրիա	t	P, %
			$\bar{X} \pm m$	$\bar{X} \pm m$		
1.	Տղամեր	69	3.5±0.3	2.7±0.3	1.9	<5
	Աղջիկներ	56	3.0±0.3	3.1±0.3	0.2	<5
2.	Տղամեր	69	3.8±0.4	2.9±0.3	1.8	<5
	Աղջիկներ	59	3.7±0.7	3.1±0.3	0.8	<5
3.	Տղամեր	66	4.0±0.4	3.4±0.3	1.4	<5
	Աղջիկներ	59	4.3±0.4	3.2±0.3	2.2	5
4.	Տղամեր	79	4.6±0.4	3.8±0.3	1.6	<5
	Աղջիկներ	57	4.4±0.4	4.1±0.4	0.5	<5

Աղյուսակ 8

Հավասարակշռության պահպանման ցուցանիշների համեմատական տվյալներ

Դասա- րանը	Սեռը	քանակը	Հայաստան	Սիրիա	t	P, %
			$\bar{X} \pm m$	$\bar{X} \pm m$		
1.	Տղամեր	218	3.3±0.2	2.1±0.2	3.9	>0.1
	Աղջիկներ	227	3.2±0.2	2.6±0.4	1.4	<5
2.	Տղամեր	256	3.3±0.3	3.2±0.4	0.2	<5
	Աղջիկներ	212	3.2±0.2	3.1±0.3	0.3	<5
3.	Տղամեր	259	5.3±0.4	3.2±0.4	9.4	>0.1
	Աղջիկներ	245	3.9±0.2	3.1±0.3	2.4	1
4.	Տղամեր	234	5.9±0.3	4.0±0.4	5.9	>0.1
	Աղջիկներ	227	5.1±0.3	3.2±0.3	4.5	>0.1

ծումների ճարակությունը շարժողական ընդունակությունների շարքում համարվում է շատ բարդ ու դժվար գրանցվող ընդունակություն:

Կրտսեր դպրոցականների շրժողական ընդունակությունների բացահայտված անհամաչափությունն առավել արտահայտված է շարժումների ճարակության դեպքում: Վերը բերած աղյուսակից հստակ երևում է այդ անհամաչափությունը: Օրինակ, առաջին և երկրորդ դասարանների հայ տղաների մոտ դասարանի միջին ճարակությունը բարելավվում է 1,6 վրկ-ով, երկրորդից երրորդ դասարան անցնելիս՝ 1,0 վրկ-ով, երրորդից չորրորդ դասարան անցնելիս՝ ընդամենը 0,7 վրկ-ով: Սակայն այլ համադրություններով դիտարկելիս նմանատիպ տեղաշարժեր գոյություն ունեն նաև արական սեռի սիրիացի աշակերտների մոտ, որոնք համապատասխանաբար տատանվում են 0,6 վրկ., 1,2 վրկ., 0,7 վրկ. սահմանում:

Ինչ վերաբերում է աղջիկներին, ապա հայ դպրոցականների մոտ ճարակության ցուցանիշները բարելավվում են տարիքից տարիք անցնելիս, սակայն այդ փոփոխությունները նկատելիորեն փոքր են բացարձակ մեծություններով: Սիրիացի աղջիկների մոտ առաջինից երրորդ դասարան անցնելիս տեղաշարժերը համահունչ են իրենց հայ հասակակիցների տվյալներին: Սակայն, երրորդից չորրորդ դասարան անցնելիս ճարակության ցուցանիշների տեղաշարժերը կազմում են 1,6 վրկ.:

Տարբերությունները նմանատիպ են նաև երկու երկրների սովորողների ճարակության արդյունքների գենդերային համադրման ժամանակ: Այսպես, երկսեռ առաջին դասարանցիների մոտ առավել ճարակի կտրվածքին հայ երեխաները՝ 0,3 վրկ.-ով., սակայն վիճակագրական առումով այս տարբերությունները հավաստի չեն ( $P < 5$ ): Առավել արժեքավոր տարբերությունները նկատելի են ինչպես երկրորդ դասարանցիների, այնպես էլ երրորդ և չորրորդ դասարանցիների մոտ, քանի որ տարբերությունների աստիճանը՝ ըստ Ստյուդենտի չափանիշի գերազանցում է նորմին ( $P > 0,1\%$ ), մի փոքր բացառություն է կազմում չորրորդ դասարանի աղջիկների մոտ:

Վերը շարադրված փաստերն իրենց ամբողջական հաստատումն են գտնում շարժումների ճարակության ցուցանիշների սաճի տեմպերում՝ ըստ 10 x 5 մ մաքրաքավազքի արդյունքների:

#### **Արագաշարժություն**

Շարժումների արագությունը կամ արագաշարժությունը որոշվել է 30 մ վազքի արդյունքներով: Տվյալների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել (տես՝ աղ. 5), որ շարժումների արագությունը թե հայ, թե սիրիացի դպրոցականների մոտ առավել զարգացած շարժո-

ղական ընդունակություններից է: Բավական է նշել, որ 7-ից 10 տարեկան երեխաների 30 մ վազքի արդյունքները գրեթե մեծամում են աննկատ, ընդամենը՝ 0,5-0,6 վրկ. (տես՝ աղյուսակ 5):

Նմանատիպ պատկեր է նկատվում նաև արագաշարժության միջտարիքային տեղաշարժերում: Այդ մեծություններն այստեղ չեն գերազանցում 0,1-0,2 վրկ., բացառությամբ երկրորդից երրորդ դասարան փոխադրվող սիրիացի աղջիկների:

Այս բոլոր ցուցանիշներն, ըստ դասարանների, իրենց հաստատումն են գտնում երկու երկրների տղաների և աղջիկների միջին մեծությունները համեմատելիս: Բոլոր դեպքերում արագաշարժությունը վիճակագրական առումով ոչ հավաստի ( $P < 5\%$ ) բարձր են հայ դպրոցականների մոտ: Ըստ դասարանների՝ այս տարբերություններն աննշան են: Այսպես, օրինակ, առաջին դասարանում Հայաստանի և Սիրիայի սովորողների գենդերային տարբերությունները կազմում են 0,1-0,2 վրկ., իսկ երկրորդ դասարանում դրանք գործնականորեն բացակայում են, որոնք նկատելի են նաև երրորդ դասարանի աղջիկների մոտ: Նմանատիպ պատկեր է նկատվում նաև չորրորդ դասարանցիների մոտ: Աճի տեմպերով արագաշարժությունը գիջում է դիմացկունությամբ, ճարակությանն ու նկանաուժին:

#### **Ճկունություն**

Ճկունությունը՝ որպես ինտեգրալային ցուցանիշ, ընտրվել է ողնաշարային սյան չափման տեսանյունով՝ համաձայն Ե. Պ. Վասիլևայի մեթոդի (1963)՝ որպես իրանի թեքում դեպի առաջ: Ճկունությունը գնահատվել է դրական և բացասական մեծություններով:

Այս իմաստով բացահայտվել են Հայաստանի և Սիրիայի երկսեռ սովորողների ճկունության դրական և բացասական մեծությունների անհամաչափ և ոչ միանման փոփոխությունները, որոնք արտահայտվում են նրանով, որ, օրինակ, եթե Հայաստանի դպրոցականների մոտ դրական մեծությունները հիմնականում աճում են առաջինից երկրորդ դասարան փոխադրվելիս, ապա ամենաքիչը դա նկատելի է երկրորդից երրորդ դասարան փոխադրվելիս: Ահա մոտավորապես այսպիսի պատկեր է ստացվում հայ աղջիկների ճկունության դրական մեծություններում (տես՝ աղյուսակ 6)

Մի փոքր այլ են տվյալները հայ աղջիկների մոտ: Ճկունության ցուցանիշների առավել փոքր աճ է նկատվում այստեղ առաջինից երկրորդ դասարանում (0,2 սմ), իսկ ամենամեծը՝ երրորդից չորրորդ դասարան (0,8 սմ): Ինչ վերաբերում է սիրիացի աշակերտներին, ապա ճկունության դրական արժեքները գրեթե չեն փոփոխվում երկրոր-

դից երրորդ դասարան փոխադրվող տղաների մոտ, իսկ երրորդից չորրորդ դասարան փոխադրվողների մոտ առկա են աճի ամենամեծ տեմպերը (1,1 սմ):

Այսպիսի ոչ ադեկվատ պատկեր է ստացվում նաև սիրիացի աղջիկների ճկունության դրական մեծությունների վերլուծության ժամանակ (տե՛ս աղյուսակ 6):

Չնայած ինտեգրալ ճկունության դրական մեծությունների անհամաչափ և տարբեր փոփոխություններին, ամբողջությամբ այդ մեծությունները կրտսեր դպրոցական տարիքում մեծանում են տղաների մոտ՝ 1,1 սմ-ով, իսկ աղջիկների մոտ՝ 1,4 սմ-ով: Գրեթե նմանատիպ տեղաշարժեր առկա են նաև սիրիացի դպրոցականների մոտ:

Ինչ վերաբերում է ըստ դասարանների եղած տարբերություններին, ապա այն Հայաստանի և Սիրիայի առաջին դասարանցիների մոտ տարիքի հետ ավելանում է 0,5-ից մինչև 1,1 սմ, իսկ աղջիկների մոտ՝ 0,4-ից մինչև 10 սմ: Եվ, վերջապես, պետք է նշել, որ երկու երկրների սովորողների միջև վիճակագրական տարբերությունները հավաստի չեն ( $P < 5\%$ ), մինչդեռ բացառությամբ այն հանդես է գալիս երկրորդ և երրորդ դասարանների տղաների մոտ (տե՛ս աղյուսակ 7):

**Հավասարակշռության պահպանման ընդունակություն**

Շարժողական այս ընդունակության ցուցանիշները ևս ունեն տարիքային զարգացման միտում: Այսպես, օրինակ, կրտսեր դպրոցական տարիքում Սիրիայի և Հայաստանի տղաների մոտ ցուցանիշների աճը մեծանում է 2,6 և 1,9 սմ-ով (տե՛ս աղյուսակ 8):

Աղջիկների մոտ այս տեղաշարժերը կազմում են համապատասխանաբար 1,9 և 0,6 վ., չնայած ցուցանիշների միջտարիքային և միջսեռային տեղաշարժերը շատ անհամաչափ են և երկրորդ դասարանի հայ երեխաների մոտ հավասարակշռության պահպանման ցուցանիշները գրեթե չեն փոփոխվում: Պատկերն այդպիսին է նաև Սիրիայի երկրորդից երրորդ դասարան փոխադրվող երկսեռ աշակերտների մոտ (տե՛ս աղյուսակ 8):

Միևնույն ժամանակ, նշենք, որ չնայած կրտսեր դպրոցական տարիքի վերջում հավասարակշռության ցուցանիշները բարելավվում են երրորդից չորրորդ դասարան տեղափոխվելիս, այսուհանդերձ, հայ աղջիկների մոտ տեղաշարժերը 2 անգամ մեծ են, քան նրանց հասակակից տղաների մոտ: Իսկ սիրիացի աղջիկների մոտ այդ տեղաշարժը լրիվ աննկատելի է՝ ընդամենը 0,1 վ.:

Ինչ վերաբերում է երկու երկրների երեխաների հավասարակշռության ցուցանիշների վիճակագրական տարբերությանը, ապա կարելի է ասել, որ առավել էական տարբերություններ

նկատվում են առաջին և երրորդ դասարանի տղաների ցուցանիշներում, ինչպես նաև չորրորդ դասարանի երկսեռ աշակերտների մոտ ( $P > 0,1 \%$ ):

Այսպիսով, քննարկելով և վերլուծելով Հայաստանի և Սիրիայի կրտսեր դպրոցականների ցուցանիշների փոփոխության շարժընթացը և համեմատական տվյալները, կարելի է միանշանակ կատարել հետևյալ ընդհանրացումները:

1) Որոշակիությամբ հաստատվում է, որ սովորողի անհատական զարգացման ընթացքում ձևավորվում են կառուցվածքային տարբեր ձևափոխություններ, որոնք հավասարապես վերաբերում են նաև դպրոցականների շարժողական ընդունակություններին: Հղում կատարելով առանձին հեղինակների, կարելի է հստակ հաստատել, որ կրտսեր դպրոցականների շարժողական ընդունակությունների տարիքային զարգացման հիմնական օրինաչափություններն են՝ ա) տեղաշարժերի անհամաչափ և տատանողական բնույթը, բ) առանձին շարժողական ընդունակությունների զարգացման, արագացման և դանդաղեցման տարաժամություն և, վերջապես, գ) որոշակի սեռային կամ, այսպես կոչված, գենդերային դիմորֆիզմի դրսևորում: Այս տեսանկյունից մեր տվյալները համապատասխանում են նախկինում կատարված այլ հետազոտությունների արդյունքներին (Ս. Ա. Аршавский, 1982; Մ. Մ. Безрыкух, 2002; В. К. Бальсевич, 2000; Ա. Ա. Գրիգորյան, 2005, Ֆ. Գ. Ղազարյան, 2007, Մոհամեդ Սոբիի և Քամալ Աբդ Ալիամիդ 1997) : Միևնույն ժամանակ մեր կողմից անցկացված կրտսեր դպրոցականներին ուղղված հետազոտությունները բացատրատորեն ցույց են տալիս, որ Հայաստանի և Սիրիայի 7-10 տարեկան երեխաների շարժողական ընդունակությունների զարգացման առանձնահատկությունները և մեծությունների բացարձակ մակարդակներն ունեն որոշակի տարբերություններ. ա) մեծությունների բացարձակ բարձր տարբերություններ նկատվել են բոլոր տարիքառեռային խմբերում՝ սովորողների ցատկունակության ցուցանիշներում, բ) նմանատիպ փոփոխություններ նկատվել են նաև շարժումների ճարպկության դրսևորումներում, գ) հայ դպրոցականների ցուցանիշներն անհամեմատ և վիճակագրական առումով հավաստի բարձր են, բացառությամբ առաջին դասարանցիների, դ) երկու երկրների դպրոցականների միջև էական տարբերություններ նկատվում են նաև ուժային ընդունակություններում (բացառությամբ առաջին դասարանի աղջիկների և չորրորդ դասարանի տղաների, ինչպես նաև հավասարակշռության պահպանման ընդունակությունում):

Մկանաուճի և ճկունության դրսևորումներում գործնականորեն վիճակագրական տարբերու-

թյուններ չկան, բացառությամբ երկրորդ դասարանի տղաների և չորրորդ դասարանի աղջիկների:

Այսպիսով, փորձարարական նյութի հիման վրա կարելի է եզրակացնել, որ դպրոցական տարիքը համարվում է առավել նպաստավոր է սովորողների հիմնական շարժողական ընդունակությունների առարկայական և նպատակաուղղված դաստիարակության համար: Ցույց է տրվում, որ այդ ժամանակահատվածում երեխաների և դեռահասների օրգանիզմում տեղի են ունենում շատ կարևոր մորֆոլոգիական և ֆունկցիոնալ փոփոխություններ (Կ. Բ. Ակունց, 1993, Ֆ. Գ. Ղազարյան, 1981, 2007, Մ. Մ. Бєзрыкух, 2002; Ե. К. Бальсевич, 2000, А. Г. Хрункова, 1978): Բացի դրանից, առանձին ցուցանիշների զարգացման տեմպերը տարիքային տարբեր ժամանակահատվածներում միանման չեն: Այդ փոփոխությունները հիմնականում որոշվում են անհատական, սոցիալական և այլ գործոններով: Ոչ պակաս կարևոր նշանակություն ունեն, իհարկե, և ազգային առանձնահատկությունները, և տվյալ երկրում ֆիզիկական դաստիարակության համակարգի դրվածքը: Բոլոր դեպքերում աճող սերնդի ֆիզիկական դաստիարակության բազմամյա աշխատանք պահանջող բարդ գործընթացի հաջող իրականացումը հնարավոր է միայն դպրոցական տարիքի երեխաների զարգացման և շարժողական պատրաստության առանձնահատկությունների մանրագնին ուսումնասիրման և երեխաների տարիքային ու ֆիզիկական առանձնահատկությունների ճշգրիտ հաշվառման պայմաններում:

Այդ նպատակով անհրաժեշտ է գիտականորեն մշակել կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացի կազմակերպման առավել ժամանակակից մեթոդներ, ձևեր և դրանք արդյունավետ կիրառել ֆիզիկական դաստիարակության դասերին: Հատկապես այս հարցերի ուսումնասիրումն էլ դարձել է փորձարարական հետազոտության հատուկ առարկա:

**Սիրիայի դպրոցականների ֆիզիկական վիճակի գնահատման մոդելային սանդղակներ**

Ֆիզիկական դաստիարակության կարևոր բաղադրիչներից է աշակերտների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության մակարդակի գնահատումը: Այդ նպատակով կազմել ենք գնահատման մոդելային սանդղակներ տարբեր տարիքի և սեռի երեխաների համար:

**Աղյուսակ 9**

Սիրիայի դպրոցականների շարժողական պատրաստվածության մակարդակի գնահատման սանդղակներ (տղաներ)

I դասարան						
Ցուցանիշներ	բարձր	միջինից բարձր	միջին	միջինից ցածր	ցածր	
դաստակի մկանների ուժը	աջ	13.0 և >	11.3-12.9	8.7-11.2	8.6-7.0	6.9 և <
	ձախ	11.8 և >	10.2-11.7	7.6-10.1	7.5-6.1	6.0 և <
ճարակություն, վ.		22.8 և <	24.2-22.2	24.3-27.5	26.3-27.6	27.7 և >
դիմացկունություն, մ		916 և >	845-915	729-844	728-658	657 և <
ցատկունակություն, սմ		98 և >	88-97	72-87	82-62	61 և <
II դասարան						
դաստակի մկանների ուժը	աջ	15 և >	13.3-14.9	10.5-13.2	10.4-8.8	8.7 և <
	ձախ	14 և >	12.3-13.9	9.7-12.2	9.6-8.0	7.9 և <
ճարակություն, վ.		22.0 և <	22.2-23.5	23.6-26.9	25.6-27.0	27.1 և >
դիմացկունություն, մ		1003 և >	946-1003	854-1002	853-797	796 և <
ցատկունակություն, սմ		111 և >	99-110	81-109	80-69	68 և <
III դասարան						
դաստակի մկանների ուժը	աջ	18.5 և >	16.0-18.4	12.0-18.3	11.9-9.5	9.4 և <
	ձախ	16.9 և >	14.7-16.8	11.3-16.7	11.2-9.1	9.0 և <
ճարակություն, վ.		20.7 և <	22.2-20.8	22.3-24.4	24.5-25.9	26.0 և >
դիմացկունություն, մ		1045 և >	987-1044	893-986	892-835	834 և <
ցատկունակություն, սմ		128 և >	116-127	98-115	97-105	104 և <
IV դասարան						
դաստակի մկանների ուժը	աջ	22.9 և >	18.7-20.8	15.3-18.6	15.2-13.1	13.0 և <
	ձախ	19.2 և >	16.9-19.1	13.1-16.8	13.0-10.8	10.7 և <
ճարակություն, վ.		20.0 և <	21.5-20.1	21.6-23.9	24.0-25.4	25.5 և >
դիմացկունություն, մ		1120 և >	1051-1119	941-1050	940-872	871 և <
ցատկունակություն, սմ		133 և >	120-132	98-119	97-85	84 և <

Աղյուսակ 10

Սիրիայի դպրոցականների շարժողական պատրաստվածության մակարդակի գնահատման սանդղակներ (աղջիկներ)

I դասարան						
Ցուցանիշներ		բարձր	միջինից բարձր	միջին	միջինից ցածր	ցածր
դաստակի մկանների ուժը	աջ	12.0 և >	10.8-11.9	8.8-10.7	8.7-7.6	7.5 և <
	ձախ	11.3 և >	10.0-11.2	8.0-11.1	7.9-6.8	6.7 և <
ճարակություն, վ.		23.5 և <	24.9-23.6	25.0-26.9	27.0-28.3	28.4 և >
դիմացկունություն, մ		871 և >	802-870	692-869	691-623	622 և <
ցատկունակություն, սմ		93.5 և >	84.4-93.4	69.6-84.3	69.5-60.5	60.4 և <
II դասարան						
դաստակի մկանների ուժը	աջ	13.7 և >	12.2-13.6	9.8-12.1	9.7-8.3	8.2 և <
	ձախ	12.8 և >	11.2-12.7	8.8-11.1	8.7-7.2	7.1 և <
ճարակություն, վ.		22.7 և <	22.8-23.9	24.0-25.8	25.9-27.0	27.1 և >
դիմացկունություն, մ		966 և >	901-965	795-900	794-780	729 և <
ցատկունակություն, սմ		95 և >	86.7-94.0	73.3-86.6	73.2-65.0	64.9 և <
III դասարան						
դաստակի մկանների ուժը	աջ	16.5 և >	14.1-16.4	10.9-14.0	10.8-8.9	8.8 և <
	ձախ	14.8 և >	13.0-14.7	10.0-12.9	9.9-8.2	8.1 և <
ճարակություն, վ.		22.7 և <	23.8-22.8	23.9-25.5	25.6-26.6	26.7 և >
դիմացկունություն, մ		990 և >	929-989	831-928	830-770	769 և <
ցատկունակություն, սմ		110.5 և >	99.7-110.4	82.8-99.6	82.2-71.5	71.4 և <
IV դասարան						
դաստակի մկանների ուժը	աջ	19.6 և >	17.0-19.5	13.0-16.9	12.9-10.4	10.3 և <
	ձախ	17.1 և >	15.1-17.0	11.7-15.0	11.6-9.7	9.6 և <
ճարակություն, վ.		20.5 և <	22.0-20.6	22.1-24.2	24.3-25.7	25.8 և >
դիմացկունություն, մ		1059 և >	1002-1058	912-1001	911-855	854 և <
ցատկունակություն, սմ		114.5 և >	103.7-114.4	86.3-103.6	86.2-75.5	75.4 և <

Գործնականում միայն վերջին տասնամյակներում ֆիզիկական դաստիարակության հարցերը և մարդու ֆիզիկական դաստիարակության մոդելների մշակումները լուրջ ուշադրության արժանացան, քանի որ այս հիմնախնդիրը միաժամանակ հետաքրքրեց բոլորին, ինչպես մասնագետներին (բժիշկներ, մարդաբաններ, ֆիզիոլոգներ, հոգեբաններ), այնպես էլ ողջ հասարակությանը: Տարբեր ժամանակներում և տարբեր երկրներում մշակվել են ֆիզիկական դաստիարակության գնահատման բազմաթիվ սանդղակներ (E. G. Martin, 1918; П. Н. Башкуров, 1962; Ֆ. Գ. Ղազարյան, 1981; Г. А. Аргютюнян, 1970; Վ. Նազարյան, 2011 և այլոք): Գոյություն ունեցող գնահատման սանդղակների, աղյուսակների և ցուցանակների մեծ մասը հավասարեցված են տարբեր ստանդարտային գունարային շեղումներին, որոնց կապակցությամբ առկա են աստիճանային և կարգային տարբեր մակարդակներ: Ե. Գ. Մարտինի (E. G. Martin) կարծիքով դրանք յոթն են, իսկ մասնագետների ճնշող մասի պատկերացմամբ՝ երեքից մինչև յոթ (П. Н. Башкуров, 1962; В. М. Захаров, 1982; Տ. Գ. Սիմոնյան, 1999 և ուրիշներ): Ինչ վերաբերում է գունարային տատանումներին, ապա մասնագիտական երաշխավորում-

ների համաձայն, դրանք տատանվում են 0.67-ից մինչև 3.0 սիգմաների սահմանում (В. М. Захаров, 1982; Б.А.Ашмарин, 1978) կան նաև առավել «կոշտ» նորմեր մինչև 0.5 սիգմա (Р. А. Джалавян, 2001):

Այսպիսով, մշակված մոդելային սանդղակները (տե՛ս աղյուսակ 9, 10) կարող են օգտագործվել ֆիզիկական դաստիարակության գործընթացում՝ հետևյալ ուղղություններով (Ֆ. Գ. Ղազարյան, 2007).

ա) հատուկ խմբերով ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստության աստիճանի միապահ գնահատման համար,

բ) տարբեր հատկանիշների և ընդունակությունների սենսիտիվային շրջանների հիմնավորման ժամանակ,

գ) յուրաքանչյուր դպրոցականի անհատական հնարավորությունների հաշվառումով, ֆիզիկական պատրաստության կատարելագործման նպատակով խմբերի համալրման ժամանակ,

դ) մանկապատանեկան մարզադպրոցներում երեխաների ընտրության ժամանակ,

ե) տարբեր բնույթի ուսումնական հաստատությունների պետական ծրագրերի մշակման համար:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ակունց Կ.Բ., Դեռահասների սեռական դաստիարակությունը, Երևան, «Լույս», 1993:
2. Գրիգորյան Ա. Ա., Պատանի ֆուտբոլիստների պարապմունքների կազմակերպման առանձնահատկությունները, ՖԿՅՊԻ, 2005:
3. Թումանյան Յ. Գ., Դիմացկունության զարգացման տարիքային առանձնահատկությունները և դրա համար նեթոդիկայի առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում, թեկն. ատենախոսության սեղմագիր, Երևան, 1996:
4. Ղազարյան Ֆ. Գ., Մարդու ֆիզիկական վիճակի մոնիթորինգ, Երևան, ՖԿՅՊԻ, 2007:
5. Մարտիրոսյան Ա. Պ., Դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեությունը կրտսեր դպրոցականների առողջ ապրելակերպի ձևավորման գործում, թեկն. ատենախոսության սեղմագիր, Երևան, 2006:
6. Аршавский И. А. Физиологические механизмы и закономерности индивидуального развития. М., "Наука", 1982.
7. Арутюнян Г. А., Таблицы и методика оценка физического развития. Пособие для врачей, ЕГУ, 1970.
8. Бальсевич В. К., Онтокинезиология человека, М., "Теория и практика Ф", 2000.
9. Безруких М. М., Возрастная физиология, М., "Академия", 2002.
10. Martin E.G. Muscular strength and muscular Symmetry in human beings. "American Journal Physiology", 1918, N46, pp.11-39.
11. Մոհամադ Սոբիի և Կամալ Աբդ. Ալիամիդ, Մարզավիճակի բաղադրամասերը, Կահիրե, 1997:

---

IN SYRIA AND ARMENIA SCHOOLS JUNIOR PUPILS OF MOVING  
PREPARATION THE COMPARATIVE ANALYSIS

HGHAZI TAHER

Summary

The comparative analysis of the 1<sup>st</sup>-4<sup>th</sup> forms studied in this work. On the basis of the analysis the list estimating moving abilities was worked out.



ՀՏԴ 378:340

## ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԳԻՐՆԵՐԸ\*

### Ալբերտ ԶՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Ոստիկանության գնդապետ

ԵՊՀ Իրևանի մասնաճյուղի անձնակազմի կառավարման բաժնի վարիչ



Հայաստանի Հանրապետության խորհրդարանի ու կառավարության փաստաթղթերում պետական և հասարակական կյանքի իրավական հիմքերի ամրապնդումը, օրենքների խստիվ կատարման պահանջները, քաղաքացիների իրավունքների և ազատությունների երաշխավորվածության ապահովումը սերտորեն կապվում են մեր երկրի քաղաքացիների իրավական դաստիարակության հետազգա կատարելագործման խնդիրների հետ: Իրավական հայկական պետությունը մեծ նշանակություն է տալիս անձի բարձր քաղաքացիականության, օրենքի և քաղաքացիական հասարակության մեջ համակցության կանոնների հանդեպ հարգանքի, օրինականության ցանկացած խախտման նկատմամբ անհանդուրժողականության, իրավակարգի պահպանման և օրինականության ամրապնդման համար ակտիվ մասնակցության պատրաստակամության դաստիարակմանը [6, 288-289]:

Սակայն իրավական դաստիարակության հիմնահարցերի տեսական մշակումը մեր երկրում ետ է մնում պրակտիկայի պահանջներից: Ցավով պետք է արձանագրել, որ վերջին ժամանակներում ուշադրությունն այդ թեմատիկայի նկատմամբ մի շարք գիտական հիմնարկներում (ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտ, ՀՀ ՆԳՆ ակադեմիա և այլն) թուլացել է: Իրավապահ և կրթական մարմինները ոչ ամբողջապես են կատարում Հայաստանի Հանրապետության խորհրդարանի և կառավարության հանձնարարականները՝ քաղաքացիների իրավագիտակցության վիճակի, հրատապ իրավական հարցերով բնակչության հասարակական կարծիքի, իրավադաստիարակչական միջոցա-

ռունների արդյունավետության վերաբերյալ սոցիոլոգիական հետազոտություններ անցկացնելու մասին: Չի բարելավվում աշխատանքը նաև քաղաքացիական հասարակության իրավագիտակցության ձևավորման հիմնախնդիրների ուսումնասիրման համակարգման առումով: Չեն մշակվում միջոցառումներ՝ ապագայում իրավական դաստիարակման հարցերով գիտահետազոտական աշխատանքների ծրագրեր:

Տեսական ճակատի այս ետ մնալը բացասաբար է անդրադառնում իրավական դաստիարակության համակարգի բարելավման և հետագա կատարելագործման գործնական խնդիրների լուծման վրա: Ինչպես արդարացիորեն նշվում է իրավաբանական գրականության մեջ և մամուլում, վերջինս անհնար է առանց տեսական հենարանների, առանց գաղափարախոսական հիմնավորման և պրակտիկ փորձարկման [8]:

Գաղտնիք չէ, որ իրավական դաստիարակման և գաղափարախոսական աշխատանքի այդ կարևոր հատվածի ոլորտում կուտակվել են բազմաթիվ թերություններ: Նախևառաջ դա վերաբերում է երիտասարդության իրավական դաստիարակությանը: Այսօր մեր երկրում շատ սուր է անչափահասների հանցագործության հիմնախնդիրը, այդ իսկ պատճառով դեռահասների և երիտասարդների մոտ իրավունքի, օրենքի հանդեպ հարգանքի պատվաստումը ձեռք է բերում հատուկ հրատապություն [7, 128]:

Վերը նշված խնդրի լուծման հիմնական ծանրությունը ընկնում է ընտանիքի և ուսումնական հաստատության վրա, որտեղ ձևավորվում է հասարակության ապագա քաղաքացին:

Ժամանակակից ժողովրդավարական պետության կառուցումն անհնար է առանց մարդու բազմակողմանի զարգացման, նրա ներքին մշակույթի և հատուկության մակարդակի, հասարակական գիտակցության, ինչպես որ այն անհնար է առանց նյութատեխնիկական համապատասխան բազայի:

\* Ներկայացվել է 15.03.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

ՀՀ-ում ուսումնական հաստատությունների (այդ թվում և բարձրագույն) գլխավոր խնդիրներից մեկը նոր մարդու ձևավորումն է, քանզի առանց երիտասարդ սերնդի բազմակողմանի զարգացման անհնար է հասնել հաջողությունների:

Նոր մարդու անձի ձևավորման և կատարելագործման գործում մեծ է իրավունքի և օրենքի դերն ու նշանակությունը, որովհետև իրավական հարաբերությունների բնագավառներում պահանջվում է բնանչության լայն զանգվածների իրավական գիտելիքների մակարդակի բարձրացում, օրինականության ամրապնդում, հասարակության իմացական մշակույթի և իրավական դաստիարակության կատարելագործում:

Ուսանողների իրավական դաստիարակությունը նրանց հանդեպ նպատակաուղղված, հաջորդական և համակարգված ազդեցություն է՝ իրավական մշակույթի ձևավորման և զարգացման նպատակով [5, 634-639]:

Իրավական մշակույթը կարող է կենսունակ լինել միայն փոխկապակցվելով և փոխազդելով ընդհանուր մշակույթի այլ բաղադրիչների հետ՝ քաղաքական, բարոյական, գեղագիտական, ֆիզիկական և այլն: Յուրաքանչյուր երիտասարդ մարդու իրավական մշակույթը իրավունքի և օրենքների մասին գիտելիքներն ու իմացությունն է, նրանց դրույթների գիտակցված կատարումը, այլ անձանց իրավունքների պահպանումը և իրավաբանական պարտականությունների կատարումը [1, 80]:

Ուսանողների իրավական պատրաստվածության բարձրացումն ուղղակիորեն կապված է օրինականության ամրապնդման հետ: ՀՀ Սահմանադրությամբ բոլոր քաղաքացիներին, այդ թվում՝ ուսանողներին տրված են հիմնական իրավունքներ ու պարտականություններ: Ուստի ուսումնառության ընթացքում նրանք պետք է որոշակի գիտելիքներ ձեռք բերեն և այդ մասին հստակ պատկերացում ստանան ու դաստիարակվեն ոչ միայն օրենքն անշեղորեն պահպանելով, այլև անհանդուրժողական վերաբերմունք դրսևորելով օրենքից ամեն տեսակ շեղումների դեմ:

Ուսանողների իրավական կրթության և դաստիարակության խնդիրներն են՝

1. ՀՀ սահմանադրական օրենսդրություն, քրեական, քրեական դատավարության, քաղաքացիական, քաղաքացիական դատավարության, հողային, աշխատանքային, վարչական, ընտանեկան, կրթության մասին ՀՀ օրենսդրության վերաբերյալ որոշակի գիտելիքներ տալը:

2. Ուսանողների իրավական պատրաստության բարձրացման շնորհիվ նրանց բարոյական դաստիարակության գործի բարելավումը:

3. Ուսանողների մեջ դեպի ՀՀ օրենքները և նրանց անշեղ կենսագործումը հարգանք և սեր

դաստիարակելը, օրենքների ճշգրիտ կատարման և համակեցության կանոնները հարգելու պատասխանատվության բարձրացումը: Գիտակցական վերաբերմունք հայրենիքի պաշտպանությանը և նվիրումով ծառայելուն:

4. Ուսանողներին հեռու պահել իրավախախտումներ կատարելուց և անհանդուրժողական վերաբերմունք դաստիարակել հակահասարակական երևույթների նկատմամբ:

5. Ուսանողների մեջ դաստիարակել ազնվություն, ճշտապահություն և կարգապահություն, նպաստել նրանց համակողմանի զարգացմանը, օրինակելի վարքի և բարձր մշակույթի ձեռք բերմանը:

Ուսանողների իրավական դաստիարակության հիմնական օղակը կրթական հաստատությունն է: Երիտասարդը այստեղ պետք է յուրացնի պետական կառուցվածքի հիմունքները, քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները, օրենսդրության և իրավունքի դերը, դրանց հիմունքները: Բուհում առանց երիտասարդության իրավական և բարոյական դաստիարակության դերի բարձրացման, հոգևոր ճգնաժամերի հաղթահարումը անհնարին է: Մեր երկրում անցյալում էլ դրական փորձ է եղել, երիտասարդության հետ ակտիվորեն աշխատում էին հասարակությունը, իրավապահական մարմինները, դատարանը: Արդյունավետ կլինի նրանց դիմելը նաև այսօր:

Ուսանողներին իրավական գիտելիքներ հաղորդելը պետք է իրականացվի նաև ցանկացած ուսումնական դասընթացի դասավանդման ընթացքում, հատկապես մեծ դեր կարող են խաղալ ոչ իրավագիտական բնույթի հետևյալ դասընթացները՝ պատմություն, գրականություն և այլն [2, 114-115]:

Ուսանողների դաստիարակության գործում իր նշանակալի տեղն ունեն գրականությունը, մամուլը, ռադիոն, հեռուստատեսությունը, համակարգչային ծրագրերը: Պետք է խոստովանել, որ ներկայումս նրանց դերը ոչ միայն թուլացել, այլև կողմնորոշվել է դեպի հակաիրավական ազդեցություն՝ ցուցադրելով անբարոյականություն, անկուլտուրականություն, եսասիրություն, բռնություն, անձնային վրեժի դրսևորումներ [3, 53-54]:

Ուսանողների իրավական դաստիարակության նոր և ժամանակից ձև են հանդիսանում իրավաբանական կլինիկաները [4, 61-69]: Ռաբանց աշխատանքներին մասնակցությունը թույլ է տալիս բարձրացնել ուսանողների իրավական գրագիտությունը և ամրապնդել իրավակարգն ու օրինականությունը:

Ելնելով մեր աշխատանքային փորձից և ստացված արդյունքներից՝ նպատակահարմար է.

1. ուսանողների իրավական կրթության և դաստիարակության աշխատանքների իրականացման հեռանկարային պլանի շրջանակներում

կազմակերպել իրավաբանական թեմաներով զրույցներ և զեկուցումներ, վիկտորինաներ և թեմատիկ բանավեճեր, հանդիպումներ դատարանի, դատախազության, ոստիկանության և իրավապահ մարմինների հետ:

2. Հմտորեն զուգակցել և արդյունավետ կազմակերպել արտասուսումնական և արտալսարանային հասարակական աշխատանքները ուսումնական հաստատությունում: Ստեղծել իրավական դաստիարակության և իրավակարգի պաշտպանության խմբակներ:

3. Ինչպես հումանիտար առարկաների առանձին թեմաների ուսումնասիրության ժամանակ, այնպես էլ զրույցների և զեկուցումների ընթացքում մեծ ուշադրություն դարձնել պետության և իրավունքի հարցերին:

4. Բավարար խորությամբ կազմակերպել բարոյա-իրավական թեմաներով կազմակերպված հարց ու պատասխանի երեկոներ, թերթերում ու ամսագրերում տպագրված իրավաբանական և իրավակարգի հարցերի շուրջ տպագրված հոդվածների քննարկում, ֆիլմերի ցուցադրում և դատարան կատարած այցելության արդյունքների քննարկում և այլն:

5. Ուսանողների հասարակական կարգի պաշտպանությանը մասնակից դարձնելու նպատակով հարստացնել նրանց իրավական գիտելիքները, ընդլայնել պատկերացումները հասարակական վայրում, բնակավայրերում պատշաճ կարգ ու կանոն ստեղծելու, ճանապարհային երթևեկության կանոնները պահպանելու մասին:

Ուսանողներին ընդգրկել օրինականության և հասարակական կարգի ամրապնդման համար պայքարում:

6. Ուսումնական հաստատություններում ստեղծել «Մարդը և օրենքը», «Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները», «Օրենքը և մեր բնությունը» և այլ բովանդակությամբ ցուցափեղկեր:

7. Մշտական կապ պահպանել ուսանողների ծնողների հետ և պարբերաբար նրանց տեղյակ պահել իրենց զավակների կարգապահության և ուսման առաջադիմության մասին:

Այսպիսով՝ ուսանողների իրավական դաստիարակության հիմնախնդիրների լուծումը մեծ

նշանակություն ունի հայ հասարակության ապագայի և ազգային անվտանգության համար: Հասունացել է ժամանակը այս թեմայով կազմակերպելու հասարակական ակտիվ քննարկումներ՝ կառավարական մարմինների, ստեղծագործական միությունների, մանկավարժների և հոգեբանների մասնակցությամբ՝ կազմակերպելով հասարակական դիտումներ, քննարկումներ, մրցութային ծրագրեր, հաղորդումներ, ֆիլմերի և ներկայացումների ցուցադրումներ և այլն:

Ուսանողների իրավական դաստիարակության հանդեպ առանձնակի հետաքրքրությունը պահանջում է նաև դրան վերաբերող հատուկ դասագրքի ստեղծում:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Криминологические и психо-педагогические проблемы правового воспитания. Материалы международной научно-практической конференции (24-25 апреля 2003 г.), Брянск, 2003.
2. **Кара С. В.** Правовое обучение и правовая пропаганда как формы правового воспитания. Материалы международной научно-практической конференции (24-25 апреля 2003 г.), Брянск, 2003.
3. **Ерофеев Ю. Н.**, Уголовно-правовая тематика в произведениях кино- и телеискусства и формирование правовой культуры молодежи. // Правовая культура молодежи и формирование правомерного поведения: Сб. науч. трудов. М., 1985.
4. **Дудырев Ф. Ф., Малков В. П.**, Юридические клиники в России: возвращение через 150 лет // Государство и право. 2002, N4.
5. **Беличева С. А. и др.**, Юридическая педагогика. Уч. для студентов вузов. М., 2004.
6. **Товмасын М.**, Совершенствование средств массовой информации по освещению деятельности правоохранительных органов - один из основных путей укрепления правопорядка. "Сборник научных статей", Гавар, 1977, N2:
7. **Ն. Ա. Ապիյան, Ս. Ն. Ապիյան, Գ. Հ. Սաֆարյան**, Իրավունքի տեսության հիմնահարցեր: Ուսումնական ձեռնարկ, Երևան, Եր. համալս. հրատ., 2003:
8. Ст'и Совместная борьба против преступности – необходимость. «Законность», 1999, N7, с. 2, На арм. яз.; **Мшецян А.** Студенты довели дело до прокуратуры. «Голос Армении», 2 дек. 1999; Добровольная явка избавит, от ответственности. «Республика Армения», 15 окт. 1999.

JUDICIAL EDUCATION OF STUDENTS AND AIMS, PROBLEMS OF UPBNNING

ALBERT HOVHANNISYAN

Summary

In the article it is represented the basic problems of judicial education and upbnniging of students in modern conditions.

# ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՇՈՒԿԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅԱՄԲ\*

## Կարլեն ԱՍԼԱՆՅԱՆ

ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ասպիրանտ



Յայաստանի հեռուստառադիո-շուկայի կարգավորման գործընթացում շրջադարձային են «Յեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում 2010 թվականին կատարված փոփոխությունները, որոնց հիմնա-

կան նպատակը ոլորտը թվայնացման գործընթացին նախապատրաստելն էր: Թեև իրավական տերմինաբանությամբ նոր օրենք չի ընդունվել, սակայն 2010 թվականին կատարված փոփոխություններով կարելի է ասել, որ օրենքն ամբողջությամբ փոխվեց, ընդ որում լրացված հոդվածով մայր՝ 2000 թվականի հոկտեմբերի 9-ի ՀՕ-97 օրենքը շարադրվեց նոր խմբագրությամբ: Առանձնացնենք այն հիմնական փոփոխությունները, որոնք սկզբունքային նշանակություն ունեն դաշտի կարգավորման համար:

Առայժմ խիստ անորոշ է ռադիոընկերությունների ճակատագիրը լիցենզավորման մասով, քանի որ նոր օրենքի առաջին հոդվածով, որը սահմանում է կարգավորման առարկան, որպես այդպիսին նշվում է միայն հեռուստաընկերությունների լիցենզավորման և ղեկավարման կարգը, որևէ անդրադարձ չկատարելով ռադիոընկերություններին: Սակայն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունների մեջ «հեռուստառադիո-հեռարձակման լիցենզիա»-ն ներկայացվում է որպես գրավոր թույլտվություն, որն իրավունք է տալիս իրականացնելու ինչպես հեռուստատեսային, այնպես էլ ռադիոժրագրերի հեռարձակում (վերահեռարձակում)<sup>1</sup>:

Քննադատության արժանի է հեռուստառադիո-հաղորդումների լեզվին վերաբերող 5-րդ հոդվածում կատարված փոփոխությունը, որը բավական

լայն հնարավորություններ է ստեղծում օտարալեզու արտադրանք հեռարձակելու համար: Եթե նախկինում օրենքն ամրագրում էր, որ օտար լեզուներով հեռուստառադիոհաղորդումները, գեղարվեստական, վավերագրական և մուլտիպլիկացիոն կինոնկարները, ինչպես նաև հայերեն հաղորդումների օտարալեզու դրվագները (հատվածները) պետք է հեռարձակվեն հայերեն համաժամանակյա թարգմանությամբ՝ ծայնային կամ լուսագրային եղանակով, ապա օրենքի վերաշարադրված տարբերակում այս դրույթն առհասարակ չկա: Մեր գնահատմամբ, սա հղի է լուրջ մարտահրավերներով, և վաղ թե ուշ հեռարձակողները օգտվելու են օրենքի այս բացից՝ օրվա հեռարձակման ցանցում զգալի շատացնելով օտարալեզու արտադրանքը: Թեև հայերեն համաժամանակյա թարգմանության մասին օրենսդրական դրույթին հեռարձակողները նախկինում բավական կամայականորեն էին հետևում, այնուամենայնիվ օրենսդրական արգելքի վերացումը առհասարակ բարձիթողի վիճակի կարող է հանգեցնել:

Նոր օրենքով զգալի սահմանափակվեց ուրիշի արտադրանքն առանց թույլտվության օգտագործելու հնարավորությունը, քանի որ այժմ ոչ սեփական հեռուստառադիոհաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում, ընդ որում՝ պարտադիր է նաև արտադրության և հեղինակի մասին տեղեկատվության (ենթագրեր, ծայնային ներկայացում) ամբողջական հեռարձակումը: Ինչ վերաբերում է օտարերկրյա հեռուստառադիոընկերությունների ծրագրերի հեռարձակմանը, ապա նախկինի պես այն պետք է իրականացվի պայմանագրային հիմունքներով, սակայն այլևս չկա օրենքի պահանջը վերահեռարձակումից առաջ այդ մասին գրավոր տեղեկացնել Յեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին:

\* Ներկայացվել է 16.03.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

Ավարտված համարելով օրենքի նախկին տարբերակով սահմանված անցումային դրույթները, «Յեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքը այժմ հայրենական արտադրության հաղորդումների նվազագույն չափ է սահմանել ամսական 55 տոկոսը, այսինքն՝ հայրենական արտադրության հաղորդումների հեռարձակումը մեկ հեռուստաալիքով կամ ռադիոալիքով չի կարող ամսական ընդհանուր եթերաժամի 55 տոկոսից պակաս լինել: Այսպիսով, հեռարձակողների հնարավորությունները մեծացնելով՝ օգտվելու օտարերկրյա ընկերությունների արտադրանքից, օրենսդիրը միաժամանակ հստակ դիրքորոշմամբ պաշտպանում է հայրենական արտադրության հեռուստառադիոհաղորդումները:

Ռադիոհեռուստատեսային հաղորդման ընթացքում գովազդի չափաքանակը շուրջ 15 տարի կարգավորվում էր 1996 թվականին ընդունված «Գովազդի մասին» ՀՀ օրենքով, որը արգելում էր մինչև 10 րոպե տևողությամբ ռադիոհաղորդումներում և մինչև 20 րոպե տևողությամբ հեռուստա-հաղորդումներում մեկ անգամից ավելի գովազդային ընդհատումը (ընդմիջումը): Օրենքով արգելվում էր նաև ռադիոհեռուստատեսային հաղորդման ընթացքում հեռարձակել գովազդ՝ ավելի քան 20 րոպե մեկ հաճախականությամբ և յուրաքանչյուր մեկ եթերային ժամի հաշվով 10 րոպեից ավելի տևողությամբ: Սակայն 2011 թվականին օրենքում տեղ գտած փոփոխություններով և լրացումներով, հեռուստառադիոեթերում գովազդի թույլատրելի չափաքանակը մեծացավ: Այժմ արգելվում է ռադիոհեռուստատեսային հաղորդման ընթացքում հեռարձակել գովազդ յուրաքանչյուր 1 եթերային ժամի հաշվով 14 րոպեից ավելի տևողությամբ, ինչ վերաբերում է նախկինում գովազդի համար գործող առնվազն 20 րոպեի հաճախականությունը, ապա այս փոփոխությամբ այդ արգելքն առհասարակ վերացավ: Մեր գնահատմամբ, միակ դրական շարժը, որ կատարվեց այս ոլորտում, վերահեռարձակող հեռուստառադիոընկերությունների և Հանրային հեռուստառադիոընկերության հոգևոր-մշակութային ուղղվածության հեռուստաալիքի կողմից գովազդի հեռարձակման արգելքն էր:

Յեռուստատեսության և ռադիոյի ոլորտում գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողությունը «Գովազդի մասին» օրենքում 2007 թվականին կատարված լրացմամբ լիազորվեց ՀՌԱԳ-ին<sup>2</sup>: Իսկ հեռուստառադիոընկերությունները, ըստ «Յեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի, պարտավոր են ապահովել իրենց ֆինանսավորման աղբյուրների՝ այդ թվում գովազդի, վճարովի եթերաժամի,

հովանավորության, սեփական արտադրության տեսածայնաշարային նյութերի վաճառքի թափանցիկությունը, մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 1-ը հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տեղեկատվություն տարեկան եկամուտների մասին: Ոլորտի թափանցիկությունը կարևորվում է նաև զանգվածային լրատվամիջոցների անկախության տեսանկյունից, այն իմաստով, որ գովազդատուն կարող է գովազդի միջոցով ուղղակի և անուղղակի գրաքննություն իրականացնել լրատվամիջոցի վրա: «Պրակտիկայում անխուսափելի են այնպիսի դեպքերը, երբ գովազդատուն սպառնում է խմբագրությանը հրաժարվել գովազդի հետագա տեղադրումից, եթե լրատվամիջոցը հրապարակի գովազդատուին ոչ ձեռնտու բովանդակությամբ հոդվածը»<sup>3</sup>: Այս առումով ուսանելի է ամերիկյան «ՍԻ-ԲԻ-ԷՍ»-ի մշակած վարքականոցը, որը բավական պարզեցված և հստակ մատնացույց է անում այն բոլոր մարտահրավերները, որ կարող է իր լրատվամիջոց բերել գովազդատուն, հովանավորը: «Չի թույլատրվում հաղորդման սկզբում կամ վերջում տրվող կարճ գովազդային հայտարարություններում ընդգրկել այնպիսի ձևակերպումներ, որոնք կարող են մոլորեցնել հեռուստադիտողին կամ ռադիոսնդակին և ստեղծել տպավորություն, թե տվյալ հաղորդումը չէր ստեղծվի, եթե չլիներ գովազդատուի հովանավորչությունը: Ուստի, չի թույլատրվում հաղորդել, թե տվյալ հաղորդումը «ներկայացվում է» գովազդատուի կողմից, գովազդատուի 3 «չնորհանդեսն» է, կամ «հեռարձակվում է ձեզ համար» գովազդատուի կողմից:

Թույլատրվում է հայտնել, որ հաղորդման հովանավորն է գովազդատուն»<sup>4</sup>:

Մինչև 2010 թվականի փոփոխությունները «Յեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքը արգելում էր նաև հեռուստառադիոհաղորդումներն օգտագործել գրապարտության, այլ անձանց իրավունքները, անմեղության կանխավարկածը խախտելու նպատակով, այժմ, սակայն, Քաղաքացիական օրենսգրքով են ամրագրվում այս կարգավորումները: Նախկինում նաև մի դրույթ կար, որը սահմանում էր անչափահասների դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող հաղորդումներ հեռարձակելու արգելքը, որը սակայն, դուրս մնաց նոր օրենքից: Մի կողմից՝ այս կետը կարգավորող մարմնին կարող էր երկակի ստանդարտներ կիրառելու, սուբյեկտիվ վերաբերմունք ցուցաբերելու հնարավորություններ ընձեռել, մյուս կողմից էլ, սակայն, օրենքի ուժից զրկվում է բավական խոցելի մի ոլորտի իրավունքները պահպանող դրույթը: Մինևույն

Ժամանակ ընդգծենք, որ այժմ անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները ներառված են բացառապես գիշերային ժամերին՝ 24.00-ից 6.00-ն ընկած հատվածում հեռարձակվող թույլատրելի հաղորդումների շարքում, այսինքն, փաստացի դրանք արգելված են նշված ժամանակահատվածից դուրս շրջանում: Այս արգելքը վերաբերում է նաև էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումներին և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերին: Որոշակի արգելքներ է սահմանում նաև «Ձանգվածային լրատվության մասին» օրենքը՝ ընդգծելով, որ մասնավորապես ամբողջապես սահմանափակելով օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաև այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը<sup>5</sup>:

Թեմատիկ, բովանդակային և լեզվական սահ-

մանափակումներ չեն սահմանվում բաժանորդային հեռարձակման դեպքում: Ինչ վերաբերում է արբանյակային հեռարձակմանը, ապա ներպետական օրենսդրությունը բավական ազատական է. համապատասխան արբանյակային գործակալության հետ պայմանագրի առկայության դեպքում հեռուստառադիոընկերություններն ընդամենը պետք է հեռարձակման համար նախատեսված օրվանից հինգ աշխատանքային օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնեն ՀՌԱՀ-ին:

- <sup>1</sup> ՀՀ օրենքը «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, 10.06.2010:
- <sup>2</sup> ՀՀ օրենքը «Գովազդի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին, 09.04.2007:
- <sup>3</sup> **Պոլոյան Շ.**, ՁԼՄ և օրենսդրություն, Երևան, 2007, էջ 128:
- <sup>4</sup> Ռադիո և հեռուստատեսային ծրագրերի ստեղծման էթիկական չափանիշները, Ինտերմյուս, Երևան, 2006, էջ 3:
- <sup>5</sup> ՀՀ օրենքը «Ձանգվածային լրատվության մասին», 13.12.2003:

TV AND RADIO LEGAL REGULATION AND DEFENCE WITH RA LEGISLATION

**KARLEN ASLANYAN**

YSU Journalism department, Ph.D.

Changes introduced in the Law on "Television and Radio" in 2010 were intended to prepare the field for the digitization process and became the turning point in the regulation process of television and radio market in Armenia. Though in legal terms no new law was adopted, the amendments made in 2010 can be said to have changed the Law completely. This article focuses on main changes which are of fundamental importance to the regulation of the field.

## ASSEMBLIES AND MAIN LEGISLATIVE COUNCILS IN IRAN\*

**Abolfazl AMERI SHAHRABI**

*PhD student of Theory of State and Law at Yerevan State University  
Introduction*



**T**oday, legislation process and action is one of the exigencies of every civil society and law enactment in different countries and legal systems influenced by actual courses falls within jurisdiction of various legal authorities and officials. In Iran, as a Muslim country, legis-

lation process is influenced by these two factors: the Republic and Islam. This has made legislation in Iran be different from legislation in other legal systems such as constitutional, monarchic and republic systems because in Islamic legal view, only God has the right and power of legislation and no law except Islamic canonical laws (Sharia) is applicable and enforceable. The law is the very God's commandments which are announced by prophets, Imams and their surrogates (Islamic jurists) to people<sup>1</sup>. On the other hand, due to recognition of general public's participation in government and democracy in Iranian Constitutional Law, the law should be considered an outcome of people's votes as well in the sense that people should either directly or indirectly participate in its enactment and production. With regard to the above principles, different views prevail among jurists. A group of jurists believe that in Islamic systems, national assembly does not have the right to enact or annul Islam's principles and commandments but is only authorized to collect and compile the previous canonical laws. Another group, only recognize an advisory and consultative role for the national assembly. But in the third view which currently prevails over Iranian legal system, the national assembly's resolutions play the main part in legislation process. According to this view, even when a matter in people's view is religiously considered necessary before its composition as a law is not regard-

ed part of the law. However, the national assembly even with this viewpoint cannot act freely in legislation process in Iran and has to observe some constraints, i.e. if its resolutions contradict with canonical law and constitutional law, a council called Guardian Council repudiates it<sup>2</sup>. But this point should not be ignored that in Iran unlike some countries such as Japan (article 1, Constitutional Law of Japan), national assembly is not the only legislative authority. In general, legislative authorities in Iran can be divided as follows:

### 1. Islamic Consultative Assembly (Parliament)

Today, legislation process is prevailing even in such countries as England which is birthplace of Common Law and based on judicial precedent and individual case judgments. However, legislation on the part of parliament should be still regarded as the most prominent characteristic of the countries adherent to Roman-Germanic legal system in the sense that parliaments are considered as the heart of legislation in these countries in which legislation process may be completed and finalized through one or two parliamentary rounds.

In Iran as well, according to article 71 of the Constitutional Law, the parliament is chiefly charged with legislation in the country and by following one-parliament system it ratifies the necessary regulations. But, generally and normally two authorities are involved in legalization of one resolution, i.e. first, the issues are passed in the parliament and then for approval and conformance with the Constitutional Law and canonical law they are submitted to Guardian Council and in case of any dispute between these two councils, the case is referred to a third council called the National Exigency Council to resolve the dispute<sup>3</sup>. However, it doesn't mean that the parliament may unlimitedly enact law in all issues and certainly in these cases there are some limitations which briefly can be divided in three general groups as follows:

First, impossibility of enactment of laws in con-

\* Ներկայացվել է 05.03.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

flict with the country's official religion;

Second, impossibility of enactment of laws in conflict with the Constitutional Law; and

Third, impossibility of enactment of laws the respective authorities of which are other institutions<sup>4</sup>.

Another important point is that contrary to what seems in appearance, legislation in Iranian parliament does not always take place through participation of all the representatives in the public hall and sometimes commissions composed of several representatives enact laws out of normal procedure. In fact, each one of the internal commissions of the parliament can be considered as a smaller parliament<sup>5</sup>. The underlying philosophy for presence of commissions in the parliament is facilitation and expedition of legislation and saving in time and costs and by reliance on articles 72 and 85 of the Constitutional Law, the parliament has delegated the enactment authority to its internal commissions (according to article 57 of the parliament's internal bylaw, each representative is bound to accept membership in one of the parliament's specialized commissions).

In the legislation process of the parliament's internal commissions, first, government or at least 15 members of parliament request a bill or plan for legalization to be assigned to the internal commissions for quicker ratification. In such cases, content of the proposed bill is read in the Open Hall of the parliament and through the representatives' voting and on order of the chairman it is referred to the respective commissions in order that after study and comment of the respective representatives to be notified to administrative officials for implementation<sup>6</sup>. However, since sometimes this process may be lengthy the respective law tentatively and for a limited duration is implemented. Nevertheless, law enactment through the commissions is an exceptional case in legislation process and due to non-participation of all the representatives in law enactment this way of legislation should be avoided as far as possible because the commissions may turn into center of power and influence of certain people in the parliament. Another point to which should be paid attention is that part of the passed laws either through normal procedure and participation of all the PMs or through the commissions in the parliament may be inconsistent with declarations, conventions and treaties in international law and it is obvious that international conventions and treaties are of more weight than national and even constitutional laws so as countries even do not allow themselves to include principles in their constitutional laws which are in con-

flict with contents of these international laws<sup>7</sup>.

To avoid such problems, countries try to align their laws with the international laws. Regarding the question how the international conventions become part of countries' internal laws and regulations, two principal methods are used by different countries<sup>8</sup>. In the first method, which is used in such countries as the Netherlands, immediately after membership of the country in an international convention or treaty the content of the convention automatically enter the country's laws<sup>9</sup>. But, in the second method, which is usual in such countries as Iran, international treaties or conventions only after approval of parliament and going through legal phases and confirmation of legal authorities become as law otherwise they are not binding.

## 2. National Exigency Council

This institution is one of the legislative councils in Iran which on behalf of the supreme leadership enact laws and have so far enacted much important laws. Formation history and process of National Exigency Council has been memorable.

After victory of Islamic Revolution in Iran, a new constitutional law by people's participation was enacted in which legislation process was changed. In the constitutional law, no solution had been foreseen to resolve this variance which gave rise to some problems in the country's legislation process so as eventually in 1987 heads of the three powers and prime minister of the time and Imam Khomeini's son Seiyed Ahamad Khomeini wrote a letter to Imam Khomeini and asked him to give permission to designate an authority for resolving disputes between the parliament and Guardian Council. This was the first sparkle and reason for formation of the National Exigency Council. Imam Khomeini as the supreme religious leader of the time in 1987 issued the decree as the governmental order for the National Exigency Council formation and personally designated all its members and this procedure is still observed and all the members of the National Exigency Council are appointed by the supreme leadership. However, law enactment by the National Exigency Council when a dispute occurs between the parliament and the Guardian Council can be termed as the first legislation method in its kind. This task which is the main reason for formation of the National Exigency Council in Revision of the constitutional law is explicitly considered as part of the council's function and this council does this function independently without approval on the part of the supreme leadership and it is still of force and after approval by this council, these resolutions are per se binding. A typical



example of such legislation is enactment of the Labor Law.

The interesting point in formation of National Exigency Council is that after lapse of one year from formation of this council, Imam Khomeini by issuing an official governmental order negated this council the law enactment right when there is no dispute between the parliament and the Guardian Council. It means that this institution only when there is a dispute between the parliament and the Guardian Council is bound to enact law and in cases where there is no dispute between the parliament and the Guardian Council this authority is not allowed to enact a law as the parliament<sup>10</sup>. However, contrary to Imam Khomeini's governmental decree, after revision of the constitutional law, since 1989 the National Exigency Council has been recognized as one of the main pillars in Iranian legal system with 11 responsibilities in total according to which it may enact laws. In line with this function, this council in many cases has ratified laws. In general, with regard to authorities of the council when a dispute occurs between the parliament and the Guardian Council there are two viewpoints:

First – limited power: a viewpoint in which it is believed that according to article 112 of the constitutional law the National Exigency Council only in articles and cases of a law where there is a dispute between the parliament and the Guardian Council is allowed decide the case and not in other articles of the law in question.

Second – unlimited power: in this view which is today actually applied, in every case, if necessary, and according to national exigency this council when resolving a dispute between the parliament and the Guardian Council may enact law in all the disputed legal articles (article 28 of Internal Bylaw of the National Exigency Council). But unfortunately, the Exigency Council by resorting to the second viewpoint in most cases does not observe any bounds and even in non-disputed cases interferes with law enactment and many resolutions like Anti-Narcotics Law without proposition and approval in the parliament and confirmation of the Guardian Council have been so far issued by the National Exigency Council and approval of the supreme leader<sup>11</sup>.

The second method through which the National Exigency Council enacts law is deciding over the country's general policies. According to article 110 of the constitutional law, deciding over national general policies is part of the supreme leadership's tasks and the leader after deliberation with the National Exigency Council should specify these

policies in the form of law but the leader through a governmental order (written decree) delegated this task to the National Exigency Council and at the moment this council on behalf of the leader in execution of this task enacts law.

The main problem with the National Exigency Council in terms of limit of authority lies in law enactment because in the constitutional law there is no definition of national general policies. However, national general policies<sup>12</sup> can be considered the general matters concerning goals, policies and movement direction of the three powers and all their subordinate institutions. In fact, by the national general policies leadership, the three powers and all their subordinate institutions are guided for realization of development and progress goals and protection of the sovereignty, power, independence and orderly administration of the country. For example, with regard to military issues, whether Iran should adopt a defensive policy or an aggressive policy?<sup>13</sup>. These resolutions on discretion of the leadership and in the form of the National General Policies are referred to the National Exigency Council and after approval of the leader are notified to all the administrative and executive institutions and organizations and from that moment on they are considered as law against which no circular, instruction or even bylaw on the part of the country's officials and authorities should be ratified. In fact, it can be said that this type of resolutions on the part of the leadership is equal to the constitutional law.

Some jurists oppose such powers for the National Exigency Council and are of view that firstly, since in revision of the constitutional law in 1989 legislation right was not explicitly foreseen for the National Exigency Council and secondly, legislation is only the right of the parliament and should be effected by its representatives. Hence, the National Exigency Council should not be allowed to enact law even on behalf of the leadership and with the excuse of deciding on national general policies beyond the cases of dispute between the two councils<sup>14</sup>. The resolutions and laws passed by the National Exigency Council in terms of value are divided into two groups:

First group are the resolutions which are enacted by the National Exigency Council on order of the religious leader and in the form of governmental decrees the source of which is power of the religious leader as God's representative on the earth and after its signing by the leader are enforceable as God's commandments and should be complied with and since this council enacts this laws on behalf of the leader, opposition to it is like opposi-

tion to God's order and is considered unlawful.

Second group concerns the resolutions which after occurrence of dispute between the parliament and guardian council according to exigency are ratified by the National Exigency Council. For instance, one representative example of law enactment by the National Exigency Council is enactment of one article and 5 clauses of Charter for the National Radio and Television Organization, which was first passed by the parliament and was opposed by the Guardian Council and eventually was referred to the National exigency council for resolving the dispute and after raising the issue in the scientific, cultural and social commission of the National Exigency Council and voting with some changes, 1 article and two clauses were added to the charter. The National Exigency Council is in fact an institution through which the leadership exercises its power in the government and is held on the leader's order and if in instances where the country's issues are solvable through normal procedures and the leader does not feel any need for holding the council, he may even refrain from holding the council<sup>15</sup>.

### 3. National Supreme Security Council

In the Iranian legal system, following the Koranic teachings and Islamic doctrine, some councils are foreseen in the constitutional law which are charged with legislation. These councils are composed of the country's political authorities and experienced and first grade officials who within their own jurisdiction enact laws for resolving the country's problems. Legislative councils in the Iranian legal system should not be considered as authorities next to the leadership and as an independent power but they should be regarded as the institutions relied and dependent on the leader because<sup>16</sup> sometimes all the resolutions of these councils need to be finally approved by the leader, otherwise they have no legal effect. In addition, many of the constituting members of these councils are either directly or indirectly appointed by the leader, although the leader has no direct influence in these councils. One of these councils is the National Supreme Security Council. As we know, providing national security and its safeguarding is among important responsibilities and issues for state authorities in every government and in principle one of the purposes of government formation is the very establishment of order and security in society. However, due to large scale and importance of the issue in most countries<sup>17</sup>, normally, a board or group of top officials takes the charge of decision making on these matters.

In Iranian legal system, in article 176 of the constitutional law a special institution called National Security Council is considered for decision making and legislation about security affairs all resolutions of which should be approved by the leader. The purpose for foundation of this council is securing national interest, safeguarding the Islamic Revolution, territorial integrity and national sovereignty. This council is presided by the president but it should not be regarded as a pillar or part of the executive power because heads of all the three powers are members of it and for this reason it should be considered as an independent and special institution charged with legislation duty within specified limit, i.e. safeguarding national security. In this council, in addition to heads of the three powers, Head of Armed Forces General Staff, head of the country's planning and budgeting, two representatives appointed by the leader, Minister of Foreign Affairs, Interior Minister, Minister of Intelligence and the minister of the ministry involved in the issue, Army Commander and Revolutionary Guard Commander have membership<sup>18</sup>.

The noteworthy point in this regard is conclusion of international contract in arms which undoubtedly should be approved in the National Security Council. But, article 77 of the constitutional law considers conclusion of international contract within the parliament's authority. However, it is not clear which authority is qualified for legislation in this regard. It seems since approval of sensitive and important security contracts in the parliament may reveal the subject, it is preferred the National Security Council to decide over the case. Nevertheless, legislation in any matter should take place through people's representatives otherwise it is against the constitutional law and violated the parliament's authorities. In addition, delegating authorities to an authority against its articular jurisdiction will doubtlessly cause disconcert and contradiction in decisions. For example, ratification of budget and financial sources for purchase of weapon and ammunition is delegated to the parliament, while conclusion of contracts in arms is delegated to another authority, i.e. the National Security Council.

### 4. Supreme Council of Cultural Revolution

One of the councils which enact law in the field of culture and education particularly with regard to academic issues of the country is Supreme Council of Cultural Revolution. This council has an independent legal personality. This authority as a high-ranking institution in policy making has the task of policy setting, decision making and coordination,

guidance of the country's cultural, educational and research affairs within framework of the government's general policies which are specified by the leader through National Exigency Council and its resolutions are binding as the law<sup>19</sup>. This council has ratified many acts with regard to cultural and educational issues. Unfortunately, this council is not mentioned in the constitutional law at all and even no single ordinary act concerning it has ever been passed by the parliament or any other authority. This council is formed on Imam Khomeini's order in 1981 which was issued at the time of universities temporary close down and four years later this council seriously continued its main activity with membership of new people. All the members of this council are appointed on the leader's decree and presidency of this council is by the president. Resolutions of this council, as the law, after approval by 19th members are signed by the president and on president's order are published and notified to respective institutions and organizations. However, since resolutions of the supreme Council of Cultural Revolution are not backed by the constitutional law, there is always doubt about their credibility and resolutions and acts passed by this council have been always shaky and unstable.

It is seen that the three power has no dominance over these two councils and they independent from the three powers enact laws in educational and security areas but there is always the possibility that jurisdiction of these councils not to be observed by other legislative authorities and discernment of authority limitation of these councils from other authorities to be confronted with difficulties and not to be possible. An example of such non-observance of jurisdiction is enactment of the law for "punishment of those who illegally take people across the country's borders". Although the subject of this law has primarily a security aspect but this act in 1989 was passed by the parliament. Thus, there may be always conflict and contradiction between enactments of these councils and other laws and regulations ratified by other legislative authorities.

It seems, although the constitutional law has indirectly tried to specify boundaries of the parliament's authority and legislation from other legislative institutions, but this solution is easy to say and difficult to execute because there are many subjects regarding the country's issues which according to time are changeable and are introduced according society's new needs for which, given the multiplicity of legislative authorities in Iran, no authority has been specified. Nevertheless, it seems that decision making and legislation in

these cases fall within authority of the first authority, i.e. the parliament, and not within other authorities. In other words, although the parliament's legislation authority is not common and absolute and other authorities as well next to the parliament enact laws, legislation is the first and primary duty of every parliament and in cases of doubt in authority in law enactment, the parliament's jurisdiction should be considered prior to other jurisdiction of other authorities and the legislator should through revision and amendment of the constitutional law try to reduce interference and dominance of other authorities in law enactment.

<sup>1</sup> Verse 59, Sura Nesa, Quran.

<sup>2</sup> Mehrpour, Hossein, Concise Iranian Constitutional Law, first edition, Tehran: Dadgostar Publication, 2009, p.146.

<sup>3</sup> Madani, Jalaladdin, Constitutional Law and Iranian Political Institutions, Fifth edition, Tehran: Tabatabaee Publication, 2000, p.161.

<sup>4</sup> Rasekh, Mohammad, Supervision and Balanec in the System of Constitutional Law, First edition, Darak Publication, 2010, p.47.

<sup>5</sup> Hashemi, Seiyed Mohammad, Constitutional Law, 2<sup>nd</sup> edition, Tehran: Aali-e-Qom Publication, 1997, p.134.

<sup>6</sup> Amir, Saed and Pourya Asgari, Constitutional Law in the New Order, Third edition, Tehran: Majd Publication, 2010, p.317

<sup>7</sup> Mousazadeh, Reza, "The Law of International Treaties", Vol.1, Tehran: Dadgostar Publication, 1998, p.68

<sup>8</sup> The countries which according to their constitutional laws, international laws are directly imported into their internal laws are called one-stage countries and the countries in which the international laws first should be passed by their parliament are called two-stage countries.

<sup>9</sup> Mosavati, Heshmatollah, International Treaties Law, Third edition, Shemshad Publication, 2003, p.26

<sup>10</sup> Imam Khomeini, Sahifeh Nour, Publication of Ministry of Culture and Islamic Guidance, 1990, pp.161, 176

<sup>11</sup> Mehrpour, Hossein, Concise Iranian Constitutional Law, First edition, Tehran: Dadgostar Publication, 2009, p.130

<sup>12</sup> Features of these policies in 1998 were passed by the National Exigency Council and one year later were approved by the leader. For more study, refer to the Collection of the National Exigency Council's Resolutions, Third edition, Majma Publication, 2004, from page 5 on.

<sup>13</sup> Detailed Revision Negotiations in the Constitutional Law, Session 33, pp.2, 3.

<sup>14</sup> Mehrpour, Hossein, New Views in Legal Issues, First edition, Ettelaat Publication, 1993, p.155

<sup>15</sup> Amid Zanjani, Abbasali, Political Fegh, First volume, Amir Kabir Publication, Second edition, 2008, p.517.

<sup>16</sup> Shabani, Ghasem, Constitutional Law and Ruling Structure in Iran, 34<sup>th</sup> edition, Tehran: Ettelaat Publication, 2009, p.148.

<sup>17</sup> A typical example of this is article 91 of Korea's constitutional law which states: National Security Council is

held for consultation with president over regulation of political, military and internal policies concerning the national security before its handling by the Governmental council.

<sup>18</sup> Madani, Seiyed Jalaladdin, same source, p.382.

<sup>19</sup> A resolution which was passed by the Supreme Council of Cultural Revolution in 1998 was also published in the country's official newspaper.

#### SOURCES

1. **Imam Khomeini**, "Sahifeh Nour", First edition, Tehran: Publication of Ministry of Culture and Islamic Guidance, 1990.
2. **Mirsaed and Pouriya Asgari**, "Constitutional Law in the New Order", Third edition, Tehran: Majd Publication, 2010.
3. **Rasekh, Mohammad**, "Supervision and Balance in the Constitutional Law System", First edition, Tehran: Edrak Publication, 2010.
4. **Samavati, Heshmatollah**, "Law of International Treaties", Third edition, Tehran: Shemshad Publication, 2003.
5. **Shabani, Ghasem**, "Constitutional Law and Iranian Ruling Struicture", 34<sup>th</sup> edition, Tehran: Ettelaat Publication, 2009.
6. **Amid Zanjany, Abbasalim** "Political Fegh", Vol.1, Second edition, Tehran: Amir Kabir Publication, 2008.
7. **Madani, Jalaladdin**, "Constitutional Law and Iran's Political Institutions", Fifth edition, Tehran: Tabatababee Publication, 2000.
8. **Mehrpour, Hossein**, "Concise Iranian Constitutional Law", First edition, Tehran: Dadgostar Publication, 2009.
9. **Mehrpour, Hossein**, "New Views in Legal Issues", First edition, Tehran: Ettelaat Publication, 1993.
10. **Mousazadeh, Reza**, "Law of International Treaties", Vol.1, Tehran: Dadgostar Publication, 1988.

ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԸ ԵՎ ՅԻՍՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ԻՐԱՆՈՒՄ

#### ԱՐՈՆՅԱԶԼ ԱՍԵՐԻ ՇՈՂՐԱՔԻ

ԵՊՀ ասպիրանտ

Ամփոփում

Իրանում օրենսդրական մարմինները և խորհուրդները բաժանվում են վեց հիմնական խմբերի: Դրանք են՝ մեջլիս (խորհրդարան), վարչակարգի նպատակահարմարությունը որոշող խորհուրդ, ազգային անվտանգության խորհուրդ, մշակութային հեղափոխության գերագույն խորհուրդ, նախագահ և նախարարների խորհուրդ, հանրաքվե: Նշված օրենսդրական մարմիններից յուրաքանչյուրը մինչ օրս բազմաթիվ և կարևոր օրենքներ է հաստատել: Սակայն, պետք է նշել, որ Սահմանադրության մեջ հստակ կերպով նշված չէ այդ մարմիններից յուրաքանչյուրի պարտականությունների և լիազորությունների շրջանակները: Ավելին, նույնիսկ այս մարմիններից մի քանիսը, օրինակ՝ մշակութային հեղափոխության գերագույն խորհուրդը հիմնվել է երկրի հոգևոր առաջնորդի հրամանագրով, և Սահմանադրությունը այդ մասին ոչինչ չի ասում: Այս մարմինների կողմից ընդունված բոլոր որոշումները և օրենքները հաստատվում են հոգևոր առաջնորդի (ռահբարի) կողմից, հետևաբար կարելի է ասել, որ այս մարմինները գործում են ռահբարի ազդեցության ներքո և մեջլիսին զուգահեռ հանդես գալիս օրենսդրական նախաձեռնություններով, այն դեպքում, որ օրենսդրական նախաձեռնություններով հանդես գալը մարդկանց կողմից ընտրված պատգամավորների իրավունքն ու պարտականությունն է: Այսպիսով, Իրանի իրավական համակարգում մի շարք օրենսդիր մարմինների առկայությունը իշխանության թևերի միջև անհամաձայնության և հակասությունների առաջացման պատճառ է դարձել:

ՉԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ\*

Լուսինե Միշայի ԱՐԱԲԱԲՅԱՆ

Տնտեսական գիտությունների թեկնածու  
ՀԳԾՀ Վանաձորի մասնաճյուղի դասախոս



Հողվածում ներկայացված են փոքր և միջին ձեռնարկատիրության ձևավորման և զարգացման առանձնահատկությունները ծառայությունների ոլորտում: Բացահայտված են տնտեսության մեջ փոքր ձեռնարկու-

թյունների դերը և ծառայությունների ոլորտում դրանց կողմից իրականացվող գործառնությունները:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը շուկայական հարաբերությունների արմատավորման և տնտեսական առաջընթացի ապահովման կարևոր նախադրյալներից է: Այն առավել հրատապ է շուկայական տնտեսությանն անցման շրջանում գտնվող երկրների համար, քանի որ հնարավորություն է տալիս ամրապնդել շուկայական միջավայրը, կարճ ժամանակահատվածում ապահովել տնտեսական աճ, մեղմել բնակչության սոցիալական լարվածությունը:

Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության ձևավորումը տնտեսության զարգացման գործում ունի չափազանց մեծ նշանակություն: Սակայն տնտեսական վերափոխումների անցած ժամանակահատվածում դրա կարևորությունը ինչպես հարկն է չի գնահատվել, ինչի պատճառով ներկայումս տվյալ ոլորտում առկա են մի շարք հիմնախնդիրներ: Միաժամանակ փոքր և միջին ձեռնարկատիրության ձևավորումը Հայաստանում ունի իր առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են արտադրական և տնտեսական գործոններով, հասարակական և ազգային բնութագրով:

Փոքր և միջին ձեռնարկատիրության ձևավոր-

ման և զարգացման կարևորագույն տնտեսական պայմանը զարգացած շուկայական ենթակառուցվածքների առկայությունն է: Դրանք Հայաստանում բնութագրվում են իրենց թերզարգացվածությամբ և անկայունությամբ: Սակայն միայն շուկայական տնտեսությանը համապատասխանող ենթակառուցվածքների ձևավորումը ինքնաբերաբար չի կարող լուծել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խնդիրները: Տնտեսության այդ ոլորտի կայուն զարգացումը հնարավոր է միայն պետության կողմից աջակցության համալիր միջոցառումների իրականացման դեպքում:

Ի տարբերություն խոշոր ձեռնարկատիրության, փոքր ձեռնարկատիրությունը չի պահանջում սկզբնական մեծ կապիտալ ներդրումներ և, հետևաբար, առավել հասանելի է: Փոքր ձեռնարկատիրությունը, արագ արձագանքելով շուկայական իրավիճակների փոփոխություններին, շուկային տալիս է անհրաժեշտ ճկունություն:

Փոքր ձեռնարկատիրությունը ապահովում է բարձր շահութաբերություն այն ապրանքների արտադրության գծով, որոնք իրենց ցածր սերիականության կամ փոքր քանակության պատճառով ձեռնատու չեն խոշոր ձեռնարկությունների համար: Այն նաև ստեղծում է բարենպաստ պայմաններ արտադրատնտեսական կոոպերացիայի համար: Բացի դրանից փոքր ձեռնարկատիրության կարևոր առավելությունն է ոչ մեծ կապիտալատարությունը և նոր ձեռնարկություն կառուցելու կամ հինը վերազինելու համար անհրաժեշտ կարճ ժամանակը: Շուկայում ունենալով ոչ մեծ զանգված, փոքր ձեռնարկատիրությունը բերում է գործազրկության նվազեցման, օժանդակում է մարդկանց ապահովելու աշխատանքով, հարկային մուտքեր է ապահովում տեղական բյուջեի համար: Ոչ պակաս կարևոր է այն հանգամանքը, որ փոքր ձեռնարկատիրությունը ունակ է օգտագոր-

\* Ներկայացվել է 17.01.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

ծելու տեղական ոչ մեծ հունքի աղբյուրները, նպաստել թափոնների վերամշակմանը, ապահովել բնակչության պահանջարկը կենցաղային և այլ ծառայությունների ոլորտում: Փոքր ձեռնարկատիրությունը լուծում է նաև մեկ այլ կարևոր սոցիալական հարց՝ ձևավորում է միջին խավ, որն ազգային տնտեսության արդյունավետության հիմքերից մեկն է:

Տնտեսության արդյունաբերական ոլորտում արտադրական ձեռնարկությունների մեծ մասը ստիպված են իրենց սպառողներին մատուցել որոշակի ծառայություններ, որպես իրենց առաջարկի անբաժան մաս: Այսօր արդեն միայն տեխնիկական տեսանկյունից ճիշտ լուծումները բավարար չեն և մրցակցային առավելությունների աղբյուրը պետք է փնտրել այլ տեղերում: Ծառայությունները, որոնք կարող են մատուցվել արտադրվող ապրանքների հետ միաժամանակ, ներառում են օրինակ՝ տեղադրումը, նորոգումը և երաշխիքային սպասարկումը, նյութերի ապահովումը, խորհրդատվությունը, հետազոտությունների և մշակումների համատեղ ծրագրերը և մի շարք այլ ծառայություններ:

Այն փաստը, որ ծառայությունները ստեղծվում և օգտագործվում են միաժամանակ և, այդ կերպ, չեն կարող պաշարվել, ծառայությունների մենեջմենթի բնորոշ առանձնահատկությունն է: Ծառայությունների պաշարների ստեղծման անհնարությունը խոչընդոտում է ավանդական արտադրական ռազմավարության օգտագործմանը՝ հույս դնել պաշարների վրա որպես պահանջարկի տատանումների հարթեցման միջոցի: Պատրաստի ապրանքների պաշարները յուրօրինակ սահման են ապրանքների պատրաստման համակարգի համար, առանձնացնելով պլանավորման և վերահսկողության ներքին գործառնությունները արտաքին միջավայրից: Ձեռնարկությունը գործում է որպես փակ համակարգ, սպառողի պահանջարկից արտադրական համակարգի պաշարների առանձնացմամբ: Ծառայությունները, սակայն, գործում են որպես բաց համակարգեր, դրանց նկատմամբ պահանջարկի փոփոխությունների ամբողջական ներգործությամբ:

Պաշարները կարող են օգտագործվել նաև արտադրության գործընթացը փուլերի բաժանման համար: Ծառայությունների համար այդպիսի բաժանումը ձեռք է բերվում սպառողի սպասումների միջոցով: Պաշարների կառավարումը՝ արտադրական գործողություններում գլխավոր խնդիրն է, այն դեպքում երբ ծառայությունների ոլորտում համապատասխան խնդիրը սպառողի սպասելիքներն են, կամ էլ «հերթի ձևավորումը»: Սպասարկման հզորության (թողունակության) ընտրու-

թյան խնդիրները, սարքավորումների օգտագործումը և պարապուրդից խուսափելը՝ այդ բոլորը պետք է հաշվի առնված լինի, որպեսզի թույլ չտրվի սպառողի ժամանակի կորուստ՝ հերթերում կանգնելու պատճառով:

Ծառայությունների ոլորտում արտադրության և սպառման համաժամանակությունը բացառում է որակի վերահսկողության կողմից հնարավոր միջամտությունները: Ապրանքը կարող է զննվել մատակարարումից առաջ, բայց ծառայությունների համար հարկավոր է հենվել այլ միջոցների վրա, որպեսզի ապահովվի ծառայությունների որակյալ մատակարարումը:

Փոքր ձեռնարկությունները իրենց կազմությամբ միատարր չեն: Դրանց մեջ առանձնացնում են երկու տիպի ձեռնարկություններ. կենսաապահովող և արագ աճող [1]: Կենսաապահովողներին են դասվում փոքր ձեռնարկությունների մեծամասնությունը, որոնց գործունեության բավականին փոքր ծավալները և աճի սահմանափակ հնարավորությունները թույլ են տալիս դրանց տերերին ապահովել ընդունելի կենսամակարդակ:

Արագ աճող ձեռնարկությունները որակապես կենսաապահովողներից տարբերվում են նրանով, որ ունեն արագ աճի հնարավորություններ դրված կապիտալի բարձր հետզոտումնակության հաշվին: Նրանց գործարար կազմակերպվածությունը նույնպես ուրիշ է: Եթե կենսաապահովող բիզնեսը ամենից հաճախ ունենում է մեկ տեր, ապա արագ աճող ձեռնարկությունները սովորաբար հենվում են գործընկերության վրա՝ բավականին խոշոր ներդրումների ակնկալիքով:

Նոր ստեղծվող փոքր ձեռնարկությունների ընդհանուր զանգվածում գերակշռում են կենսաապահովողները: Բայց ապրանքների ու ծառայությունների առաջարկի ծավալով գերակշռում են արագ աճող ընկերությունները:

Փոքր և միջին ձեռնարկատիրության ձևավորման համար խթան հանդիսացավ զարգացած երկրներում կապիտալի խոշորացման միտումների դանդաղումը: Դրա հիմնական պատճառը տնտեսության մեջ դեպի ծառայությունների ոլորտը կառուցվածքային տեղաշարժերն էին: Սպասարկող ֆիրմաների համար մասշտաբից ստացվող արդյունքը մեծ չէ, և անզամ հակառակը, գործունեության փոքր ծավալը մրցակցային առավելություններ է ստեղծում շուկայական փոփոխությունների վրա արձագանքման ճկունության տեսքով:

Ժողովրդագրական գործընթացները, բնակչության ծերացումը, զբաղվածության կանաչիացումը, խոշոր ձեռնարկություններում մասնագիտական աճի և ծառայողական առաջխաղացման

բարդությունները, անհատական նախաձեռնությունների զսպումը էլ ավելի մեծ քանակությամբ մարդկանց է դորդում փորձել իրենց ձեռներեցության մեջ:

Տնտեսության մեջ փոքր ձեռնարկությունները կատարում են բավականին որոշակի գործառույթներ: Առաջինը, նրանք, իրենց վրա ընդունելով նոր ապրանքների և ծառայությունների ներմուծումը, զգալի ներդրում են կատարում տնտեսական աճի մեջ: Ըստ ԱՄՆ-ի Ազգային գիտական հիմնադրամի տվյալների ծախսելով ընդամենը 5% միջոցներ, որոնք երկրում հատկացվում են գիտական հետազոտությունների և նախագծերի վրա, փոքր ձեռնարկությունները տալիս են նոր ապրանքների 98%-ի նախագծերը՝ ուղղաթիռներից մինչև կենցաղային տեխնիկա [2]: Բարձր հարմարվողականությունը և շուկայի բոլոր հատվածներում զանգվածային մասնակցությունը, ինչպես արտադրողների, այնպես էլ և սպառողների վարքագծի ակտիվությունը փոքր ձեռնարկատերերին դորդում են յուրացնել ավելի նոր ու բարդ գործունեության տեսակները: Նոր շուկայական դիրքեր յուրացնելու ունակությունը փոքր ձեռնարկություններին թույլ է տալիս մեծացնել իրենց մասնաբաժինը զարգացած երկրների համախառն ներքին արդյունքում:

Երկրորդ, փոքր ձեռնարկությունները նպաստում են խոշոր ձեռնարկությունների, ընկերությունների զարգացմանը, նրանց մատուցելով ամենատարատեսակ ծառայությունները՝ արտադրանքի իրացման, ռեսուրսների մատակարարման, օժանդակ սպասարկման մեջ: Ջարգացած երկրներում խրախուսվում են փոքր և խոշոր ձեռնարկությունների կոոպերացիաները, առանձին ֆիրմաների մասնագիտացման դեպքում և հատկապես իննովացիոն գործունեության մեջ նրանց փոխլրացումները: Եթե խոշոր ձեռնարկությունն ունի հստակ արտահայտված կողմնորոշում միատարր արտադրանքի կամ ծառայությունների մեծ ծավալների թողարկման վրա և տնտեսում է ստանում մասշտաբից, ապա ծկուն, շուկայի պահանջներին հեշտ արձագանքող փոքր ձեռնարկությունները ընկերություններին հաղորդում են դինամիկություն և շարժունակություն:

Երրորդ, բազմաթիվ փոքր ձեռնարկատերեր պահպանում են իրենց ֆիրմաները, իրականացնելով անհատական հարցադրումներով սպառողների հատուկ կարիքներին ուղղված շուկայական քաղաքականություն: Ոչ ստանդարտ պատվերների կատարումը, հազվագյուտ իրերի պատրաստումը և վերանորոգումը, տեխնիկայի վարձույթը և այլ նմանատիպ գործունեության տեսակները,

որոնց ծավալները ընդունելի չեն խոշոր ֆիրմաների համար, դառնում են փոքր ձեռնարկատիրության օբյեկտ:

Չորրորդ, փոքր բիզնեսը կատարում է կարևոր սոցիալ տնտեսական գործառույթ կապված աշխատատեղերի ստեղծման հետ: Արդյունաբերական ճյուղերում աշխատանքի արտադրողականության աճը բերեց տնտեսապես ակտիվ բնակչության հոսքին ծառայությունների ոլորտ, ինչը հատկապես նկատելի է առևտրում, ֆինանսական և ապահովագրական բիզնեսում, այլ ծառայություններում զբաղվածների թվի փոփոխության մեջ: Սպասարկող ֆիրմաների ինտենսիվ աճը թույլ տվեց նրանց զբաղվել գործունեության այն տեսակներով, այդ թվում և արտադրությանը ուղղված ծառայություններով, որոնք նախկինում իրականացվում էին արդյունաբերական ձեռնարկությունների ներսում: Էժան աշխատուժը նույնպես նպաստում է փոքր ձեռնարկատիրության զարգացմանը, թույլ տալով դինակայել մրցակցային պայքարում:

Արդի տնտեսական պայմաններում ծառայությունների ոլորտի դերն ու նշանակությունը լրջորեն աճում է ոչ միայն բնակչության անձնական ծառայությունների ավանդական ոլորտներում, այլ նաև աշխատանքային գործունեության այլ ոլորտներում՝ արդյունաբերական բնույթի ծառայությունների (բիզնես բիզնեսի համար), պետական ապարատի գործունեության, կառավարման համակարգերի ֆունկցիոնալ ստորաբաժանումների արդյունավետ աշխատանքի և այլ ոլորտներում, որտեղ իրականանում են հաճախորդների հետ կապված հարաբերությունները:

Ձեռնարկատիրական հայեցակարգի փոփոխությունը հանգեցրել է նրան, որ ժամանակակից արտադրանքը (ապրանք կամ ծառայություն), իրենից ներկայացնում է ծառայությունների (որպես կանոն, իրենց բնույթով վիրտուալ) և ապրանքային (մյութական) բաղադրիչների համադրություն:

Սպասարկման ոլորտի աճի համար գոյություն ունեն մի շարք պատճառներ, որոնցից կարևորներն են՝ ծառայությունների ոլորտում աշխատանքի արտադրողականության աճի առկա դանդաղումները՝ համեմատած տնտեսության մնացած հատվածի հետ, ընկերությունների կողմից միջանկյալ պահանջմունքների աճը, սպառողների վերջնական պահանջարկի աճը: Գոյություն ունի նաև սոցիալ-ժողովրդագրական բնույթի գործոնների նշանակալի քանակություն (բնակչության եկամուտների աճը, զբաղվածության կառուցվածքի փոփոխությունը, կարգավորում, վերանորոգում և սպասարկում պահանջող բարդ

կենցաղային սարքերի ի հայտ գալը, կյանքի չափորոշիչների փոփոխությունը և այլն):

Սպասարկման տարրերի զարգացման համար հիմնական տնտեսական շարժառիթը և դրանց համադրությունը ապրանքների արտադրության տեխնոլոգիաների հետ կարող է դիտարկվել սպառողի համար և նրա հաշվին մեծ օգտակարության (հարմարավետության) մրցակցության ոչ գնային մեթոդների օգտագործման հնարավորությունը: Հետևաբար, սպասարկող բիզնեսով զբաղվելու համար, հատկապես փոքր ձեռնարկությունների համար, կարևոր խթան են հանդիսանում այնպիսի պատճառները, ինչպես դրա ցածր կապիտալությունը և կապիտալի արագ շրջանառության հնարավորությունը, որպես կանոն, ոլորտ (շուկա) մտնող ցածր խոչընդոտները, արտոնագրային և պատենտային սահմանափակում-

ների բացակայությունը՝ սպասարկման տեխնոլոգիաների առումով և տվյալ ոլորտում բիզնես գործունեությամբ զբաղվելը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Речман Д. Дж. и др., Современный бизнес. М., "Республика", 1995, т. 1, с. 100-101.
2. **Богатин Ю. В.** Оценка эффективности бизнеса и инвестиций. М., 2002.
3. **Акимов О.** Малый и средний бизнес: эволюция понятия, рыночная среда, проблемы развития, М. "Финансы и статистика", с. 192, 2003.
4. **Анискин Ю. П.** Организация и управление малым бизнесом. М., "Финансы и статистика", 2001, 216 с.
5. **Тепман А. Н.** Малый бизнес: Опыт зарубежных стран. М., "Юнити-Дана", 2004, 74 с.
6. **Sunlee Castro.** Big Vs/ Small // Time, 1998, 5 September, 49.

---

#### SMALL AND MIDDLE ENTERPRISES IN THE PRIORITIES OF ECONOMY

**L. M. AGHABABYAN**

#### Summary

The article discusses the peculiarities of small and middle enterprise formation and development. In the article the role of the small enterprises and their functions being carried out by them in the service sector is revealed.

**Key words:** small and middle enterprises, development, function, stock, service.



## ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐՍԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ\*

### Գուրգեն ՄԿՐՏՉՅԱՆ

Տնտեսական գիտությունների թեկնածու



Անձնակազմը, որպես կազմակերպության կառավարման ամենակարևոր ներուժ, ունի իր առանձնահատկությունները: Անձնակազմի կառավարումը կոլեկտիվի վրա ներգործող նպատակաուղղված սկզբունքների,

մեթոդների ու միջոցների համակցությունն է, որը աշխատանքային գործառույթների կատարման գործընթացում ապահովում է նրանց ֆիզիկական ու մտավոր ընդունակությունների առավելագույն օգտագործումը ձեռնարկության նպատակներն իրականացնելու համար [1, էջ 245]:

Հաշվի առնելով բանկային անձնակազմի առանձնահատկությունները և չչեղվելով կառավարման հիմնական գործառույթների պահանջներից՝ առաջարկված է բանկային անձնակազմի կառավարման գործընթացի փուլերն ուսումնասիրել հետևյալ երեք խմբերով՝ անձնակազմի ձևավորում (պլանավորում, հավաքագրում, ընտրություն, հարմարում, ուսուցում), անձնակազմի գնահատում (գնահատման համակարգի մշակում և ատեստավորում), անձնակազմի տեղաշարժում և շահադրդում (առաջխաղացում, ղեկավար կադրերի պատրաստում, իջեցում, ազատում, տեղափոխում, նյութական և ոչ նյութական շահադրդում):

Անձնակազմի ձևավորման նպատակով պլանավորումից հետո նախատեսվում է նրանց հավաքագրումը, ընտրությունը, հարմարումը և ուսուցումը, որը հաճախ անվանում են «անձնակազմի զարգացում», որին Ուոլտենը տվել է հետևյալ սահմանումը. «Անձնակազմի ռազմավարական զարգացումը ներառում է ներածություն, վերացում, մոդիֆիկացիա, գործողությունների և

պարտավորությունների այնպիսի կառավարում և ղեկավարում, որի դեպքում բոլոր անհատական աշխատողները և թիմի անդամները ձեռք են բերում գիտելիքներ, հմտություններ, ունակություններ և իրազեկություն, որոնք պահանջվում են կազմակերպության ընթացիկ և պոտենցիալ խնդիրների լուծման համար» [2, էջ 80]:

Անձնակազմի զարգացման հիմնական նպատակներից են այնպիսի պայմանների ստեղծումը, որի դեպքում կիրացվի աշխատողների քոլարկված ներուժը և կապահովվի նրանց նվիրվածությունը կազմակերպությանը: Այդ ներուժը, որպես կանոն, ներառում է ոչ միայն նոր գիտելիքների, հմտությունների և ունակությունների ձեռք բերումը և օգտագործումը, այլ նաև կազմակերպության գործունեության կատարելագործման ուղիների, կուտակված, չօգտագործված գաղափարների օգտագործումը:

Կադրերի նկատմամբ պահանջի հաշվարկները ելակետ են մասնագետների պատրաստման ծրագրերի մշակման ու իրագործման, ինչպես նաև նրանց հավաքագրման համար: Այն կարող է կատարվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից: Թափուր պաշտոնների համար անհրաժեշտ կադրերը հարկ է հավաքագրել կազմակերպության աշխատողների թվից: Կարող են ներգրավվել նաև դրսից՝ թափուր պաշտոնների մասին հայտարարությունների, մրցույթների կազմակերպման և այլ ձևերով: Հավաքագրման և կադրերի ընտրության ընթացքում բարձր արդյունքների հասնելու, այսինքն՝ բարձրորակ կադրեր ներգրավելու համար նախընտրելի է մրցութային հիմունքների կիրառումը: Անհրաժեշտ է հիշել, որ ներքին աղբյուրներից թափուր պաշտոնների համալրումը նպաստում է աշխատողների աշխատանքի արդյունավետությանը՝ պաշտոնական առաջխաղացման սպասելիքների ակնկալությամբ, սակայն միայն մնա մոտեցումը կարող է թուլացնել մրցակցությունը և հանգեցնել

\* Ներկայացվել է 28.02.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

կադրային լճացման:

Որպես կանոն՝ բանկում աշխատանքի ընդունելու (հավաքագրելու) որոշում կայացնելուց առաջ անհրաժեշտ է անցկացնել հետևյալ աշխատանքները՝ նախնական գրույց, դիմումի ներկայացում, հարցազրույց, թեստավորում, մասնագիտական փորձարկում, երաշխավորագրերի և ծառայողական ցուցակի ստուգում, բժշկական ստուգում (անհրաժեշտության դեպքում), որոշման կայացում:

Անձնակազմի ընտրությունը կատարվում է հավաքագրվածներից (թեկնածուներից)՝ որոշակի չափանիշներով ու մեթոդներով: Առավել բնորոշ չափանիշներն են թեկնածուի կրթական մակարդակը, մասնագիտական կարողությունները, աշխատանքի փորձը, անձնական հատկանիշները, կոլեկտիվում աշխատելու ունակությունները:

Յուրաքանչյուր ընտրված թեկնածու պետք է համապատասխանի տվյալ հաստիքին ներկայացվող պահանջներին: Որոշ տվյալներ կարելի է հաստատել փաստաթղթերի միջոցով, իսկ մի շարք հատկանիշներ անհրաժեշտ է բացահայտել:

Թեկնածուներից ընտրություն կատարելու ամենատարածված մեթոդներն են հարցազրույցը, փորձարկումը, գնահատումը:

Ուսումնասիրենք անձնակազմի ընտրության մի քանի մեթոդներ:

Համարվում է, որ ընտրության արդյունավետությունը կլինի ավելի բարձր, եթե թեկնածուն գնահատվի հնարավորինս ավելի շատ չափանիշներով, այսինքն կիրառվի բազմագործոնային մեթոդ:

Համարվում է, որ այդ նպատակի համար ամենահարմարը Քեթթելի հարցման 16 գործոնային մեթոդն է: Սակայն յուրաքանչյուր ցուցանիշի կարևորությունը կախված է մի շարք պայմաններից՝ մասնագիտական գործունեության ճյուղից, կազմակերպության կադրային քաղաքականությունից, անձնակազմի կառավարման ընդհանուր հայեցակարգից:

Նշված պայմաններում առաջ է գալիս մի կարևոր խնդիր՝ բազմագործոնային գնահատումը ոչ պարզ միջավայրում: Եվ չափորոշիչների ձևակազմման և որոշումների ընդունման համար Ջ. Ջաբրահիլովան և Ս. Նոբարին առաջարկել են օգտագործել ոչ պարզ բազմաբանակության տեսությունը [3, էջ 107-112]: Թափուր տեղերի համար թեկնածուների ընտրության մոդելավորման մեխանիզմն իրականացվում է ներկայացված գիտելիքների ոչ պարզ ռեյտինգի մոդելի հիման վրա, որը թույլ է տալիս տվյալ աշխատանքին հավակնող թեկնածուների ցուցակը գնահատել և համա-

կարգել՝ լավագույնից դեպի վատագույնը, կամ ընդհակառակը՝ ըստ չափորոշիչների: Նման ձևով կարելի է ստանալ թափուր տեղի համար թեկնածուների ցուցակը, որոնց գնահատականները ստորակարգված են վատից դեպի լավը:

Հեղինակներն առաջարկում են գնահատման և ստորակարգման մեթոդ, որը ներառում է հետևյալ փուլերը.

- Ներքին մակարդակի մասնավոր չափորոշիչների միացավորման օգնությամբ գնահատվում է վերին մակարդակի յուրաքանչյուր չափորոշիչ:

- Բոլոր ստացված այլընտրանքների հիման վրա որոշվում է ամփոփված չափորոշիչի պատկանելության ֆունկցիան: Ստացված գնահատականը բացահայտում է, թե որքանով է թեկնածուն համապատասխանում թափուր տեղի պահանջներին:

- Ընտրվում է այլընտրականը, որն ունի ամփոփված չափորոշիչ՝ պատկանելության առավելագույն աստիճան: Դա լավագույն թեկնածուն է և կարող է զբաղեցնել հավակնորդների ցուցակում առաջին տեղը:

Նման մոտեցումը թույլ է տալիս ցուցակից դուրս հանել ոչ պիտանի թեկնածուներին:

Առաջարկված մեթոդով խնդրի լուծման համար անհրաժեշտ է որոշել չափորոշիչների հարաբերական կարևորության գործակիցները և մասնավոր չափորոշիչների այլընտրանքային պատկանելության ֆունկցիան:

Մեթոդը թույլ է տալիս մարդուն տեղեկատվության ընկալման համար չօգտվել թվերից, այլ օգտվել դրանց սեփական լեզվաբանական պատկերացումները (օր. «քիչ է», «շատ է», «զգալի է», «մի քանիսն է», «մեծամասամբ» պատկերացումներում կարելի է վերածել տվյալների): Այնուհետև փորձաքննական խումբը յուրաքանչյուր աստիճանավորման համար որոշում է անհատական ոչ պարզ գնահատականների նշանակությունները գրոյից մինչև մեկի սահմաններում: Փորձաքննական խմբի անհատական գնահատականները ամբողջացնում են և այդ կոլեկտիվ գնահատականը իրենից ներկայացնում է համաձայնեցված ընտրություն: Հաշվի է առնվում նաև փորձագետի «անհատական իրազեկությունը»:

Անձնակազմի կառավարման համակարգում ընտրությունը գրեթե ամենակարևոր փուլն է, քանի որ դրա արդյունավետությունից է կախված ամբողջ կազմակերպության ապագա գործունեությունը: Ուստի պարտադիր է գնահատել այս գործընթացը:

Անձնակազմի ընտրությանը վերաբերող հետազոտությունները ցույց են տվել, որ թափուր

տեղի զբաղեցման ժամանակը և արագությունը ամենահիմնական ցուցանիշներն են այս գործունեության արդյունավետության գնահատման համար:

Սակայն, որքանով էլ որ բարձր մակարդակով կատարված լինի ընտրությունը, նոր աշխատողի արդյունավետությունը կախված է նրա պաշտոնակալումից, այսինքն՝ նրա աշխատավայրին հարմարվելու, կազմակերպության աշխատանքային պահանջներին և խնդիրներին, ավանդույթներին և արմատավորված վարքի նորմերին հաղորդակցվելու գործընթացից, որն իրականացվում է ղեկավարության նախաձեռնությամբ:

Անձնակազմի հարմարման (ադապտացիա) համար շատ կարևոր է կազմակերպության փոքր խմբերի հոգեբանական մթնոլորտը, որը, ինչպես նշեցինք, պետք է պլանավորվի: Եվրոպայի և Ամերիկայի շատ մասնագետներ եկել են այն եզրակացության, որ առավել ռացիոնալ է բաժինների ներսում աշխատողների բաժանումը փոքր խմբերի, որում միջանձնային հաղորդակցումը ավելի լավ է զարգացած: Նշվում է նաև փոքր խմբի օպտիմալ չափը՝ 5-12 մարդ [4, էջ 137]:

Փոքր խմբերի հոգեբանական ընդհանրության հիմնական չափորոշիչներն են՝ անհատների նմանությունը (դրդապատճառների, նպատակների, արժեքների, սոցիալական կողմնորոշումների ընդհանրություն), խմբի անհատների կողմից գիտակցված տարբերությունները (նույն թվում և հոգեբանական), ինչը հիմք է հանդիսանում նրանց նմանակմանը խմբին, խմբին բնորոշ սոցիալ-հոգեբանական բնութագրիչները (համատեղելիություն, համախմբվածություն, համագործակցություն, սոցիալ-հոգեբանական մթնոլորտ):

Փոքր խմբերում համախմբվածության մակարդակը որոշվում է անմիջական միջանձնային կապերի հաճախականությամբ և կայունությամբ:

Համախմբվածության զարգացման հիմնական մեթոդն է՝ «մակրոկառուցվածքի» հարաբերությունների համապատասխանումը «մակրոկառուցվածքին» (տարածքա-ժամանակային, հաղորդակցային և գործառնության կապերը խմբում), որը որոշվում է սոցիոմետրիկ հետազոտման միջոցով:

Անհատի հոգեբանական իրավիճակը խմբում հիմնված է կոնֆորմիզմի երևույթի վրա (խմբին հարմարվելու ունակություն): Խմբում կոնֆորմիզմի արտահայտվածության վրա ազդում են անհատի սեռը (կանայք ավելի կոնֆորմային են), տարիքը (կոնֆորմային վարքագիծը հաճախ արտահայտվում է երիտասարդների և ծերերի մոտ), սոցիալական կարգավիճակը (բարձր կարգավիճակ ունեցող մարդիկ ավելի թույլ են ենթարկվում խմ-

բային ճնշմանը), հոգեկան և ֆիզիկական վիճակը (առողջական վատ վիճակը ուժեղացնում է կոնֆորմայնությունը), կրթվածության աստիճանը:

Խմբի յուրաքանչյուր անդամի «կոնֆորմիզմ» բնութագրիչը բացահայտելու նպատակով տվյալ աշխատանքում անձնակազմի գնահատման զլխում ներկայացված է անձի ընդհանուր բնութագրիչների ցանկում «Q2» ցուցանիշի միջոցով:

Ըստ մակարդակի՝ աշխատանքային հարմարումը կարող է լինել առաջնային՝ արտադրական միջավայրում աշխատողի նախնական մուտքի դեպքում և երկրորդային՝ մասնագիտության կամ աշխատատեղի փոփոխության դեպքում: Աշխատանքային հարմարումն ունի բարդ կառուցվածք և իրենից ներկայացնում է մասնագիտական, սոցիալ-հոգեբանական, հասարակական-կազմակերպչական, կուլտուր-կենցաղային և հոգեբանաֆիզիոլոգիական հարմարումների միասնություն:

Մասնագիտական հարմարումն արտահայտվում է մասնագիտական հմտությունների ու կարողությունների տիրապետման որոշակի մակարդակով, անհատի մասնագիտական անհրաժեշտ որակների և մասնագիտության նկատմամբ դրական կայուն վերաբերմունքի արմատավորմամբ:

Սոցիալ-հոգեբանական հարմարումը հանգում է աշխատանքային խմբի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների յուրացմանը և անդամների միջև ձևավորված փոխհարաբերությունների համակարգ մուտք գործելուն: Դա աշխատողի ընդգրկումն է կազմակերպության աշխատանքային փոխհարաբերությունների համակարգում՝ վերջինիս սեփական սովորույթներով, կյանքի նորմերով, կողմնորոշման արժեքներով: Այդպիսի հարմարվողականության ընթացքում աշխատողն աստիճանաբար տեղեկություն է ստանում աշխատանքային խմբում ընդունված նորմերի, արժեքների, գործարար և անհատական փոխհարաբերությունների համակարգի, փոխհարաբերությունների կառուցվածքում խմբերի առանձին անդամների սոցիալ-հոգեբանական դիրքորոշումների, ինչպես նաև խմբային առաջնորդների մասին:

Հասարակական-կազմակերպական հարմարումը ենթադրում է նոր աշխատողի կողմից կազմակերպչական կառուցվածքի, արտադրական գործընթացի, սպասարկման և աշխատանքի ու հանգստի ռեժիմների ընդունում:

Մշակութա-կենցաղային հարմարումը վերաբերում է ձեռնարկության կենցաղի առանձնահատկությունների և ազատ ժամանակի անցկացման սովորությունների ու արտադրության կուլտուրայի յուրացմանը:

Հոգեբանաֆիզիոլոգիական հարմարումն աշխատանքի ընթացքում աշխատողների համար անհրաժեշտ պայմանների (սանիտարահիգիենիկ նորմեր, աշխատանքի ռիթմեր, աշխատատեղի հարմարավետություն) յուրացումն է:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գագիկ Խաչատրյան**, Ձեռնարկության էկոնոմիկա և կառավարում: Ուսումնական ձեռնարկ, Եր., Հեղինա-

կային հրատարակություն, 2009:

2. **Walton R. E.** From control to commitment in the workplace. // Harvard Business Review. N63, 1985.
3. **Джабраилова З. Г., Нобари С. Р.** Решения задачи выбора кандидатов на вакантные должности методом многокритериального ранжирования. // Менеджмент в России и за рубежом. N1, 2010.
4. **Горлашкина И. А.** Психологическое планирование как инструмент реструктуризации персонала компании. // Менеджмент в России и за рубежом. N6, 2010.

---

## PERSONNEL SELECTION AND ADAPTATION ISSUES IN COMMERCIAL BANKS

**GURGEN MKRTCHYAN**

Candidate of Economic Sciences

### Summary

Personnel management is an important stage of its formation, which also includes the selection and adaptation processes.

The article presents the characteristics of these processes and their implementation of effective channels of commercial banks.

# ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԳԱԿԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ\*

## Ս. Ա. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ

## Տարեկիկ ԱՊՐԵՍՅԱՆ

ԵՊԵՀ ուսանողուհի



Բնակչության կենսամակարդակի վրա ազդում են բազմաթիվ գործոններ, որոնցից գլխավորը մարդու ֆիզիկական և մտավոր աշխատանքի դիմաց կատարվող վճարումներն են՝ աշխատավարձի տեսքով [1, 134]:

Աշխատավարձը իբրև տնտեսագիտական հասկացություն առաջացել է այն ժամանակներից, երբ հասարակությունը շերտավորվել է ձեռներեց-գործարարի և վարձու աշխատողի:


Ժամանակի ընթացքում ձեռներեցի կամ գործարարի շրջանում կուտակվել է արտադրության և ֆինանսական միջոցների գերակշռող մասը, իսկ աշխատողների շրջանում, որոնք զրկված են անհրաժեշտ մակարդակի սեփականությունից, իրենց ծախսած ֆիզիկական և մտավոր աշխատանքի դիմաց տրվող աշխատավարձը:

Աշխատավարձը, որը Կ. Մարքսի գնահատմամբ համարվում է աշխատուժի գինը, ձևավորվում է աշխատանքային շուկայում, ի տարբերություն արտադրության այլ գործոնների, որոնց արժեքը որոշվում է արտադրական գործոնների շուկայում [3, 222-225]:

Աշխատավարձի արտահայտման կոնկրետ ձևը՝ դրամական արտահայտությամբ, հանդիսանում է աշխատավարձը:

Մեր կարծիքով՝ աշխատավարձը վարձու աշխատողի (բանվորի կամ մենեջերի) աշխատանքի դիմաց տրվող դրամական վարձատրությունն է, իսկ գործարարի համար հանդիսանում է արտադրության մեջ վարձու աշխատուժի ընդգրկման դիմաց կատարվող փոխհատուցվող ծախսերը: Ուստի գործարարը, որպես կանոն, շահագրգռված է շահույթ ապահովելու նպատակով որքան հնա-

րավոր է փոքրացնել արտադրության ընդհանուր ծախսերը արտադրանքի ինքնարժեքի իջեցման միջոցով, որի մեջ զգալի բաժինը կազմում է աշխատավարձը: Նշված պայմաններում գործատուի կամ գործարարի նման վարքագիծը սահմանափակվում է պետության կողմից սահմանվող նվազագույն աշխատավարձի մեծությամբ, որը հիմք է հանդիսանում երկրորդ կնքվող աշխատանքային պայմանագրերի համար, ինչպես նաև գործատուի կողմից տրվող տարբեր փոխհատուցումներով: Հայաստանի Հանրապետության աշխատանքային շուկայում թեև ձևավորվող աշխատավարձի վրա ազդում են գրեթե նույնատիպ բազմաթիվ գործոններ՝ գործազրկության մակարդակը, հարկային և մաքսային քաղաքականությունը, արտադրության գրեթե միևնույն ճյուղային կառուցվածքը և այլն, այնուամենայնիվ, երկրի մարզերում տարբեր մակարդակի վրա են գտնվում միջին ամսական անվանական աշխատավարձերը: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ միջին ամսական անվանական աշխատավարձի չափերը ըստ մարզերի, զգալի տարբեր են և ունեն հետևյալ գրաֆիկական պատկերը:



\* Ներկայացվել է 19.03.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

Ինչպես գծապատկերից, այնպես էլ ՀՀ վիճակագրության վարչության տվյալներից երևում է, որ միջին ամսական անվանական աշխատավարձը Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին կազմել է 116 հազ. դրամ [5, 16]: Ընդ որում՝ նշված թվացող բարձր աշխատավարձը, մեր կարծիքով, ստացվել է ի հաշիվ Երևան քաղաքի և Սյունիքի մարզերի համեմատաբար բարձր աշխատավարձի հաշվին: Քանի որ մեր կողմից կատարված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Երևան քաղաքում համեմատաբար բարձր աշխատավարձի պատճառ է հանդիսացել այն հանգամանքը, որ այստեղ են տեղաբաշխված հանրապետության արտադրական հզորությունների զգալի մասը և ներկրվող ու արտահանվող ապրանքների գերակշռող ծավալները, իսկ Սյունիքի մարզում նկատելիորեն զարգացած են հանքարդյունաբերության շահավետ ճյուղերը, որտեղ աշխատողները ավելի բարձր են վարձատրվում: Նույնիսկ նշված մարզերում ըստ անցկացրած հարցումների, աշխատողների զգալի մասի աշխատավարձը այնքան էլ բարձր չէ, քանի որ աշխատավարձի նշված բարձր մակարդակը տեղի է ունեցել ի հաշիվ գործարարների և նրանց մերձավորների կողմից ստացված անհամեմատ բարձր աշխատավարձի: Նշված գործոնների պայմաններում և Սյունիքի մարզում միջին ամսական անվանական աշխատավարձի չափը կազմել է համապատասխանաբար 125 և 145 հզ. դրամ, որը գերազանցում է այդ ցուցանիշով հանրապետության միջին մակարդակը, համապատասխանաբար, շուրջ 107.8 և 125%-ով:

Վիճակը անհամեմատ անբավարար է Լոռու մարզում, Շիրակում, Տավուշում, Վայոց Ձորում և Արագածոտնում: Այդ մարզերում միջին ամսական անվանական աշխատավարձի չափը անհամեմատ ցածր է հարմապետական միջինից և կազմում է ընդամենը Լոռու մարզում՝ շուրջ 85 հզ. դրամ, Շիրակում՝ 84 հզ. դրամ, Վայոց Ձորում՝ 82 հզ. դրամ և Արագածոտնում՝ 78 հզ. դրամ:

Լոռու մարզում միջին աշխատավարձի չափը 2011 թ. շուրջ 1.7 անգամ ցածր է հանրապետության միջին ամսական անվանական աշխատավարձի մակարդակից, այն դեպքում, երբ նշված մարզը բնակչության թվով հանրապետության մարզերի շարքում գտնվում է երրորդ, իսկ համայնքների թվով՝ երկրորդ տեղում:

Նշված չափանիշով անհամեմատ վատ պայմաններում են գտնվում այն ընտանիքները, որոնք ապրում են կենսաթոշակների և նպաստների հաշվին և ընտանիքի անդամներից ոչ մեկը՝ աշխատատեղ չլիցելու պատճառով, աշխատանք չունի: Այդ պատճառով Լոռու մարզի ընտանիքների զգալի մասը դասվում են աղքատ և ծայրահեղ աղքատ ընտանիքների շարքին:

Մարզում անհամեմատ անհանգստացնող է վիճակը հատկապես իրական աշխատավարձի ուղղությամբ:

Եթե հանրապետությունում, այդ թվում նաև Լոռու մարզում, միջին ամսական անվանական աշխատավարձի մասով որոշակի առաջընթաց է գրանցվել 2011-թ., ապա այլ պատկեր է ստացվում մարզի աշխատողների իրական աշխատավարձի վերլուծության դեպքում [4, 63]:

Մարզի բնակչության զգալի մասը գտնվում է աղքատության շեմին նաև այն պատճառով, որ նրանց եկամուտների, այդ թվում նաև աշխատավարձի զգալի բաժինը (շուրջ 85%) ծախսվում է առաջին անհրաժեշտության ապրանքների ձեռք բերման համար: Իսկ այդ ապրանքների վաճառքի գները 2011 թ.-ին, 2010 թ.-ի համեմատությամբ, աճել են գրեթե 10%-ով:

Դա նշանակում է, որ մարզի բնակչությունը իրական աշխատավարձով ավելի քիչ առաջին անհրաժեշտության ապրանքներ է օգտագործել (միս, կարագ, շաքարավազ, հաց, գազ և այլն), քան 2010 թ.-ին: Հետևապես կարելի է եզրակացնել, որ բնակչության կենսամակարդակը ոչ միայն չի պահպանվել, այլև ավելի է վատացել:


Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Լոռու մարզի աշխատավարձի անմխիթար վիճակի հիմնական պատճառը համարվում է արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման ցածր մակարդակը, որոնք համարվում են մարզի տնտեսության առաջատար ճյուղերը: Դրանք են՝ հումքի մշակման արդյունաբերությունը (Ալավերդու պղնձի գործարանը, քարի մշակման մի շարք ՍՊ ընկերություններ, կարի արտադրական ձեռնարկությունները և այլն), սննդամթերքի արդյունաբերությունը (պահածոների և գյուղատնտեսական մթերքների արտադրությունները և այլն): Նույնիսկ թվարկած առաջատար ճյուղերի արտադրության մակարդակով Լոռու մարզը բավականին հետ է մնում հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր մակարդակից: Այսպես, Լոռու մարզում արդյունաբերության տեսակարար կշիռը հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմում է ընդամենը 6.7%, գյուղատնտեսությունը՝ 10.0%, շինարարությունը, մանրածախ առևտուրը և այլ ծառայությունները համապատասխանաբար՝ 0.7%, 2, 1.5%: Այն դեպքում, երբ նախկին տարիներին (մինչև երկրաշարժը), արդյունաբերական հզորություններով հարուստ ու միաժամանակ գիտության և առողջարանային կենտրոն համարվող Վանաձորը (նախկին Կիրովական) արտադրական արտադրանքի ծավալով համարվում էր հանրապետությունում երկրորդ քաղաքը: Թողարկվող արտադրանքի քանակը՝ հանրապետության համախառն արտադրանքի ծավալի մեջ

կազմում էր շուրջ 10%-ը:

Ներկայումս արտադրական մեծ հզորություն և աշխատանքային հարուստ փորձ ունի Վանաձորի քիմիական համալիրը՝ հատկապես գյուղատնտեսական պարարտանյութի արտադրության գործում: Արտադրված պարարտանյութը մրցունակ էր նախկինում, մրցունակ է մնացել նաև հիմա: Սակայն այն շահագործելու փոխարեն, որը կատեղծեր հազարավոր աշխատատեղեր և կբավարարեր գյուղացու ողջ պահանջարկը, պարարտանյութը ներկրվում և բարձր գնով վաճառվում է գյուղացիներին: Նույն ճակատագրին են արժանացել նաև նախկինում արդյունավետ գործող Այրումի կղմինդրի և պահածոների գործարանները, Սպիտակի վերելակի և շաքարի գործարանները, Վանաձորի մորթու-մուշտակի և տրիկոտաժի ֆաբրիկաները, Գուգարքի կարի արտադրական միավորումը և այլն: Նշված կազմակերպություններում, որտեղ նախկինում աշխատում էին ավելի քան 100 հազ. մարդ, գրեթե ոչինչ չի արվում աշխատանքը սկսելու համար: Մեր կարծիքով՝ նրանց նույնիսկ մասնակի շահագործումը լրիվ կլուծի Լոռու մարզի բնակիչների աշխատանքի խնդիրը, որոնց թիվը կազմում է շուրջ 280 հազ. մարդ: Իսկ ներկայացված հարցի լուծման ուղղությամբ կառավարությունը արտոնյալ պայմաններ պետք է ստեղծի (հարկերից ժամանակավոր

ազատում, որոշակի սուբսիդավորում, երկարաժամկետ և ցածր տոկոսադրույքով վարկերի տրամադրում և այլն) նշված ձեռնարկությունների սեփականատերերի համար: Միաժամանակ գործնական քայլերի պետք է դիմի, որպեսզի նրանք կատարեն նախկինում ստանձնած իրենց պարտավորությունները: Մեր կարծիքով՝ նշված հնարավորությունների արդյունավետ օգտագործման դեպքում մարզում զգալիորեն կբարձրանա ինչպես միջին ամսական աշխատավարձը, այնպես էլ իրական աշխատավարձը, գործազրկության կրճատման, արտադրական և գյուղատնտեսական ապրանքների արտադրության ավելացման շնորհիվ: Բոլոր նախադրյալները կան նաև Լոռու մարզում զարգացնելու ինչպես արդյունաբերությունը՝ հատկապես քիմիական, թեթև և սննդի ճյուղերում, որի գործարկման ուղղությամբ բազմաթիվ հուսադրող որոշումներ են կայացվել, այնպես էլ ֆինանսական և ապահովագրական տեղեկատվության փոխադրումների, մեծածախ և մանրածախ առևտրի, գյուղատնտեսության ու տուրիզմի ոլորտներում, որի ուղղությամբ հարուստ փորձ ունի Լոռու մարզի բնակչությունը: Նշված ճյուղերում նույնպես բավականին մեծ է միջին ամսական աշխատավարձի մակարդակները:

Այն Հայաստանում 2011 թ. դրությամբ ունի հետևյալ գծապատկերը.



Նշված գծապատկերում ներկայացված տվյալները նույնպես վկայում են, որ եթե Վանաձոր քաղաքում հաշվի առնեն մեր կողմից նշված առաջարկությունները և ձեռնամուխ լինեն նրա ներդրման գործին, ապա դրանից մեծ օգուտ կստանա ինչպես Լոռու մարզի բնակչությունը, այնպես էլ հանրապետությունը ամբողջությամբ վերցրած: Կլուծվեն բազմաթիվ խնդիրներ, կստեղծվեն աշխատատեղեր, կկրճատվեն գործազրկությունն ու զնաճը, կբարձրանա բնակչության կենսամակարդակը, որը դրական ազդեցություն կունենա արտագաղթի կրճատման վրա:

Միաժամանակ նշված ներդրումները մեծ ծախսեր չեն պահանջում, քանի որ Լոռու մարզը ունի այդ ուղղությունները զարգացնելու աշխատանքային, գիտական մեծ ներուժ, աշխատանքային հարուստ փորձ: Միայն մարզի աշխարհագրական դիրքը, հարուստ բնաշխարհն ու ազգային անգնահատելի սովորույթները հազվադեպ արժեքներ են հատկապես տուրիզմի զարգացման գործում: Ուղղակի պատկան մարմինները ՀՀ կառավարությունը, նախարարությունները, մարզի և համայնքների ղեկավարները, պետք է գտնվեն իրենց կոչմանը արժանի, նախաձեռնող և կամեցող, գործունյա և պատասխանատու՝ իրենց պարտականությունների կատարման գործում: Նման վարքագիծ պետք է դրսևորեն նաև բնակիչները: Նրանք աշխատանքային հարցերը պետք է լուծեն ոչ թե արտագնա աշխատանքի գնալու ճանապարհով, այլ սեփական հող ու ջրին տեր կանգնելու նախաձեռնություններով:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մենեջմենթ, Յու. Սուվարյանի խմբ., Երևան, «ՏՆՏԵՍԱՊԵՆՏ», 2002:
2. **Травин В. В., Дятлов В. А.** Основы кадрового менеджмента, М., «Дело», 2001.
3. **Дадот Р.** Менеджмент, М., ПИТЕР, 2000.
4. **Акулов В. Б., Рудаков М. Н.,** Теория организации, Учебное пособие, 2-е изд., Петр ГУ, 2001.
5. Бизнес и менеджер, М., Азимут-центр, 2002.
6. **Виссема Х.,** Менеджмент в подразделениях фирм, М, «ИНФРА- М», 2006
7. **Виханский О. С., Наумов А. Н.,** Менеджмент, учебник для экон. спец. Взов, М., «Высшая школа», 2002.
8. **Герчикова Н. И.,** Менеджмент, 3-е изд., М., «Банк и Буржуа», 2003.
9. **Кабушкин Н. И.,** Основы менеджмента, Учебное пособие, М., 2001
10. Մենեջմենթ, Յու. Սուվարյանի ղնդի. ղեկ և խմբ., Եր., «ՏՆՏԵՍԱՊԵՆՏ», 2002:
11. **Опалев А. В.,** Умение общаться с людьми, Этикет делового человека, М, «Кулатура и спорт», «ЮНИТИ», 2004.
12. Основы предпринимательской дела (под ред. Ю. М. Осипова) , М, «Бек», 2007.
13. Основы предпринимательской деятельности, Менеджмент, учебное пособие (под ред. Власовой Б. М.). М, 2005.
14. **Плабонов А.И.,** менеджмент (конспект лекции на схемах), Т, ПРИОР, 2003.
15. **Старобинский Э. Е.,** Основы менеджмента на коммерческой фирме, М., 2004.
16. **Шекшня С. В.,** Управление персоналом современной организации, М, 2006.

#### EVALUATION OF AN INDICATOR ON THE LEVEL OF LIVING

**S. A. SARUKHANYAN**

Candidate of economic sciences, assistant professor

**T. APRESYAN**

Student SEUA (polytechnic)

#### Summary

Salary, as the most important indicator of estimation of living standards, although has increased in last years, but is still not satisfactory for improvement of the living standard.

The article discusses a series of questions of the salary increase and marks its ways in Lori region.



## ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ\*

### Ս. Ա. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ

### Անուշիկ ՀԱԿՈՒՅԱՆ

ԵՊԵՀ ուսանողուհի



**Յ**ուրաքանչյուր երկրի՝ այդ թվում նաև Հայաստանի տնտեսական ոլորտների զարգացման գործում նշանակալից դեր է կատարում ֆինանսական շուկան՝ համարվելով որպես տնտեսական համակարգում ներդրումների ապահովման կայուն, երաշխալիքային և մշտական գործող մեխանիզմ:

Ֆինանսական շուկան տնտեսության մեջ կատարում է կարևոր դեր. խթանում է տնտեսական աճը, արդյունավետ տեղաբաշխում ֆինանսական ռեսուրսները, ինչպես նաև ապահովում դրանց արդյունավետ օգտագործումը: Դա նշանակում է, որ ֆինանսական ռեսուրսները ուղղորդվում են այնտեղ, որտեղից հնարավոր է ստանալ ամենամեծ արդյունքը: Հետևապես, կարելի է եզրակացնել, որ ֆինանսական շուկան դառնում է ինքնակարգավորվող համակարգ, որտեղ փոխհամաձայնեցվում են նրա մասնակիցների շահերը, որի արդյունքում կատարվում է ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխման գործընթացը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում գործում են ֆինանսական համակարգի երկու տեսակ:

Ֆինանսական շուկան տնտեսության մեջ կատարում է կարևոր դեր. խթանում է տնտեսական աճը, արդյունավետ տեղաբաշխում ֆինանսական ռեսուրսները, ինչպես նաև ապահովում դրանց արդյունավետ օգտագործումը: Դա նշանակում է, որ ֆինանսական ռեսուրսները ուղղորդվում են այնտեղ, որտեղից հնարավոր է ստանալ ամենամեծ արդյունքը: Հետևապես, կարելի է եզրակացնել, որ ֆինանսական շուկան դառնում է ինքնակարգավորվող համակարգ, որտեղ փոխհամաձայնեցվում են նրա մասնակիցների շահերը, որի արդյունքում կատարվում է ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխման գործընթացը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում գործում են ֆինանսական համակարգի երկու տեսակ:

Առաջինը՝ հարաբերականորեն ներգործող, որտեղ առկա է պետական կառավարման մարմնի կողմից ներդրումային ռեսուրսների տեղաբաշխման նկատմամբ որոշակի ազդեցությունների պահպանում:

Երկրորդը՝ մեծապես ազատականացված, որ-

տեղ այդ ազդեցությունը գրեթե հավասարեցված է զրոյի: Նշված պայմաններում, երբ դրամական կապիտալը ստեղծված է և դեռ գտնվում է արտադրական ոլորտում, այն հանդես է գալիս որպես «մաքուր» կապիտալ, իսկ երբ այն տրվում է որպես վարկ տնտեսության այլ ոլորտներին, վերափոխվում է վարկային կապիտալի:

Վարկային կապիտալի շուկան տնտեսության համար ունի խթանիչ դեր: Այն օգնում է արտադրության ընդլայնմանը, ապրանքաշրջանառությանը, երկրի ներսում դրամի շարժին, կարգավորում է դրամական խնայողությունների ուղղորդումը կապիտալ ներդրումներում:

Ընդ որում՝ արժեթղթերի շուկան, համարվելով ֆինանսական համակարգի կարևորագույն տարրերից մեկը, քանի որ մի կողմից առաջադրում է ֆինանսական գործիքների շրջանառության անհրաժեշտ պայման, մյուս կողմից՝ ապահովում ֆինանսական ռեսուրսների գոյացման և բաշխման մրցակցային լայն միջավայր: Ուստի արժեթղթերի շուկան գործ ունի 2 հիմնական բաղադրիչների՝ դրամական և կապիտալի շուկաների հետ [9, 27]: Դրամական շուկան իրենից ներկայացնում է կարճաժամկետ ֆինանսական պարտավորությունների և իրավունքների շուկա, որտեղ որպես շուկայի գործիքներ են համարվում պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերը, առևտրային արժեթղթերը և այլն, որոնք հանդես են գալիս որպես դրամավարկային քաղաքականության գործիք, իսկ բաժնետիրական ընկերությունների կողմից թողարկվող բաժնետոմսերն ու պարտատոմսերը համարվում են առևտրային կապիտալի շուկայի գործիքներ, որոնք որպես ֆինանսական գործիքներ ծառայում են երկարաժամկետ տնտեսական ծրագրերի իրականացման

\* Ներկայացվել է 19.03.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

նպատակով:

Արժեթղթերի շուկան, տնտեսության համար կատարելով նաև արժեթղթերի երկրորդային շուկայում ֆինանսական և դրամական միջոցների օպտիմալ վերաբաշխում, ազատ մրցակցային պայմանների ստեղծման միջոցով հանդես է գալիս որպես երկրում գործող տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեության արդյունավետության գնահատման և «գնանշման» միջոց [8, 55-56]:

Արժեթղթերի շուկայի շնորհիվ տնտեսության մեջ կատարվում են ներդրումներ՝ միավորելով մի կողմից իրավաբանական անձանց, ովքեր թողարկում են արժեթղթեր մյուս կողմից՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնք ցանկություն ունեն ներդնելու իրենց միջոցները ներդրումային տարբեր ծրագրերում, ինչպես նաև նրանց, ովքեր միջնորդային գործունեություն են ծավալում արժեթղթերի շուկայում:

Այսպիսով, եթե փորձենք վերը նշված տեսանկյունից տալ արժեթղթերի շուկայի սահմանումը, կարող ենք ասել, որ արժեթղթերի շուկան ֆինանսական շուկայի մի մասն է, որի միջոցով տեղի է ունենում ֆինանսական ռեսուրսների արագ տեղաշարժ տնտեսության տարբեր ճյուղեր՝ ապահովելով ներդրումների ակտիվացում:

Արժեթղթերի շուկան կարևոր տեղ է զբաղեցնում շուկայական հարաբերությունների մեջ և կատարում է հետևյալ հիմնական գործառնությունները.

- կարգավորում և ուղղորդում է ֆինանսական հոսքերը,
- հանդիսանում է ներդրումների ներգրավման մեխանիզմ,
- պետության համար հանդիսանում է դրամական միջոցների պետական բյուջե ներգրավման մեխանիզմ,
- հանդիսանում է բնական զավթման մեխանիզմ (հիմնականում վերահսկիչ փաթեթի ձևով բերման միջոցով):

Արժեթղթերի շուկան միաժամանակ հանդիսանում է նաև դրամական միջոցների հոսքերը տնտեսության ճյուղերի և կազմակերպությունների ավելի նախընտրելի ուղղորդող մեխանիզմ (տես գծապատկեր 1):

Բացի հիմնական գործառնություններից՝ արժեթղթերի շուկան ունի մի շարք գործառնություններ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել համաշուկայականի և յուրահատուկի [2, 29]:

Համաշուկայական գործառնությունների թվին են դասվում.

- առևտրային՝ տվյալ շուկայում գործարքների կատարումից շահույթի ստացում,
- գնային՝ գնագոյացում և դրանց մշտական

շարժում,

- տեղեկատվական՝ իր մասնակիցներին անհրաժեշտ շուկայական տեղեկատվության տրամադրում

- կարգավորող՝ կանոնների ստեղծում, վեճերի հարթում, հսկողություն, կառավարում և այլն: Յուրահատուկ գործառնությունների թվին են դասվում.

- վերաբաշխման, դրա մեջ են մտնում՝
  - ա) դրամական միջոցների բաշխում տնտեսության ճյուղերի ու ոլորտների միջև

- բ) խնայողությունների (հիմնականում բնակչության) փոխանցում ոչ արտադրողականից արտադրողական վիճակի

- գ) Բյուջեի դիֆիցիտի ֆինանսավորում առանց ինֆլիացիայի (առանց դրամական էմիսիայի)

- գնային և ֆինանսական ռիսկերի ապահովագրում – այս գործառնությամբ հնարավոր է դառնում ածանցյալ արժեթղթերի ներմուծումով (ֆյուչերսային և օպցիոնային պայմանագրեր):

Արժեթղթերի շուկայի բաղկացուցիչ մասերը իրենց հիմքում ունեն ոչ թե արժեթղթերի այս կամ այն տեսակ, այլ այդ շուկայում առևտրի եղանակը: Այս տեսանկյունից տարբերվում են.

- արժեթղթերի առաջնային և երկրորդային շուկաներ,
- կազմակերպված և չկազմակերպված շուկաներ
- բորսայական և արտաբորսայական շուկաներ
- ավաղական և կոմայուտորացված շուկաներ
- դրամարկային և շտապ շուկաներ:

Առաջնային շուկան որոշակի կանոններին համապատասխան, առաջնային թողարկողներից արժեթղթերի ձեռք բերումն է [9, 6]:

Երկրորդային շուկան անցյալում թողարկված արժեթղթերի շրջանառությունն է:

Կազմակերպված շուկան մասնագիտացված անձանց միջև, օրենսդրական ակտերի հիման վրա, արժեթղթերի շրջանառությունն է:

Չկազմակերպված շուկան բոլոր մասնակիցների համար ենթադրում է արժեթղթերի շրջանառություն՝ առանց միանման կանոնների:

Երկրորդային շուկան բաժանվում է բորսայականի և արտաբորսայականի:

Բորսայական շուկան երբեմն անվանում են I կարգի շուկա, իսկ արտաբորսայականը՝ II կարգի շուկա:

Լինում է նաև III կարգի շուկա, որին սովորաբար վերագրում են բորսայում գրանցված արժեթղթերով արտաբորսայական շրջանառությունը:

IV կարգի շուկան արժեթղթերի էլեկտրոնային առքն ու վաճառքն է առանց միջնորդների:

Այս չորս շուկաները որոշ չափով դիմակայում են մեկ մյուսին, բայց և լրացնում են միմյանց:



Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարբեր երկրներում բորսայական և արտաբորսայական շրջանառության հարաբերակցությունն ունի հետևյալ բնութագիրը. ԱՄՆ-ում, օրինակ, 3:1, ճապոնիայում՝ բաժնետոմսերի ընդամենը 1%-ն է շրջանառվում արտաբորսայական շուկայում, Ավստրալիայում արտաբորսայական շրջանառությունը ամբողջ արժեթղթերի շուկայում կազմում է 30%:

Արժեթղթերի շուկայի պատկերը ներկայացնում ենք գծապատկեր 2-ի միջոցով:

Արժեթղթերի շուկայի դասակարգում կարելի է կատարել նաև ըստ արժեթղթերի տեսակների.

- Միջազգային և ազգային
- Ազգային և տարածաշրջանային
- Որոշակի կոնկրետ տեսակի արժեթղթերի շուկա
- Պետական և կորպորատիվ արժեթղթերի շուկա
- Առաջնային և ածանցյալ արժեթղթերի շուկա:

Հայաստանի արժեթղթերի շուկան կազմակերպվել է չորս ֆոնդային բորսաների շրջանակներում՝ չնայած այն հանգամանքին, որ սակարկությունների հսկայական ծավալ տեղի է ունենում արտաբորսայական ուղղակի շուկայում (ԱՌԾ):

- Դրանք են՝
  - Երևանի ֆոնդային բորսա (ԵՖԲ)
  - Միավորված ֆոնդային բորսա (ՄՖԲ)
  - Ապրանքային և ֆոնդային «Ադամանդ» բորսա (ԱՖԱԲ)
  - Գյումրիի ֆոնդային բորսա (ԳՖԲ)

ԵՖԲ-ն ավանդաբար եղել է Հայաստանի խոշորագույն բորսան առուծախի ծավալների, ցուցակագրված ընկերությունների թվի և մասնակիցների ու բաժնետերերի թվի առումով: Այնուհանդերձ, 1998 թ. մայիսին ստեղծված ՄՖԲ-ն 1999 թ. և 2000 թ. սկզբերին արագորեն նվաճել է շուկա-


յաբաժին՝ իրեն գրավելով ամենակտիվ բրոքերներին և ցուցակագրելով նոր ընկերություններ: ԱՖԱԲ-ն, ինչպես հետևում է անվանումից, զբաղվում է ապրանքների և դրանց ածանցյալների առուծախով, որոնք կազմում էին ԱՖԱԲ-ի շրջանառության զգալի մասը: Այս բորսան ունի շուկայի մասնակիցների ընդունման ազատական քաղաքականություն: Սա ավելի շուտ բաց աճուրդի կենտրոն էր, քան կազմակերպված ֆոնդային բորսա, իսկ ԳՖԲ-ն շրջանային միակ ֆոնդային բորսան է, որը գտնվում էր Գյումրիի քաղաքում և անցյալում միշտ եղել է չորս բորսաներից ամենափոքրը:

Արժեթղթերի շուկայի մասնակիցների համար որպես արժեթղթերի գործարքների հիմնական գործիք հանդիսացել են պետական պարտատոմսերը, որոնք գործել են կարճաժամկետ և միջնաժամկետ տևողությամբ: Պետական պարտատոմսերի շուկայում գործարքները հիմնականում կենտրոնացվել են բանկերում, որտեղ պետական կարճաժամկետ պարտատոմսերի բաժինը կազմել է 77%, իսկ երկարաժամկետ պարտատոմսերինը՝ 23%:

Մեր հանրապետությունում 2006 թ. հունվարի 1-ից ՀՀ Արժեթղթերի հանձնաժողովի փոխարեն ՀՀ Կենտրոնական բանկը դառնում է արժեթղթերի շուկայի կարգավորողը և ֆինանսական համակարգի միասնական վերահսկիչ մարմինը, որին հաջորդում է 2007 թ. «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի ընդունումը: Սա հանգեցրեց նրան, որ ՀՖԲ անդամների ընդհանուր ժողովի որոշմամբ, «Հայաստանի ֆոնդային բորսա» ինքնակարգավորվող կազմակերպությունը վերակազմավորվեց բաց բաժնետիրական ընկերության:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում արժեթղթերի շուկայի ձևավորման և կայացման ուղղությամբ թեև իրականացվել են որոշակի աշխատանքներ, սակայն մեր կարծիքով կան բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք անհրաժեշտ են ներառել արժեթղթերի շուկայի ենթակառուցվածքային համակարգի տարրերի գործունեության ակտիվության բարձացմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների մեջ, իսկ ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծման համար դրանց իրականացումը մեր կարծիքով պահանջում է պետական ակտիվ քաղաքականության հրատապ լուծումներ:

Հանրապետության արժեթղթերի շուկային առայժմ բնորոշ է կառուցվածքային և ենթակառուցվածքային թերզարգացվածություն, մասնավորապես արժեթղթերով իրականացվելիք գործարքների կնքման, կատարման, արժեթղթերով հավաստվող, նրանց սեփականության և այլ գույքային



Գծապատկեր 2

իրավունքների ամրագրման հաշվառման, ինչպես նաև շուկայական տեղեկատվության ու հեռահաղորդակցության բնագավառներում: Բացի այդ՝ ձևավորված է մատուցող ծառայությունների համալիրը, որոնցով պայմանավորված են դրանց բարձր ռիսկայնությունը և ցածր որակը: Հարկ է նշել, որ թեև հանրապետության արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձինք բավականին փորձ ունեն, սակայն բացակայում են նրանց կողմից մատուցվող ծառայությունների բազմազանությունն ու անհրաժեշտ որակական հատկանիշները: Բացի նշվածից՝ ՀՀ-ում արժեթղթերի շուկայի գործառնություններում ձևավորվող ներդրումային գործընթացը դեռևս լիակատար չի խթանում ուղղակի ներդրումների իրականացմանը, այն դեպքում, երբ շուկայի հիմնական նպատակը ֆիզիկական ակտիվների աճի, փաթեթային ներդրումների ծավալի և ոչ նյութական ակտիվների ավելացումն է: Բացի այդ՝ արժեթղթերի շուկայի ֆինանսական գործառնությունը կրում է ներդրումային սահմանափակ բնույթ, որը թույլ չի տալիս ստեղծել որակապես նոր ֆինանսական իրավիճակ, որտեղ բաժնետիրական ընկերությունների կողմից ներդրումների ներգրավումը կհամարվի տնտեսական անհրաժեշտություն: Իրական ներդրումային քաղաքականության իրականացման բարդ իրավիճակն առաջացել է արժեթղթերի ենթակառուցվածքի թերզարգացման և ներդրումային բնույթի գործառնությունների վերջնական արդյունքների գնահատման բացակայության պատճառով:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Մենեջմենթ, Յու. Սուվարյանի խմբ., Երևան, «Տնտեսագետ», 2002:
2. **Травин В. В., Дятлон В. А.** Основы кадрового менеджмента, М., “Дело”, 2001.
3. **Дадот Р.** Менеджмент, М., ПИТЕР, 2000.
4. **Акулов В. Б., Рудаков М. Н.,** Теория организации, Учебное пособие, 2-е изд., Петр ГУ, 2001.
5. Бизнес и менеджер, М., Азимут-центр, 2002.
6. **Виссема Х.,** Менеджмент в подразделениях фирм, М, “ИНФРА- М”, 2006
7. **Виханский О. С., Наумов А. Н.,** Менеджмент, учебник для экон. спец. Взов, М., “Высшая школа”, 2002.
8. **Герчикова Н. И.,** Менеджмент, 3-е изд., М., “Банк и Биржа”, 2003.
9. **Кабушкин Н. И.,** Основы менеджмента, Учебное пособие, М., 2001
10. Մենեջմենթ, Յու. Սուվարյանի ընդհ. դել և խմբ., Եր., «Տնտեսագետ», 2002:
11. **Опалев А. В.,** Умение обращаться с людьми, Этукет делового человека, М, “Кулатура и спорт”, “ЮНИТИ”, 2004.
12. Основы предпринимательской дела (под ред. Ю. М. Осипова) , М, “Бек”, 2007.
13. Основы предпринимательской деятельности, Менеджмент, учебное пособие (под ред. Власовой Б. М.) М, 2005.
14. **Плабонов А.И.,** Менеджмент (конспект лекции в схемах), Т, ПРИОР, 2003.
15. **Старобинский Э. Е.,** Основы менеджмента на коммерческой фирме, М., 2004.
16. **Шекшня С. В.,** Управление персоналом современной организации, М, 2006.

THE TENDENCIES OF DEVELOPING VALUABLE PAPERS MARKET IN THE SYSTEM OF FINANCIAL MARKET

**S. A. SARUKHANYAN**

Candidate of economic sciences, assistant professor

**A. HAKOBYAN**

Student SEUA (polytechnic)

Summary

The market of valuable papers which is the subsystem of financial market has considerable foremost significance in the development of economic branches.

Peculiarities of valuable papers market are discussed in the article, besides that the tendencies of its development are also mentioned there.

# ՓՈՔԻ ՈՒ ՄԻՋԻՆ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ\*

## Արսեն ԱՍՐՅԱՆ

Տնտեսական գիտությունների թեկնածու



**Փ**ոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնահարցերը ներկայումս գտնվում են բազմաթիվ երկրների կառավարությունների ուշադրության կենտրոնում:

Այս ոլորտի հիմնահարցերով են զբաղվում նաև մի շարք միջազգային կազմակերպություններ և ասոցիացիաներ, որոնք բարձրացնում են ոլորտում առկա խնդրահարույց հարցերը: Ներկայացնում են իրենց առաջարկները համապատասխան լուծման տարբերակների վերաբերյալ: Այս ոլորտի ամենաբարդ հիմնահարցերի թվին են պատկանում հարկային համակարգի հետ առնչվող խնդիրները: Հարկ ենք համարում նշել, որ ՓՄՁ-ների գործունեության արդյունավետության բարձրացման հիմքերն առաջին հերթին հարկավոր է փնտրել արդյունավետ գործող հարկային համակարգի մեջ:

Փորձենք ներկայացնել հարկային համակարգում հանդիպող հիմնական թերությունները և անցկացնել համեմատություն համաշխարհային փորձի, ՀՀ հարկային օրենսդրության ու ՓՄՁ-ների գործունեությունը բնութագրող մի շարք ցուցանիշների համադրության միջոցով:

ՓՄՁ-ների համար հարկային համակարգի բարձր ծախսերի և խոչընդոտների հիմնական պատճառ են հանդիսանում.

- հարկային օրենսդրության հաճախակի փոփոխությունները,
- հարկային համակարգի ոչ ամբողջականությունը,
- հարկային վարչարարության տարբեր ձևերի գոյությունը,
- հարկային օրենսդրության ոչ պարզությունը,

- կարճ և ոչ ճկուն հարկային վճարումների վերջնաժամկետները,
- ձեռնարկությունների գրանցման գործընթացների բարդությունը:

Այս հիմնահարցերը բնորոշ են գրեթե բոլոր երկրներին՝ արտահայտված իրենց թույլ կամ ուժեղ կողմերով, սակայն դրանք բոլորն էլ ունեն լուծման անհրաժեշտություն: Եվ եթե պատկերացնենք, որ Հայաստանն ընտրել է եվրոպական երկրների հետ ինտեգրացման ուղին, ապա դա նշանակում է, որ այս ոլորտում ևս ունի բավականին շատ անելիքներ, որպեսզի և՛ օրենսդրական առումով, և՛ իրենց տնտեսական ներուժով մեր երկրի ՓՄՁ-ները կարողանան ինտեգրվել եվրոպական ընտանիքի երկրներին:

Եվրոպայում կան ավելի քան 23 մլն ՓՄՁ-ներ, որոնք ապահովում են ավելի քան 99 մլն աշխատատեղ, և որոնց գործունեության կարգավորման հարցերը Լիսաբոնի հանձնաժողովի կողմից մշակված ռազմավարական ծրագրի հիման վրա փորձում է կարգավորել եվրոպական հանձնաժողովի ձեռնարկատիրության և արդյունաբերության հարցերի վարչությունը: Իհարկե, որոշ դեպքերում բավականին բարդ է համեմատություն անցկացնել եվրոպական ՓՄՁ-ների և հայաստանյան ՓՄՁ-ների միջև, քանի որ հսկայական տարբերություններ գոյություն ունեն: Բայց և այնպես կան մի շարք առանցքային հարցեր, որոնք միևնույն են գրեթե բոլոր երկրների համար: Դրանք են՝ տեղեկատվության թափանցիկությունը, գրանցման գործընթացները, հարկային հաշվապահությունը, փաստաթղթերի լրացումն ու վճարման համակարգերը:

Տեղեկատվության թափանցիկությունը շատ կարևոր է, քանի որ ՓՄՁ-ներն իրենց տեղեկատվությունը հիմնականում ստանում են հարկային ծառայությունների կողմից հրապարակվող նյութերից, ինչպես նաև հարկային ծառայություններին համապատասխան ինտերնետային կայքերից:

Եվրոպական երկրները օրենսդրական փո-

\* Ներկայացվել է 05.03.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

փոխությունները և համապատասխան ցուցումները ձեռնարկություններին ուղարկում են էլեկտրոնային փոստի միջոցով, ինչպես նաև կազմակերպում են համապատասխան սեմինարներ ձեռնարկությունների հաշվապահներին վերապատրաստելու և իրազեկելու համար կամ ստեղծում են կենտրոններ, որտեղ ձեռնարկությունները կարող են զանգահարել և ստանալ համապատասխան տեղեկատվություն:

Անհրաժեշտ է նշել, որ վերոնշյալ տեղեկատվության փոխանցման աղբյուրներից ՀՀ ձեռնարկություններն այնքան էլ չեն կարողանում օգտվել, ինչը չի կարող բացասական չանդրադառնալ նրանց գործունեության արդյունքների վրա:

Հաջորդ հիմնահարցը, որին ցանկանում ենք անդրադառնալ պայմանավորված է ձեռնարկությունների գրանցման գործընթացների հետ: Սեր հանրապետությունում ձեռնարկությունները իրենց գործունեությունը սկսելուց առաջ պետք է անցնեն մի շարք գործընթացների միջով՝ կապված կազմակերպության ստեղծման և գրանցման հետ:

Նոր ձեռնարկություն բացելու համար պահանջվում են թվով 9 գործընթացներ, 18 օր ժամանակ, իսկ լիցենզավորված գործունեություն իրականացնող ձեռնարկությունները պարտավոր են անցնել 19 գործընթացների միջով՝ դրանց վրա ծախսելով ավելի քան 116 օր<sup>1</sup>: Այս գործընթացները, իհարկե, բավականին բարդացնում են ձեռնարկատիրական գործունեություն սկսելը: Բացի դրանից՝ ձեռնարկությունները ստիպված են գործ ունենալ մի շարք պետական մարմինների հետ: Համաշխարհային պրակտիկայում ձեռնարկությունները առնչվելով ընդամենը մեկ մարմնի հետ կարող են ավարտել այս ամբողջ գործընթացը, ավելին՝ որոշ երկրներում գործում է ձեռնարկությունների գրանցման և հարկերի վճարման էլեկտրոնային համակարգ: Այսինքն՝ նվազագույնի են հասցված բյուրոկրատական շփումները, կատարվող ծախսերը, և առավելագույնս պարզեցված է գրանցման գործընթացը:

Կարևոր ոլորտ է համարվում նաև հարկային հաշվապահությունը: Աշխարհի երկրներից շատերում հարկային հաշվառման համակարգն ունի ամբողջական կամ համալիր բնույթ: Ստացվում է այնպես, որ հսկա կորպորացիաները և փոքր ձեռնարկությունները պարտավոր են լրացնել միևնույն փաստաթղթերը: Այս երևույթը հանգեցրել է նրան, որ եվրոպական երկրներից շատերն այժմ փորձում են ձեռնարկությունների դասակարգման հիման վրա պարզեցնել նաև հարկային հաշվապահության համակարգը, այսինքն՝ ցուցաբերել տարբերակված մոտեցում:

Բավականին մեծ թվով երկրներ վերջին մի քանի տարիների ընթացքում իրականացրած հարկային բարեփոխումների արդյունքում անցում են կատարել էլեկտրոնային լրացման համակարգի, որն իր դրական ազդեցությունն է թողնում կազմակերպությունների գործունեության վրա:

Մյուս կարևոր գործոնը, որի մասին կցանկանայինք խոսել, կապված է հարկային վճարումների քանակի հետ: Առավել բարդ հարկային համակարգ ունեցող երկրներում՝ մասնավորապես ՀՀ-ում ձեռնարկատերերը ստիպված են տարվա ընթացքում կատարել մի շարք հարկային վճարումներ: ՓՄՁ-ների համար, որոնք ունեն փոքր անձնակազմ, սա կարող է լուրջ խնդիր հանդիսանալ:

Օրինակ՝ Շվեյցարիայում գոյություն ունի հարկերի վճարման online համակարգ: Այս համակարգի առավելությունն է, որ կորպորացիաների եկամտահարկը, ԱԱՀ-ը, սոցիալական վճարները, աշխատավարձից վճարվող հարկերը վճարվում են միևնույն ձևով: Համակարգի առաջին առավելություններից մեկն այն է, որ նույնականացված է հարկերի հաշվարկման գործընթացը: Ի տարբերություն եվրոպական մի շարք երկրների՝ զարգացող երկրներից շատերում՝ Սիրիա, Պապուա Նոր Գվինեա, Չինբաբվե և այլն, ձեռնարկատերերը ստիպված են ներկայանալ հարկային ծառայություն ու հարկային տեսուչի հետ համաձայնության գալ վճարվելիք հարկերի գծով կատարված հաշարկների ճշգրտության վերաբերյալ: Օրինակ՝ Կոնգոյի Հանրապետությունում ձեռնարկությունները տարվա ընթացքում պարտավոր են կատարել թվով 89 վճարումներ, դրանց վրա ծախսել 106 օր և իրենց շահույթի ավելի քան 65.4%-ը: Բացի այդ՝ կազմակերպություններն այս երկրում ստիպված են լրացնել 50 էջ՝ աշխատավարձի գծով պահվող վճարների և 36 էջ՝ հարկերի մասով: Եթե համեմատելու լինենք Բելառուսի և Շվեյցարիայի հարկերի վճարման համակարգերը, ապա պետք է նշել, որ Շվեյցարիան online մեկ ձևաթղթով իրականացնում է բոլոր հարկային վճարումները, որը, ի դեպ, ավելի արդյունավետ է քան Բելառուսում մեկ տարվա ընթացքում 124 անգամ կատարվող վճարումների համակարգը: Եվ այն երկրները, որոնք ունեն հարկային վճարման բարդ համակարգ, չեն կարողանում ձևավորել արդյունավետ ձեռնարկատիրական միջավայր: Ինչպես նաև նվազում է տվյալ երկրում ձեռնարկությունների թիվը, քանի որ նման պարագայում նրանց գործունեությունը դառնում է աննպատակահարմար: Օրինակ՝ Բրազիլիայում, վերջերս իրականացված նմանատիպ հարկային բարեփոխումների արդյունքում գրանցվող ձեռնարկու-

թյունների թիվը ավելացել է 13%-ով:

Այս երկրները, որոնք շարժվում են հարկային համակարգի պարզեցման ճանապարհով, շահում են նաև գործազրկության կրճատման բնագավառում, այսինքն՝ կոռեյացիոն կապ գոյություն ունի հարկային համակարգի պարզեցման և գործազրկության մակարդակի կրճատման միջև: Վերջինս ունի իր բացատրությունը, այն է՝ հարկային համակարգի պարզեցումն իր անմիջական ազդեցությունն է թողնում ՓՄՁ-ների զարգացման վրա, որտեղ ընդգրկված են մեծ թվով աշխատողներ, հետևաբար, խթանելով ՓՄՁ-ների գործունեությունը հարկային համակարգի կատարելագործման միջոցով, պետությունը շահում է նաև նոր աշխատատեղեր ստեղծելու առումով:

Շատ կարևոր է նաև այն, որ 2010-2011 թթ. ընթացքում Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի մի շարք երկրներում իրականացվել են հարկային վճարումների համակարգի բարեփոխումներ, որոնք ազդել են հարկային եկամուտների ՅՆԱ-ի մեջ դրանց ունեցած տեսակարար կշռի ավելացման վրա: Օրինակ՝ Չեխիայում եկամտահարկի մուտքերի տարեկան ավելացումը կազմել է 20% այն բանից հետո, երբ կրճատվել են այդ հարկի հարկման դրույքաչափերը 2009-2010 թթ. ընթացքում: Եվ ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, վերջին 20 տարիների ընթացքում՝ սկսած 1985 թ., հարկային դրույքաչափերն ունեն նվազման միտում: Բայց և այնպես որոշ աֆրիկյան երկրներում և ներկայիս ԱՊՀ երկրներում դեռևս պահպանվում են հարկային բարձր դրույքաչափերը, որն իր բացասական ազդեցությունն է թողնում այդ երկրների տնտեսությունների զարգացման վրա՝ կաշկանդելով հիմնականում ՓՄՁ-ների գործունեության ընդլայնումը:

Այժմ փորձենք աղյուսակ 1-ի օգնությամբ ներկայացնել հարկերի վճարման ամենապարզ (հեշտ է վճարել հարկերը) և ամենաբարդ (դժվար է վճարել հարկերը) համակարգեր ունեցող երկրների ցանկը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով հարկերի վճարման ամենապարզ և ամենաբարդ համակարգ ունեցող երկրների փորձը և դրանց վարկանիշները՝ նկատում ենք, որ անհրաժեշտ է նախ և առաջ պարզեցնել ՀՀ հարկային համակարգը, մասնավորապես՝ կրճատել մեկ տարվա ընթացքում կատարվող վճարումների քանակը, որը մեր հանրապետությունում կազմում է 50 միավոր: Երկրորդ՝ անհրաժեշտ է կրճատել հարկերի վճարման վրա ծախսվող ժամանակը, այսինքն՝ պարզեցնել գործընթացներն ու ընթացակարգերը, քանի որ ամբողջ աշխարհում կան մոտ 10 երկրներ՝ Արաբական Միացյալ Եմիրություններ, Շվեյցարիա, Իռլանդիա և այլն, որտեղ հարկերի վճարման ժամկետը գերազանցում է 1000 ժամը և, որոնցից մեկը Հայաստանն է, իսկ եթե կատարենք պարզ հաշվարկ՝ 1000 ժամը վերածենք աշխատանքային օրերի, ապա կստացվի մոտ 125 օր: Ստացվում է այնպես, որ ՀՀ-ում ձեռնարկությունները հարկային մարմինների հետ աշխատելու համար տարվա ընթացքում ծախսում են հսկայական ժամանակ, որն իհարկե շատ բացասական է և չի կարող իր ազդեցությունը չթողնել ցանկացած ձեռնարկության գործունեության տնտեսական արդյունավետության վրա:

Փորձենք համառոտ ներկայացնել աշխարհում տեղի ունեցող հարկային հիմնական բարեփոխումները: 2010-2011 թթ. ընթացքում աշխարհում 31 երկրներ իրականացրել են հարկային համակարգի բարեփոխումներ, որոնք ուղղված են եղել հարկային վճարումների և ընթացակարգերի պարզեցմանը: 27 երկրներ աշխարհում իրականացրել են եկամտահարկի դրույքաչափի նվազեցում: Կառուցվածքային փոփոխություններ և բարեփոխումներ են իրականացրել իրենց հարկային օրենսդրության մեջ Մոլդովան, Մոնղոլիան, Թուրքիան, Ուրուգվայը և այլն: Կոլումբիան, Իսրայելը, Ղրղզստանը, Ուզբեկստանը, կրճատել են ձեռնարկությունների կողմից վճարվող հարկերի թիվը: Ադրբեջանը, Բուլղարիան, Կոլումբիան, Մալազիան, Թուրքիան, Նիդեռլանդները պարզեցրել են հարկերի վճարման

**Աղյուսակ 1**

Ամենապարզ	Վարկանիշ	Ամենաբարդ	Վարկանիշ
Մալդիվներ	1	Պանամա	169
Սինգապուր	2	Ճամայկա	170
Չինաստան	3	Մավրիտանիա	171
Արաբական Եմիր.	4	Բոլիվիա	172
Օման	5	Գամբիա	173
Իռլանդիա	6	Վենեսուելա	174
Սաուդյան Արաբիա	7	Աֆրիկյան Հանրապետություն	175
Քուվեյթ	8	Հայաստան	176
Նոր Զելանդիա	9	Ուկրաինա	177
Կիրիբատի	10	Բելառուս	178



գործընթացները՝ ստեղծելով էլեկտրոնային լրացման և ներկայացման համակարգեր, ինչպես նաև կրճատել են վճարումների հաճախականությունը: Բուլղարիան կրճատել է եկամտահարկը՝ 15%-ից մինչև 10%, ինչպես նաև ներդրել է եկամտահարկի և այլ հարկատեսակների վճարման էլեկտրոնային համակարգ:

Վերոնշյալ երկրներից շատերն իրենց հարկային համակարգում բարեփոխումներ են իրականացնում զրեթե ամեն տարի: Այս երևույթն իհարկե դրական համարել չի կարելի, քանի որ պահանջում է մի շարք ծախսեր, ինչպես նաև ձեռնարկատերերի կողմից ժամանակի կորուստ օրենսդրական նոր փոփոխություններին ծանոթանալու և նոր հարկային օրենսդրությամբ աշխատելու համար: Սակայն այս ամենն աստիճանական գործընթաց է և բոլոր դեպքերում բխում է ձեռնարկատերերի շահերից:

Ամփոփելով այս ամենը՝ կարծում ենք, որ հարկային հարաբերությունների համակարգում համաշխարհային փորձի ուսումնասիրությունը շատ կարևոր է, քանի որ Հայաստանում նույնպես անհրաժեշտություն կա իրականացնել բարեփոխումներ՝ հիմնվելով համաշխարհային փորձի վրա: Քանի որ մեր երկրում դեռևս չեն իրականացվում հարկային դրույքաչափերի իջեցումներ, բավականին ցածր մակարդակի վրա են գտնվում հարկային համակարգում ժամանակակից էլեկտրոնային համակարգերի վրա գործող վճարումների մեխանիզմները, շատ հաճախ են իրականացվում հարկային օրենսդրության փոփոխություններ:

Ելնելով վերոնշյալից՝ առաջարկում ենք ՀՀ-ում իրականացնել բարեփոխումներ հետևյալ ուղիներում.

- հարկային օրենսդրությունը դարձնել առավել թափանցիկ,
- նվազեցնել պահանջվող թղթաբանությունը,
- ճիշտ խթաններ ստեղծել հարկային վարչարարության միջոցով,
- անրապնդել տեղեկատվության փոխադարձ փոխանակումը հարկային և մաքսային մարմինների միջև,
- բարելավել ԱԱՀ-ի վերադարձման համակարգը,
- բարելավել տուգանքների համակարգը,
- վերանայել հարկային դրույքաչափերը:

<sup>1</sup> Doing Business 2011, [www.doingbusiness.org](http://www.doingbusiness.org)

<sup>2</sup> Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում: Տեղեկագիր, 2009-2010:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Курс экономической теории: Основы национальной экономики: Общие основы экономической экономики: Микроэкономика: Макроэкономика. /проф. А.В. Сидоровича, МГУ им. М.В. Ломоносова, 2001, 832 с.
2. Արշակյան Ա.Յ., Միկրոէկոնոմիկա /ուսումնական ձեռնարկ, Եր., «Տնտեսագետ», 2006, 520 էջ:
3. Մարկոսյան Ա. Խ., Պետությունը և շուկան, Եր., «Տիգրան Սեծ», 2000, 560 էջ:
4. [www.taxinfo.am](http://www.taxinfo.am) - Հարկային պետական ծառայություն:
5. [www.doingbusiness.org](http://www.doingbusiness.org) - Doing Business 2011.

SMALL AND MEDIUM ENTERPRISES IN THE WORLD WITH EXPERIENCE IN THE TAX SYSTEM

**ARSEN ASRYAN**

Doctor of Economics

Summary

In the given article we have represented the taxation policy, forms and methods of its appearance. We have analysed the perspectives of the efficiency of the taxation policy and of the development of small and medium enterprises in the Republic of Armenia, as well as, the positive and negative sides of the taxation policy on business and especially on the development of small and medium enterprises.

The issues concerning the taxation reforms, which have been made recently, have also been covered.

# ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՍԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ\*

## Հայկ ՄԱԿԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Ատենախոսության թեման՝ ՀՀ Հարկային քաղաքականության կատարելագործման ուղիները  
ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում

Գիտական ղեկավար՝ Վլադիմիր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



Պետական կառավարման համակարգում շատ մեծ կարևորություն ունի նաև մշակված հակաճգնաժամային հարկային միջոցառումների արդյունքի ստացումը: Քանի որ մեկ այլ հարց է ունենալ հարկային ռազ-

մավարություն և մեկ այլ հարց է այդ ռազմավարության կյանքի կոչումը և նախատեսված արդյունքների ստացումը:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը շարունակում է մնալ բոլոր երկրների ուշադրության կենտրոնում. կառավարությունները ճգնաժամին դիմակայելու և դրա բացասական հետևանքները մեղմելու ուղղված մի շարք հակաճգնաժամային միջոցառումներ են իրագործում: Գրեթե բոլոր երկրների համապատասխան ծրագրերում առանցքային նշանակություն ունեն հակաճգնաժամային հարկային միջոցառումները: Զարգացած երկրներից հակաճգնաժամային հարկային միջոցառումների ամենամեծ փաթեթն ընդունվել է Մեծ Բրիտանիայում, մասնավորապես, ԱԱՀ-ի դրույքաչափը 2008 թ. դեկտեմբերի 1-ից 17,5-ից նվազեցվել է մինչև 15%, բարձրացվել են ալկոհոլային խմիչքների և ծխախոտի նկատմամբ կիրառվող տուրքերը՝ համապատասխանաբար 8 և 4 տոկոսով, մինչև 2011 թ. հետաձգվել է տարեկան 150 հազար ֆունտ ստերլինգը գերազանցող եկամուտ ունեցող ֆիզիկական անձանց նկատմամբ 45% եկամտահարկի կիրառումը<sup>1</sup>:

Բավականին ծավալուն հակաճգնաժամային ծրագիր է առաջարկել Ռուսաստանի կառավար-

ությունը: Դրանով մեծ ուշադրություն է դարձվում փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցմանն ու խթանմանը, նվազեցվել է շահութահարկի դրույքաչափը՝ 24-ից հասցնելով 20 տոկոսի: Հարկային արտոնություններ են նախատեսվել գիտական հետազոտությունների համար: Ռուսաստանում չարտադրված տեխնոլոգիական սարքավորումների ներմուծման գործարքներն ազատվել են ԱԱՀ-ից, կրճատվել են նաև ԱԱՀ-ի վերադարձման ժամկետները, ինչպես նաև նախատեսվել է ՀՂՄ-ների կիրառման պարտավորության բացառում՝ փոքր ձեռնարկությունների համար: ճգնաժամի հետևանքները մեղմելու ուղղությամբ մի շարք միջոցառումներ են իրականացվել նաև Հայաստանի հարկային համակարգում:

ՀՀ կառավարության մշակված հակաճգնաժամային ծրագրում կարևոր տեղ է տրված հարկային բնագավառում իրականացվող միջոցառումներին և հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011 թթ. ծրագրին:

Եվ ինչպես ցույց տվեցին վիճակագրական տվյալների ուսումնասիրությունները, դեռևս 2009 թ. իրականացված նախատեսված մի շարք հակաճգնաժամային միջոցառումներ, ինչպիսիք են՝ ԱԱՀ հարկվող շեմի բարձրացումը մինչև 58.35 մլն դրամ, բավականին դրական ազդեցություն ունեցավ և տնտեսվարողների մոտ հարկերի գծով առաջացան շուրջ 11 մլրդ դրամի խնայողություններ: 2009 թ. առաջին երեք եռամսյակների ընթացքում իրականացվել են ԱԱՀ-ի գերավճարների շուրջ 11.5 մլրդ դրամի վերադարձ, ինչը լրջորեն համալրել է գործարարների ֆինանսական ռեսուրսները: Այն հարկ վճարողներին, որոնք ներդրումային ծրագրերի շրջանակներում 300 մլն դրամը գերազանցող ապրանքների ներմուծում են կատարել, ընձեռվել է ավելացված արժեքի

\* Ներկայացվել է 20.01.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

հարկի գումարների վճարման ժամկետը երեք տարով հետաձգելու հնարավորություն: Ոսկերչության և աղանդագործության բնագավառում վերացվել են շահութահարկի գծով շրջանառության 1% կանխավճարի պարտադիր վճարման դրույթը, դա լրացուցիչ ազատ ֆինանսական ռեսուրսներ է ստեղծել գործարարների համար: Լուրջ քայլեր են ձեռնարկվել նաև հարկերի վճարման գործընթացի տևողությունը կրճատելու ուղղությամբ: Այսպես, մինչև 58.35 մլն դրամ շրջանառություն ունեցող հարկ վճարողները ներկայացնում են շահութահարկի և եկամտահարկի պարզեցված հաշվարկ, մինչև 5 աշխատող ունեցող գործատուները ներկայացնում են եռամսյակային հաշվետվություններ՝ ամսականի փոխարեն: Վերացվել է ԱԱՀ ամսական հաշվետվությունների ներկայացման պահանջը 100 մլն դրամից փոքր շրջանառություն ունեցող կազմակերպությունների համար, իսկ ԱԱՀ վճարող չհամարվող կազմակերպությունները չեն ներկայացնում ֆինանսական հաշվետվություններ: Այս միջոցառումները, բնականաբար, հնարավորություն են տվել գործարարներին խնայել ժամանակը և նվազեցնել հարկային մարմինների հետ շփման տրանսակցիոն ծախսերը:

Կարևոր են նաև տնտեսական ճգնաժամի պայմաններում հարկային եկամուտների կառավարման ոլորտում առաջացող խնդիրների լուծման նպատակով իրականացված միջոցառումները: Այս համատեքստում կարևորվում է ՊԵԿ դիրքորոշումը, որը ճգնաժամի ժամանակ գործել է կոշտ վարչարարության ռեժիմով, այն է՝ բացառվել են զիջումները օրենքը խախտող հարկ վճարողների հանդեպ, համաճեղմանը կամ ստուգումների ժամանակ հայտնաբերված գումարների վճարման հետաձգումները և այլն: Քանի որ պրակտիկան ցույց է տալիս, որ նման ճանապարհով չչարժվելու պարագայում հակառակ ազդեցություններն անխուսափելի են, ինչպես նաև շրթայական ռեակցիայի տարբերակը ևս չի բացառվում: Հարկային համաճեղմանը ճգնաժամի հետ պայքարելու ամենաարդյունավետ միջոցներից չեն, և Կառավարությունն այս ասպարեզում ևս աջակցել է հարկային մարմիններին: Եվ չնայած այն հանգամանքին, որ տնտեսությունը 2009 թ. ընթացքում հայտնվել էր բավականին բարդ փուլում, պետական եկամուտների կայունության ապահովումը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում, նույնիսկ ֆինանսավորման կրճատման պայմաններում պահանջում է չնվազեցնել իրականացվող բարեփոխումների տեմպը և փորձել վերացնել հարկային համակարգում առկա թույլ կողմերը:

Ճգնաժամային իրավիճակում երկրների օրենսդիր ու գործադիր մարմինները սկսեցին վերանայել հարկաբյուջետային քաղաքականության գե-

րակայությունները և համապատասխան փոփոխություններ ու լրացումներ կատարել գործող օրենսդրությունում և ենթաօրենսդրական ակտերում: Այս համատեքստում ՀՀ իշխանությունների կողմից ձեռնարկված հակաճգնաժամային միջոցառումներից արժանահիշատակ են<sup>2</sup>.

1. Տեղական արտադրողների շահերի պաշտպանությանն ուղղված և ներմուծումը սահմանափակող օրենսդրական փոփոխությունները, որոնք, մասնավորապես, վերաբերում են.

1.1. «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի փոփոխությանը (26.02.2009 թ.)<sup>3</sup>, համաձայն որի ակցիզային հարկի դրույթաչափերը ներմուծման դեպքում բարձրացվեցին:

1.2. «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի լրացումը (19.03.2009 թ.), որի համաձայն ԱԱՀ-ից ազատվում է անմիջական արտադրողի կողմից ՀՀ-ում արտադրված ձեռագործ գորգերի իրացումը<sup>4</sup>:

1.3. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի լրացումը (19.03.2009 թ.), որի համաձայն շահութահարկի վճարումից ազատվում են ձեռագործ գորգերի արտադրությամբ զբաղվող հարկատուները՝ իրենց կողմից ձեռագործ գորգերի իրացումից ստացված եկամտի մասով:

1.4. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի լրացումը (19.03.2009 թ.), որի համաձայն հարկվող եկամուտը որոշելիս ձեռագործ գորգերի արտադրությամբ զբաղվող հարկատուների մոտ համախառն եկամուտը նվազեցվում է ձեռագործ գորգերի իրացումից ստացված եկամտի չափով:

2. Ներդրումային ծրագրերի աջակցությանն ուղղված օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի փոփոխությունները, որոնց, մասնավորապես, վերաբերում են.

2.1. «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի փոփոխություններն ու լրացումները (19.03.2006 թ.), համաձայն որի ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծված ապրանքների մաքսային արժեքը 300 մլն դրամը գերազանցելու դեպքերում մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի վճարման ժամկետը հետաձգվում է երեք տարով: Սա լուրջ հարկային արտոնություն է, որը գործելու է մինչև 2011 թվականի հունվարի 1-ը:

2.2. «Գյուճարի տեխնոպարկի գործունեության իրականացման 2009 թ. ծրագրի» հաստատումը (09.04.2009 թ.), որն ուղղված է ներդրումային ծրագրերի աջակցմանն ու գործարար միջավայրի բարելավմանը, մարզերում ապրանքների ու ծառայությունների հասանելիության աճին, մայրցամաքի ենթակառուցվածքների զարգացմանը, ամենից առաջ՝ հեռահաղորդակցության ոլորտում, նոր աշխատատեղերի ստեղծմանը և, որ ամենակարևորն է, այն ուղղված է ինովացիոն համակարգի ձևավորմանը:

3. Ֆիզիկական անձանց հարկային բեռի թեթևացմանն ուղղված օրենսդրական փոփոխու-

թյունները, որոնց, մասնավորապես, վերաբերում են.

3.1. «Հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը (07.04.2009 թ.)<sup>5</sup>, որի համաձայն. ա) Մինչև 31.12.2009 թ. համայնքների վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատարածքների համար հաշվարկված հողի հարկի գումարները (մինչև 31.12.2008 թ. ներառյալ) առանց հաշվարկված տույժերի ու տուգանքների վճարած ֆիզիկական անձինք ազատվում են հողի հարկը սահմանված ժամկետներում չվճարելու դեպքում մինչև 31.12.2008 թ. ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված և չվճարված տույժերի ու տուգանքների վճարումից: Բ) Գյուղատնտեսական նշանակության հողերի համար 31.12.2008 թ. դրությամբ հողի հարկի նկատմամբ նախորդ երեք տարիներին հաշվարկված և չվճարված տույժերի ու տուգանքների գումարները հաշվանցվում են հարկատուների՝ հողի հարկի գծով ընթացիկ և առաջիկա վճարումների հաշվին:

4. Հարկային բեռի թեթևացման ու արժեթղթերի շուկայի զարգացման ուղղված օրենսդրական փոփոխություններին և լրացումներին վերաբերում են.

4.1. «Շահութահարկի մասին» օրենքի լրացումը (11.06.2009 թ.)<sup>26</sup>, համաձայն որի շահութահարկի հաշվարկման առումով եկամուտ չեն համարվում իր կողմից թողարկված հասարակ անվանական բաժնետոմսերով ՀՀ տարածքում գործող ֆոնդային բորսայում ցուցակված ռեզիդենտ ընկերությունների կողմից ստացման ենթակա՝ «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքով սահմանված փոխհատուցման գումարները: Դեռ ավելին, վերոնշյալ դեպքում ֆոնդային բորսայում ցուցակված ընկերությանը, համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքում կատարված լրացման (11.06.2009 թ.)<sup>27</sup>, փոխհատուցվում է այդ ծառայությունների ստացման համար ծառայություններ մատուցողներին վճարված ԱԱՀ-ի գումարը:

5. ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների համատեքստում անհրաժեշտ է կարևորել.

ա) Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը պետական աջակցության 2009 թ. ծրագրի՝ հաստատումը (25.04.2009 թ.), որի նպատակը Հայաստանում տեղեկատվական և գիտելիքի վրա հիմնված առաջադեմ հասարակության և զարգացած ու համաշխարհային ճանաչում ունեցող ՏՏ-ի ոլորտի կայացումն է:

բ) «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ԲԲԸ, «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ստեղծումը: Հակաճգնաժամային միջոցառումների համատեքստում բարձր

գնահատելով ՀՀ իշխանությունների կողմից հարկաբյուջետային օրենսդրությունում իրականացված փոփոխություններն ու լրացումները՝ միաժամանակ կարևորում ենք այնպիսի օրենսդրական փոփոխությունների ու լրացումների իրականացումը, ինչպիսիք են.

1. ԱԱՀ-ի գործող 20% դրույքաչափի նվազեցումը և դրա տարբերակումը (դիֆերենցումը) ըստ հարկվող գործարքների բնույթի՝ առավել ցածր դրույքաչափեր սահմանելով լայն սպառման ապրանքների մատակարարում համարվող գործարքների վրա, որն առավել արդիական է ու կարևոր 60-70% աղքատ ազգաբնակչություն ունեցող Հայաստանի համար: Այդպիսի անուղղակի ոչ դրամական օգնությունը մի կողմից էականորեն կթեթևացնի աղքատ ազգաբնակչության հարկային բեռը և մյուս կողմից դրական ազդակներ կհաղորդի տնտեսությանը՝ միջոցառում, որն իրականացվել է նաև Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում (այն կրճատվել և հասցվել է շուրջ 15%-ի) և ՌԴ-ում (այն 18%-ից կրճատվել և հասցվել է 15%-ի):

2. ԱԱՀ-ի վերադարձման մեխանիզմի պարզեցումն ու արագացումը, որը կբարելավի հարկատուների իրացվելիության վիճակը և դրական ազդեցություն կունենա դրանց հետագա գործունեության վրա:

3. Շահութահարկի գործող 20% դրույքաչափի նվազեցումը և դրա տարբերակումը (դիֆերենցումը)՝ ըստ գործունեության ոլորտների և (կամ) շահութաբերության մակարդակների, որը հնարավորություն կտա հարկային բեռը տեղափոխելու շահութաբեր ոլորտների ու ճյուղերի վրա և իրականացնելու արդարացի հարկազանձում: Ի դեպ, 01.01.2009 թ. Ռուսաստանում շահութահարկի դրույքաչափը նվազեցվել է 24%-ից հասցվել է 20%-ի:

4. Շահութահարկի կանխավճարների օրենսդրական դրույթը ուժը կորցրած ճանաչելը, որը հարկատուների համար շրջանառու միջոցների ձևավորման լրացուցիչ աղբյուր կարող է դառնալ:

5. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի<sup>6</sup> փոփոխություններն ու լրացումները, որոնք հնարավորություն կտան.

Պետական բյուջեի հարկային եկամուտները ծրագրավորել ու սահմանել. ա) ըստ հարկատեսակների, Բ) ըստ հարկվող օբյեկտի և ըստ հարկման բազայի, Գ) ըստ հարկ վճարող խմբերի, Դ) ըստ գործունեության ոլորտների և ըստ ճյուղերի:

Այդ պայմաններում պետական բյուջեն հարկային եկամուտների կանխատեսման մասով կդառնա թափանցիկ ու հրապարակային (ինչպիսին բյուջեի կազմման սկզբունքն է) և իրատեսական, ինչը չի կարելի ասել գործող կարգի պարագայում, երբ «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 1000 էջը գերազանցող ծավալուն նյութից

հարկային եկամուտների ծրագրավորմանն ու ներկայացմանը տրամադրվում է ընդամենը 10-15 էջ:

Հնարավորին կարճ ժամկետում անցում կատարել ծրագրային բյուջետավորմանը, որը բյուջետային միջոցների ծախսման արդյունավետության բարձրացման կարևորագույն ուղիներից մեկն է:

6. Տուգանքների մասով հարկատուների պատասխանատվության նորմերի թեթևացումը բոլոր հարկատեսակների գծով: Տուգանքների մասով գործող պատասխանատվության նորմերը սահմանվել են տնտեսավարման նորմալ պայմաններում գործելու համար, որը պետությունն ի վիճակի չէ ապահովելու: Ուստի ճգնաժամային իրավիճակում դրանց թեթևացումը արդարացված կարող է լինել:

7. Մեկ տարի և ավելի վճարման վաղեմություն ունեցող տույժերի ու տուգանքների գծով համաձայնեցում հայտարարելը, որը նույնպես բխում է ճգնաժամային իրավիճակի տրամաբանությունից:

8. Հարկային եական արտոնություններ սահմանել:

Առաջին՝ այն քաղաքացիների ու իրավաբանական անձանց համար, ովքեր Հայաստան կվերադարձնեն նախկինում արտահանված կապիտալը:

Երկրորդ՝ այն քաղաքացիների ու իրավաբանական անձանց համար, ովքեր կապիտալ կներմուծեն Հայաստան: Ի դեպ, առաջինի օրինակ է Արգենտինան, իսկ երկրորդի օրինակ՝ Եվրամիությունը: Ոչ դրամական բնույթի վերոնշյալ լրացուցիչ հակաճգնաժամային միջոցառումների արդյունքով պետական բյուջե մուտքագրվող գումարների պակասը հնարավոր կլինի փոխհատուցել հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման և ստվերային տնտեսության ծավալների կրճատման հաշվին:

Վերջնական եզրակացությունն այն է, որ տնտեսությունը 2009 թ. գտնվում էր խիստ թուլացած վիճակում, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության գրեթե բոլոր հնարավոր լծակներով փորձ էր արվում վերականգնել տնտեսության զարգացման տեմպերը, որոնք, կարծում ենք, իրենց դրական ազդեցությունը թողեցին, և տնտեսության մեջ արդեն նկատելի արդյունքներ կան, պարզապես պետք է լինել հետևողական՝ փորձելով թույլ չտալ արտաքին տնտեսական ցուցումների կտրուկ ազդեցություն, ինչպես նաև պատրաստ լինել դիմակայելու ծագող դժվարություններին: Այժմ շատ է խոսվում համաշխարհային տնտեսության “W”-աձև զարգացման սցենարի<sup>7</sup> մասին, որը և ապացուցվեց 2011 թ. վերջին և արդեն 2012 թ. սկիզբ առած ճգնաժամային երևույթներով: Այդ իսկ պատճառով պետք է պատրաստ լինել տնտեսական նոր մարտահրավերների և ցնցումների, ինչպես նաև փորձել դրանք հաղթահարել տնտեսական քաղաքականության ճիշտ լծակների և մեխանիզմների միջոցով:

- 1 Global Development Finance, Charting a Global Recovery, I: Review, Analysis, and Outlook 2009, The World Bank, p.78.
- 2 **Հարությունյան Վ. Լ., Հարությունյան Ռ. Վ., Հարությունյան Տ. Վ.**, Հարկեր և հարկազանձում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 499-504:
- 3 ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N12 (678), 1.03.2009, էջ 11-12:
- 4 ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N19 (685), 15.04.2009, էջ 17-23:
- 5 ՀՀ պաշտոնական տեղեկագիր, N22 (688), 29.04.2009, էջ 7: «Հողի հարկի մասին» ՀՀ օրենք, ՀՀ Գ Տ 1994/8:
- 6 «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը ՀՀ ԱԺՏ 1995/99, Գիրք-Բ, Երևան, 1999, էջ 170:
- 7 Global Financial Stability Report April 2009, Responding to the Financial Crisis and Measuring Systemic Risks, World Economic and Financial Surveys, International Monetary Fund, 223 p.

THE GENERAL CHARACTERISTIC OF ANTI-CRISIS MEASURES OF TAX POLICY OF RA

HAYK MAKARYAN

Summary

The worldwide financial-economic crisis still remains in the center of attention of different countries: governments accomplish a wide range of measures in order to alleviate the crisis and its negative affects. The cyclic “W”-shaped structure of global economy threatens with a new wave of crisis, therefore correct choice and implementation of tax policy levers and mechanisms should be obtained.

# ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՉՐԱՅՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿ\*

## Աշոտ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի ասպիրանտ

Ատենախոսության թեման՝ Հարկային վարչարարության կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում  
Գիտական ղեկավար՝ Հայկ ՄԱՑԱԿԱՆՅԱՆ՝ տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ



Շատ երկրներում «ստվերային տնտեսության» հետևանքով կորցված հարկային եկամուտներն իրենցից ներկայացնում են հարկային բացակի (tax gap) շատ կարևոր բաղադրիչը, որտեղ հարկային բացակն իրական և պո-

տենցիալ հարկային եկամուտների տարբերությունն է:

«Ստվերային տնտեսության» սահմանման վերաբերյալ գոյություն ունեն բազմաթիվ կարծիքներ, այդուհանդերձ, հիմք ընդունելով Բարրի Ռասելի «Revenue Administration: Managing Shadow Economy» աշխատության մեջ ներկայացված տեսակետը, «ստվերային տնտեսություն» տերմինը կարելի է վերագրել այնպիսի իրավիճակներին, երբ գործարարները գործունեություն են ծավալում հարկային համակարգից դուրս և հարկային և /կամ/ այլ վճարներից խուսափելու համար թաքցնում են իրենց գործարքներն ամբողջությամբ, կամ, ուղղակի, վճարվելիք գումարները պակասեցնելու նպատակով թաքցնում են գործարքների միայն մի մասը:

Չնայած այն բանին, որ ստվերային տնտեսությունը շատ գերտերությունների կողմից ընդունվել է որպես իրենց եկամուտները խոչընդոտող ռիսկ, իր բնույթով ստվերային տնտեսության ծավալը դժվար է որոշել: Այդուհանդերձ, ՀՀ-ում 2009 թ. ՀՆԱ-ի մոտ 14.2% անկման պատճառով առաջացած բյուջետային հսկա դեֆիցիտի հետևանքով Կառավարության կողմից գործարարների եկամուտների թափանցիկության աստիճանի

բարձրացմանն ուղղված ակտիվ միջոցառումները հանգեցրին նրան, որ ստվերային տնտեսության ծավալը 2007<sup>1</sup> թ. ՀՆԱ-ի 51.7%-ից նվազեց և արդեն 2010<sup>2</sup> թ., ինչպես Համաշխարհային Բանկի Հայաստանյան գրասենյակի տնօրենն էր բնորոշել, հանրապետությունում կազմեց ՀՆԱ-ի մոտ 35-40%-ը: Համեմատության համար ներկայացնենք ՀՀ անմիջական հարևաններ՝ Վրաստանի և Ադրբեջանի ստվերային տնտեսության ծավալները, որոնք 2007<sup>3</sup> թ. դրությամբ կազմում էին ՀՆԱ-ի համապատասխանաբար 72.5% և 69.6%: Առաջին հայացքից՝ համեմատությունից կարելի է եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետությունում դրությունը այդքան էլ վատ չէր, քանզի այն իր երկու անմիջական հարևաններից ստվերային տնտեսության ծավալներով մոտ 30%-ով ավելի բարենպաստ դիրքում էր գտնվում, սակայն, միևնույն է, 50% և նույնիսկ 35-40% ստվերային տնտեսությունը, որ ունենք հիմա, համարվում է չափազանց բացասական երևույթ, և ցանկացած երկրի տնտեսական քաղաքականություն պետք է ուղղված լինի դրա ծավալների կրճատմանը: Հատկանշական է, որ ստվերային տնտեսության ամենափոքր ծավալներն ունեն ԱՄՆ-ը, Շվեյցարիան և Ավստրիան, որոնք 2007<sup>4</sup> թ. դրությամբ կազմում էին համապատասխանաբար 9%, 9.1% և 10.1%:

Գաղտնիք չէ, որ ստվերային տնտեսության դեմ պայքարում են գրեթե բոլոր երկրներում, քանզի ստվերային տնտեսությունը առաջացնում է բացասական հետևանքներ շատ մակարդակներում, որոնցից ամենակարևորներն են.

- կառավարությունը ունենում է հսկայական եկամուտների կորուստներ, որոնք ուղղակիորեն ազդում են պետական պարտքի մակարդակի վրա և վտանգում են նրա՝ ծառայություններ մատուցելու և հասարակության պահանջները բավարա-

\* Ներկայացվել է 20.02.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

րող ծրագրերը ֆինանսավորելու կարողությունը,

- որոշ մարդիկ ստիպված են վճարել մյուսների համար. մարդիկ, ովքեր ենթարկվում են օրենքներին, իրենց ուսերին կրում են «ծանր» հարկային բեռ, քան պետք է, որովհետև նրանք հատուցում են ստվերային տնտեսությունում գտնվողների համար,

- այն գործարարները, որոնք կատարում են իրենց հարկային պարտավորությունները, հայտնվում են անբարենպաստ մրցակցային պայմաններում:

Գիտակցելով վերոնշյալը՝ ստվերային տնտեսության դեմ դեռ վաղուցվածից պայքարում են նաև Հայաստանում: Դեռևս 2005 թ. հուլիսի 29-ին ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպման ժամանակ այն ժամանակվա նախագահ Ռ. Քոչարյանն ընդգծեց հարկային վարչարարության կատարելագործման անհրաժեշտությունը, որը պետք է ուղղված լիներ ստվերային տնտեսության ծավալների նշանակալից կրճատմանը<sup>5</sup>:

Ֆինանսական գործընթացների կառավարումը (հարկերի ճիշտ հաշվարկ, ամբողջականության բացահայտում) հնարավոր է իրագործել ոչ միայն պետական պարտադրանքի միջոցով, այլ նաև իրավական և ինստիտուցիոնալ այլ գործիքներով:

Հարկային վարչարարության արդյունավետությունը բարձրացնող հարկային մասնագետներին հայտնի գործիքների թվին են դասվում՝ հարկային պլանավորումը, ստուգումները, տեղեկատվական համակարգերի բարելավումը, հարկեր վճարելու իրենց պարտականությունների նկատմամբ հարկատուների կողմից վերաբերմունքի աստիճանի բարձրացումը, հարկային մարմինների աշխատակիցների որակավորման աստիճանի բարձրացումը և, իհարկե, հարկատուներին մատուցվող ծառայությունների որակի բարելավումը:

Հարկ վճարողներին մատուցվող սպասարկման որակի կատարելագործումը շատ երկրների հարկային մարմինների կողմից ընդունվել է որպես կարևոր գործոն, որը նպաստում է հարկատուների կողմից իրենց հարկային պարտավորությունների կամավոր կատարմանը և հետևաբար՝ նաև ստվերային տնտեսության ծավալների կրճատմանը:

Տեղին է նշել, որ ՀՀ հարկային մարմնի առաքելությունը ՀՀ պետական բյուջեի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների ապահովումն է հարկային օրենսդրության ամբողջական ու համահավասար կիրառման և առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման միջոցով, իսկ հարկային մարմնի տեսլականն ընդօրն

է հարկային վարչարարության կատարելագործման ուղղությամբ քաղաքականության ռազմավարության՝ երկարաժամկետ հեռանկարում հարկային վարչարարության արմատապես նոր համակարգ ունենալուն ուղղված լինելը: Այս տեսանկյունից խիստ կարևորվում է հարկային վարչարարության համակարգի ուղղվածությունը հարկ վճարողներին բարձրորակ ծառայություններ մատուցելուն, որը կհանգեցնի հարկերի կամավոր վճարման (ինքնագնահատման) համակարգի արմատավորմանը<sup>6</sup>:

Հատկանշական է, որ ընդունված հարկային վարչարարության 2008-2011 թթ. ռազմավարության մեջ «հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացումը» հանդիսանում էր սահմանված առաջնային նպատակ, որի շրջանակներում հարկային մարմինը այդ ժամանակահատվածում զգալի աշխատանքներ իրականացրեց հարկերի կամավոր վճարման /ինքնագնահատման/ սկզբունքի ներդրման ուղղությամբ: Վերոնշյալ ռազմավարությամբ ամրագրված արդյունքին հասնելու համար աշխատանքները տարվում էին հետևյալ ուղղություններով.

- հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացում, հիշեցում-ծանուցումների ավտոմատացված համակարգի ներդրում,
- հարկ վճաչողների սպասարկման կենտրոնների ստեղծում,
- պարզաբանումների տրամադրման մեխանիզմների կատարելագործում:

Վերը նշված ուղղություններով իրականացվող աշխատանքների արդյունքում հարկային մարմինը հասավ զգալի հաջողությունների, մասնավորապես՝

- առաջին անգամ հաստատվեց էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման 2009-2011 թթ. հայեցակարգ, որի հիման վրա իրականացված աշխատանքների արդյունքում 2010 թ. հունվարից սկսվեց հարկային հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի հիմնական գործարկումը,

- սկսեց գործել էլեկտրոնային հաշվետվությունների սպասարկման կենտրոնը,
- ստեղծվեցին հարկ վճարողների սպասարկման կենտրոններ,

- 2010 թ. սկսեց գործել հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրամադրման նոր կարգ:

Վերևում նկարագրված արդյունքներն, անշուշտ, ինքնահայտարարագրման ինստիտուտի ներդրմանն ուղղված կարևորագույն քայլեր էին:

Հատկանշական է, որ նշված արդյունքներին

հասնելուն զուգահեռ վեր են հանվել նաև ինքնագնահատման համակարգի ամբողջական կիրառման ապահովմանն ուղղված որոշակի խնդիրներ, որոնցից հիմնականներն են՝

- սպասարկման ոլորտից հարկատուների ակնկալիքների բավականին բարձր լինելը. հարկային մարմինը դեռևս չի կարողանում ապահովել հարկատուներին ամբողջական, որակյալ և ժամանակին սպասարկում,

- «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ վճարող չհամարվող հարկ վճարողների մոտ էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ընդունման համակարգի ընդլայնումը,

- լրատվամիջոցների, ինտերնետային կայքի, սպասարկման կենտրոնների և այլ միջոցներով հարկատուներին արդիական տեղեկատվության տրամադրման գործում խնդիրների առկայությունը:

«Հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացումը», որպես ռազմավարական նպատակ, ամրագրվեց նաև 2012-2014 թթ. հարկային վարչարարության ռազմավարության մեջ, ինչից կարելի է եզրակացնել, որ հարկային մարմինը 2012-2014 թթ. ընթացքում հարկային վարչարարության բարեփոխումների շրջանակում առաջնահերթությունը տալու է հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացմանը, ինչը կհանգեցնի հարկերի կամավոր վճարման սկզբունքի արմատավորմանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկերի կամավոր վճարման համակարգի ներդրումը արդյունավետ վարչարարություն կիրառող հարկային մարմին ունենալու կարևորագույնն է: Սա հնարավորություն կստեղծի հարկային մարմնին նվազագույն կերպով միջամտել հարկերի հաշվարկման, վճարման պրոցեսին, կօգնի հնարավորինս խուսափել այլ մեթոդներով հարկ վճարողի հարկային պարտավորությունների հաշվարկման անհրաժեշտությունից<sup>7</sup>:

Հաշվի առնելով ինքնագնահատման համակարգի ամբողջական կիրառման ապահովմանն ուղղված խնդիրները՝ վերևում նկարագրված հարցերի լուծում տալու նպատակով հարկային մարմինը սահմանել է նշված ռազմավարական նպատակին հասնելուն ուղղված հետևյալ երեք ենթանպատակները<sup>8</sup>.

1. հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների մոտ ուղիների սահմանում, որոնք կապահովեն հաշվետվությունների ներկայացման ցածր ծախսեր և բարձր արդյունավետություն,
2. հարկ վճարողների իրազեկման արդյունավետ համակարգի ապահովում,
3. հանրության հետ արդյունավետ համագոր-

ծակցության ապահովում:

Միաժամանակ, հարկային վարչարարության 2012-2014 թթ. նշված ռազմավարական նպատակի կատարողականության ամփոփ գնահատական ունենալու համար սահմանվել են նաև նրա ենթանպատակներին հասնելուն ուղղված խնդիրների ակնկալվող արդյունքները և կատարողականության ցուցանիշները, որոնք հնարավորություն են ընձեռելու որոշել, թե արդյոք հարկային մարմինը կարողացել է հասնել իր նպատակներին և թե արդյոք իր իրականացրած փաստացի գործողությունները համապատասխանել են իր առաքելությանն ու նպատակներին:

Հատկանշական է, որ նշված ենթանպատակների համար նախատեսված կատարողական ցուցանիշներն են. **առաջին ենթանպատակի գծով**՝ հարկային մարմնի կողմից էլեկտրոնային եղանակով տրամադրվող ծառայությունների, ընդհանուր հարկ վճարողների մեջ էլեկտրոնային ծառայություններից օգտվող հարկատուների և կամավոր սկզբունքով էլեկտրոնային հաշվետվական համակարգից օգտվողների քանակի աճը, **երկրորդ ենթանպատակի գծով**՝ սպասարկման կենտրոններ և հեռախոսազանգերի սպասարկման կենտրոն դիմած հարկատուների, հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքից օգտվողների և հարկային մարմնի կողմից կազմակերպվող ուսումնական միջոցառումներում ընդգրկված հարկատուների թվաքանակի աճը, **երրորդ ենթանպատակի գծով**՝ հասարակական և մասնագիտական կազմակերպությունների մասնակցությամբ հարկային օրենսդրությանն ու վարչարարությանն առնչվող թեմաներով միջոցառումների քանակի աճը:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է նկատել, որ վերևում նկարագրված կատարողական ցուցանիշներով հարկային վարչարարության 2012-2014 թթ. ռազմավարության շրջանակում ամրագրված հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացման նպատակի կատարողականության գնահատումը, իմ կարծիքով, այդքան էլ անբողջական չի լինի, քանի որ միայն քանակական աճը չի կարող գնահատական տալ հարկատուներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացման մասին, օրինակ՝ էլեկտրոնային եղանակով տրամադրվող ծառայությունների և սպասարկման կենտրոններ դիմած հարկատուների քանակի աճը ինքնին չի խոսում սպասարկման որակի բարձրացման մասին, քանզի հնարավոր է տարբերակ, երբ էլեկտրոնային եղանակով տրամադրվող ծառայությունների քանակը աճի, սակայն դրանցից օգտվողները այդքան էլ գոհ չլինեն, կամ սպասարկման կենտրոններ դիմած հարկատուների քանակը աճի, սակայն դա նրանք



անեն անհրաժեշտությունից ելնելով:

Ուստի, նշված ռազմավարական նպատակի կատարողականության գնահատման մասին ճշգրիտ պատկերացում կազմելու համար առաջարկվում է նշված կատարողական ցուցանիշներին զուգահեռ կիրառել նաև հարկատուների սպասարկման որակի գնահատում անկախ որևէ մասնագիտական մարմնի միջոցով, որը հարցումներ կիրականացնի հարկային ասոցիացիաների և հասարակական միությունների ներկայացուցիչների շրջանակում, որպեսզի պարզի հարկատուների կարծիքը մատուցվող ծառայությունների մասին: Անշուշտ, հարցաշարները պետք է լինեն ընդգրկուն և նպատակային, որ հնարավոր լինի պարզել նաև հարկատուների դժգոհ լինելու պատճառները:

Առաջարկվում է հարկային ծառայությունների որակի՝ վերևում նկարագրված գնահատումն անցկացնել տարեկան կտրվածքով անկախ հետազոտական կենտրոնների կողմից: Սա հնարավորություն կստեղծի հետևելու հարկային մարմնի աշխատանքի՝ հանրային գնահատման դինամիկան ժամանակի ընթացքում և առաջ քաշել արդեն կոնկրետ նպատակներ՝ կապված սպասարկման որակի հետ, օրինակ՝ այդպիսի նպատակ կարող է լինել մինչև 2015 թ. հարկային մարմնի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը նվազագույնը 90%-ի:

Մյուս կողմից, որպեսզի հարկային մարմինները միայն տարին մեկ անգամ չստանան տեղեկատվություն, անհրաժեշտ է համարում հարկատուներին մատուցվող ծառայությունների որակի մասին պարբերաբար հարցումներ կազմակերպել հենց հարկային մարմնի կողմից, ընդ որում՝ դա անել հիմնականում այդ ռազմավարական նպատակի շրջանակում ցանկալի արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ քաղաքականության, ընթացակարգերի ու մոտեցման մեջ փոփոխություններ կատարելու նպատակով: Այդ հարցումները, իմ կարծիքով, կարելի է անցկացնել մի քանի եղանակով.

- սեմինարների ընթացքում,
- ստուգումների ընթացքում,
- ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքի ([www.taxservice.am](http://www.taxservice.am)) միջոցով:

Հասարակությանն ու ձեռներեցներին մատուցվող սպասարկման որակի բարձրացման, այդ ծառայությունների ստանդարտների ներդրման, հասարակական մարմինների գործունեության թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման հարցերը ներկայումս համարվում են հասարակական մարմինների, այդ թվում՝ հարկային, գերակայություններից:

Արդեն իսկ գործարկված սպասարկման

կենտրոնների աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 26.01.2010 թ. թիվ 14-Ա հրամանով հաստատվել են հարկ վճարողների սպասարկման կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտները, սպասարկման կենտրոնների հիմնական գործառույթներից բխող գործընթացների նկարագիրը, սպասարկման կենտրոնների կողմից ծառայությունների մատուցման կարգը, աշխատանքի արդյունքը, գանձատարկման կարգը և տեղադրվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքի ([www.taxservice.am](http://www.taxservice.am)) առանձնացված «Սպասարկման կենտրոն» բաժնում<sup>9</sup>:

Այն դեպքում, երբ վերևում նկարագրված ստանդարտներին համապատասխան ծառայությունը չի տրամադրվում, հարկատուն իրավունք ունի զանգատելու՝ համաձայն զանգատարկման կարգի, որի մասին տեղեկատվություն կարելի է ստանալ<sup>10</sup>:

• սպասարկման կենտրոնների ցուցատախտակներից,

• ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքի ([www.taxservice.am](http://www.taxservice.am)) «Հարկային օրենսդրություն» բաժնից:

Համաձայն սույն զանգատարկման կարգին՝ զանգատել կարելի է սպասարկման կենտրոնի ղեկավարին, հարկային տեսչության պետին, վերադաս հարկային մարմնին և «թեժ գիծ» զանգահարելու միջոցով: Սակայն, բացի ըստ սահմանված կարգին համապատասխան զանգատարկման ձևերից առաջարկվում է նաև ընդունել զանգատարկումներ ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքի ([www.taxservice.am](http://www.taxservice.am)) միջոցով, որը էլ ավելի դյուրին և մատչելի կդառննի զանգատարկման ընթացքը, ուստի և, ավելի շատ ինֆորմացիա կապահովի ՀՀ ԿԱ ՊԵԿ ղեկավար անձնակազմին:

Չշեղվելով ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքի և հարկատուների սպասարկման որակի բարձրացման թեմաներից, ինչպես նաև ելնելով հարկային ապառքների կրճատման անհրաժեշտությունից՝ առաջարկում են սույն ինտերնետային կայքի միջոցով հարկատուների որոշ խմբի համար հնարավոր դարձնել իմանալու իրենց պարտքերի մեծության և մատչելի կղառձմի գանձատարկման ընթացքը, ուստի և, ավելի շատ ինֆորմացիա կապահովի ՀՀ ԿԱ ՊԵԿ ղեկավար անձնակազմին:

Բանակցելով ՀՀ բանկային համակարգի հետ՝

կարելի է մշակել վերևում նշված պարտքերի՝ էլեկտրոնային եղանակով վճարման համակարգ, որը հարկատուներին հնարավորություն կտա իրենց՝ հողի հարկի և գույքահարկի գծով վճարումները կատարել առանց հարկային մարմնի սպասարկման կենտրոն այցելելու: Նշված վճարումները կարելի է կատարել նաև POS-տերմինալների միջոցով, որն էլ ավելի հարմարավետ կդարձնի այդ հարկատեսակների գծով վճարումների ընթացքը և կնպաստի հարկատուների ինքնագնահատման համակարգի զարգացմանը:

Եվ վերջում, հղում անելով ՀՀ հարկային համակարգի հարկ վճարողների սպասարկման կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտին, որտեղ տրվում են հարկատուների սպասարկման կենտրոնների աշխատանքային և ընդմիջման ժամերը, կցանկանայի առաջարկել հարկատուների համար ընդմիջման ժամերի վերացման սխեմա, որը, իմ կարծիքով, մեծապես դրական ազդեցություն կունենա հարկատուների՝ հարկային մարմնի աշխատանքներից բավարարվածության աստիճանի վրա: Մասնավորապես՝ կարելի է հարկատուների սպասարկման կենտրոնների ամեն մի չորս աշխատակիցների հաշվով աշխատանքի ընդունել մեկ աշխատակից, այն էլ կեն դրույթով, որը ժամը մեկ կփոխարինի մեկական աշխատողի:

<sup>1</sup> Friedrich Schneider, Andreas Buehn, and Claudio E. Montenegro, "Shadow Economies all over the World: New Estimates for 162 Countries from 1999 to 2007," The World Bank Development Research Group, Poverty and Inequality Team & Europe and Central Asia Region Human Development Economics Unit, Policy Research Working Paper Series, No. 5356 (July 2010), 27–29, <http://elibrary.worldbank.org/docserver/download/5356.pdf?expires=1295458233&id=id&accname=guest&checksum=50D0F3F7E8E386F1F83877DFFF781F4F>

<sup>2</sup> <http://news.am/eng/news/22759.html>

<sup>3</sup> Friedrich Schneider, Andreas Buehn, and Claudio E. Montenegro, "Shadow Economies all over the World: New Estimates for 162 Countries from 1999 to 2007," The World Bank Development Research Group, Poverty and Inequality Team & Europe and Central Asia Region Human Development Economics Unit, Policy Research Working Paper Series, No. 5356 (July 2010), 27–29,

<sup>4</sup> Նույն տեղում

<sup>5</sup> <http://www.armeniandiaspora.com/showthread.php?33732-President-urges-tax-service-to-intensify-fight-against-shadow>

<sup>6</sup> <http://www.taxservice.am>

<sup>7</sup> Հարկային վարչարարության 2012-2014 թթ. ռազմավարություն:

<sup>8</sup> Հարկային վարչարարության 2012-2014 թթ. ռազմավարություն:

<sup>9</sup> <http://www.taxservice.am>

<sup>10</sup> ՀՀ հարկային համակարգի հարկ վճարողների սպասարկման կենտրոնների կողմից մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտ:

## IMPROVEMENT OF SERVICE QUALITY TO TAXPAYERS AS A STRATEGIC GOAL OF TAX ADMINISTRATION

**ASHOT ARUSHANYAN**

Summary

In the article were discussed the Improvement processes of service quality to taxpayers in Armenia, parallel to the evaluation methods of its performance importance of other mechanisms usage was also highlighted. In the end, new tools for service quality improvement to taxpayers were suggested.

# ՆԵՐԿՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ\*

## Սարգիս ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ՀԴԾՀ ՄԱԷԿ ամբիոնի ասպիրանտ

**Ատենախոսության թեման՝** Արդյունաբերական գործունեության կազմակերպման և ֆինանսավորման հիմնախնդիրները ՀՀ-ում

**Գիտական ղեկավար՝** Վարդան ԲՈՍՄԱՆՅԱՆ՝ տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



**Ա**րդյունաբերությունն առանցքային նշանակություն ունի ցանկացած տնտեսության համար: Սա տնտեսության այն ճյուղն է, որտեղ թողարկվում է արտադրության միջոցների և սպառման առարկաների հիմնական մասը, և սերտորեն առնչվում է տնտեսության մյուս ճյուղերի՝ գյուղատնտեսության, շինարարության, տրանսպորտի հետ:

Արդյունաբերությունն ավանդաբար եղել է Հայաստանի տնտեսության առանցքային ճյուղերից մեկը: Խորհրդային իշխանության վերջին տարիներին ՀՀ արդյունաբերությունը թողարկում էր ազգային արդյունքի կեսից ավելին: Բավական է ասել, որ հանրապետության 1987 թ. ազգային եկամտի կեսից ավելին (53%-ը) թողարկում էր արդյունաբերությունը: Իսկ արդյունաբերության համախառն արտադրանքի 32,5 %-ը կազմում էին մեքենաշինությունը և մետաղամշակումը, քիմիական արդյունաբերությունը՝ 7%-ը<sup>1</sup>:

Խորհրդային տարիներին ստեղծվում էին խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց հունքային բազաները և սպառման շուկաները գտնվում էին երկրի տարբեր ծայրակետերում: Հաճախ կիսապատրաստուկները, հետագարծ հոսանքով նորից կտրելով հազարավոր կիլոմետրեր, հայտնվում էին հունքային բազաներին մոտիկ շրջաններում: Այդ իմաստով լրիվ հիմնազուրկ էր Հայաստանում խոշոր քիմիայի, հաստոցաշինության և մետաղամշակման որոշ ճյուղերի առաջնահերթային զարգացումը: Թեև գիտությու-

նը շեշտադրում էր նման արտադրությունները չծավալելու հարցադրումները, բայց ոչ ոք ուշադրություն չէր դարձնում դրանց վրա: Հսկա ձեռնարկություններն այսօր առավել ևս դարձան մի ավելորդ բեռ: Այդ ավելորդությունը բացատրվում է ոչ միայն նախկին կապերի փլուզման հետևանքով ներկրվող հումքային պաշարների չափերի հարյուրապատիկ, առանձին դեպքերում նաև հազարապատիկ նվազումով, նախկինում արտադրվող և մեծ ծախսումներ պահանջող ծանրաքարշ արդյունքներն արտադրելու և արտահանելու անհնարինությամբ ու աննպատակահարմարությամբ, այլև ներտնտեսական կոռուպցիոն կապերի բացակայությամբ, գործող ձեռնարկությունների միջև այդպիսիք ստեղծելու չափազանց նվազ հնարավորություններով, արտադրվող արդյունքների որակական ցածր ցուցանիշներով, անմրցունակությամբ, արտաքին աշխարհի կողմից ներկայացվող ցածր պահանջարկով, ինչպես նաև այդ պահանջարկը բացահայտող համապատասխան օղակների անգործունակությամբ և այլ գործոններով:

Գաղտնիք չէ, որ նախկին Խորհրդային Միության տարիներին աշխարհի բազում երկրներ սպառում էին Հայաստանի արդյունաբերական արտադրանքի տասնյակ տեսակներ, գիտական նվաճումները թափանցել էին համաշխարհային ասպարեզ, առողջապահական, կրթական համակարգը զարգանում էր ակտիվ սոցիալական կողմնորոշման արդարացված քաղաքականության սկզբունքներով:

Մյուս կողմից՝ նախկին ԽՍՀՄ հանրապետությունների միջև ձևավորվել էին չհիմնավորված և անհարկի տնտեսական կապեր՝ միմյանցից կախվածությունն ուժեղացնելու նորանոր հնարքներ գործի դնելու միջոցով: Այսպես, 1970-ական թվա-

\* Ներկայացվել է 24.02.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

կանների սկզբին գործարկվեց Հայաստանի ատոմային էլեկտրակայանը: Դրա շնորհիվ 1975 թ. Հայաստանում մոտ 4,1 անգամ ավելի շատ էլեկտրաէներգիա էր արտադրվում, քան 1913 թ. ցարական Ռուսաստանում ամբողջությամբ վերցրած<sup>2</sup>: Պարզվում է, որ Հայաստանի ատոմակայանում արտադրվող էլեկտրաէներգիայի 40%-ը սպառվում էր Ադրբեջանում, 35%-ը Վրաստանում և միայն 25%-ը՝ Հայաստանում<sup>3</sup>:

Արդյունաբերության զարգացման ուղղությունների և տեղաբաշխման հարցերում հանրապետությունում նախկինում թույլ տրված սխալները՝ խիստ կենտրոնացվածությունը, գիզանտամուլությունը, որոշակիորեն ազդեցին արդյունաբերության ճյուղային կառուցվածքի և աշխատանքային ռեսուրսների տեղաբաշխման վրա: Խորհրդային տարիների վերջերին շատ արժեքավոր ռեսուրսների արտահանումը, ներկրովի հումքատեսակների վրա ծանր արդյունաբերության մետաղատար, ջրատար և էներգատար, ինչպես նաև թեթև արդյունաբերության մի շարք ճյուղերի (տեքստիլ, կաշվի, տրիկոտաժի և այլն) աննախընթաց զարգացումը և, ընդհակառակը, տեղական գյուղատնտեսական հումքատեսակների արդյունավետ օգտագործման հիման վրա հանրապետության բնակչությանն անհրաժեշտ ժողովրդական սպառման ապրանքների գծով վերանշակող ձեռնարկությունների լայն ցանցն իրենց զգալ տվեցին այս օրերին: Օրինակ, ոչխարաբուծության զարգացման հիման վրա բրդի վերանշակումը և տեքստիլ տրիկոտաժի արտադրության, ինչպես նաև անասունների կաշեգործության ծավալումը անհնարին դարձան անկախության տարիներին:

Այդուհանդերձ, ԽՍՀՄ փլուզումից հետո ՀՀ արդյունաբերությունը հայտնվեց աննախանձելի վիճակում: Այլևս չէր գործում երաշխավորված ներմուծման և արտահանման մեխանիզմը: Արդյունաբերությունը զարգացնելու համար անհրաժեշտ էին արմատական փոփոխություններ՝ կապված սպառման նոր շուկաների գրավման և հիմնական կապիտալի նորացման հետ: Ժամանակի ընթացքում՝ չնայած դանդաղ տեմպերով, հաջողվեց հաղթահարել ճգնաժամային վիճակը և ներ-

կայունա ՀՀ արդյունաբերության ոլորտը հանդիսանում է տնտեսության հիմնական և առանցքային ճյուղերից մեկը, որի մասնաբաժինը ՀՆԱ-ի կառուցվածքում 2010թ. կազմել է 14,9%, իսկ ոլորտի 2488 կազմակերպություններում աշխատում են զբաղվածների ընդհանուր թվաքանակի 7,3%-ը<sup>4</sup>:

2010 թվականին հանրապետությունը թողարկվել է 847,6 մլրդ դրամի արդյունաբերական արտադրանք (համադրելի գներով)՝ 2009 թվականի համեմատ գրանցելով 9,7% աճ: Նույն ժամանակահատվածում արտահանվել է թողարկված արտադրանքի 33,8%-ը, որից 21%-ը ԱՊՀ երկրներ, իսկ 79%-ը՝ այլ երկրներ (այդ թվում՝ եվրոպական)<sup>5</sup>:

Ներկայումս աճի մեծ տեմպեր ապահովող արդյունաբերության ճյուղերն են հանքարդյունաբերությունը, սննդի արդյունաբերությունը, դեղագործությունը, ոսկերչությունը և այլն:

Այդուհանդերձ, ներկայացված է արդյունաբերության կառուցվածքը ըստ հիմնական ճյուղերի: Արդյունաբերության ճյուղի ավելացված արժեքի նվազումը 2009 թ. կազմել է 7.6% (2008 թ.՝ 2.4% աճ), պայմանավորված սննդի, շինանյութերի, քիմիական արդյունաբերության ենթաճյուղերի անկմամբ: 2009 թ. հունվար-դեկտեմբերին աճ է գրանցվել հանքաքարի արդյունահանման և մետաղագործական արդյունաբերությունում՝ արտադրության իրական ծավալների աճը կազմել է 10.0% և 20.9% համապատասխանաբար: Նշված ճյուղերում աճն արձանագրվել է հիմնականում չորրորդ եռամսյակի ընթացքում՝ մետաղների համաշխարհային գների բարձրացման հետևանքով<sup>6</sup>:

2009 թ. հունվար-դեկտեմբերին սննդի արդյունաբերության ծավալների իրական նվազումը կազմել է 6.2%, ընդ որում՝ մեծ նվազում է գրանցվել պահածոների, կոնյակի, կենդանական յուղի արտադրություններում: Շինանյութերի արտադրության 24.3% նվազումը (հունվար-դեկտեմբերին) պայմանավորված է շինարարության ծավալների կրճատման պայմաններում ցեմենտի, ապրանքային բետոնի, պլյումինե իրերի արտադրության ծավալների նվազմամբ: Քիմիական արդյունաբերությունում 2009 թ. հունվար-դեկտեմբերի

**Աղյուսակ 1**

**Արդյունաբերության կառուցվածքը, ճյուղերի թողարկման ծավալները 2007 -2010 թթ. (ընթացիկ գներով՝ մլն. դրամ) <sup>7</sup>**

	2007	2008	2009	2010
Ամբողջ արդյունաբերությունը	716549.3	739291.9	664522.8	824430.0
Հանքագործական արդյունաբերություն	113824.1	93265.7	91897.6	145536.8
Մշակող արդյունաբերություն	477973.8	509048.9	441268.1	544802.6
Էլեկտրաէներգիայի, ջրի և գազի արտադրություն և բաշխում	124751.4	136977.3	131357.1	134090.6

34.1% անկումը պայմանավորված է կաուստիկ սողայի արտադրության կրճատմամբ և սինթետիկ կորունդի արտադրության դադարեցմամբ: Տնտեսական ակտիվության անկման հետևանքով զգալի կրճատվել է էլեկտրաէներգիայի և գազի նկատմամբ պահանջարկը, որը և զխավորապես պայմանավորել է էներգետիկային ենթաճյուղի 2009 թ. հունվար-դեկտեմբերի 13.3% նվազումը<sup>8</sup>:

Այդուհանդերձ, ՀՀ արդյունաբերությունը դեռևս չի հանդիսանում տնտեսության հիմնական լոկոմոտիվը՝ զիջելով այդ կարգավիճակը շինարարությանը: Սակայն, պետք է նկատել, որ ԽՍՀՄ տարիներին ՀՀ-ն եղել է արդյունաբերական երկիր և այժմ էլ ունի ներուժ՝ վերականգնելու տնտեսության այնպիսի կառուցվածք, որտեղ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն արդյունաբերությունն ու ծառայությունները ոլորտը:

Այդ նպատակով անհրաժեշտ է մշակել և իրականացնել բարենպաստ ներդրումային քաղաքականություն, որը ենթադրում է.

1. արդյունաբերության ճյուղերի խնդիրների հետազոտություն,

2. ներդրումների գերակա ուղղությունների բացահայտում և ներդրումային քաղաքականության հիմնավորում,

3. ներդրումների ներգրավման և ֆինանսական հոսքերի ապահովման օրենսդրական հիմքերի ձևավորում,

4. նպատակային ներդրումային ծրագրերի մշակման և իրականացման խթանման մեխանիզմների ձևավորում,

5. պետության ակտիվ ներդրումային քաղաքականություն՝ արդյունաբերության ճյուղային համաչափ զարգացում ապահովելու նպատակով:

Արդյունաբերական ձեռնարկությունների տեխնոլոգիական ներդրումային քաղաքականության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է լավարկված վերափոխումների իրականացումից: Այս համատեքստում արդյունաբերության տնտեսական զարգացման կառուցվածքի, նյութական ռեսուրսների ձևավորման հետազոտության անհրաժեշտությունը կապված է արտադրատնտեսական, տեխնիկատնտեսական և տեխնոլոգիական գործընթացների վերականգնման հետ<sup>9</sup>:

Մյուս կողմից էլ տնտեսական արդյունավետությունը պահանջում է իրականացնել այնպիսի ներդրումային քաղաքականություն, որը ներդրումների հիմնական հոսքերը կուղղորդի դեպի արդյունաբերության ոլորտի զարգացմանը խոչընդոտող գործոնների հաղթահարմանը: Որպես ՀՀ արդյունաբերության զարգացմանը խոչընդոտող գործոններ կարելի է առանձնացնել հետևյալները.

1. հիմնական կապիտալի հնացվածությունը,  
2. արժեթղթերի շուկայի զարգացման ցածր մակարդակը,

3. ոլորտի արտադրանքի ցածր մրցունակությունը՝ պայմանավորված հայկական արտադրատեսակների բրենդի բացակայությամբ,

4. ներքին շուկայի փոքր տարողունակությունը և արտաքին տնտեսական շրջափակումը Ադրբեջանի և Թուրքիայի կողմից,

5. հիմնականում ներմուծված հումքի վրա արտադրության հիմնվածությունը,

6. Հայաստանում արտադրվող հումքային արտադրատեսակների վերջնական արտադրանքի վերածման շղթայի բացակայությունը,

7. նշանակալի տրանսպորտային ծախսերը,

8. հարկային և մաքսային դաշտի չլուծված խնդիրները,

9. արտադրություն-գիտություն-կրթություն սերտ համագործակցության բացակայությունը և հետադարձ թույլ կապը:

Այս խնդիրներից յուրաքանչյուրը պահանջում է յուրովի մոտեցում: Այդուհանդերձ հիմնական կապիտալի նորացման անհրաժեշտության խնդիրը հնարավոր է լուծել ներդրումների ներգրավման միջոցով: Այստեղ պետք է կարևորել նաև արժեթղթերի շուկայի դերը, քանի որ զարգացած արժեթղթերի շուկան հնարավորություն կտա հավաքել տնտեսության մեջ փոշիացած ներդրումային միջոցները մի կողմից և օտարերկրյա պորտֆելային ներդրումները մյուս կողմից: Հիմնական կապիտալի նորացման խնդրի լուծմանը խոչընդոտող գործոն է նաև վարկային ռեսուրսների մատչելիության ցածր մակարդակը:

Այսպիսով, արդյունաբերական կազմակերպությունների տեխնոլոգիական գործընթացների առանձնահատկություններից ելնելով՝ հաճախ ոչ բարձր տոկոսադրույքով երկարաժամկետ վարկային միջոցների ձեռքբերման անհրաժեշտություն է առաջանում, որը չի կարող բավարարվել ներկայումս հանրապետությունում գործող բանկային համակարգի կողմից առաջարկվող պայմաններով: Այս խնդիրը կարող է լուծվել, եթե ՀՀ-ի կառավարությունն ակտիվ քաղաքականություն վարի և ցածր տոկոսադրույքներով վարկեր տրամադրի արդյունաբերական ձեռնարկություններին: Որպես հետևանք կձևավորվեն ժամանակակից հայկական կորպորացիաներ՝ հիմք նախապատրաստելով արժեթղթերի շուկայի զարգացման համար:

Սա հիմք է տալիս պնդելու, որ արդյունաբերության զրգացման ներկայիս փուլում պետական աջակցությունն ուղղակի անհրաժեշտություն է:

Բացի այդ Հայաստանում լուրջ աշխատանքներ պետք է տարվեն լիզինգի և ֆակտորինգի

զարգացման ուղղությամբ՝ որպես արդյունաբերական կազմակերպությունների ֆինանսավորման գործիքներ: Չնայած այս գործիքները արդեն որոշ չափով օգտագործվում են արդյունաբերական կազմակերպությունների կողմից, սակայն դրանք լայն տարածում չեն գտնում՝ պայմանավորված այդ գործիքների վերաբերյալ ոչ բավարար տեղեկատվությամբ, ֆինանսական հատվածում մասնագետների ոչ բավարար փորձով, ինչպես նաև այդ գործիքները կանոնակարգող օրենսդրական դաշտում առկա խնդիրներով:

Արդյունաբերության ոլորտի արտադրանքի ցածր մրցունակությունը պայմանավորված է կիրառվող ցածրորակ տեխնոլոգիայով, որի հիմնական պատճառը ոլորտում նորանուծությունների կիրառման դժվարություններն են՝ կապված ֆինանսական միջոցների անբավարարության և պրակտիկա-գիտություն թույլ կապի հետ:

Այս իմաստով արդյունաբերության զարգացման համար առանցքային նշանակություն ունի նաև նորանուծությունների կիրառման հնարավորությունների վերականգնման հիմնախնդիրների լուծումը: Խնդիրն այն է, որ ՀՀ-ում դեռևս լիարժեքորեն վերականգնված չէ գիտահետազոտական ինստիտուտներ-արդյունաբերություն կապը, այսինքն առկա է անընդհատ գիտության և պրակտիկայի միջև: Սա հնարավորություն չի տալիս արդյունաբերության մեջ կիրառել գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների մեծ մասը, իսկ մյուս կողմից էլ գիտությունը չի զբաղվում այնպիսի առանցքային խնդիրների լուծմամբ, որոնք օրհասական են արդյունաբերության համար: Այս ջրբաժանի հիմնական պատճառը ֆինանսավորման պակասն է և հզոր արդյունաբերական ձեռնարկությունների անհետևողական քաղաքականությունը գիտության և կրթություն բնագավառում:

ՀՀ արդյունաբերության զարգացման համար առանցքային նշանակություն ունի ոչ միայն բուն արդյունաբերական ձեռնարկություններում ներդրումներ իրականացնելը, այլ նաև ներդրումների գերակա ուղղություն պետք է համարել բուհական համակարգի զարգացումը և արդյունաբերություն-բուհական համակարգ կապի ինտեգրացումը, արդյունաբերական ձեռնարկություններին կից գիտահետազոտական ինստիտուտների համակարգի ստեղծումը:

Այս կապն առաջին հերթին ուղղված է գիտության և պրակտիկայի միջև կապի ամրապնդմանը, իսկ մյուս կողմից էլ՝ ռեսուրսների օգտագործման արդյունավետության մակարդակի բարձրացմանը: Բուհական համակարգի հետ արդյունաբերական ձեռնարկությունների փոխհարաբերությունների սերտացումը հնարավորություն կտա լուծել մի շարք ռազմավարական խնդիրներ:

1. գործող ֆիրմաներն աշխատուժի իրենց պահանջարկը կարող են ներկայացնել որոշակի հասցեատերերին՝ ի դեմս բուհական համակարգի, ինչը հնարավորություն կտա պահանջարկն առավելագույնս համապատասխանեցնել առաջարկին,

2. բուհերում իրականացվող գիտահետազոտական աշխատանքները կդառնան ավելի նպատակային՝ ուղղված ոլորտի ձեռնարկությունների որոշակի հիմնախնդիրների լուծմանը,

3. մակրոմակարդակով կառուցվածքային տեղաշարժեր տեղի կունենան աշխատանքի և աշխատողի փնտրման հետ կապված տրանզակցիոն ծախսերը, ինչպես նաև կկրճատվի կառուցվածքային գործազրկության մակարդակը,

4. գիտությունը և պրակտիկան հանդես կգան որպես միասնական համալիր՝ ընդգծված միասնական նպատակներով և խնդիրներով, ինչը հնարավորություն կտա կազմակերպել բարձրորակ, ներքին և արտաքին շուկաներում պահանջարկ վայելող արդյունաբերական արտադրանքի թողարկում:

Այսպիսով, ՀՀ արդյունաբերության զարգացման համար առաջին հերթին պետք է ներդրումային քաղաքականության գերակա ուղղություն հանդիսանա վերը նշված կապի ստեղծումն ու ամրապնդումը: Սակայն, միանգամայն հասկանալի է, որ մասնավոր հատվածի շահագրգռվածությունն այդ ոլորտում բավականին ցածր կլինի, այդ պատճառով էլ խնդրի հիմնական ծանրությունը պետք է իր վրա վերցնի պետությունը: Պատճառն այն է, որ այդպիսի ներդրումների հետգնման ժամեկտրը, որպես կանոն, բավականին երկար է և ռիսկային:

Արդյունաբերական արտադրանքի մրցունակության բարձրացման համար անհրաժեշտ է նաև համակարգաստեղծ, կլաստերաստեղծ ընկերությունների ձևավորումը: Այդ նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել կլաստերային զարգացման համաշխարհային փորձը և նպատակաուղղված կլաստերային քաղաքականության միջոցով իրականացնել հանրապետությունում գիտաարտադրական և սպասարկող կլաստերների ստեղծման նախաձեռնումն ու համակարգումը: Հայաստանում կլաստերների ձևավորման գործընթացը կարելի է խթանել ներգրավվելով միջազգային, տարածաշրջանային խոշոր նորարարական ծրագրերի մեջ և(կամ) համագործակցելով այն երկրների հետ, որոնք արդեն ներգրավված են այդ ծրագրերում: Կլաստերների ձևավորումը հնարավորություն կտա բարձրացնել դրանում ներգրավված ընկերությունների մրցունակությունը:

Մյուս կողմից, ՀՀ արդյունաբերության մեջ որպես ներդրումների գերակա ուղղություն պետք է

նախանշել հիմնական ենթաճյուղերը, քանի որ դրանք բոլորն էլ ունեն հիմնական կապիտալի արդիականացման խիստ կարիք: Այդուհանդերձ, հակված չենք պնդելու, որ ներդրումային քաղաքականության հիմնական խնդիրը պետք է լինի արդյունաբերության ենթաճյուղերի համաչափ զարգացման մակարդակի ապահովումը՝ հաշվի առնելով հարաբերական առավելությունների տեսության դրույթները:

Այսպիսով, ռեսուրսների օգտագործման արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է զարգացնել արդյունաբերության այն ենթաճյուղերը, որոնք ունեն հարաբերական առավելություններ:

Պետք է նկատել, որ ՀՀ հարուստ չէ բնական ռեսուրսներով, հետևաբար կարելի է հանգել այն եզրակացության, որ ՀՀ-ում պետք է զարգացնել արդյունաբերության այն ճյուղերը, որոնք համեմատաբար ռեսուրսախնայող են և փոքր ծավալում պարունակում են մեծ արժեք, այսինքն, պահանջում են տեղափոխման համեմատաբար քիչ ծախսումներ: Կարելի է եզրակացնել, որ արդյունաբերության զարգացումը պետք է լինի գիտելիքահենք և հիմնված նորարարական գաղափարների վրա:

Հանրապետության արդյունաբերության, հատկապես արտահանման նպատակաուղղվածություն ունեցող ճյուղերի և առանձին կազմակերպությունների զարգացումը կարևորվում է նաև նրանով, որ այն կխթանի արտաքին առևտուրը, ստեղծելով նախադրյալներ արտաքին առևտրի դեֆիցիտի կրճատման ուղղությամբ: Համային և որակական բարձր հատկանիշների շնորհիվ, սննդարդյունաբերության ճյուղում արտահանման զգալի ներուժ ունեն ոգելից և ոչ ոգելից խմիչքները, ներառյալ՝ հանքային և խմելու ջրերը, պտղի, բանջարեղենի մշակված ու պահածոյացված արտադրանքը, ծխախոտը, կաթնամթերքը, մսամթերքը: Հեռանկարային է նաև օրգանական գյուղատնտեսության մեթոդով արտադրված բուսական և կենդանական ծագման գյուղատնտեսական մթերքի հումքով վերամշակված սննդամթերքի որոշ տեսակների արտահանումը:

Հանրապետության արդյունաբերական կայուն զարգացումը կախված է ներդրումային հոսքերից, ուստի ներդրումային քաղաքականությունը պետք է դիտարկել որպես տնտեսական զարգացման կարևորագույն միջոցներից մեկը: Վերջին տասնամյակի ընթացքում Հայաստան ունեցել է ներդրումային միջին կատարողական և մեծ հաջողությամբ է մրցակցել ենթակառուցվածքներում և ռեսուրսախնայող ոլորտներում օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավելու հարցում: Չնայած Հայաստանում վերջին տասնամյակում մեկ շնչին բաժին ընկնող ՕՈՒԽ-ի չափը ավելի քան կրկնապատկվել է, Հայաստանը Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների հետ համեմատած՝ ունեցել է միջին կատարողական ցուցանիշներ<sup>10</sup>:

Պետք է կարևորել մասնավոր ներդրումների, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավումը, որը կխթանի արդյունաբերության զարգացմանը՝ նպաստելով նոր տեխնոլոգիաների, կառավարման ունակությունների և գիտելիքների ներմուծմանը, գործարար միջավայրի բարելավմանը, տեղական մրցակցության աշխուժացմանը, աշխատուժի որակի բարձրացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը:

<sup>1</sup> Народное хозяйство Арм ССР в 1989 г., Е., с. 8.

<sup>2</sup> Народное хозяйство СССР в 1975, М., 1976, с. 13, 235.

<sup>3</sup> **Խոջաբեկյան Վ.**, Աղետ և մտահոգություն, Երևան, 1989, էջ 24:

<sup>4</sup> Հայաստանի Հանրապետության արդյունաբերության զարգացման հայեցակարգ [www.mineconomy.am](http://www.mineconomy.am)

<sup>5</sup> Տես նույն տեղում:

<sup>6</sup> Հետազոտությունները կատարվել են ԱՎԾ-ի տվյալների հիման վրա:

<sup>7</sup> Հետազոտությունները կատարվել են ԱՎԾ-ի տվյալների հիման վրա:

<sup>8</sup> Հետազոտությունները կատարվել են ԱՎԾ-ի տվյալների հիման վրա:

<sup>9</sup> Техникаэкономическая анализ машин и приборов. Под ред. М. Ипатова. М., "Машиностроение", 1988, с. 200-202.

<sup>10</sup> Հայաստանի Հանրապետության արդյունաբերության զարգացման հայեցակարգ [www.mineconomy.am](http://www.mineconomy.am)

## INVESTMENT POLICY PRIORITIES OF ARMENIAN INDUSTRY

**SARGIS MELIKSETYAN**

Summary

In the article were discussed investment priorities of Armenian industry and their implementation mechanisms. Having studied international as well as Soviet Armenia's experience in this field, comparing theoretical fundamentals of literature and statistical data conclusions and recommendations were made.

**Վիգեն Սասունիկի ՏՈՆՈՅԱՆ**

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի հայցորդ

Ատենախոսության թեման՝ Ներդրումային ռիսկերը և նրանց իջեցման ուղիները ՀՀ արդյունաբերությունում  
 Գիտական ղեկավար՝ Սերժ ՕՅԼՆՁԱՆՅԱՆ՝ տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ



Ներկայացվում է Հայաստանում ներդրումային վիճակի նկարագիրը, վերջին տարիներին հանրապետության տնտեսության զարգացման միտումներն ու դրա հիմնական աղբյուրները: Փաստվում է ՀՀ տնտեսության

կարգակը: 1995-2008 թվականներին տնտեսական աճի միջին տարեկան տեմպը կազմել է 9 տոկոս: Ընդ որում, աճն արագացել է հատկապես 2001-ից հետո և 2001-2007 թվականների համար կազմել միջինը տարեկան 13 տոկոս: Նույն ժամանակահատվածում զգալի տեմպերով ավելացել է նաև 1 շնչին ընկնող ՀՆԱ-ն, որը 2001 թվականին կազմել է շուրջ 670 ԱՄՆ դոլար, իսկ 2008-ին՝ 3689 ԱՄՆ դոլար<sup>1</sup>:


համար օտարերկրյա ներդրումների ներգրավման կարևորությունն ու այդ գործընթացի ազդեցության նշանակությունը:

**Առանցքային բառեր.** աճի տեմպերը, տնտեսական աճ, ներդրումներ, միջավայր, ռեսուրսներ, ներգրավումը:

Վերջին 15 տարիներին Հայաստանի տնտեսությունը շարունակական աճի և զարգացման միտումներ է դրսևորել: 1991-1993 թվականների խորը տնտեսական անկումից հետո տնտեսությունն ընդլայնվել է ավելի քան 3 անգամ, որի արդյունքում ավելացած արժեքն էապես գերազանցում է խորհրդային վերջին տարիների մա-

2008-ին Հայաստանում տնտեսական աճի տեմպերը, համեմատած նախորդող տարիների հետ, էապես դանդաղեցին: Արդեն տարվա վերջին եռամսյակում տնտեսությունը սկսեց կրել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը. արդյունքում, տարեկան աճը կազմեց ընդամենը 6.8 տոկոս: Այնուհանդերձ, 2008-ին երկրում ստեղծված նոր արդյունքի կամ եկամուտների մակարդակը, նախորդող տարիների շարունակական աճի շնորհիվ, իրական արտահայտությամբ ավելի քան կրկնակի գերազանցեց 2002 թվականի, մոտ 3 անգամ՝ 1995 թվականի և մոտ 1.7 անգամ՝ 1990 թվականի մակարդակները<sup>2</sup>:

Տնտեսական աճի տեմպերը, ընդհանուր առ-



Գծապատկեր 1. Տնտեսական աճը Հայաստանում 1991 -2008 թվականներին<sup>3</sup>

\* Ներկայացվել է 14.01.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:



մամբ, Հայաստանում միջին հաշվով շատ ավելի բարձր են եղել, քան զարգացող և առավել ևս զարգացած երկրներում: 2000 թ.-ից ի վեր՝ տնտեսական աճը Հայաստանում մոտ 3 անգամ ավելի արագ է եղել համաշխարհային տնտեսության համեմատ: Հայաստանում տնտեսական աճի տեմպերը բավականին բարձր են նաև հարևան և նմանատիպ երկրների հետ համեմատած՝ զիջելով միայն Ադրբեջանին և Թուրքմենստանին, որը պայմանավորվում է այս երկրներում նավթային (և գազից) եկամուտների կտրուկ աճով (տես գծապատկեր 2 և 3): Աճի և զարգացման նման միտումների շնորհիվ Հայաստանը Համաշխարհային բանկի դասակարգման սանդղակում ցածր եկամտով երկրների դասից տեղափոխվել է միջին ցածր եկամուտ ունեցող երկրների խումբ:

Տնտեսական աճի ապահովման առումով կարևոր դեր են ունեցել իրականացված առաջին սերնդի բարեփոխումները: Տնտեսության ազատականացումը և շուկայական ենթակառուցվածքների ու ինստիտուտների ձևավորումը հիմք հանդիսացան տնտեսական զարգացման և աճի համար:

Հայաստանում տնտեսական աճի հիմնական աղբյուրն արտաքին խնայողություններն են, մասնավորապես արտերկրից ստացվող մեծածավալ դրամական փոխանցումները և զարգացման ծրագրերում ու ենթակառուցվածքներում ներդրումները: 2004-2008 թվականների ընթացքում


միայն բանկային համակարգի միջոցով երկիրը ստացել է ավելի քան 5.3 միլիարդ ԱՄՆ դոլարի դրամական փոխանցումներ<sup>4</sup>: Ըստ փորձագիտական գնահատականների՝ վերջին տարիներին Հայաստանի տնային տնտեսություններն արտերկրից տարեկան ստացել են մոտ 1.5 միլիարդ ԱՄՆ դոլարի մասնավոր դրամական փոխանցումներ<sup>5</sup>:

Տնտեսական աճի ապահովման տեսանկյունից առանցքային նշանակություն ունեն ներդրումները: ՀՀ-ում տնտեսական աճի և ներդրումների դինամիկայի վերաբերյալ տվյալները փաստում են այդ փոփոխականների միջև ուղիղ կապը:


Հայաստանում դիտարկվող ժամանակահատվածում ներդրումների նման դինամիկ աճը պայմանավորված է եղել առավելապես օտարերկրյա ներդրումների և տրանսֆերտների դինամիկ աճով (տես գծապատկեր 4):

Օտարերկրյա ներդրումների կառուցվածքը, ըստ ներդրողների, կարելի է ներկայացնել աղյուսակ 1-ի միջոցով:


Սակայն, պայմանավորված հետճգնաժամային դժվարություններով, 2010 թ. ընթացքում ՀՀ տնտեսությունում օտարերկրյա ներդրումային հոսքերը (ներառյալ պետական կառավարման և բանկային համակարգով ստացվածը) նվազել են: Այսպես, 2010թ. հունվար-դեկտեմբերին դրանք կազմել են 1505.7 մլն.դոլար, որը 2009 թ. նույն



Գծապատկեր 2. Տնտեսական աճի ինդեքսի համադրում



Գծապատկեր 3. Ներդրումների և ՀՆԱ -ի դինամիկան 2000-2010 թթ.



Գծապատկեր 4. Տրանսֆերտների և օտարերկրյա ուղղակի ներդրումների դինամիկան 2000-2010 թթ.

Ժամանակաշրջանի համեմատ նվազել է 41.1%-ով, ընդ որում ուղղակի ներդրումների ներհույքը կազմել է 693.4 մլն.դոլար (նվազել է 23.5%-ով), այլ ներդրումներինը՝ 811.9 մլն. դոլար (նվազել է շուրջ 2 անգամ), պորտֆելային ներդրումներինը՝ 0.4 մլն. դոլար (նվազել է 96.4%-ով): 2010 թ. ընթացքում ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձանց կողմից, ներդրումների տեսքով, հանրապետությունից ֆինանսական միջոցների արտահույքը (առանց վճարված տոկոսների, դիվիդենտների և վարկերի մարումների) կազմել է 94.4 մլն. դոլար<sup>6</sup>:

Ըստ ներկայացված պաշտոնական վիճակագրական տվյալների՝ 2010 թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալը (առանց

պետական կառավարման և բանկային համակարգով ստացվածի) կազմել է 702.7 մլն. դոլար, որը 2009 թ. նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 24.9%-ով: Նշենք նաև, որ այս նույն ժամանակահատվածում ուղղակի ներդրումների ծավալը կազմել է 483.0 մլն.դոլար: Ցուցանիշը տարեկան կտրվածքով նվազել է 34.0%-ով:

2010 թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների 31.60%-ը, իսկ ուղղակի ներդրումների 39.47%-ն ուղղվել է հեռահաղորդակցության ոլորտ: Միևնույն ժամանակ, ուղղակի ներդրումների 21.07 %-ն իրականացվել է էլեկտրականության, գազի, զոլորշու և լավորակ օդի մատակարարման, իսկ 7.84%-ը՝ ցամաքային տրանսպորտի գործունեություն և փոխադրում խողովակաշարերով ոլորտներում<sup>8</sup>:

Այդուհանդերձ, ՀՀ տնտեսության համար մեծ կարևորություն է ստանում օտարերկրյա ներդրումների ներգրավումը: Պատճառն այն է, որ ներդրումները պայմանավորում են ոչ միայն տնտեսական աճը, այլև նաև ներդրումային գործընթացների վիճակը և դրա դինամիկան, արտաջուլում են տվյալ երկրի, պետության և հասարակության հետագա զարգացման հնարավորությունները:

Համաշխարհային տնտեսությունը 21-րդ դարի սկզբներին չնայած ձեռք է բերել զարգացման տպավորիչ բարձր մակարդակ, բայց և այնպես դեռևս կան բազմաթիվ երկրներ, որոնք խնդիրներ ունեն թե՛ արտադրական-տնտեսական և թե՛ սոցիալ-տնտեսական ոլորտներում: Դրանք ներքին ռեզերվների և ներքին շուկայի ռեսուրսների հաշվին առայժմ լուծել հնարավոր չէ: Այդ երկրներից է նաև Հայաստանը, որտեղ ներքին կապիտալը իր ծավալներով, կառուցվածքով և տեխնոլոգիական մակարդակով անբավարար է տնտեսական որա-

Աղյուսակ 1

Հայաստանի օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) բաշխվածությունը ըստ ներդրող երկրների<sup>7</sup>

Երկիր	Մասնաբաժինը ՕՈՒՆ-ի մեջ, 2009 (%)	ՕՈՒՆ 2009 (ԱՄՆ դոլ., հազար)	Փոփոխություն 2009/2008 (%)
ՈՂ	53	384,831	-46
Ֆրանսիա	27	197,421	136
Արգենտինա	7	48,258	-45
Իտալիա	5	33,480	7648
Գերմանիա	3	19,358	- 18
Լիբանան	2	13,549	14
ԱՄՆ	2	12,983	- 27
այլ	3	22,238	- 64

կական կայուն աճ ապահովելու համար: Նման իրավիճակը թույլ է տալիս կատարել հետևություն, որ տնտեսական և սոցիալական զարգացման խնդիրները լուծել կարելի է, եթե երկիրն ավելի ակտիվորեն մասնակցի օտարերկրյա կապիտալ ներդրումների միջազգային գործընթացներին: Դա ենթադրում է, որ ՀՀ-ն պետք է հաշվի առնի միջազգային ներդրումային կապիտալի շարժման առանձնահատկությունները, ներդրում կատարելու հնարավորություն ունեցող երկրների շահերը և այլն: Կոռնային գրում է, որ ներդրողների զսպվածությունը և զգուշավորությունը այն գլխավոր պատճառներից են, որոնք նրանց հետ են պահում ներդրումներ կատարելուց, ուրեմն անհրաժեշտ է նրանց խրախուսել կապիտալ ներդրումներ կատարելու ուղղությամբ, ինչը կարող է կատարել ընդունող երկրի կառավարությունը<sup>9</sup>:

Այդ իմաստով ՀՀ-ն կարելի է դասել այն երկրների շարքին, որոնց տնտեսության համար օտարերկրյա ներդրումներ ներգրավելը դեռ երկար ժամանակ կպահպանի իր կարևորությունը:

Ներդրումների ներգրավումը ՀՀ-ին հնարավորություն կտա տնտեսության մեջ որակական տեղաշարժեր կատարել՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով հիմնական կապիտալի նորացման և տնտեսության մրցունակության բարձրացման համար:

<sup>1</sup> «Հայաստանի տնտեսական զեկույց 2009», Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, 2009, [www.mineconomy.am](http://www.mineconomy.am)

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ

<sup>5</sup> «Հայաստանի տնտեսական զեկույց 2009», ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, 2009, [www.mineconomy.am](http://www.mineconomy.am)

<sup>6</sup> Հետազոտությունները կատարվել են ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա, [www.wrmstat.am](http://www.wrmstat.am)

<sup>7</sup> Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, 2010, EV հետազոտական կենտրոն:

<sup>8</sup> [http://www.b24.am/economy/ra\\_stat\\_310320111.html](http://www.b24.am/economy/ra_stat_310320111.html)

<sup>9</sup> Տե՛ս **Корный Я.** Путь к свободной экономике. М., «Экономика», 1990, с. 21:

#### ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Фоломьев А. М.** Инвестиционный климат регионов Российской Федерации и пути его увеличения // Вопросы экономики. 1998, N9, с. 46-56.
2. **Лысенко О. В., Кобанова Е. Т.** Инвестиционные риски на региональном уровне // Регион: Экономика и социология. 2002, N2, с. 17-24.
3. **Черненко О. Б.** Теория, методология и практика формирования структурно-инвестиционной политики в регионе // Р-н-Д ону: Росиздат, 2002, 205 с.
4. **Մելքունյան Մ. Ս.**, Բիզնեսի էկոնոմիկա, Ե., 2002, 397 էջ:
5. [www.smartcat.ru / referat/ ethecramrv. shut](http://www.smartcat.ru/referat/ethecramrv.shut)

#### MODERN INVESTMENT MEDIUM STATE IN RA

V. S. TONOYAN

#### Summary

The description of the investment medium state in Armenia, the tendency of economy development of the Republic during past years and its main sources are given. The importance of attracting foreign investments for economy of RA and the effects of this process are argued.

**Keywords:** growth rate, economy growth, investments, medium, resources, attraction.

# ԲՆԱԿԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ\*

## Դավիթ ՍԻՄՈՆՅԱՆ

«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի հայցորդ

**Ատենախոսության թեման՝** Բնակկոմունալ տնտեսության աղբահանության գործունեության կառավարման զարգացման ուղիները ՀՀ-ում (Լոռու մարզի օրինակով)  
**Գիտական ղեկավար՝** Ռոմիկ ԱՎԱՆԵՍՅԱՆ՝ տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ



**Ա**րդի հետինդուստրիալ դարաշրջանին բնորոշ է գիտելիքների, գիտության, տեղեկատվության, մարդկային և մշակութային կապիտալի գերակայությունը ընդհանուր տնտեսական կապիտալի համեմատ, որն առաջ է քաշում սոցիալական,

համամարդկային արժեքների կարևորությունը կառավարման բոլոր ոլորտներում:

Կառավարման այս հիմնադրույթները առավել կարևոր են սոցիալական օբյեկտների կայուն զարգացման համար, որտեղ մարդակենտրոն հիմնական միտումներն իրականացվում են մարդու, խմբի, հասարակության սիներգետիկայի և բնապահպանության սկզբունքների համակարգային փոխկապակցվածության միջոցով: Այսօր առավել թույլ սոցիալական ճյուղերի հիմնախնդիրների մեթոդաբանական լուծումը հնարավոր է միայն մենեջմենթի սոցիալ-մշակութային հայեցակարգի հիման վրա: Համաձայն այս հայեցակարգի՝ սոցիալական օբյեկտի կայուն զարգացումը որոշվում է մի շարք անհրաժեշտ և բավարար պայմանների ամբողջությամբ, որոնք ներառում են ոչ միայն գործունեության տնտեսական, այլև սոցիալ-մշակութային պայմանների ապահովումը, որի հիմքում ընկած է սեփականության բոլոր ձևերի հարաբերությունների մշակույթը:

Սոցիալ-մշակութային մոտեցման օգտագործումը բնակկոմունալ տնտեսության արդյունավետ կառավարման համար թելադրված է նրանով, որ դրա իրական նպատակն է բնակչության

վերարտադրության և բազմակողմանի զարգացման համար բոլոր անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Այս ոլորտի գործունեությունում տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպական-տնտեսական խնդիրները անքակտելիորեն կապված են քաղաքացիների անհատական սեփականության հետ, որտեղ պետք է ստեղծված լինեն բոլոր պայմանները ինքնազարգացման համար՝ բնակարանը, հողը, մեքենան, առողջությունը, մասնագիտական իրազեկությունը: Այս խնդիրների արդյունավետ լուծումը տալիս է դեպի բնակչության կյանքի որակի աճ: Հայտնի է, որ հենց բնակչության կյանքի որակն է որոշում երկրի և առանձին վերցրած շուկայի մրցունակությունը:

Արդի ժամանակում բնակկոմունալ տնտեսության ոլորտի վրա են բևեռված այնպիսի սուր տնտեսական և սոցիալական հիմնախնդիրներ, ինչպիսիք են հիմնական միջոցների մաշվածությունը, բնակկոմունալ ծառայությունների որակի և տեսականու հետընթաց զարգացումը՝ դրանց վարձավճարների առաջընթաց աճի պայմաններում: Այս խնդիրները լուրջ հետևանքներ են թողնում հասարակության կայունացման և տնտեսական զարգացման վրա: Այս իրավիճակի պատճառներից ամենակարևորն է ոչ կատարյալ և անարդյունավետ կառավարումը: Ռուսաստանում կատարված հետազոտությունները փաստում են, որ հիմնական ֆոնդերի մաշվածությունը, հնացած տեխնոլոգիաները և սարքավորումները, մուլտիցիպալ ձեռնարկությունների պարտքերը և լուծառումները բնակկոմունալ տնտեսության ճգնաժամի հետևանքներն են: Ըստ Վ. Ալեքսեևսկիի կատարած հետազոտությունների՝ բնակկոմունալ տնտեսության ճգնաժամի ակունքներում են ոչ հստակ սեփականության հարաբերությունները, և

\* Ներկայացվել է 19.03.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

համապատասխանաբար, դրանց ոչ հստակ կառավարումը [1, էջ 62]:

Որոշ մասնագետներ գտնում են, որ կառավարման անհստակության արմատները սեփականության կառավարման ցածր մշակույթի մեջ են [2]: Իր հերթին սեփականության հարաբերությունների մշակույթը որոշվում է նրա տնտեսական, սոցիալական և կազմակերպչական բաղադրամասերի ամբողջությամբ: Ընդ որում՝ մշակույթի սոցիալական բաղադրամասը առավել թույլ զարգացած է: Հնարավոր է, որ նման իրավիճակի պատճառն այն է, որ պետությունը, իրագործելով վերափոխումներ փոփոխվող սոցիոմշակութային միջավայրի պայմաններում, ավանդաբար հենվում է նախկին կառավարման սոցիոկենտրոն սկզբունքների վրա: Սակայն սոցիալապես կողմնորոշված շուկայական տնտեսությունն օգտագործում է մարդակենտրոն սկզբունքներ:

Վերափոխումների իրականացման համար լուրջ խոչընդոտներ են համարվում տասնամյակների ընթացքում բացակայող անհրաժեշտ ֆինանսական, նյութական, կադրային ռեսուրսները: Իր բացասական ազդեցությունն է թողել նաև անհավասարակշիռ բյուջետային պլանավորումը:

Միևնույն ժամանակ, կատարված հետազոտությունները բացահայտել են ևս մեկ կարևոր սոցիոմշակութային հիմնախնդիր. մունիցիպալ իշխանությունները ստիպված են իրականացնել ճյուղի վերափոխումները՝ բնակչության ցածր վստահության և պասիվության պայմաններում: Իրավիճակի փոփոխման համար անհրաժեշտ է կառավարման ամբողջ հայեցակարգի վերանայում: Մասնավորապես պետք է վերափոխվեն հնացած առաքելությունը, արժեքները և ավանդույթները, կառավարման հարաբերությունները և մշակույթը: Առաջարկված է սոցիալական կառուցվածքի զարգացման նոր մոդել («Ֆրակտալ պարբերաշրջան»), որը պարունակում է ոչ միայն էվոլյուցիոն զարգացման տարրերը, այլ նաև օբյեկտի սիներգետիկ ինքնաշարժման գործընթացը: Այս մոդելը թույլ է տալիս ստեղծել բոլոր մասնակցող կողմերի հետաքրքրությունների համատեղման նոր համակարգ, որի իրականացումը հնարավոր է միայն կառավարման բարձր մշակույթի պայմաններում: Առաջարկված մեթոդաբանական հիմքի վրա Կալուգա քաղաքում կայացած բնակչոմունալ տնտեսության կառավարման զարգացման համակարգի վերլուծությունները թույլ են տվել փաստել, որ այդ համակարգը դիսիպատիվ չէ, քանի որ նրանում բացակայում են ինքնազարգացման սկզբունքներին բնորոշ հետևյալ տարրերը՝

- տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունը քաղաքացիների բարեկեցության խնդիրների լուծման գործում,
- բնակչոմունալ տնտեսության վերափոխումների համար անհրաժեշտ կառավարման ժամա-

նակակից գործիքները,

- վերափոխումներ կատարող սուբյեկտների ինքնազարգացման ունակությունը [1, էջ 64]:

Ձևավորված իրավիճակը փոխելու համար, նախ և առաջ, անհրաժեշտ է վերանայել հետևյալ հարցերը՝

- բնակկառավարման տնտեսությունում՝ դեպի վերափոխումները ուղղված ներքին նպատակադրվածության բացակայությունը (երբ իրահանգները սպասվում են «վերկից»),
- կառավարման գործընթացում ժամանակակից գործիքների ոչ բավարար օգտագործումը,
- բյուջետային միջոցների սահմանափակությունը,
- տեղական մակարդակում բնակչոմունալ տնտեսության կառավարումը ապահովող ենթակառուցվածքի ոչ բավարար արդյունավետությունը,
- դրված խնդիրների լուծման համար անձնակազմի պատրաստման ոչ բավարար արդյունավետ համակարգը,
- տեղեկատվական համակարգի ցածր մակարդակը,
- բնակչության վստահության ցածր մակարդակը:

Այս բոլոր հիմնախնդիրները վերաբերում են նաև ՀՀ բնակչոմունալ տնտեսությանը և մասնավորապես դրա ճյուղերից մեկին՝ աղբահանությանը: Սոցիոմշակութային տեսանկյունից այս բնագավառը առավել կարևոր է, քանի որ կապված է բնակչության կյանքի որակի և կենսամակարդակի հետ, նպաստում է բնապահպանության, բնակչության առողջության, միջավայրի սանիտարական վիճակի խնդիրների լուծմանը:

Կարևորելով այս հարցը՝ ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այս ուղղությամբ կատարվել են որոշ աշխատանքներ, մասնավորապես ծրագրերի ձևով:

Այսպես, 2003 թ. սկսած Մեծ Բրիտանիայի կառավարության կողմից Հայաստանին տրամադրվող օժանդակության շրջանակներում Բնապահպանության, սննդի և գյուղատնտեսական հարցերի նախարարությունը ֆինանսավորել է «Իջևան» քաղաքի կոշտ թափոնների աղբահանության կառավարման ծրագիրը [3, էջ 8]: Այն իրականացրել է «Ամերիա» ՓԲԸ-ն՝ նպատակ ունենալով աջակցել օրգանական թափոնների կառավարման և վերարտադրելի եղանակների բարելավմանն ու Իջևանում ներդնել աղբահանման ժամանակակից համակարգ:

Իջևանում թափոնների կառավարումն էական խնդիր էր բնապահպանական և սանիտարական ապահովության, ինչպես նաև Իջևանում տուրիզմի զարգացման տեսանկյունից, մինչդեռ օրական փողոցներում հավաքված աղբի մոտ 25-30%-ն էր հեռացվում:

Ծրագրի շրջանակներում Իջևանի քաղաքա-

պետարանի համար մշակվել է թափոնների կառավարման պլան, որը հնարավորություն տվեց գնահատել թափոնների կառավարման իրավական դաշտը, բնապահպանական գործոնը, մշակել ծախսածածկման սակագնային արդյունավետ քաղաքականությունն ու թափոնների կառավարման կարծաժամկետ և երկարաժամկետ գործողությունների նախագիծը: Ծրագրի ներդրումային աջակցության շնորհիվ քաղաքապետարանի համար ձեռք են բերվել ժամանակակից բազմաֆունկցիոնալ աղբահանման մեքենա և սարքավորումներ:

Առանց տեխնիկական աջակցության քաղաքում նորմալ աղբահանություն կազմակերպելն ուղղակի անհնար է, իսկ այս ծրագրի արդյունքում ստեղծված ջրհան կայանն իրենք օգտագործելու են ոչ միայն քաղաքում ոռոգում իրականացնելու, այլև քաղաքի փողոցները փոշուց մաքրելու համար:

2008 թ. ծրագիրը ավարտվել է, այժմ նոր ծրագիր է մշակվել հետագա տարիների համար:

Աղբահանության բնագավառում որոշակի աշխատանքներ են կատարվել նաև ՀՀ Լոռու մարզում: Կոշտ կենցաղային թափոնների կառավարմանն ուղղված ընդհանուր խնդիրը և նպատակը հանդիսանում է այդ ոլորտում անհրաժեշտ բարեփոխումների իրականացման ծրագրերի մշակումը, որը պետք է ուղղված լինի շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանմանը:

Լոռու մարզում աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացում իրականացվել են բավականին դրական աշխատանքներ. մշակվել է աղբի տեղափոխման գրաֆիկներ, որոնց իրականացումը վերահսկվում է (այն հիմնականում կատարվում է ժամանակին): Նշվածի արդյունավետության բարձրացմանը նպաստեց նաև աղբահանության ծառայությունների համար վարձավարների գանձման աճը, որը 2010 թ. հաշվարկայինի նկատմամբ կազմում է մոտ 77.9%:

Մարզում համակարգված աղբահանություն իրականացվում է հիմնականում քաղաքային համայնքներում, գյուղական համայնքներում հատուկ աղբամաններ չեն նախատեսվում, աղբահանությունը կատարվում է լոկալ ձևով:

Այս բնագավառների հիմնախնդիրներից է հանդիսանում աղբավայրերից կեղտաջրերի ֆիլտրացման համակարգերի բացակայությունը:

Ներկայումս համայնքների կողմից մշակվում են նոր ժամանակակից աղբավայրերի կառուցման ծրագրեր Վանաձոր քաղաքի կողմից մշակված ծրագրի իրականացման արժեքը կազմում է 12486.5 մլն դրամ, Ստեփանավանինը՝ 96.58 մլն դրամ [4, էջ 11]:

Ինչպես երևում է ներկայացված փաստերից, ներդրված ծրագրերը նպաստել են ՀՀ-ի որոշ մարզերում բնակչունում ալ տնտեսությունների աղբահանության գործընթացի առաջխաղացմանը: Խնդրի կարևորության մասին խոսում է նաև այն փաստը, որ սկսած 2012 թ. մարտի 26-ից մինչև սեպտեմբերի 25-ը աշխարհի 85 երկրներում պետք է անցկացվի համաշխարհային բնապահպանական շարժում (Let's do it World), որի նպատակն է մոլորակը մաքրել կենցաղային աղբից: Հայաստանը նույնպես միացել է այս շարժմանը՝ ստեղծելով «Հայաստանը առանց աղբի» ակցիան [5, 11]: Սակայն այս ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման ոչ բոլոր գործոնները և ներուժն է օգտագործված, ինչը պահանջում է խոր գիտական հետազոտություններ և վերլուծություններ: Հաշվի առնելով, որ նման աշխատանքները հանրապետությունում անհրաժեշտ չափով և մակարդակով կատարված չեն, կարելի է փաստել այս խնդրի արդիականության մասին, որի լուծման համար անհրաժեշտ է օգտագործել արտասահմանյան դրական փորձը և ազգային առանձնահատկությունները, առանձնապես սոցիալ-մշակութային տեսանկյունից:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. **Алексеевский В. С., Сафаров С. М.** Управление развитием региональных под систем жилищно-коммунальных хозяйства: социокультурный аспект. "Менеджмент в России и за рубежом", N1, 2010, с. 61-67.
2. **Петраков Н. Я.**, Отношения собственности: анализ трансформации в переходной экономике. // Проблемы теории и практики управления, 2005.
3. **Ղուլարյան Ա.**, Աղբահանության կառավարման նոր համակարգ Իջևանում // Business Class, հունիս-հուլիս, 2008, N2.
4. Հաշվետվություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի: 2010 թ. աշխատանքային գործունեություն: Վանաձոր, 2011:
5. **Барсегян А.** И мы поборемся с мусором. "А и Ф", N13, 2012.

ABOUT SOCIAL-CULTURAL PROBLEMS OF MUNICIPAL COMPANY'S RUBBISH-CLEANING ACTIVITY MANAGEMENT

**DAVIT SIMONYAN**

Competitor of the "Mkhitar Gosh" Armenian-Russian International University

Summary

Rubbish-cleaning is one of the important section of the country's municipal company's management. In the article the modernity of the problem is justified and the reason of its social-cultural solution are investigated.

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱՉԱՓ  
ՁԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԴ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ\***

**Հայկ ԳԱԼՍՏՅԱՆ**

*ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության պետ  
«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի հայցորդ*

**Ատենախոսության թեման`** Տարածքների կառավարման արդյունավետության բարձրացման ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում

**Գիտական ղեկավար`** Կորյուն ԱԹՈՅԱՆ` տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



**Տ**արածքային համաչափ զարգացման խնդիրը առկա է եղել բոլոր ժամանակահատվածներում և հասարակարգերում, անկախ տվյալ պետության կառավարման մեխանիզմից և զարգացվածության աստիճանից:

Խնդիրը առկա էր նաև նախկին Սովետական Միությունում, որտեղ այն լուծելու նպատակով փորձում էին ստեղծել գործարաններ, որոնք արտադրում էին պլանային արտադրանքներ: Ըստ էության նման մոտեցումը լուծում էր միայն տվյալ տարածաշրջանում աշխատուժի զբաղվածության խնդիրը, որը նաև ունենում էր սոցիալական լարվածության մեղմացման որոշակի էֆեկտ, սակայն զլոբալ առումով խնդիր չէր լուծվում:

2000 թվականից սկսած տնտեսական աճի երկնիչ թվերի հետ միաժամանակ Հայաստանի Հանրապետությունում սկսեցին խորանալ տարածքային զարգացման անհամաչափությունները: Չնայած այն հանգամանքին, որ անհամաչափությունները ակնհայտորեն արտացոլվեցին Երևանի և ՀՀ մարզերի միջև կենսամակարդակի զգալի տարբերությամբ, սակայն մեծ են նաև մարզերի միջև անհամաչափությունները: Տա-

րածքային համաչափ զարգացումը հանդիսացավ ՀՀ կառավարության գերակայություններից մեկը և ընդգրկվեց կառավարության 2008-2012 թթ. գործունեության ծրագրում: Խնդիրն արտացոլվեց նաև ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ին N1207-Ն որոշմամբ հավանության արժանացած «Կայուն զարգացման ծրագրում»:

Տարածքային անհամաչափ զարգացմանը նպաստող գործոնները բազմաթիվ են, դրանց թվին են պատկանում բնակլիմայական պայմանները, իրականացվող ներդրումային քաղաքականությունը, տարածաշրջանում արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման հնարավորությունները և տեմպերը, ենթակառուցվածքների առկայությունը և վիճակը, մարզի դիրքը միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների, ինչպես նաև Երևանի նկատմամբ, պետության վարչատարածքային բաժանումը և այլն:

Եթե դիտարկենք թվարկված գործոններից երեքը` 2005-2010 թթ. իրականացված կապիտալ ներդրումները, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման տեմպերը, ապա կստացվի հետևյալ պատկերը:

Տարածքային անհամաչափ զարգացվածության պատճառներից մեկը հանդիսացավ հանրապետությունում իրականացված կապիտալ ներդրումների անհամաչափությունները: Վերջին տա-

\* Ներկայացվել է 01.02.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:

րիներին մարզերում և Երևան քաղաքում բոլոր աղբյուրներով (բնակչության միջոցներ, կազմակերպությունների միջոցներ, պետական բյուջե, միջազգային վարկեր և մարդասիրական օգնություն) իրականացված կապիտալ ներդրումների դինամիկան ներկայացված է գծապատկեր 1-ում:

Վերլուծելով գծապատկերում ներկայացված տեղեկատվությունը՝ ակնհայտորեն երևում է, որ 2005-2010 թթ. հանրապետությունում իրականացված կապիտալ ներդրումների առյուծի բաժինը, իսկ ավելի ստույգ 78.8 %-ը իրականացվել է Երևան քաղաքում:

Պատկերը նույն է, եթե դիտարկում ենք 2005-2010 թթ. մեկ շնչի հաշվով իրականացված կապիտալ ներդրումները, ընդ որում հանրապետության բոլոր մարզերում այդ ցուցանիշը ցածր է նույնիսկ հանրապետական միջին ցուցանիշից (տես՝ գծապատկեր 2), մասնավորապես, եթե այդ ցուցանիշը Երևանում կազմել է 2794.1 հազ. դրամ, ապա Արմավիրի մարզում՝ ընդամենը 195.9 հազ. դրամ:

Այսինքն՝ վերոնշյալ ժամանակահատվածում Արմավիրի մարզում բոլոր աղբյուրներով մեկ շնչի հաշվով իրականացվել են 14,2 անգամ քիչ կապիտալ ներդրումներ, քան Երևան քաղաքում, որը խիստ մտահոգիչ ցուցանիշ է (գծապատկեր 2):

Եթե դիտարկենք վերջին տարիներին հանրապետությունում իրականացված կապիտալ ներդրումներն առանց Երևան քաղաքի (գծապատկեր 3), կստացվի, որ ամենաշատ կապիտալ ներդրումները իրականացվել են Սյունիքի մարզում՝ միջինը տարեկան շուրջ 26364,5 մլն դրամ (բոլոր աղբյուրներով), իսկ ամենաքիչը՝ 5852,3 մլն դրամ Վայոց ձորի մարզում. տարբերությունը կազմել է 4,5 անգամ (գծապատկեր 3):

Մեկ շնչի հաշվով 2005-2010 թթ. կապիտալ ներդրումների ծավալը դիտարկելիս (գծապատկեր 4) ստացվում է, որ վեց տարվա կտրվածքով ամենաշատ կապիտալ ներդրումներն իրականացվել են Սյունիքի մարզում՝ 1120.5 հազ. դրամ, իսկ ամենաքիչը՝ Արմավիրի մարզում՝ 195,9 հազ. դրամ, արդյունքում տարբերությունը կազմել է 5,7 անգամ, որը նույնպես շատ մեծ թիվ է (գծապատկեր 4):

Սյունիքի մարզում իրականացված կապիտալ ներդրումների մեծությունը պայմանավորված է հիմնականում հանքարդյունաբերության բնագավառում իրականացված ներդրումների մեծությամբ:

Արդյունաբերության ծավալները դիտարկելիս նույնպես առկա է, ինչպես մարզերի և Երևանի, այնպես էլ մարզերի միջև զարգացման տեմպերի զգալի շեղում:

2005-2010 թթ. ընթացքում հանրապետություն-

ում արտադրվել է 4241417,8 մլն դրամի արդյունաբերական արտադրանք: Ամենաշատ արդյունաբերական արտադրանքը արտադրվել է Երևան քաղաքում՝ շուրջ 1961111,5 մլն դրամի, որը կազմել է հանրապետությունում արտադրված արդյունաբերական արտադրանքի 46.2%-ը, իսկ ամենաքիչը՝ Տավուշի մարզում՝ շուրջ 29484 մլն. դրամի (0.7 %), այսինքն Երևանի և ամենաքիչ արդյունաբերական արտադրանք արտադրած մարզի միջև տարբերությունը կազմել է 63.2 անգամ (գծապատկեր 5):

Եթե հաշվի չառնենք Երևան քաղաքը, ապա հանրապետությունում ամենաշատ արդյունաբերական արտադրանքը արտադրվել է Սյունիքի մարզում՝ շուրջ 709494,0 մլն դրամի, այս պարագայում ամենաշատ և ամենաքիչ արդյունաբերական արտադրանք արտադրված մարզերի միջև տարբերությունը կազմում է 26,8 անգամ: Սյունիքի մարզում է արտադրվել մարզերում արտադրված արդյունաբերական արտադրանքի 31.1 %-ը (գծապատկեր 6):

Եթե դիտարկենք 2005-2010 թթ. Հայաստանի Հանրապետությունում արտադրված արդյունաբերական արտադրանքի ողջ ծավալը տվյալ տարածաշրջանի մեկ շնչի հաշվով և համեմատենք հանրապետական միջինի հետ, ապա միջին ցուցանիշից բարձր ցուցանիշ կստացվի միայն Երևանում և Կոտայքի ու Սյունիքի մարզերում (գծապատկեր 7):


2005-2010 թթ. ՀՀ-ում միջինը տարեկան արտադրվել է շուրջ 501.8 մլրդ դրամի գյուղատնտեսական համախառն արտադրանք: Ամենաշատ գյուղատնտեսական արտադրանքը արտադրվել է Արմավիրի մարզում, որը կազմել է հանրապետությունում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի 17,0 %-ը, իսկ ամենաքիչը՝ Վայոց ձորի մարզում՝ շուրջ 3,0 %-ը, այսինքն՝ ամենաքիչ և ամենաշատ գյուղատնտեսական արտադրանք արտադրված մարզերի միջև տարբերությունը կազմում է 5,6 անգամ: Սակայն այստեղ առկա է որոշակի հիմնավորվածություն, մասնավորապես Վայոց ձորի մարզի փոքր չափերը (գծապատկեր 8):

Վերոնշյալ տարիներին մեկ շնչի հաշվով ըստ մարզերի արտադրված գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը դիտարկելիս կստացվի հետևյալ պատկերը (տես՝ գծապատկեր 9):


Չնայած այն հանգամանքին, որ ամենաշատ գյուղատնտեսական արտադրանքը արտադրվել է Արմավիրի մարզում, սակայն մեկ շնչի հաշվով ամենամեծ ցուցանիշը արձանագրվել է Գեղարքունիքի մարզում՝ 2310,2 հազ. դրամ, իսկ ամեն-




Գծապատկեր 1  
2005-2010 թթ. Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում իրականացված կապիտալ ներդրումների հարաբերակցությունը (ընթացիկ գներով, մլն. դրամ)




Գծապատկեր 2  
2005-2010 թթ. մեկ շնչի հաշվով հանրապետությունում իրականացված կապիտալ ներդրումների հարաբերակցությունը միջին հանրապետական ցուցանիշի հետ (հազ. դրամ)




Գծապատկեր 3  
 2005-2010 թթ. Հայաստանի Հանրապետության մարզերում իրականացված կապիտալ ներդրումների հարաբերակցությունը (ընթացիկ գներով, մլն. դրամ)




Գծապատկեր 4  
 2005-2010 թթ. մեկ շնչի հաշվով հանրապետության մարզերում իրականացված կապիտալ ներդրումների հարաբերակցությունը միջին մարզային ցուցանիշի հետ (հազ. դրամ)




Գծապատկեր 5  
2005-2010 թթ. Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում արտադրված արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը (%)




Գծապատկեր 6  
2005-2010 թթ. Հայաստանի Հանրապետության մարզերում արտադրված արդյունաբերական արտադրանքի ծավալները (ընթացիկ գներով, մլն դրամ)




Գծապատկեր 7  
 2005-2010 թթ. Հայաստանի Հանրապետության մարզերում արտադրված արդյունաբերական արտադրանքի հարաբերակցությունը միջին հանրապետական ցուցանիշի հետ (ընթացիկ գներով, մլն դրամ)




Գծապատկեր 8  
 2005-2010 թթ. Հայաստանի Հանրապետության մարզերում արտադրված գյուղատնտեսության համախառն արտադրանք (ընթացիկ գներով, մլրդ դրամ)



Գծապատկեր 9  
2005-2010 թթ. Հայաստանի Հանրապետության մարզերում արտադրված գյուղատնտեսության համախառն արտադրանք մեկ շնչի հաշվով (ընթացիկ գներով, հազ . դրամ)



Գծանկար 10  
Հայաստանի տարածքային զարգացման բազային և ԿԶԾ-ի սցենարները 2006-2021 թթ.



նափոքրը՝ Կոտայքի մարզում՝ 925,9 հազ. դրամ, որոնց տարբերությունը եղել է 2.5 անգամ:

Վերոնշյալ վերլուծությունից ակնհայտ երևում է, որ ինչպես Երևանի և մարզերի, այնպես էլ մարզերի միջև վերջին տարիների զարգացվածության մակարդակի տարբերությունը ահռելի է:

Հետագա զարգացման գործընթացում առկա դինամիկայի պահպանման պարագայում էլ ավելի կխորանա ինչպես Երևանի և մարզերի, այնպես էլ մարզերի միջև բնակչության կենսամակարդակների տարբերությունը, որն էլ իր հերթին կհանգեցնի սոցիալական լրացուցիչ լարվածության և ներքին ու արտաքին միգրացիայի:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 1207-Ն որոշմամբ հավանության արժանացած Կայուն զարգացման ծրագրով սահմանված է, որ ձևավորված տարածքային զարգացման միտումների շարունակության դեպքում խզումը Երևանի և մարզերի, ինչպես նաև Երևանի և այլ քաղաքների ու գյուղական բնակավայրերի միջև էլ ավելի կխորանա՝ հանգեցնելով խիստ անցանկալի հետևանքների, էլ ավելի վտանգելով երկրի կայունությունը և խորացնելով անջրպետը մայրաքաղաքի և մարզերի միջև: Մասնավորապես զարգացման առկա տեմպերի պահպանման դեպքում 2012 թ. ՀՆԱ 67 %-ը, 2015 թ.՝ ՀՆԱ 69.6 %-ը, 2018 թ.՝ ՀՆԱ 71.8 %-ը և 2021 թ.՝ ՀՆԱ 73.8 %-ը կձևավորվի Երևանում: Համապատասխանաբար կշարունակի աճել մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշներով չափվող կենսամակարդակների տարբերությունը Երևանի և մարզերի միջև՝ 2012 թ. կազմելով մոտ 3.9, 2015 թ.՝ մոտ 4.4, 2018թ.՝ մոտ 4.9, իսկ 2021թ.՝ մոտ 5.4 անգամ:

Սակայն ԿԶԾ-ի տարածքային զարգացման սցենարը նախատեսում էր նպատակային տարածքային քաղաքականության իրականացում, որը ուղղված կլիներ Երևանից դուրս տնտեսական աճի արագացման խրախուսմանը: Այդ քաղաքականության կիրառման արդյունքում 2008-2014 թթ. ընթացքում նախատեսվում էր մոտեցնել

մարզերի զարգացման տեմպերը Երևանի զարգացման տեմպերին, իսկ 2015 թ. ապահովել այնպիսի իրավիճակ, որի արդյունքում մարզային զարգացման տեմպերը Երևանի զարգացման տեմպերից ավելի բարձր կլինեն: Երևանի տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում պետք է շարունակել աճել մինչև 2014 թ.՝ կազմելով 62%, իսկ 2015 թ. և հետագա տարիներին պետք է դանդաղ կրճատվի՝ 2018 թ. կազմելով 61.1%, 2021 թ.՝ 60.8%: Համապատասխանաբար պետք է կայունանա և 2015 թ-ից քայլ առ քայլ կրճատվի նաև կենսամակարդակների տարբերությունը՝ 2014 թ. 3.12 անգամից մինչև 2.98 անգամ՝ 2021 թ. (գծանկար 10):

Ցավոք, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից ներկայումս չի հրատարակվում ՀՆԱ-ն ըստ տարածաշրջանների, որպեսզի հնարավոր լինի գնահատել կառավարության կողմից հաստատված ծրագրի իրականացման ընթացքը, սակայն եթե դիտարկենք միայն 2010 թվականին ըստ մարզերի և Երևանի իրականացված կապիտալ ներդրումները և արտադրված արդյունաբերական արտադրանքի ծավալը կստացվի հետևյալ պատկերը (տե՛ս աղյուսակ 1):

Ներկայացված աղյուսակից երևում է, որ դեռևս հանրապետությունում իրականացվող կապիտալ ներդրումների 60 %-ը և արտադրվող արդյունաբերական արտադրանքի 43 %-ը թողարկվում է Երևան քաղաքում:

Ինչևէ, տարածքային զարգացման անհամաչափությունների մեղման նպատակով վերջին տարիներին կառավարության կողմից իրականացվել են նաև գործնական քայլեր, եականորեն վերաբաշխվել են պետական բյուջեով իրականացվող կապիտալ ներդրումների ուղղությունները, մասնավորապես, եթե 2008 թվականի պետական բյուջեով քաղաքաշինության բնագավառում իրականացված կապիտալ ներդրումների 70,5 %-ն է իրականացվել մարզերում, ապա 2010թ.՝ 88,5 %-ը:

Տարածքների համաչափ զարգացման, Երևան

**Աղյուսակ 1**

2010 թվականին ըստ մարզերի և Երևանի իրականացված կապիտալ ներդրումները և արտադրված արդյունաբերական արտադրանքի ծավալը

Բնակավայրի անվանումը	Իրականացված կապիտալ ներդրումներ		Արտադրված արդյունաբերական արտադրանք	
	Ծավալ ընթացիկ գներով, մլն.դրամ	տեսակարար կշիռ (%)	Ծավալ ընթացիկ գներով, մլն.դրամ	տեսակարար կշիռ (%)
ք. Երևան	347572,4	60,0	354772,0	43,0
ՀՀ մարզեր	232213,0	40,0	469516,0	57,0

նի և մարզերի, ինչպես նաև մարզերի միջև առկա կենսամակարդակների տարբերությունների նվազեցման և մարզերի զարգացման տեմպերը Երևանի զարգացման տեմպերին մոտեցման նպատակով 2011 թ. հունիսի 30-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվեց «Տարածքային համաչափ զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» թիվ 38 արձանագրային որոշումը:

Հայեցակարգի ընդունումից հետո անհրաժեշտ կլինի իրականացնել հայեցակարգով հաստատված այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են՝

ա) արտադրական ենթակառուցվածքների հասանելիության մասին ամբողջական գնահատման համակարգի սահմանում (խմելու, ոռոգման ջրագիծ, գազատար, ճանապարհ, կապ և այլն),

բ) սոցիալական ենթակառուցվածքների հասանելիության մասին ամբողջական գնահատման համակարգի սահմանում (առողջապահական, կրթական հաստատություններ և այլն),

դ) մարզերի տնտեսական զարգացման ներուժի գնահատման մեթոդաբանության ամբողջացում,

ե) տարածքներում պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին կատարվող ներդրումների

արդյունավետության հաշվարկում,

զ) այլ տարածքների զարգացման և բարելեցության վրա ազդեցություն ունեցող տարածքների (մարզ, համայնք, առանձին զարգացման կենտրոն համարվող քաղաք, միջհամայնքային միավոր, համայնքների խումբ) բացահայտում,

է) մրցունակ և գրավիչ տարածքների զարգացման նպատակային ծրագրերի մշակում,

ը) մարզային զարգացման ծրագրերի իրականացման տարեկան արդյունքների գնահատում և աղքատության նվազման վրա այդ գնահատականների ազդեցության հաշվարկում,

թ) տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման մոտեցումների և աղբյուրների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

ժ) փորձնական տարածքային զարգացման ծրագրերի իրականացում:

1. armstat.am
2. ՀՀ կառավարության 02.10.2008 թ. «Կայուն զարգացման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1207-Ն որոշում:
3. ՀՀ կառավարության 30.06.2011 թ. «Տարածքային համաչափ զարգացման հայեցակարգը հաստատելու մասին» թիվ 38 արձանագրային որոշում:

THE PROBLEM OF COMMUNITY BALANCES DEVELOPMENT IN RA AND IMPLEMENTED POLICY WITH THIS TREND BY GOVERNMENT IN RECENT YEARS

**H. GALSTYAN**

Summary

The issue of symmetric territorial development has always existed in all times and social systems, irrespective of the state administrative mechanism and its degree of development. The issue also exists in RA, which is revealed by the significant living standards diversity between Yerevan and other regions.

The article highlights not only the volume of recent capital investments implemented by regions, but also the industrial and agricultural development dynamics by which asymmetries in territorial development are conditioned.

It also represents certain activities, the realization of which will contribute to further symmetric territorial development process.

## ՀԻՄՆԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԻ ԵՎ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԳԱՐՏՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ\*

### Նորայր ՔՈՉԱՐՅԱՆ

Եվրոպական Կրթական Տարածաշրջանային Ակադեմիա



Աշխատանքի միջոցները, որոնք նախատեսված են ձեռնարկության, ընկերության տնտեսական գործունեության իրականացման համար հանդիսանում են հիմնական միջոցներ:

Հաշվապահական հաշվառման միջազգային և ազգային «Հիմնական միջոցներ» ստանդարտները հիմնական միջոցներ տերմինը օգտագործվում են հետևյալ իմաստով:

Հիմնական միջոցները նյութական ակտիվներ են, որոնք առկա են ձեռնարկությունում, ընկերությունում, արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման, վարձակալության տալու կամ վարչական նպատակներով օգտագործելու համար, և նախատեսվում են օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով:

Հաշվապահական հաշվառման մեջ արտացոլվում են հիմնական միջոցների «ՀՄ» արժեքը և նյութաիրեղեն «քանակական» կազմը: ՀՄ հաշվապահական հաշվառումը տարվում է ըստ նրա առանձին տեսակների:

ՀՄ յուրահատկությունն այն է, որ դրանք արտադրության պրոցեսում օգտագործվում են բազմաթիվ անգամ և պահպանում են իրենց սկզբնական տեսքը, ձևը երկար ժամանակ:

Արտադրության պրոցեսի և արտաքին միջավայրի ազդեցության տակ դրանք աստիճանաբար մաշվում են և իրենց սկզբնական արժեքը ծառայության նորմատիվային ժամկետում փո-

խարինվում արտադրության ծախսերին, որ կատարվում են սահմանված նորմերով մաշվածքի՝ «ամորտիզացիայի» հատկացումների միջոցով<sup>1</sup>:

Նորանկախ պետություններում, այդ թվում, Հայաստանի Հանրապետությունում, ՀՄ հաշվառումը տանելու համար օգտագործվում են նախկին հաշվապահական հաշվառումից ժառանգություն մնացած սկզբնական փաստաթղթերի տիպային ձևերը՝ ՀՄ ընդունման-հանձնման ակտերը, ներքին տեղափոխումների ապրանքագրերը, վերանորոգման օբյեկտների ընդունման-հանձնման ակտերը, ՀՄ լուծարման ակտերը և ՀՄ հաշվառման գույքային քարտերը:

Թվարկված ձևերից բացի, ՀՄ հաշվառման համար օգտագործվում են ՀՄ տեխնիկական անձնագրերը և հաշվապահական տեղեկանքները:

Այսպես, ավտոտրանսպորտի վազանցի տեղեկանքը օգտագործվում է այդ տեսակի ՀՄ մաշվածքի մասնահանումը հաշվելու համար:

Հաշվապահության մեջ որպես հաշվառման միավոր ընդունված է գույքագրման օբյեկտը, որն իրենից ներկայացնում է ավարտված կառույց, առկա կամ առարկաների և հարմարանքների համալիր, որոնք նախատեսված են որոշակի ֆունկցիա կատարելու համար և ունեն որոշակի արժեք:

Եթե ձեռնարկությունն ակնկալում է պահեստամասերը և սպասարկող սարքավորումները օգտագործել ավելի քան մեկ տարի, դրանք ճանաչվում են որպես ՀՄ:

Որոշելու համար, թե ինչից է բաղկացած ՀՄ առանձին միավորը, հաշվապահական հաշվառման միջազգային և ազգային «Հիմնական միջոցներ» ստանդարտները անհրաժեշտ են համարում որոշել, թե գնահատման ինչ չափանիշներ պետք է կիրառել հատուկ հարմարանքները կամ հատուկ տիպի կազմավորումները սահմանելիս:

\* Ներկայացվել է 23.02.2012 թ., ընդունվել է տպագրության 20.03.2012 թ.:



Հնարավոր է, որ սարքավորման առանձին, ոչ նշանակալի միավորները, օրինակ՝ գործիքները, դրոշմոցները, կաղապարները նպատակահարմար լինի ճանաչել որպես մեկ ակտիվ «ՀՄ մեկ միավոր»՝ կիրառելով որպես մեկ ամբողջական արժեք ներկայացնելու չափանիշը<sup>2</sup>:

ՀՄ հաշվապահական հաշվառումը տարվում է ըստ յուրաքանչյուր գույքային օբյեկտի: Գույքային քարտում մտնում են այնպիսի ռեկվիզիտներ, ինչպիսիք են գույքագրման թիվը, սկզբնական արժեքը, տեսքը, կիրառման բնագավառը, պատկանելության բնույթը, պատրաստման ամսաթիվը, մաշվածքի մասնահանման նորմի թվանիշը, մաշվածքի կուտակված մասնահատումների գումարը, թանկարժեք մետաղի գոյությունը:

ՀՄ միավորի՝ որպես ակտիվի ճանաչումը տեղի է ունենում հաշվապահական հաշվառման միջազգային և ազգային ստանդարտների սահմանած պահանջներին համապատասխան: ՀՄ միավորը որպես ակտիվ ճանաչելու առաջին չափանիշին բավարարելը որոշելու համար կազմակերպությունը սկզբնական ճանաչման պահին ունեցած տվյալների հիման վրա պետք է որոշի ապագա տնտեսական օգուտների ստացման հավաստիության աստիճանը: Այս հավաստիացումը, սովորաբար, առկա է լինում այն դեպքում, երբ ռիսկերի հատուցումները տրվել են ձեռնարկությանը, ընկերությանը: Մինչև դրա տեղի ունենալը ակտիվի ձեռք բերման գործարքը կարող է առանց նշանակալի տուգանքի չեղյալ համարվել, և, հետևաբար, ակտիվը չի ճանաչվի:

ՀՄ ճանաչման երկրորդ չափանիշը, սովորաբար, բավարարվում է անմիջապես, որովհետև փոխանակման գործարքով, որը հաստատում է ակտիվի ձեռք բերումը, որոշվում է դրա սկզբնական արժեքը:

Այն դեպքում, երբ ակտիվը ստեղծում է կազմակերպության կողմից առանց այլ կողմի ներգրավման, արժեքի հավաստի չափումը կարելի է կատարել կառուցման ընթացքում օգտագործվող նյութերի, աշխատուժի և այլ միջոցների ձեռք բերման գծով արտաքին կողմերի հետ իրականացված գործարքների արդյունքով:

Որոշ դեպքերում նպատակահարմար է ակտիվի ձեռք բերման վրա կատարած ընդհանուր ծախսումները բաժանել նրա բաղկացուցիչների վրա, և յուրաքանչյուր բաղկացուցիչ ակտիվներն ունեն տարբեր օգտակար ծառայություն կամ ձեռնարկությանը, ընկերությանը օգուտ են բերում տարբեր կերպով: Ուստի, անհրաժեշտ է կիրառել մաշվածության հաշվարկի տարբեր դրույքաչափեր և մեթոդներ: Օրինակ, օդանավը և նրա շարժիչները պետք է հաշվառել որպես առանձին մաշ-

վող ակտիվներ, եթե դրանք ունեն տարբեր օգտակար ծառայություններ<sup>3</sup>:

Որոշ հիմնական միջոցներ կարող են ձեռք բերվել շրջակա միջավայրի պահպանության և անվտանգության նպատակով, որոնք ոգտագործումից հետո ձեռնարկությունը չի ակնկալում տնտեսական օգուտներ: Այնուամենայնիվ, դրանք ճանաչվում են որպես ակտիվ միայն այն չափով, որ դրանց հետ կապված ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում այդ ակտիվների և դրանց հետ կապված ակտիվների փոխհատուցվող ընդհանուր գումարը:

Հաշվապահական հաշվառման միջազգային և ազգային «Հիմնական միջոցներ» ստանդարտները սահմանում են, որ ՀՄ միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, պետք է չափվի իր սկզբնական արժեքով՝ ինքնարժեքով:

ՀՄ միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարումներ, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն ձեռնարկությանը, ընկերությանը ետ վերադարձման, և ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախսում: Տրամադրված ցանկացած գեղչ և արտոնություն հանվում է գնման գնից<sup>4</sup>:

Նորանկախ պետություններում, այդ թվում Հայաստանի Հանրապետությունում, ՀՄ սկզբնական արժեքի որոշման գործող կարգը և վերևում բերված հաշվապահական հաշվառման միջազգային և ազգային ստանդարտի պահանջները նույն այդ սկզբնական արժեքի որոշման խնդրում էապես իրարից չեն տարբերվում:

Նորանկախ պետություններում, այդ թվում Հայաստանի Հանրապետությունում, հաշվապահական հաշվառման գործող կարգի համաձայն՝ օբյեկտի սկզբնական արժեքի մեջ մտնում է նրա կառուցման, կերտման, ձեռք բերման՝ ներառյալ մոնտաժելու ծախսերը:

Ձեռք բերած սարքավորումների արժեքի մեջ մտնում են գնման գնից բացի, բերման, տեղավորման, բեռնաթափման, ապահովագրման, պահպանման ծախսերը, ինչպես նաև այն գործարկման իրավիճակի հասցնելու հետ կապված բոլոր ծախսերը, այդ թվում մաքսային, հարկային և այլ զանձումներ:

Սեփական ուժերով կառուցվող ակտիվի սկզբնական արժեքը, համաձայն հաշվապահական միջազգային և ազգային ստանդարտների պահանջների, որոշվում է նույն սկզբունքներով, որոնք կիրառվում են ձեռք բերվող ակտիվի հա-

մար: Եթե ձեռնարկությունը, ընկերությունը նման ակտիվներ են պատրաստում վաճառքի համար, ապա այդ ակտիվի արժեքը սովորաբար նույն է, ինչ-որ վաճառքի համար արտադրվող ակտիվները: Ուստի, ներքին շահույթները չեն ներառվում սկզբնական արժեքի մեջ:

Վարչական և այլ վերադիր ծախսերը ՀՄ միավորի արժեքի բաղկացուցիչ չեն համարվում, եթե դրանք անմիջականորեն չեն վերաբերվում ակտիվի ձեռք բերմանը կամ այն աշխատանքային վիճակին բերելուն: Ակտիվի սկզբնական շահագործման հետ կապված վնասները, որոնք առաջանում են նախքան ակտիվի ծրագրավորված հզորության հասնելը, ճանաչվում են որպես ծախս:

ՀՄ հաշվապահական հաշվառումը ըստ հաշվառման օբյեկտների արտահայտում է այդ օբյեկտների հաշվառման առանձնահատկությունները: Ձեռնարկության, ընկերության հիմնական միջոցները ըստ կազմի և նշանակման բազմազան են: Որպեսզի կատարվի դրանց հաշվառումը, անհրաժեշտ է հիմնական միջոցները դասակարգել ըստ նշանակման կամ արտադրության պրոցեսին մասնակցության բնույթի:

ՀՄ տեսակներն են շենքերը, կառույցները, փոխանցվող միջոցները, բանվորական և ուժային մեքենաները ու սարքավորումները, չափիչ ու կարգավորիչ սարքերը և հարմարանքները, հաշվիչ, տեխնիկական, տրանսպորտային միջոցները, գործիքները, արտադրական և տնտեսական գույքը<sup>5</sup>:

ՀՄ են համարվում նաև ձեռնարկությանը օգտագործման համար հանձնված հողամասերի, անտառների և ջրային ռեսուրսների վրա գույքային բնույթի կապիտալ ներդրումները: Այդ հողամասերը, ջրային ռեսուրսները, անտառները, հանքավայրերը եթե հանձնվում են ձեռնարկությանը, ընկերությանը որպես սեփականություն, ՀՄ կազմում հաշվառվում են մեկուսացված, առանձին կարգով:

ՀՄ ըստ դրանց օգտագործման բնագավառների բաժանվում են արտադրականի, իսկ ըստ պատկանելության բնույթի՝ սեփական և վարձակալական:

ՀՄ հաշվապահական հաշվառումը ընդգրկում է մի քանի փուլեր՝ ՀՄ մուտքի, դուրս գրման, մաշվածության, նրանց արժեքի փոփոխման, տեղավորման, հաշվառման: ՀՄ մուտքը տեղի է ունենում շինարարության, զնումների, մեկ ուրիշից անհատույց փոխանցման կարգով ստացման և վարձակալման միջոցներով: Յուրաքանչյուր օբյեկտի մուտքագրումը տեղի է ունենում ակտերի

հիման վրա գույքային քարտ բացելու կամ օրագրում համապատասխան գրանցումներ կատարելու միջոցով:

ՀՄ դուրս գրումը տեղի է ունենում դրանց վաճառքի, ֆիզիկական և բարոյական լրիվ մաշվածության կամ անհատույց այլ ձեռնարկության, ընկերության հանձնելու հետևանքով:

Դուրս գրումը տեղի է ունենում դուրսգրման ակտերի հիման վրա գույքային քարտերում կամ մատյանում համապատասխան գրանցումներ կատարելու միջոցով: ՀՄ դուրսգրման հետ կապված կարող են առաջանալ ծախսեր դրանց քանդման, ոչնչացման, թափոնների տեղափոխման պատճառով:

Շուկայական գների տատանումները, առանձին օբյեկտների ֆիզիկական վիճակի փոփոխությունները և այլ հանգամանքները պահանջում են փոխել՝ ավելացնել կամ պակասեցնել օբյեկտի սկզբնական արժեքը: ՀՄ օբյեկտի գնահատումը կամ վերագնահատումը ձևակերպվում է համապատասխան ակտով: Այդ արժեքը արտացոլվում է օբյեկտի գույքային քարտում կամ ՀՄ հաշվառման մատյանում:

Հաշվապահական հաշվառման միջազգային և ազգային «Հիմնական միջոցներ» ստանդարտները սահմանում են, որ ՀՄ միավորը, որպես ակտիվ, սկզբնական ճանաչումից հետո պետք է հաշվառվի վերագնահատված գումարով, որն իրենից նեկայացնում է նրա իրական արժեքը՝ առանց համապատասխան կուտակված մաշվածության և արժեզրկումից կուտակված կորուստների: Վերագնահատումները պետք է կատարվեն բավարար տարբերությամբ այնպես, որ հաշվեկշռային արժեքը էականորեն չտարբերվի հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ իրական արժեքից:

Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը վերագնահատման փուլում անմիջականորեն պետք է վերագրվի սեփական կապիտալին, իսկ նվազման դեպքում նվազումը պետք է ճանաչվի ծախս: Սակայն, եթե այդ աճը վերականգնվում է, նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը պետք է ճանաչվի որպես եկամուտ այն չափով, որով նախապես նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Այդ դեպքում, վերագնահատման հետևանքով առաջացած նվազումը պետք է անմիջականորեն հանվի համապատասխան ակտիվի նախորդ վերագնահատումից առաջացած աճից այն չափով, որ նվազումը չգերազանցի նույն ակտիվի հետ կապված վերագնահատումից առաջացած աճը:

- 
- <sup>1</sup> «Հայաստանի Հանրապետության հաշվապահական ստանդարտներ», Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա, 2000:
- <sup>2</sup> **Ռ. Խաչատրյան**, Ֆինանսական և կառավարչական հաշվապահական հաշվառման ուսումնամեթոդական և կիրառական ձեռնարկների ժողովածու, հատոր 1, Երևան 2007:
- <sup>3</sup> «Հայաստանի Հանրապետության հաշվապահական ստանդարտներ», Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիա, 2000:
- <sup>4</sup> Նույն տեղում:
- <sup>5</sup> **Ռ. Խաչատրյան**, Աուդիտը և գործնական հաշվապահությունը Հայաստանում, Երևան, 1998:

---

ASSESSMENT OF MAJOR FUNDS AND RESOURCES IN THE TERMS AND CONDITIONS OF THE ACCEPTING INTERNATIONAL STANDARDS OF ACCOUNTING.

**NORAYR KOCHARYAN**  
European Regional Academy

Summary

The article is about fixed assets, and depreciation of their capital accounting interpretation. Fixed assets are intangible assets which are available in the enterprises, companies, productions, labor, services, product sales, rental or administrative purposes and are expected to use more than one year.

## ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

<b>ՀԱՄԱԻԿ ԴԵՐՁՅԱՆ.</b> Սովորողների էկոլոգիական կրթության գլոբալ հիմնախնդիրները .....	4
<b>ՎԱՉԻԿ ԲՐՈՒՏՅԱՆ.</b> Օժտված երեխաների հոգեբանական առանձնահատկությունները և դաստիարակության հիմնախնդիրները .....	7
<b>ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ.</b> Մոդուլային տեխնոլոգիան որպես ուսանողների ինքնուրույն աշխատանքի ակտիվացման միջոց .....	11
<b>ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ, ՄԱՐԳԱՐԻՏԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ.</b> Մասնագիտական կրթությունը մասնագետի առաջարկի և պահանջարկի ենթատեքստում .....	17
<b>ՍՈՒԿԱՆՆԱ ԱՍՍՏՐՅԱՆ.</b> Անգլերեն բանավոր հաղորդակցության ուսուցման բաղադրիչները .....	22
<b>ՆԱԻՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ.</b> Ճարտարապետաշինարարական անգլերեն բառապաշարի ուսուցման վարժությունների համակարգը.....	26
<b>ԳԱՅԻՆ ԲԱՓԻԿՈՎՆԱ ԱՄԻՐՅԱՆ.</b> Современные информационные технологии в обучении .....	32
<b>ԳԱՅԻՆ ԲԱՓԻԿՈՎՆԱ ԱՄԻՐՅԱՆ.</b> Педагогика: авторитет педагога .....	39
<b>Ա. ԵՆԳԻՐԱՐՅԱՆ.</b> Դպրոցական թատրոնը և թատերական մանկավարժությունը դպրոցի և մանկավարժական մտքի պատմության էջերում .....	44
<b>ԳԵՎՈՐԳ ՇԱՀԿԵՐԴՅԱՆ.</b> Շարժողական պատրաստականության առանձնահատկությունները ֆիզիկական դաստիարակության դասերին որպես տարբերակված մոտեցման հենք .....	48
<b>ԳԱՅԱՆԵ ՎԱՋԳԵՆԻ ԱՂՈՒՋՈՒՄՅԱՆ.</b> Դասղեկի աշխատանքի արդիականացման ժամանակակից խնդիրները .....	50
<b>ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ.</b> Հեռուստատեսության դերը դպրոցականի անձի ձևավորման գործում .....	53
<b>ԱՐՏՅՈՄ ԱԲՐԱՅԱՅԱՆ.</b> Շեղվող վարքագծով ավագ դպրոցականների անհատական առանձնահատկությունները և դրանց վրա մանկավարժական ներգործության ապահովման հնարավորությունները .....	58
<b>ՆԱԻԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ.</b> Ժամանակակից ընտանիքում ավագ դպրոցականների սոցիալական կողմնորոշման ձևավորման առանձնահատկությունները .....	63
<b>ԱՆԱԴՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ.</b> «Սոցիալական մանկավարժություն» հասկացությունը՝ քննարկման առարկա .....	67
<b>ԱՆՈՒՇ ԴՈՒՎԱՅԱՆ, ՍԻՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ.</b> Միջմշակութային գիտելիքների յուրացմանն ուղղված առաջադրանքների համակարգման խնդիրները .....	70
<b>Վ. Ս. ԿԱԴԵՎՈՍՅԱՆ.</b> Современные подходы в организации музыкального образования .....	74
<b>ՀՄԱԻԴԻ ՏԱՀԵՐ.</b> Սիրիայի Արաբական Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի երրորդ դասի ավելացման գիտագործնական նշանակությունը .....	77
<b>ՀՄԱԻԴԻ ՏԱՀԵՐ.</b> Հայաստանի և Սիրիայի կրտսեր դպրոցականների շարժողական պատրաստության համեմատական վերլուծությունը .....	80

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

<b>ԱԼԲԵՐՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ.</b> Ուսանողների իրավական կրթության և դաստիարակության նպատակներն ու խնդիրները .....	89
<b>ԿԱՐԼԵՆ ԱՍԼԱՆՅԱՆ.</b> Հեռուստառադիոշուկայի իրավական կարգավորումը և պաշտպանությունը ՀՀ օրենսդրությամբ .....	92
<b>ABOLFAZL AMERI SHAHRABI.</b> Assemblies and main legislative councils in Iran .....	95

**ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

<b>ԼՈՒՍԻՆԵ ՄԻՇԱՅԻ ԱՂԱԲԱԲՅԱՆ.</b> Փոքր և միջին ձեռնարկատիրությունը տնտեսության առաջնահերթություններում .....	101
<b>ԳՈՒՐԳԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ.</b> Անձնակազմի ընտրության և հարմարման հիմնախնդիրները առևտրային բանկերում .....	105
<b>Ս. Ա. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ, ՏԱԹԵՎԻԿ ԱՊՐԵՍՅԱՆ.</b> Բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշի գնահատումը .....	109
<b>Ս. Ա. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ, ԱՆՈՒՇԻԿ ԶԱԿՈՒԲՅԱՆ.</b> Արժեթղթերի շուկայի զարգացման միտումները Հայաստանի շուկայի զարգացման համակարգում .....	113
<b>ԱՐՄԵՆ ԱՍՐՅԱՆ.</b> Փոքր ու միջին ձեռնարկությունների կառավարման համաշխարհային փորձը հարկային հարաբերությունների համակարգում .....	118
<b>ՀԱՅԿ ՄԱԿԱՐՅԱՆ.</b> ՀՀ հարկային քաղաքականության հակաճգնաժամային միջոցառումների ընդհանուր բնութագիրը .....	122
<b>ԱՇՈՏ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ.</b> Հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացումը՝ որպես հարկային վարչարարության ռազմավարության նպատակ .....	126
<b>ՍԱՐԳԻՍ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ.</b> Ներդրումային քաղաքականության գերակա ուղղությունները ՀՀ արդյունաբերության ոլորտում .....	131
<b>ՎԻԳԵՆ ՍԱՍՈՒՆԻԿԻ ՏՈՆՈՅԱՆ.</b> Ներդրումային միջավայրի արդի վիճակը ՀՀ-ում .....	136
<b>ԴԱՎԻԹ ՄԻՄՈՆՅԱՆ.</b> Բնակկոմունալ տնտեսության աղբահանության գործունեության կառավարման սոցիալ-մշակութային հիմնախնդիրների շուրջ .....	140
<b>ՀԱՅԿ ԳԱԼՍՏՅԱՆ.</b> Տարածքային համաչափ զարգացման խնդիրը Հայաստանի Հանրապետությունում և վերջին տարիներին կառավարության կողմից իրականացված քաղաքականությունն այդ ուղղությամբ .....	143
<b>ՆՈՐԱՅՐ ՔՈՉԱՐՅԱՆ.</b> Հիմնական ֆոնդերի և պաշարների գնահատումը և հաշվառումը միջազգային ստանդարտների կիրառման պայմաններում .....	152

Արտատպելիս հղումը «ՄԻԻԹԱՐ ԳՈՇ» հանդեսին պարտադիր է:  
При перепечатывании отсылка на журнал "МХИТАР ГОШ" обязательна.

Ծավալը՝ 10 տպագրական մամուլ Տպաքանակը՝ 110  
Объём - 10 печатных листов Тираж - 110

Տպագրվել է «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ-PRESS» հրատարակչությունում:

Խմբագրության հասցեն՝ 2001, ԳԳ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 30ա  
Հեռ.՝ (0322) 4-03-11, 4-07-11  
Էլ. փոստ՝ [mghandes@mail.ru](mailto:mghandes@mail.ru), [lsg57@mail.ru](mailto:lsg57@mail.ru)